

RAA

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

ԲՈՒՆ ԱՂՎԱՆՔԻ ՀԱՅԵՐԵՆ ՎԻՍԱԳՐԵՐԸ

Սամվել Կարապետյան



1987թվականից պատրաստ, բայց անտիպ աշխատությունը
լույս ընծայվեց շնորհիվ մեծարգո պրն. ԳՐՈՆԻԿ ՓԱՓԱԶՅԱՆԻ
(Շվեյցարիա) Մեկենասության

Մրտի անհուն գոհունակութեամբ է, որ գրի կ'առնենք այս ողջոյնի եւ օրհնութեան խօսքը՝ ներկայ
հատորի հրատարակութեան առթիւ:

Այս գիրքը հաւատքի գործ է:

Այս գիրքը տեսիլքի գործ է:

Այս գիրքը քաջութեան գործ է:

Եւ իսկապէս, հաւատքի տէր, տեսիլքի տէր եւ քաջ մարդու գործ է, մեր այլեւո՞՞ ժամանակներուն սա-
րբ սար բարձրանալ, կիրճեր իջնել, արծուի բոյններ որոնել, անկոխ ուղիներով քափառիլ եւ գրի եւ պատ-
մութեան յանձնել ժողովուրդի մը պատմութիւնը այնպէս, ինչպէս ուզեր էին այդ հողին տէրերը:

Գիրքը նուիրուած է Կուր գետի միջին հոսանքի ձախափնեայ շրջաններուն, կամ պատմական Բուն
Աղուանք երկրամասի վրայ պահպանուած հայերեն արձանագրութեանց:

Աւետարանին մէջ դրուագ մը կայ, ուր մեր Տէրը, Յիսուս Բրիտոս, իրեն ուղղուած բողոք-հարցումի
մը կը պատասխանէր եւ կ'ըսէր. «Եթէ մարդիկը լռեն, քարերը պիտի աղաղակեն»: Եւ այսօր, աշխարհի
ներկայ իրադրութեան մէջ, երբ տարբեր-տարբեր հաշիւներով մարդիկ կ'ուզեն կամայական բարեւաններ
գծել, կատարուած իրողութեանց առջեւ դնել աշխարհը եւ կամ այսպէս կոչուած «ընդունուած» սահման-
ները դիրք բռնել, ահա՛ այս եզակի հատորին մէջէն կը խօսին քարերը, կը խօսին գերեզմանաքարերը,
արձանագրութիւնները, եւ բարձրաձայն կը գոչեն. մենք հայ ենք, այս լեռները հայ են, այս աշխարհը հա-
յոց աշխարհ է եւ այդ քարաշէն համանուագին մէջէն՝ անգամ մը եւս կը հռչակուի այն պատմական իր-
ողութիւնը, ուր Կուր գետը սահմանային գետ չէ եղած մեզ համար, այլ հայ ժողովուրդի տեղաբաշխվածու-
թեան եւ մշակութային առումով հայոց ներքին գետ էր, ուր կ'ապրէին, կ'աղօթէին եւ կը կռուէին հայերը:

Ահա թէ ինչու մեր խորին երախտիքին արժանի են անոնք, որոնք տքնաջան աշխատանքով եւ մեծ
տառապանքով, եւ ապա յատկապէս հայրենասիրութեան ամենաբարձր ոգիով մեզի, նաեւ, եւ ապա քա-
ղաքակիրք մարդկութեան կը ներկայացնեն այս «ինքնութեան բողոքը»:

Շնորհակալութիւն բոլոր անոնց, որոնց շնորհիւ հնարաւոր դարձաւ այս հատորի հրատարակութի-
ւնը: Յատկապէս շնորհակալութիւն երկու հոգիներու, որոնց հոգոյն պտուղն է այս հատորը: Նախ՝ մեր
վաղեմի բարեկամ, հոգեհարազատ Արմէն Հախնազարեանին, որ ֆենոմեն մըն է մեր ներկայ ժամանակ-
ներու սփիւռքեան կեանքին մէջ, մէկը՝ որ իր անձին մէջ կը մարմնատուրէ արուեստը, ճարտարապետութի-
ւնը, նկարչութիւնը, քանդակագործութիւնը, եթէ կ'ուզէք բառին ազնուագոյն իմաստով արկածախնդիրը,
որ 1969-էն ի վեր այցելած է Արեւմտեան Հայաստան, Կիլիկիա, Իրան, Կովկաս եւ այլուր՝ համայն հայոց
բնակած աշխարհը եւ ուսումնասիրած, լուսանկարած, չափագրած հայ ճարտարապետական կոթողնե-
րը եւ զանոնք յանձնած յավերժութեան: Երկրորդը Սամուէլ Կարապետեանն է, հայոց աշխարհի ծնունդ,
որ 1978 թ. սկսեալ կեանքի նպատակ դարձուցած է Հայաստանի սահմաններէն դուրս գտնուող վանքե-
րու, պատմական յուշարձաններու եւ առհասարակ արձանագրութեանց պահպանումը եւ փոխանցումը
յաջորդ սերունդներուն:

Չեմ գիտեր, Արմէնն ու Սամուէլը իրարու ինչպէս ծանոթացեր էին, բայց ինձի համար իրենց ծանօթու-
թիւնը նախախնամական է, որովհետեւ այս երկու անձերը առանձինն աւելի մեծ գործ կատարած են, քան
մեծ վարկերով եւ պիտոճներով աշխատող ինքսիրութներ եւ տեսակ-տեսակ կեղորոններ եւ միութիւններ:

Արմէն Հախնազարեան եւ Սամուէլ Կարապետեան մեր ժողովուրդին ինքնութեան բողոք կու տան ի-
րենց հաւատքի, տեսիլքի եւ քաջութեան այս գործով:

Ջերմագին գնահատանք իրենց վաստակին, հիացում իրենց գործին եւ աղօթք՝ որ շարունակեն ի-
րենց եզակի եւ աստուածաշնորհ եւ հայապարծան գործը:

Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեան

Վարիչ-քարտուղար 1700 ամեակ Հայաստանի Մէջ

Բրիտանական Պետական Կրօն Հռչակման

Տեսական ջանադրությամբ, տարիների տքնանքով կազմված սույն աշխատությունը գնահատելի նո-
րույթ է հայագիտության ասպարեզում: Առաջին անգամ գիտական աշխարհին է հրամցվում հայ մշա-
կույթի մի սովոր խումբ՝ Կուր գետի միջին հոսանքի ձախափնեային տասնամյակներ առաջ խժալեզու ցե-
ղերից ռոմատակված, իսպառ հայաթափ բնակավայրերի, կանգուն թե՛ ավերյալ հուշարձանների պատ-
մությունը և, որ առանձնապէս կարևոր է, հայերեն արձանագրությունները:

Աշխատությունը՝ մեր ժողովրդի պատմա-աշխարհագրական ընդգրկումների, հնուց ի վեր հաճախ
ոչ հայկական դիտված հողերում հայերի կողմից անցյալ դարերում ստեղծած հոգևոր-մշակութային ար-
ժեքների առատարոյիս հավաքածու է վերջնակորստից փրկված հարյուրավոր արձանագրություններով՝
օժտված բնագրերի հավաստիությունը փաստարկող լուսանկարներով ու գրչագրերով՝ բոլորն էլ արված
հեղինակի կողմից:

Փրկված և հավուր պատշաճի բնասիրությանը ներկայացված այս մասունքները կնպաստեն նորովի
լույս սփռելու Հայոց Արևելից Կողմանց մարած պատմության ելկէջներին:

Սուրեն Սաղումյան

Անդրկուրյան երբեմնի Բուն Աղվանքը հայոց մշակութային առաքելությանը ծանոթ է ազգային դպրության առաջին իսկ դարերից: Տարեթնիկ այդ տարածքում միջին պարսկերենն ու նրան հաջորդած արաբերենը կանխեցին տեղական լեզվի (պայմանականորեն՝ աղվաներենի) ընդհանրական գրականացումը, ուստի այստեղ ևս հայերենն ստանձնեց *lingua franca*-ի դեր: Մատենագրական հատակոտոր տեղեկությունները ամենևին բավարար չեն տեղիս էթնիկական, քաղաքական ու մշակութային պատմությունն ուսումնասիրելու համար, իսկ վիճազրական նյութը փաստորեն հավաքված ու առեղծված չէ: Ուշ միջնադարում տեղի ունեցած ազգագրական ու դավանական փոփոխությունները, մանավանդ դրսեկ ցեղերի հակադարձ ուժացման պարագայում, աստիճանաբար այլախոս ու այլադեն դարձող տեղաբնիկներին մղեցին դեպի ինքնուրույն մոռացում, որը և բերեց սեփական հիշատակների անտեսման, երբեմն նույնիսկ թշնամանքի նրա հանդեպ:

Էթնո-դավանական ու քաղաքական այն թնջուկ պատմությունը շերտ առ շերտ նոր նոտվածքից ազատելու և մշակութային արժեքներն արարողներին ճանաչելու համար անհրաժեշտ էր գիտության այնպիսի մի սպասավոր, որը չէր սպասի ակադեմիական կամ պաշտոնական հրանգավորման, հոգի ի բռի, ինքնակամ, արկածներից իսկ չերկնչելով սար ու ձոր կրնկներ՝ գեթ պահպանված քարե տարեգրությունները գրի առնելու և հաջորդ սերունդներին փոխանցելու ազնիվ ու երախտաշատ առաքելությունը կստանձնեք: Այդ սպասավորը սեփական կարողությանը ապավինած և մասնագիտորեն ինքնացած Սամվել Կարապետյանն է՝ դիվանական այս հատորի հեղինակը: Արդարությունը պահանջում է, որ յուրաքանչյուր մարդ իր արդյունքով փառավորվի:

Պրոֆ. Պարույր Մուրադյան

Պատմական Ատրոպատե, այսօր Ազերբայջան կամ Ատրպատական նահանգները գտնում են Պարսկաստանի հիսիսարևմուտքում, որոնց հիսիսում հոսող Արաքս գետը դարերի ընթացքում երկրի սահմանն է համարել:

Առաջին աշխարհամարտից յետոյ, 1918-19 բերին Թուրքիայի հովանաւորութեամբ երկրամասը անուանափոխելով կոչեց Ադրբեջան: Մի պետութիւն, որը ստեղծման առաջին օրից իսկ, միտումնաւոր իրացրել է հարևանի անունը, ակներև է դարձնում իր քաղաքական կեցածքն ու Պարսկաստանի նկատմամբ ունեցած յետին նպատակը...

Նման քաղաքականութիւնն էլ ավելի անկաշկանդ, քողարկւած կոմունիզմի շղարշով Ադրբեջանը գործադրեց իր սահմաններից ներս գտնուող ժողովուրդների նկատմամբ: Դարեր շարունակ այդ երկրամասում ապրող տարբեր ժողովուրդներ, ինչպէս՝ Թաթեր, Թալիշներ, Լահիջներ, Լեզգիներ, Քրդեր ազգայնամոլ ճնշումներին չը դիմանալով կորցրին իրենց կենցաղն ու ինքնութիւնը՝ թրքացան:

Հայերը, որոնք երկրամասի բնիկն էին, դարձան այս քաղաքականութեան բուն քիրախը, որտեղ կրօնափոխութիւնը ծառայում էր որպէս ուժացման յաւելեալ միջոց:

Տասնեակ հազարաւոր հայեր, որոնք ազատել էին Կովկասում Օսմանեան բանակի ջարդերից ու իրենց շէնք վերադարձել, խորհրդային տարիներին բողոքի որևէ հնարաւորութիւնից զրկւած, աշխարհից մոռացւած, նաև Խորհրդային Հայաստանի անտարբերութիւնից յուսահատ, Բաքի տարատեսակ ճնշումներին չդիմանալով լքեցին իրենց պատմական բնակավայրերը:

1982 թուականին, երբ պր. Մամել Կարապետեանը սկսեց Ադրբեջանի տարածքում եղած հայկական յուշարձանների ուսումնասիրութիւնը, դեռ մասամբ կանգուն էին եկեղեցիներն ու վանքերը և ամենուրեք տեսանելի անցեալը վկայող մեծաքիւ խաչքարերն ու տապանաքարերը:

Հայաստանում՝ RAA-ի պատասխանատու պր. Մամել Կարապետեանի՝ տարիներ առաջ հեռատեսուօրէն ձեռնարկւած, և դժուարին պայմաններում ամենայն բարեխղճութեամբ հաւաքագրած հարուստ նյութի միայն փնտազրերին վերաբերող մասն է այս հատորով ներկայացւում, որի պատմագիտական արժէքը անզնահատելի է:

Այսօր, երբ արևմուտքի վերից նայելով տնօրինող քաղաքականութեան “խիղճը հանգիստ է”, այս՝ քրքի վրայ փրկւած քարերը խօսում են բոլորին հասկանալի լեզուով, որ ջարդի՝ մշակոյթի ջարդի ճանաչել տալը պէտք է մղուի անդադար, աննահանջ և առանց պատեհապաշտութեան:

*Դորո. Արմէն Հախնազարեան
RAA-ի պատասխանատու*

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՌԻՍՈՒՄՆԱՄԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (RAA)
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Արքեպիսկոպոս Մեսրոպ Աշճյան (Նյու-Յորք), պրոֆ. դր. Հ. Բուշաուզեն (Վիեննա), պրոֆ. դր. Ա. Մուքաֆյան (Փարիզ), պրոֆ. դր. Սիրարփի Տեր-Ներսեսյան (Փարիզ) [†], պրոֆ. դր. Հոֆֆրիխտեր (Քայզերսլաութերն), պրոֆ. դր. Ռ. Հովհաննիսյան (Լոս-Անջելես), պրոֆ. դր. Վ. Բարսեղյան (Նյու-Յորք) [†], պրոֆ. դր. Ժ. Փիփլըր (Մախեն), պրոֆ. դր. Ա. Ջաբյան (Երևան) [†], պրոֆ. դր. Լ. Չեքիյան (Վենետիկ)

Աշխատությունը հրատարակվում է ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտխորհրդի երաշխավորությամբ

Սամվել Կարապետյան
ԲՈՒՆ ԱՂՎԱՆՔԻ ՀԱՅԵՐԵՆ ՎԻՍԱԳՐԵՐԸ

Самвел Карапетян
АРМЯНСКИЕ ЛАПИДАРНЫЕ НАДПИСИ
СОБСТВЕННО-АЛУАНКА

Samvel Karapetian
ARMENIAN LAPIDARY INSCRIPTIONS
OF BOON-AGHVANK

ԳԻՐԶ I

ԳՏՀ 941 (479.25)

ԳՄԴ 63.2 (2Հ)

Կ - 294

Գիտական խմբագիր՝

դր. պրոֆ. Պարույր Մուրադյան

Խմբագիր՝ Լաուրա Մանուկյան

Կ - 294

Կարապետյան Ս.

Բուն Աղվանքի հայերեն վիճագրերը,

Գիրք I, Երևան, ՀՀ ԳԱԱ

“Գիտություն” հրատ., 1997

Գիրք I, 1997, 132 էջ

Կտր գետի միջին հոսանքի ձախափնյա շրջանները կամ պատմական Բուն Աղվանք երկրամասը չափազանց հարուստ է հայ մշակույթի բազմաբնույթ հուշարձաններով: Երկրամասի պատմության ուսումնասիրության առումով առանձնապես մեծ նշանակություն ունեն զանազան հնավայրերում պահպանված հայերեն արձանագրությունները: Չնայած այդ ուղղությամբ աշխատանքները տարվել են դեռևս XIX դարի կեսերից տարբեր հեղինակների կողմից, սակայն առավել նպատակային ուսումնասիրությունները կատարվեցին միայն 1982-86 թվականներին: Սույն աշխատությունը ընդգրկում է նշված տարածքից հավաքված ու վերծանված 516 վիճագիր:

* * *

Левобережье среднего потока реки Куры или край исторического Собственно-Алуанка (Собственно Албании) чрезвычайно богат многохарактерными памятниками армянской культуры. По изучению истории края большое значение имеют армянские лапидарные надписи сохранные в разных местах старины. Несмотря на то, что работы в этом направлении велись еще с середины XIX века разными авторами, наиболее выполнены только в 1982-86 гг. Сия работа охватывает 516 лапидарных надписей собранных и разобранных из упомянутого региона.

* * *

The left-bank territory of the river Koor or the historical land of Boon Aghvank is extraordinarily rich in multi-charactered monuments of Armenian culture. As studying the history of this land, Armenian epigraphical inscriptions preserved in different ancient places of the region are of especially great significance. Though the works in that direction have been carried on from middle of the 19 th century by different authors, the most purposeful studies were made only in 1982-86. This work embraces 516 epigraphical inscriptions collected and deciphered from the mentioned region.

Կ $\frac{0505000000}{703(02)-97}$

ԳՄԴ 63.2 (2Հ)

ISBN 5-8080-0144-7

© Սամվել Կարապետյան, 1997

© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպություն (RAA)

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Աշխատությունն ամփոփում է 1982-1986 թթ. Կուր գետի միջին հոսանքի ձախափնյա շրջաններից կամ պատմական Բուն Աղվանք երկրամասի տարածքից հավաքած հայերեն վիճագրերը:

Երկրամասի դաշտավայրային շրջաններում էին հուշարձաններ (բնականարար մակարձանագրություններ) գրեթե չեն պահպանվել: Դարերի ընթացքում երկրամասի զավատները ենթարկվել են տարածքային փոփոխությունների: Շատերի անունները ձևափոխվել, մոտացվել են կամ տարածքները այլ անուններ են ստացել: Որոշների տեղադրություններն անհայտ են և գիտական ուսումնասիրություններում միայն ենթադրաբար են որոշված:

Հիշյալ հանգամանքների դրամամբ գրքում հավաքված արձանագրությունները նպատակահարմար ենք գտել ներկայացնել ըստ ներկայումս գոյություն ունեցող վարչական շրջանների:

Այսպիսով, հատորն ամփոփում է Աղբրեջանի Հանրապետության Շաքիի, Վարդաշենի, Կուտկաշենի, Իսմայիլու, Շամախու, Աղսուի, Աղդաշի, Չաքաքարայի և Եվլախի շրջանների տարածքում պահպանված հայերեն արձանագրությունները:

Յուրաքանչյուր շրջանի բնակավայրերը, որոնցով ներկայացված է հավաքված նյութը, դասավորված են ըստ այբբենական կարգի: Առանձին խոշոր հնավայրերից հավաքված նյութը ներկայացված է տվյալ հնավայրի (օրինակ՝ նշանավոր վանքերին) անվան տակ:

Արձանագրությունների հավաքման հարցում առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքով: Անխտիր ներկայացրել ենք մինչև XVIII դարի վերջին վերաբերող բոլոր արձանագրությունները, անկախ ծավալից, բովանդակությունից կամ պահպանվածության աստիճանից: Հաշվի առնելով աշխարհագրական առանձնահատկությունները (օրինակ՝ բուն Հայաստանի՝ Մեծ Հայքի սահմաններից դուրս գտնվելը՝ բավական մանրամասն անդրադարձել ենք մահ XIX դարին վերաբերող արձանագրություններին: Սակայն, այստեղ նկատի ունենալով վերջիններիս խիստ սեծաթվությունը (օրինակ՝ միայն Շաքի քաղաքի և մի քանի խոշոր գյուղերի տասպանագրերի թիվը միասին անցնում է 10 հազարից), կիրառել ենք հետևյալ սկզբունքները:

Հավաքածուում ներգրավել ենք այնպիսի տասպանագրեր, որ բացի հանգուցյալի անուն-ազգանունից ու տարեթվերից, արձանագրված են եղել նաև լրացուցիչ տեղեկություններ, օրինակ՝ տեղանուն, կոչում, պաշտոն, մասնագիտություն: Դրանց շարքում առաջին հերթին տեղ են գտել ծխատեր քահանաների, տանուտերերի, հոգաբարձուների, նվիրատուների, հարյուրապետների, իշխանների, ցարական զանազան զինվորական կոչումներ կրող անձանց տասպանագրերը: Առատ կերպով ներկայացված են հատկապես այն տասպանագրերը, որ նշված է հանգուցյալի որտեղացի լինելը: Ավելի «մեղմ ենք» վարվել շինարարական, նվիրատվական և այլ կարգի բովանդակություն ունեցող վիճագրերի հետ, որոնց իրական թիվն էլ այնքան մեծ չէ, որ գտեինք կարևորագույնները:

Տեղերում վիճագրերի հայտնաբերման ու ցուցաբերման այլ կարգի օգնության համար մեր խորին շնորհակալություն ենք հայտնում Ն. Մելիքյանին (Մատրասա), Ա. Դանիելյանին, Ս. Ղարողյանին (Մաղիան), Գ. Հայրապետյանին (Չարգարան), Ա. Թամրազյանին (Ազալի Օեն), Կ. Ջառայանին (Ղալակա), Ա. Ավագյանին (Զյալբանդ), Ռ. Խաչատրյանին (Գիրք), Ա. Թորոսյանին (Քեշխտրդ), Ա. և Ի. Հակոբյաններին (Վանք), Ա. Արամյանին (Ամուր-ավան), Յ. Մեշոյանին (Նիժ), Ա. Անտոնյանին (Գյուրջևան), Ա. Բուդաղյանին (Հնդար), Վ. Աբայանին (Մուլբան-Նուխի), Յ. Մովսիսյանին և որդիներին (Միրզաբեկյու):

Ի դեպ, այս աշխատությունը դեռևս 1987 թ. «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի հերթական, այն է՝ VII պրակով հրատարակելու համար, պայմանագրով ընդունել էր Հնագիտության և Ազգագրության ինստիտուտը: Ավելի քան մեկ տասնամյակ պատանուց հետո, այլևս անհույս նկատելով այդ պայմանագրի իրագործումը, գիրքը հրատարակվում է RAA կազմակերպության նախաձեռնությամբ:

Համառոտագրություններ

Շահյաթունեանց - Յովհանու եպիսկոպոսի Շահրիարցոյ - Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ, հատոր Բ, Էջմիածին, 1842:

Ջալալեանց - Սարգիս վարդապետի ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփլիս, 1858:

Բարխուտարեանց - Մակար եպիսկոպոս - Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893:

Սմբատեանց - Մտրովր արքեպիսկոպոս Նկարագիր սուրբ Մտեփանոսի վանաց Մաղիանի եւ միս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ զիւղօրէից որք ի Շամախիոյ Թեմի, Տփլիս, 1896:

ՀՀՊԿԱ - Հայաստանի Հանրապետության Պետական պատմական կենտրոնական արխիվ, ֆոնդ 57 (Ամենայն Հայոց Կաթողիկոսի Դիվան),

ցուցակ 1, գործ 439. անտիպ հոդվածը վերնագրված է «Բազմամիլիոն ժառանգություն»: Հեղինակն է Բաջրեռունին:

Պայմանական նշաններ

... Կետերով նշանակված են բնագրի մեջ չընթերցվող (ջնջված, հողմնահարված, եղծված) գրերը
[] Փակագծով նշված են ջարդված կամ եղծված գրերի վերականգնումները վերծանության մեջ:

() Փակագծով նշված են բնագրի մեջ գրչի բաց թողած, սղած կամ առանց պատվի նշանի (սղման, կրճատման նշան) սղումները՝ վերծանության մեջ:

[] Փակագծով նշված են բնագրում եղած ավելորդ գրերը՝ վերծանության մեջ:

| Գծիկով նշանակված են բնագրի տողանշատումները՝ վերծանության մեջ:

ՊԱՏՄԱԱՇԵԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Վերջին տարիներս մեծացել է հետաքրքրությունը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող՝ պատմական Հայաստանի ու հարևան երկրամասերի տարածքներում պահպանված Հայկական պատմական հուշարձանների նկատմամբ: Սա, ինչ խոսք, կարևոր է և վճռական նշանակություն ունի ինչպես մշակույթի զանազան կողմերի, այնպես էլ հայ ժողովրդի պատմության հիմնավոր ու ամբողջական ուսումնասիրության առումով:

Այս իմաստով առանձնակի, որոշ դեպքերում անգամ հանգուցային, նշանակություն ունեն Կուր գետի միջին հոսանքի ձախափնյակում կամ պատմական Բուն Աղվանք երկրամասի տարածքում պահպանված հայ մշակույթի բազմահազար հուշարձանների ուսումնասիրության հարցերը: Անտարակույս իբրև սկզբնաղբյուր անփոխարինելի արժեք ունեն տասնյակ հնավայրերում պահպանված հայերեն բազմաթիվ արձանագրությունները:

Կուրի միջին հոսանքի ձախափնյակը, ուր վաղնջական ժամանակներից բնակվել են հայերը, պատմական և ոչ մի ժամանակաշրջանում հաստատուն կերպով հայոց թագավորության (պետության) կազմում չի եղել: Այլ կերպ ասած՝ Կուր գետը ունեցել է սահմանային գետի նշանակություն: Այդ մասին պահպանվել են մատենագրական հայ և օտար աղբյուրների բազմաթիվ վկայություններ: Սակայն, ինչպես վառ կերպով վկայում են մշակույթի պահպանված մեծաքանակ հուշարձանները (վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, գյուղատեղեր, բերդեր, կամուրջներ, գերեզմանոցներ, խաչքարեր և այլն), Կուր գետը ինչպես հայ բնակչության տեղաբաշխվածության, այնպես էլ մշակութային առումով ոչ միայն սահմանային գետ չէր, այլև հայոց ներքին գետ էր, որի աջ ու ձախ փերին, անկախ քաղաքական միավորումներից՝ վաղնջական ժամանակներից բնակվում էին հայերն ու ստեղծում, կառուցում այնպես, ինչպես պատմական Հայաստանի որևէ այլ շրջանում:

Պատմական Բուն Աղվանք երկրամասը տարածվում էր Կուր գետի և Կովկասյան լեռնաշղթայի միջև: Այն գլխավորապես ունի լեռնային բնաշխարհ: Երկրամասի տարածքով հոսում են ջրառատ ու արագահոս գետեր ու վտակներ, որոնք ի վերջո, բոլորն էլ միանում են Կուր գետին ձախ կողմից:

Բուն կամ ձախափնյա Աղվանքի բնությունը բաժանվում է երեք հիմնական գոտիների: Առաջինը Կուր գետին ափամերձ լայնատարած դաշտա-

վայրերն են, որտեղով հոսող գետերի մեծ մասը ամառվա ամիսներին ցամաքում են և չեն հասնում Կուրին: Այս շրջանները հնուց ի վեր նոսր են բնակեցված եղել, իսկ անծայրածիր հարթավայրերը դարեդար օգտագործվել են իբրև արտավայրեր: Երկրորդ գոտին նախալեռնային շրջաններն են, որոնք մեծ մասամբ անտառածածկ են և հարուստ քաղցրահամ աղբյուրներով: Գետերն այս վայրերում մշտապես են ու ջրառատ: Նախալեռնային շրջաններն ունեն մեղմ կլիմա և բարենպաստ են բնակության համար (ձմեռն այդ շրջաններում խիստ չէ, իսկ ամռան շոգը մեղմանում է անտառների ու աղբյուրների առկայության շնորհիվ): Երրորդ գոտին՝ բարձր լեռնային, հիմնականում անտառազուրկ տարածություններն են, հարուստ ալպիական մարգագետիններով, սահանքավոր ու արագահոս գետերով, ջրվեժներով: Այս շրջաններում ձմեռը խստաշունչ է, իսկ ամառը՝ զով: Տարվա բոլոր եղանակներին լինում են սաստիկ քամիներ:

Կազմելով Բուն Աղվանքի բնակավայրերի, գյուղատեղերի, գերեզմանոցների, պաշտամունքային ու պաշտպանական կառույցների, ինչպես նաև մուսուլմանական արվեստի (պարսկական և թուրքական) հուշարձանների տեղագրական քարտեզները, հստակ պատկերացում է կազմվում երկրամասում բնակվող հայերի (այդ թվում ուտիախոս, քրքախոս, թաթախոս և XVIII դարում դավանափոխ եղած՝ մահմեդականացված) տեղաբաշխվածության վերաբերյալ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Բուն Աղվանքի հայերը ինչպես Մեծ Հայքում, այստեղ ևս ենթարկվել են դարավոր ճնշման օտար նվաճողների կողմից և անընդհատ տեղի տալով, կղզիացել գլխավորապես երկրամասի նախալեռնային ու բարձրլեռնային շրջաններում, ուր պաշտպանության տեսակետից տեղանքն ավելի հուսալի ու նպատակահարմար էր: XIX դարի վերջերին հայերը բնակվում էին երբեմնի Բուն Աղվանքի շուրջ 105 բնակավայրերում, որոնք, սկսած Շամախուց, նախալեռնային շրջաններով ձգվում էին մինչև երկրամասի հյուսիս-արևմտյան ծայրը՝ Չաքաթալա քաղաքը: Ընիշտ է, այդ թվի մեջ մեծ տոկոս էին կազմում եկվոր (հիմնականում՝ արցախցի) հայերը, բայց և հայտնի է, որ նրանք իրենց համար բնակության նոր վայրեր էին ընտրել նախկինում հայաբնակ եղած գյուղերը, որտեղ, գրեթե առանց բացառության պահպանվել են բնիկ հայերից մնացած բազմաթիվ վանքեր, եկեղեցիներ, գերեզմանոցներ՝ արձանագիր խաչքարերով ու տապանաքարերով: Հայերի

գրադեցրած նախալեռնային գոտուց ավելի բարձր, Կովկաս լեռնաշղթայի բարձրադիր լանջերի խոր կիրճերում տեղաբաշխված են կրոնափոխ եղած հայերի գյուղերը: Դրանցում մեծաթիվ են քրիստոնյա բնակիչների՝ իրենց իսկ նախնիների թողած մշակույթի հետքերը (եկեղեցիներ, զերեզմանոցներ և այլն): Վերջապես, Կուր գետի ափամերձ լայնատարած դաշտավայրերում տեղաբաշխված են աղբրեջանաբնակ բազմաթիվ գյուղեր, որոնց մեծագույն մասն ունի միայն 80-100 տարվա պատմություն և գլխավորապես աճել է խորհրդային իշխանության տարիներին: Մինչ այդ՝ անծայրածիր տարածությունները օգտագործվում էին զանազան

վայրերից զաղթած թափառական անասնապահ՝ ծագումով թյուրքական ցեղերի կողմից:

Կուր գետի միջին հոսանքի ձախափնյակի հայ բնակչությունը մեծ կորուստներ է կրել 1918-1920թթ. երկրամաս ներխուժած օսմանյան թուրքերի և տեղի մուսավաթականների կողմից համատեղ կազմակերպած զանգվածային ջարդերի հետևանքով: Հայտնի է, որ նշված տարածքում 1913 թ. հայերի թիվը կազմում էր 73526 շունչ, իսկ 1918թ. կոտորածների նախօրյակին՝ շուրջ 100000 մարդ: Չանգվածային ջարդերից հետո 1921թ. նշված տարածքում հայերի թիվը խիստ նվազել էր և կազմում էր միայն 12716 մարդ:¹

Ա Ղ Ղ Ա Շ Ի Շ Ր Ձ Ա Ն

Աղբրեջանի հանրապետության Աղղաշի շրջանը կազմավորվել է 1930թ.: Ջրադեցում է 1048 քվմ մակերես: 1976թ. ուներ 64900 բնակիչ, 72 գյուղ: Շրջանը տարածված է Կուր գետի ձախ վտակ Դուրկան գետի ստորին ավազանի շրջանում: Ունի բացառապես դաշտավայրային հարթ տեղանք: Համարյա ամբողջությամբ անտառազուրկ է:

Մինչև 1918թ. շրջանի ներկայիս տարածքում հայեր բնակվում էին երկու տեղում՝ Աղղաշ քաղաքում, որը ներկայումս համանուն շրջանի կենտրոնն է և Հայի Նեմեթապատ գյուղում, որը զուտ հայաբնակ էր: 1918-19թթ. բնթացքում բնաջինջ են եղել աղղաշաբնակ բոլոր հայերը, իսկ Նեմեթապատցիների զգալի մասը: 1988-ից երկու բնակավայրերն էլ հայաթափ են:

Աղղեն վաղ ժամանակներում շրջանի բնական ամրություններից զուրկ տեղանքը հիմնականում զրկվել էր հայ բնակչությունից: Նրանք քաշվել էին լեռնային ու նախալեռնային շրջանները, և հետևաբար տարածքում հայ մշակույթի միայն հազվագյուտ հուշարձաններ են պահպանվել: Նույնը կարելի է ասել նաև վիճագրերի վերաբերյալ: Ոչնչացված է Աղղաշ քաղաքի հայոց զերեզմանոցը, իսկ Նեմեթապատ գյուղինը կիսավեր է: Վերջինիցս վերցված միակ արձանագրությունը կազմում է Աղղաշի շրջանից հայերեն վիճագրերի մեր ամբողջ «հավաքածուն»:

ՆԵՄԻԹԱՊԱՏ (ՆԵՅՄԵԹԱՊԱՏ)

XIX դարում Արաշ (Արեշ) գավառում գոյություն ունեին համանուն գյուղեր՝ հայոց և թրքաց: Երկու գյուղերն էլ ներկայումս գտնվում են Աղղաշի շրջանի տարածքում, շրջկենտրոնից շուրջ 15 կմ արևմուտք, մայրուղու հյուսիսային ու հարավային կողմերում: Հայոց Նեմիթապատ գյուղը 1839թ. ուներ 26 տուն:¹ 1851թ. ուներ 15 տուն (142 ար., 64 իգ.) բնակիչ:² 1853թ. այն քիչ աճել էր ու կազմում էր 241 մարդ:³ 1914թ. գյուղի բնակչությունը աճել էր մինչև 609 մարդ⁴ (բոլորն էլ հայեր): Նեմիթապատը կտրված էր ոչ միայն երկրամասի հայաբնակ շրջաններից, այլև հենց Արաշ գավառի

հայաբնակ գյուղերից: Մի առիթով իրավիճակի բնորոշ բնութագրումը տվել են իրենք՝ բնակիչները: 1884թ. համախոսական մի նամակում կարդում ենք. «Սեր երկիր մոտ լինելով Դաղստանի, որի ազգաբնակության երեք մասը կազմում են լեզգիք և մահմեդական տաճիկք, մենք՝ հայերս սակաւաթիւ լինելով լեզգիների երկիրից շատ մասն մեզանից իբրև պատսպարան ապահովութեան ընտրած ենք տաճկաց մեջտեղ ի բնակութեան, չնայելով մեր այսպիսի ցիր ցան լինելոյն մեր հոգևոր ծնողն Ս. Լուսաւորչի Աթոռն ամեն ժամանակ մեծ խնամ և հոգս է ունեցել մի հոգևոր պիտույք լրացուցանելու և այս իսկ պատճառով է, որ այսօր հայութեան նշոյլ գտնվում է Դաղստանի սարերի և ձորերի մեջ, պետք է ասել, որ մեր մեծ հայրեր որքան խնամք ու հոգս և մտածմունք են ունեցել ... քրիստոնեւթեան, ասեմ հայութեան մեջ և հեռն պահպանել, մենք հետընկալքն և թշուառ Նոյին զաւակներս մեր անունովն կորցնելու և մոռանալու մոտ ենք, այնպես որ մեր զիւղն այսքան տարիներ ի վեր և մեր

1. "Большая Советская Энциклопедия", т. I, Москва, 1926, т. 642:

1ա. ՀՀՊՊԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 657, ք. 1-2:

2. Ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 11:

3. Ֆ. 56, ց. 1, գ. 2914, ք. 92:

4. "Кавказский Календарь на 1915г.", Тифлис, 1914, էջ 163

երկիր ռուսաց հզոր կայսրութեան հովանաւորութեան տակ մտնելն ի վեր չունենք ոչ մի արժանատի քահանա և ոչ մի փոքրիկ ուսումնարան, որ գոնե սովորեին մեր գաւակները քրիստոնեութեան հետ և հայութիւն ...»⁵

Գյուղը զգալի կորուստներ է տվել 1918-1920թթ. ընթացքում, սակայն չի ամայացել և խորհրդային կարգերի հաստատումից հետո էլ շարունակել է գոյատևել իբրև հայաբնակ գյուղ: Մինչև 1954թ., երբ գյուղն ուներ 70 տուն հայ բնակիչ, գյուղում գործել է նաև հայկական դպրոցը: Դրանից հետո շատ արագ գյուղի բնակչությունը փոխադրվել է Հայկական ԽՍՀ ու գլխավորապես հաստատվել Երևան քաղաքի Նոր Արեշ քաղամասում: Ներկայումս Նեմիթապատը աղբրեջանաբնակ է: Այդտեղ մինչև 1988թ-ը բնակվում էր Վոլոդյա Հարությունյանի վերջին ու միակ հայ ընտանիքը:

Գյուղի պատմական հուշարձաններից արժեքավոր էր Սբ. Աստվածածին եկեղեցին (այժմ՝ հիմնավեր է): Հայտնի է, որ այն եղել է աղյուսաշեն, փայտածածկ: Ցայսօր պահպանվում է Նեմիթապատի եկեղեցու տեղը՝ միայն մի փոսի տեսքով: Շուրջը գերեզմանոցն է, ուր կան գլխավորապես XIX դարին վերաբերող արձանագիր շատ տապանաքարեր: Հարկ է նշել, որ որոշ գերեզմանաքարեր արտագաղթած բնակիչները իբրև հիշատակ հետներն են տարել:

Տեղում մնացածների մեջ թերևս ուշագրավ է հետևյալ տապանագիրը՝ փորագրված մի սալիտակ սրբատաշ քարի երեք երեսներին:

1. ՏԱՊԱՆԱԲԱՐ, ուղղանկյունաձև, սրբատաշ (նկ. 1, 1ա, 1բ).

ՀԱՆԳԻՍ ՎԱՂԱԹԱՌԱՍ ՍԵՂՐԻ ԳԻՒՂԱՅԻ ԲԺԻՇԿ ՍՏԵՎՈՒՆԱՅ ԱԶԱՏԵԱՆ ՏԵՐ ԶԱ ԽԱՐԵԱՆՅ, ՇՆԵԱԼ Է Ի 1860 ԱՄԻ | 10-ԻՆ ՕԳՈՍՏՈՍԻ, ՎԱՆՃԱՆԵԱԼ Է Ի 1889 ԱՄԻ 29 ՍԱՅ Հ(Ա)Ս(Ա)ԿԻ:

ՀԱՆԳՈՒՑԵԱԼՆ ՏԻՖԻՒՍՈՒ ԲԵԱԼՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՄԱՐՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆ ԱԻԱՐՏԵԼՈՒՅ 1881 ԱՄԻ ՄԱՐՏԻ 10-ԻՆ|ՓԱՐԻՉՈՒՄ ՄՏՆՈՒՄ Է ԲԺԻՇԿԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԸ|1886 ԱՄԻ ԱՄԱՐՏՈՒՄ Է ԵՒ ՍՏԱՆՈՒՄ ...1889 | ԱՄԻ ՎԵՐԱԳԱՌՆՈՒՄ ԵՂՐԱՐՅ ՄՕՏ՝ ԱՂԳԱՇ ...ՎԱԽԻՃԱՆԻՈՒՄ Է ԵՒ ԹԱՂԻՈՒՄ ՍԱՍԱՏԱՊԱՍ ԳԻՒՂՈՒՄ:

Ծանոթ. Հանգուցյալի մասին «Նոր-Դար» օրաթերթում (1891, №41, էջ 4) կարդում ենք. «...Եկեղեցու բակում կհանդիպեք, Աղղաշում վախճանուած օտարականների գերեզմաններին, որոնց մեջ փայլում է անցեալ տարի վախճանուած բժիշկ Ստեփան Տեր-Չաքարեանցի գերեզմանը, որ նոր էր աւարտել Պարիզի բժշկ. համալսարանը և վերադառնալով հայրենիք՝ Աղղաշ եղբայրների մօտ, վախճանուած է 1890թ. հոկտ. 29-ին...»:

Այնհայտ է քվականների անհամապատասխանությունը, բայց կարծում ենք տապանագիրն առավել վստահելի է:

ԱՂՍՈՒԻ ՇՐՋԱՆ

Շրջանի ներկայիս տարածքը հնում կազմում էր պատմական Շիրվանի մի մասը: Այն զբաղեցնում է Մեծ Կովկասի նախալեռնային և նրանից հարավ ընկած հարթավայրային տարածքները՝ 1020 քկմ: Կազմավորվել է 1943թ. հոկտեմբերի 8-ին: Բնակչությունը՝ 46500 մարդ (1976 թ.): Ունի 1 քաղաք (Աղսու շրջկենտրոնը) և 79 գյուղ: Մինչև 1918թ. շրջանի ներկայիս տարածքում հայաբնակ էին 6 գյուղեր. Գյուրջևան, Հնդար, Գյուրդաշեն, Զոհյուճ, Նորշեն և Թալիշ: Շրջանի պատմաճարտարապետական հուշարձանների մեծագույն մասը պահպանվել է այս գոտում: Նույն տարածքից հավաքված է 41 հայերեն արձանագրություն, որոնցից նախկինում ընդօրինակված է եղել միայն 8-ը (3-ը հրատարակված): 1988-ին հիշյալ գյուղերի հայ բնակիչները ենթարկվեցին բռնագաղթի:

ԳՅԱՆԴԻԱՆ

Աղբրեջանաբնակ փոքր գյուղ է: Մրա արևմտյան կողմում, 400մ հեռավորությամբ տարածվում է հայկական հին գերեզմանոցը: Գերեզմանաքարերի մեծ մասը անտաշ սալաքարեր են: Մրանցից մի քանիսի վրա քանդակված են նետ ու աղեղ, սուր, գավազան, սափոր, իսկ մեկի վրա պահպանվում է նաև արձանագրության մնացորդը:

2. ՏԱՊԱՆԱԲԱՐ (չափերը՝ 127x32x35սմ), հարավային երեսին միատող փորագրված է (նկ. 2). ԲԻՐՎԷԱՍԵ:


Ծանոթ. Զանդակների ռճն ու գրչությունը բնորոշ է XV-XVI դարերին:

ԳՅՈՒՐԴԱՇԵՆ

Սա գտնվում է Հնդար գյուղից 3կմ հյուսիսարևմուտք: 1861թ. Գյուրդաշենն ուներ 17 տուն հայ բնակչություն, իսկ 1914թ. 189 հայ բնակիչ: Հարևան գյուղերի նման սա ևս մեծ կորուստներ է տվել 1918-1919թթ.: 1986թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղում բնակվում էին 42 մարդ (միայն հայեր): Գյուղի հարավ-արևմտյան ծայրում տարածվում է հին գերեզմանոցը: Տեղում մեծաթիվ են անարձանագիր հնաճոճ, որոշները կենցաղային թեմաներով պատկերաքանդակված տապանաքարերը:

3. ՏԱՊԱՆԱԲԱՐ, ուղղանկյունաձև, հարավային երեսին եռատող փորագրված է (նկ. 3). ԹՎ(ԻՆ) ԶԳԶ(1547) ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ԱՂԱՅ Պ(Ա)ՅԱ(Ն) ՏԻՐ ՊԱՇԵՆ:

5. Ֆ. 56, g. 1, q. 7787, p. 15:




4. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ, ուղղանկյունաձև, հարթ երեսին 15 կարճ տողերով փորագրված է.

ԱՅՍ| Է Հ|ԱՆ|ԳԻՍ|Տ Բ|ՄԻՇՈՅ, |ՈՎ
Ո|Ր ԿԱ|ՐԴ|Ա ՅԱ|(ՂԱ)ԻԹ|Մ|ՅԻՇԵ|ՅԷԲ|:
Ծանոթ. Գրչությունը բնորոշ է XVI-XVII դարերին:

ԳՅՈՒՐՁԵՎԱՆ

Շրջանի հայաբնակ գյուղերից ամենից մարդաշատն էր: 1861թ. ուներ 120 տուն հայ բնակչությամբ: 1890-ին այն կազմում էր 242 տուն (1225 բնակիչ): 1904թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ուներ 312 տուն (1864 բնակիչ):⁶ 1981թ. գյուղն ուներ 726,⁷ իսկ 1986թ. հունվարի 1-ի մարդահամարով 546 հայ բնակիչ,⁸ որոնք բոլորն էլ բռնագաղթվեցին 1988թ.: Գյուղի տարածքում հին արձանագրություններ հայտնաբերվել են երկու տեղ. գյուղամիջի Սբ. Գրիգորիս եկեղեցում և գերեզմանոցում:



Եկեղեցին ներկայումս գոյություն չունի: Այն հիմքից քանդել, իսկ տեղում բնակելի տներ են կառուցել: Նախկինում հետազոտողները սրա որմեքից ընդօրինակել են 2 արձանագրություն: Դրանք ոչնչացվել են եկեղեցու քանդման ժամանակ: Ստորև ներկայացնում ենք նորահայտ ևս 11 արձանագրություն, որոնք հավաքել ենք գյուղի գերեզմանոցի հին մասից: Մեկ արձանագրություն էլ գյուղից 2 կմ հարավարևելք գտնվող «Ղաղրուք» կոչված աղբյուրից:

5. ՍԲ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵԿԵՂԵՑԻ, ներսում, հարավային ավանդատան դռան ճակատին ազուցված քարին եղել է տեղի հին եկեղեցու շինարարական արձանագրությունը.

ՇԻՆԵՑԱԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ ... ՀՐԱՍԱ
ՆԱԻ ԹՈՍԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ՀԱՅՈՅ
ՍՈՎՍԷՍ ԿԱԹՈՒԴՈՒՄԻՆ, Ի ԹՎԻՆ
ՈՉԲ (1633):

Հրատ. Բարխուտարեանց, 181:

6. «Кавказский Календарь на 1907г.», Тифлис, 1909, отдел 2, т. 2, с. 184:

7. «Աղբյուրանական Սովետական Հանրագիտարան» (աղբյուրանագրություն), Բարս, 1982, հատոր 6, էջ 127:

8. Ըստ գյուղապետի մատյանների:


6. ՍԲ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵԿԵՂԵՑԻ, հարավային դռնագլխին արտաքուստ փորագրված է եղել.
Ի ԹՎԻՆ ՀԱՅՈՅ ՈՍՉԵ (1836) ԱՄԻ, ՇԻՆԵՑԱԻ Ի ԿԻՐՁՎԱՆՈՒ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ Ի ՀԱՍԱԳՈՒՍԱՐ ԺՈՂՈՎՐԴՈՅ: ԳՐՈՂՍ ԵՄ ՏԵՐ ՍԱՐԳԻՍ ՕՂԱՆԵԱՆ:

Հրատ. Բարխուտարեանց, 181: Զաջրերունու մոտ՝ փոքր ինչ տարրնքերցված (քերք 41):

Ծանոթ. 1821թ. Գյուրջևանում հիշվում է Սբ. Աստվածածին անվամբ եկեղեցի («ՀՊՊԿԿԻՄ», ֆ. 56, ց. 1, գ. 3426, ք. 35), իսկ 1836թ. (ըստ սույն արձանագրության) այդ եկեղեցու տեղում կառուցվել է նոր եկեղեցի և օծվել Սբ. Գրիգորիսի անվամբ: 1865թ. Շամախու բենի առաջնորդ Դանիել արքեպիսկոպոսը կարգադրություն է արել եկեղեցին պարսպապատելու և կից ուսումնարան կառուցելու մասին (ֆ. 56, ց. 1, գ. 4368, ք. 20): 1866թ. նախապատրաստվում էր նորոգել եկեղեցու քայքայված տանիքը (ֆ. 56, ց. 1, գ. 4819, ք. 1): Ուշագրավ է, որ այդ փաստաթղթերում եկեղեցին կրկին հիշվում է Սբ. Աստվածածին անվամբ: Արդեն 1903թ. պահանջ է գրագրվել կրկին «նորոգել գայն» (ֆ. 56, ց. 1, գ. 10078, ք. 1):

7. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գերեզմանոցում, ուղղանկյունաձև, հարավային երեսին քառատող փորագրված է (նկ. 7).

ԱՅՍ Է ՏԱՊ(Ա)Ն ԲՕԽԱՅ ԱԶԸՐԵԻ ՈՐԴԻ ԿԱՓԵԼ, ԹՈՒՈՍ ՇԱՅԲՈՏԱՂ, ԻՐ ՓԵՍԱ ՅԱԿՈՒՓՍ ԳԵՐԻՐ ԴՎԱ, Ի ԹՎԻՆ ՈՄԺԱ (1762):



8. ՏԱՊԱՆԱԶԱՐ նախորդի մոտ, նույնպիսի. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱԶԸՐԻ ՈՐԴԻ|ՍԱՐԿԱՅՎԱԶ ԵՂԻԵԱՅՉԱՐ, ԻՐ ԿՈՂԱԿԻՑ ՍԱՆԱՍ, ԹՎ(ԻՆ) ՈՄՃԼԸ (1788):

9. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գերեզմանոցի անտառածածկ մասում, նույնաձև (նկ. 5).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՃԱՆՇԻ ՈՐԴԻ | ԱԹԱՊԱԿ ԲՈՎԵԻ, ԹՎ(ԻՆ) ՈՄՃԽԴ (1795):



10. ՏԱՊԱՆԱԶԱՐ նախորդի մոտ (նկ. 6). ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՇԱՍ(Ա)ՆԻ ՊՆԱԿԵ(Ա)Լ ՕՍՍԱՆՅԻ ԱԽԱԸԻ ՈՐԴԻ ԱՂԱՃԱՆ, ԹՎ(ԻՆ) ՈՍՏԻԴ (1795):

19. ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅԻ, շինարարական արձանագրությունը.

ԿԻՐԿԻՆ ԲԵԿ ԱՒՇԱՆԵԱՆՅ 1844 ԱՄԻ ՅՈՒՆԻՄԻ 7-ԻՆ ԿԱՌՈՒՑԱԻ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐՍ ԱՅՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՒՀՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾԱՅ Ի ՅԻՇԱՍԱԿ ՍՈՅՆ ՀՆՂԱՐ ԳԵՂՁ ՀԱՅՈՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ՝ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ՆՈՑԻՆ, ՄԱՆԱԻԱՆԴ ՄԵՃԱԻ ՋԱՆԻԻԲ ԵՒ ԱՐԴԵԱՄԲԸ ԳԼԽԱԻՈՐԱՅՆ:

Հրատ. Բարխուտարեանց, 182:

Ծանոթ. Արձանագրությունը ոչնչացվել է եկեղեցու քանդման հետ միաժամանակ: Հայտնի է, որ 1858թ. եկեղեցին ուներ մի շարք վնասված ու քայքայված տեղեր, որի կապակցությամբ նախատեսվում էին նորոգչական աշխատանքներ (Ֆ. 56, ց. 1, գ. 3684, ք. 1): 1862թ. Շամախու հայոց հոգևոր կառավարությունը՝ կոնսիստորիան Էջմիածնի Սինդոնին զեկուցել էր այդ աշխատանքների քարեհաջող կատարման ու ավարտման մասին (Ֆ. 56, ց. 1, գ. 3684, ք. 18): 1870թ. Հնդար գյուղի հասարակությունը դարձյալ դիմել էր հոգևոր կառավարությանը եկեղեցու տանիքը նորոգելու քույրություն ստանալու նկատառումով (Ֆ. 56, ց. 1, գ. 5544, ք. 1): Նախատեսվում էր տանիքը պատել տախտակյա ծածկով: Նույն քվին ստացվել էր նորոգման քույրությունը (Ֆ. 56, ց. 1, գ. 5544, ք. 2): Արդեն 1880-ական թթ. վերջերին եկեղեցին գտնվում էր վթարային վիճակում, քանի որ վնասվել էր ուժեղ երկրաշարժից (Մ. Բարխուտարեանց, էջ 182), իսկ 1893թ. Շամախու քեմի առաջնորդը հայտնել էր, որ ինքը օժել էր սրբատաշ քարերով կառուցված գյուղի նորաշեն եկեղեցին (Մ. Մնրատեանց, էջ 360):

20. ՏԱՊԱՆԱԹԱՐ, հիմնավեր եկեղեցու մուտ, ուղղանկյունաձև.

ՅԻՇԱՍԱԿ Է ԱՅՍ ՏԱՊԱՆՍ ՀԸՆՂԱՐԵՅԻ ԼԵՂԱՆԱՅ ՏԵՐ ՅՕՀԱՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆՅԻ | ԱՆՈՒԱՆՅԻ, ԹՎԻՆ ՌԲԸ (1751), ԱՄԷՆ:

Ծանոթ. Քաջբերունի, քերթ 51 (անտիպ): Ընդօրինակել է քազմաթիվ վրիպումներով:

21. ՏԱՊԱՆԱԹԱՐ, նախորդի մուտ, նույնաձև. ԵՍ ԵՄ ՀՈՂԱՊԱՏԵԱՆ ՇԻՐԻՄԵ | ՏԱՄԲԱՐԱՆԻ ՆՈՐՇԻՆՈՒ ԳԱԼՈՒՄՏԻ | ԿԵՆԱԿԻՑ ԲՈՐՉԱԿ Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)ԾԱՏՈՒՐԵՆ | ԸՆԹԵՐՅՈՂԱՅԸԴ ՀԱՅՅԵՄ ԳԱԼ ՈՂՈՐՄԻ, ԹՎ(ԻՆ) ՌՍԼԵ (1786):

Ծանոթ. Քաջբերունի, քերթ 51 (անտիպ): Ընդօրինակել է վերջին երկու տողերի քացրողմամբ և այլ մանր վրիպումներով:

22. ՏԱՊԱՆԱԹԱՐ, նախորդի մուտ, նույնաձև. Ի ՆԵՐՔՈՅ ՏԱՊԱՆԵՍ ԱՅՍ | ՀԱՆԳԵԱՎ ԱՌԱՔԵԼ Բ(Ա)Հ(Ա)Ն(Ա)Յ |ՏԵՐ ՍԱՐՏԻՐՈՍԵԱՆՅ | 66 ԱՄՈՔ ԻՐՈՎ 1894 Թ.,| Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ:

Ծանոթ. Առաքել քահանա Տեր-Մարտիրոսյանցի մասին՝ իբրև Հնդար գյուղի հոգևոր հովիվ, փաստաթղթերում հիշատակություններ կան սկսած 1890թ-ից (Ֆ. 56, ց. 1, գ. 8162, ք. 3): Հայտնի է նաև, որ 1886թ. գյուղը քա-

հանա չուներ, հետևաբար Առաքելը Հնդարի քահանա էր ձեռնադրվել 1886-1890թթ. միջակայքում:


23. ՏԱՊԱՆԱԹԱՐ, նախորդի մուտ, նույնաձև. Ի ՆԵՐՔՈՅ ՏԱՊԱՆԻՍ ԱՅՍ | ՀԱՆԳԻՍՏ ԿԻՆ՝ ԱՌԱՔԵԼ Բ(Ա)Հ(Ա)Ն(Ա)ՅԻ ՇԱՀՐԱԶ ՏԵՐ ՍԱՐՏԻՐՈՍԵԱՆՅ, 1890 Թ. 50 ԱՄՈՔ ԻՐՈՎ | ՀՆՂԱՐ ԳԻՒԴ, Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ:

24. ԽԱՉԹԱՐԻ արևմտյան երեսին, Հնդարի միջին թաղի զերեզմանոցում (նկ. 2).

Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ՍՈՒՄՓԱՅ | ԻՆ:
Ծանոթ. Ըստ ռուսական և զեղարվեստական առանձնահատկությունների, գրչության ձևի և շրջակա ուրիշ խաչքարերի հետ համեմատական ուսումնասիրության՝ այն կարելի է քվազրել XIV-XV դարերով:


25. ՏԱՊԱՆԱԹԱՐ նույն զերեզմանոցում, հարավային երեսին՝ երկտող (նկ. 13).

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ Տ(Է)ՐՍ(Ա)Հ(Ա)ԿԻ, ԹՎ (Ի)Ն ՌՇՏԱ (1702):




26. ՏԱՊԱՆԱԹԱՐ նախորդի մուտ, հարավային երեսին.

ԱՅՍ Է Հ(Ա)ՆԳ(ԻՍ)ՏՆ Տ(Է)Ր ԱԲՐ(Ա)Հ(Ա) ՄԻ ԴՈՒՍՅՐ ՆԱՐԻՆԻՆ, ՌՇՏԱ (1702):




27. ՏԱՊԱՆԱԹԱՐ (չափերն են՝ 144x22x35 սմ) նախորդի մուտ (նկ. 14).

ԱՅՍ Է Հ(ԱՆ)Գ(Ի)ՍՏ Տ(Է)Ր Ս(Ա)Հ(Ա)ԿԻ ՈՐԴԻ Տ(Է)Ր ԱԲՐ(Ա)Հ(Ա)ՄԻ, ԹՎ(Ի)Ն ՌՇՏԲ (1703):Տ(Է)Ր ԱԲՐ(Ա)Հ(Ա)ՄԻ ԿՈՂԱԿԻՑ Ը(Ա)ՀՍՈՒԼԹԱՆ| ԱՅՍ Ե(Տ) ԲԱՐՍ ՇԻՆՅԻ, ԵՌ (5000) ԴԻԱՆ ԽԱՐՁ ԱՐԻ:



28. ՏԱՊԱՆԱԶԱՐ (չափերն են՝ 99x22x50 սմ), նախորդի մոտ (նկ. 15). ԱՅՍ Է Հ(Ա)ՆԳԻՍՏ Տ(Է)Ր ԱԲՐ(Ա)Հ(Ա)ՄԻ ՈՐԴԻ ԲԱՐԻԽԵԱՄԻՍԻՆ, ՌՃԾԳ (1704):




29. ՏԱՊԱՆԱԶԱՐ (չափերն են՝ 93x30x65 սմ), նախորդի մոտ (նկ. 16).

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ...:

Ծանոթ. ժամանակակից է նախորդներին (ըստ գրչության և քարի մշակման ձևի):

30. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդների մոտ, հարավային և արևելյան նեղ կողմն փորագրված է (նկ. 17).

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԲԱՐԷ | ՊԱՇՏ ՇՐՎԱՆԻՍ, ՈՐ ԿԵՍՄԱՐԷ Զ(ՐԻՍՏՈ)Ս ՓՈՒՆԵՑԱԻ, ՈՎ ԿԱՐԴ(ԷԶ) | ԱՂԱԹՍ ԻՇԵՑԷԶ, | ԹՎԱՂ ԿԱՆԸ | ՃԴԹ (1750):



Ծանոթ. Այնհայտ է, որ թվականի մեջ գրիչը բաց է բողել հազարավորը՝ Ռ-ն:

31. ՏԱՊԱՆԱԶԱՐ (չափերն են՝ 110x20x50 սմ), ներքին թաղի գերեզմանոցում, հարթ երեսին երկտող փորագրված է (նկ. 18).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՐՁԻՍԱՆԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՃԿԶ (1717):

32. ՏԱՊԱՆԱԶԱՐ (չափերն են՝ 127x22x28 սմ) նախորդի մոտ, հարավային և արևելյան երեսներին հինգ տողով փորագրված է.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԽԹԱՐԱՅ, ՈՐ ԿԵՍՄԱՐԷԻ Զ(ՐԻՍՏՈ)Ս ՓՈՒՆԵՑԱԻ, ՈՎ ԿԱՐԴԷԶ ԱՂՂԱՐ ԹՍ | ՅԻՇԵՑ | ԷԶ:

33. ՏԱՊԱՆԱԶԱՐ նախորդի մոտ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԸՍՏԵՓԱՆ | ԶՕԽԻ ԿՈՂԱԿԻՑ ԱՆԹԱՌԱՐԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄՆ (1791):

34. ՏԱՊԱՆԱԶԱՐ նախորդի մոտ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԸՍՏԵՓԱՆ | ԶՕԽԻ ՈՐԴԻ ԻՍՐԱԷԼԻՆ | ԹՎ(ԻՆ) ՌՄՆԸ (1799):

35. ՏԱՊԱՆԱԶԱՐ նախորդի մոտ, ուղղանկյունաձև.

ՅԻՇԱՍԱԿ Է ՏԱՊԱՆՍ ՀԸՆՂԱՐԵՑԻ ՉԱՐԿԵԱՐ ՍՏԵՓԱՆԻ ՈՐԴԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄՀԱ (1822):

Ծանոթ. Այս գրիչնար Ստեփանի հիշատակին Հնդարի ներքին թաղում աղբյուր է շինվել: Տես աղբյուրի արձանագրությունը (հմր. 40):

36. ՏԱՊԱՆԱԶԱՐ նախորդի մոտ, խիտ անտառի մեջ, ուղղանկյունաձև, հարավային երեսին փորագրված է..


ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՇԱՍԱԽԵՑԻ | ՍԱՐՔԻՄԻ ԿՈՂԱԿԻՑ ՀԸՈՒԸՍՄԻՐԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄՀԶ (1827):

37. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ, նույնաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆՍ ՄԱՐԻԱՍԱ | ԿԻՆ՝ ՄԻԶԱՅԷԼ ՄԵԾ ԻՇԵԱՆԻ, ԹՎ(ԻՆ) ՌՄՉԵ (1836):

38. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ (նկ. 19). ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՂԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԻՆ | ԱՂԱ ՄԻԶԱԷԼԵԱՆ ԱՇԽԱՐՈՎԻՆ | Ի ԲՆԱԿԻՉ ՀՆՂԱՐ ԳԻՒՂԻՆ, ՓՈՒՆԵԱՂ | ԱՌՓՐԿՉ(ԻՆ) ՅԻՍՈՒՍԻՆ 1837 ԹՈՒԱԿԱՆԻՆ:

39. ՏԱՊԱՆԱԶԱՐ, վերին թաղի գերեզմանոցում, ուղղանկյունաձև (նկ. 20).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՐԹՈՒՆԻ ՈՐԴԻ | ՕՎԱՆԷՄԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄՆԸ (1799):



40. ԱՂԶՈՒՐ, ներքին թաղում, ճակատին եղել է հետևյալ արձանագրությունը.

ՅԻՇԱՍԱԿ Է ԱՂԲԻՐՍ ՉԱՐԿԱՐ ՍՏԵՓԱՆԻՆ, ԹՈՒՍԱՆԻ ՈՐԴԻ ՊՕՂՈՍԻՆ:

Ծանոթ. Զաջրերունի, թերթ 51 (անտիպ):

41. ԱՂԶՈՒՐ «ՆԱԲԱԼԻ», գերեզմանատան մոտ, ունեցել է հետևյալ արձանագրությունը.

ՅԻՇԱՍԱԿ Է ԱՂԲԻՐՍ ՇԱՍԱԽՈՒՅ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ ԵՒ ԿՆՈՋՆ ... 1846 ԹԻ:

Ծանոթ. Զաջրերունի, թերթ 52 (անտիպ):

ՔՈՎԼՈՒՃ (ՔՅՈՀԼՈՒՃ)

Մինչև 1988-ը զուտ հայաբնակ գյուղ էր: Գտնվում է Գյուրջևանից 5-6 կմ հարավ-արևելք, Աղսու գետի աջ բարձրադիր անտառածածկ սարավանջին: 1861թ. գյուղն ուներ 31, իսկ 1890 թ. 52 տուն (357 մարդ)¹⁶ հայ բնակչություն: 1986թ. հունվարի 1-ին գյուղն ուներ 56 բնակիչ (բոլորն էլ հայեր):¹⁷ Բուլվուրի Սր. Աստվածածին եկեղեցին ներ-

16. Մ. Մմբատեանց, էջ 139:

17. Ըստ գյուղխորհրդի մատյանների:

կայուն գոյություն չունի: Գերեզմանոցում հին տապանաքարերը անարձանագիր են:

42. ԱՂԲՅՈՒՐ, գերեզմանատան մոտ, ունեցել է հետևյալ արձանագրությունը.

ՅԻՇԱՏԱԿ Է ԱՅՍ ԱՂԲԻՐ ԲԵՈՂԼԻՋԵՑԻ ԽՈՒԿԱՋԻ ՈՐԴԻ ԲԱԲԱ, ԱՍՐԻ, ԴԱՆԻԷԼ, ԽԱՉԱՆ, ՍԱՅՐ ԻՄ ԷՐ Ի 1849:

Ծանոթ. *Քաջքերունի, քերթ 44 (անսխալ):*

Ե Վ Լ Ա Խ Ի Շ Ր Ջ Ա Ն

Շրջանը կազմավորվել է 1935թ. փետրվարի 5-ին: Այն զբաղեցնում է Կուր գետի աջ ու ձախ ափերի, Մինգեչաուրի ջրամբարին հարող տարածքները (1600 քառ. կմ): Ունի մեկ քաղաք (շրջկենտրոն Եվլախը) և 50 գյուղ: Մինչև 1918թ. շրջանի ներկայիս տարածքի Կուր գետի ձախափնյա մասում հայաբնակ էին հետևյալ 5 գյուղերը՝ Քանդակ, Հավարիկ, Մազրոտ, Արաշ կամ Էրմանի Բազար և Խանապատ: Կան մաս ալմախի գյուղեր, որոնց ներկայիս աղբրեջանցի բնակիչների նախնիները XVIII դարի կեսերին բռնությամբ մահմեդականացված հայեր էին:

Հայ մշակույթի հուշարձաններ պահպանվում են, ինչպես՝ 1918 թ-ից հայաթափ, այնպես էլ հին հայկական գյուղերում (օրինակ՝ Խաղան գյուղում):

Շրջանի կենտրոնական մասում, Կուր գետի երկու ափերին տարածվում են Մինգեչաուր քաղաքի (1954թ. փետրվարի 4-ից հանրապետական ենթակայության) թաղամասերը: Սրա ձախափնյա մասում, Մուղագիլանի պեղումների ժամանակ, հայտնաբերվել են VII դարի եկեղեցու ավերակները, հայերեն և աղվաներեն համարվող արձանագրությունների բեկորներով:

ՄԻՆԳԵՉԱՈՒՐ

Հիմնադրվել է 1945թ.: Բնակչությունը 63 հազ. (1980թ.): 1988 թ-ին այս քաղաքից բռնագաղթվեցին շուրջ 10.000 հայեր:

Քաղաքի ձախափնյա մասում, Մուղագիլանի պեղումների ժամանակ, որ կատարվել է 1949թ. Բ.Մ. Վախդովի կողմից հայտնաբերվել են վաղ միջնադարյան եկեղեցու և կից շինությունների մնացորդները: Պահպանվել են մաս հայերեն ու աղվաներեն համարվող մի քանի արձանագրությունների մնացորդները:

43. ԵԿԵՂԵՑՈՒ ավերակներում, կավճային քաղաղությանը սպիտակ կամարածև ջարդոտված քարի վրա միատող փորագրված է.

Ի ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՄՆԵՐՈՐԴԻ ԱՄՒՈՅՆ ԵՐԱԿՐԻ ... ՇԻՆԵՑԱԻ ԶԱՌԱՐԱՆ ՍՐԲՈՅՆ ԵՂԻՇԱՅԻ:

Հրատ. Ա. Գ. *Արրահամյան, Дешафровка Нагнисей Кавказских Азван, Ереван, 1964, էջ 76:*

Ծանոթ. Պեղումներից նույն ավերակներում հայտնաբերվել է մաս աղվաներեն համարվող արձանագրությանը վեճ քար, որի բովանդակությունը, ըստ Ա. Գ. Արրահամյանի վերծանության, զրեթե անփոփոխ կրկնում է շինարարության առթիվ փորագրված հայերեն արձանագրությունը: Նրա վերծանությանը՝ արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը. ՀԵՐԱԿԼԻ ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՄՈՒՆԵՐՈՐԴ ԱՄՒՆ ՍՈՒՐԲ ԵՂԻՇԵԻ (կամ Գիսի եկեղեցի) ԱՂՈԹԱՏՈՒՆԸ ... ԿԱՌՈՒՅՎԱԾ Է ... Ի ՀԻՇԱՏԱԿ ՀՈՐԵԼ ԵՂԻՍԿՈՂՈՍԻ: Վիմագրի ժամանակը ճշտվում է Հեթանոսականության տարիների շնորհիվ: Նա գահ է քարձրացել 610թ.: Հետևում է, որ սրա գահակարության երեսներող տարին կլինի 640թ.:

44. ԽՆՑԵԲԵԿՈՐ, գտնված նույն հնավայրից պեղումների ժամանակ.

ՄԻՍ(ԷՈՆ):

Հրատ. Ա. *Արրահամյան, նշվ. աշխ., էջ 75:*

45. ԶԱՐԱԲԵԿՈՐ, գտնված նույն եկեղեցու պեղումների ժամանակ.

ՈՐԵԼ ԱԲԵՂ(ԱՅ):

Հրատ. Ա. *Արրահամյան, նշվ. աշխ., էջ 75:*

Ծանոթ. *Հորել եպիսկոպոսը VII դարում Աղվանից աշխարհի ախանավոր եկեղեցականներից մեկն էր: Մ. Կաղանկատվացին սրան հիշում է իբրև «աղաքբաժաւալ գիտութեամբ» անձնավորության:*

ԱՐԱՇ (ԱՐԵՇ, ԷՐՄԱՆԻ ԲԱՋԱՐ)

Արաշը իբրև վաճառաշահ քաղաք հայտնի է միջնադարից: Այն հատկապես ծաղկում ու մարդաշատ էր XV-XVII դարերում: Շամախի և Շաքի քաղաքներից հետո Արաշը Կուր գետի ձախափնյակում երրորդ խոշոր քաղաքն էր: Անդրկովկասում մետաքսի արդյունահանման գլխավոր կենտրոններից էր: Առևտրի զարգացմանը Արաշում հատկապես նպաստում էր նրա աշխարհագրական դիրքը: Փաստորեն Արաշը գտնվում էր Տիֆլիս-Գանձակից ու Թավրիզ-Պարտավից՝ Շաքի-Գրեմի և Շամախի-Բաքու տանող հին ճանապարհների հանգույցում: 1640թ. մի հիշատակության համաձայն քաղաքում կար շուրջ 10 հազար հողատնակ տուն, 40 փողոց, 800 խանութ, 16 բաղնիք, 17 սրճարան և այլն:¹⁸

Ինչպես ողջ երկրամասի հարյուրավոր այլ բնակավայրերում, Արաշում ևս հայերը բնակվել են հին ժամանակներից սկսած: Շամախու և Շաքիի օրինակով նրանք այստեղ ևս զբաղվում էին մետաքսի արդյունահանմամբ, կաշվի արտադրությանը ու դրանց վաճառքով: Տնտեսության կարևոր ճյուղերից էին մաս ալգեզործությունն ու խաղողագործությունը: Ուշագրավ է, որ քաղաքի Արաշ անվանմանը զուգահեռ դեռ հին ժամանակներից օտարների կողմից նրան տրված ու գործածական

18. Էվլիյա Չելեբի, Երևան, 1967, էջ 87-88:

է եղել երկրորդ անունը, այն է՝ Էրմանի Բագար (այսինքն՝ Հայի Շուկա): Էրմանի Բագար կամ Արաշ անվանումները զուգահեռաբար պահպանվել են մինչև մեր օրերը: Հատկանշական է, որ վերջին դարերում ավելի շատ գործածական է Էրմանի Բագար անվանաձևը: Այս անվանման առկայությունը միաժամանակ թույլ է տալիս ենթադրելու, որ ինչպես Շամախում, Շաքիում և այլուր, Արաշում ևս հայ բնակչությունը կազմել է մեծամասնություն, որն էլ քաղաքի տնտեսական կյանքում ու արտաքին հարաբերությունների մեջ խաղացել է առաջատար դեր:

XIX դարում գյուղը վարչականորեն մտնում էր Նուխու (Շաքիի) վիճակի Արաշ կամ Արեշ գավառի կազմի մեջ: Գյուղում էր գտնվում Սբ. Շոխշե եկեղեցին: Մի վավերագրում վերջինս հիշատակվում է 1839թ.:¹⁹ Մինչև 1917թ. գյուղը հիմնականում ծաղկել էր ու զարգացել է:

1914թ. Էրմանի Բագար - Արաշ գյուղն ուներ 323 բնակիչ (բոլորն էլ հայեր):²⁰ Մական 1917թ. երբ գյուղն ուներ 50 տուն հայ բնակիչ,²¹ ենթարկվեց թալանի շրջակա մահմեդականների կողմից: 1918թ. ապրիլին գյուղի բնակչությանը հրամայվում է ընդունել մահմեդականություն, որի մերժումը ստանալուց հետո մահմեդական հրոսակները բնակիչներին կողոպտում են, իսկ գյուղն ավերում:²² Այդպես երկրամասից ջնջվում է հարյուրամյակների պատմություն ունեցող հինավուրց Արաշ կամ Էրմանի Բագար գյուղը: Ավելի ուշ, Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո գյուղատեղիում հաստատվում են մահմեդականների՝ նստակեցության անցած նոր խմբեր (սկսեցին կոչվել ադրբեջանցի), որոնք տարօրինակ կերպով պահպանեցին երբեմնի հայաբնակ գյուղին տրված Էրմանի Բագար անվանումը: Վերաբնակիչները ոչնչացրեցին Սբ. Շոխշե եկեղեցին ու հինավուրց հայկական գերեզմանոցը: Վերջինիս միջով ձգվեց հարևան Շիլյան գյուղը տանող ասֆալտապատ խճուղին, իսկ ճանապարհից դուրս մնացած գերեզմանոցի մասերը բուրդոզերներով մաքրվեցին ու դարձան վարելահողեր: Մեր այցելության ժամանակ ավերված գերեզմանոցի տարածքից գտանք միայն երկու տեղահան արված, բայց բարբարոսների տեսադաշտից հավանաբար վրիպած սալատապաններ, որոնք կրում էին արձանագրություններ:

46. ՄԱԼԱՍԱՊԱՆ, անկանոն եզրագծով, չափերը 138X47X20սմ: Երեսին փորագրված է քառատող արձանագրություն և հավերժության խորհրդանշան՝ վարդյակ (նկ. 21):

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ | ՆՆՁԵՑԵԼՈՅՍ | ՈՒՍՈՒԻ ԽԱԹՈՒՆ | ԻՆ, ԹՎ(Ա)Կ(ԱՆ) ՌԺԲ (1563):

19. ՀՀՊՊԿԱ, ֆ. 56, գ. 1, զ. 562, ք. 1, 13:

20. "Кавказский Календарь на 1915 г.", էջ 91:

21. ՀՀՊՊԿԱ, ֆ. 56, գ. 4, զ. 779, ք. 1:

22. ֆ. 245, գ. 12, ք. 1:



47. ՄԱԼԱՍԱՊԱՆ, տեղահան արված և կտրված: Զարդված կես մասը չգտնվեց: Պահպանված կտորին (չափերը՝ 125X40X35սմ) կա եռատող արձանագրություն (նկ. 22):

ԱՅՍ Է ԴԱՊԱՆ ԱՐԱՇՈՒՐ ... | (ԲԱ) ԶԱՐՑԻ Տ(Է)Ր ԿԱՐԱՊԵՏԵԱՆ Տ(Է)Ր ... | ՌՄԿԹ (1820) ԹՎԻՆ:



Ծանոթ. Երկու արձանագրություններն էլ 1-ին անգամ հրատարակել ենք «Երևանյան օրեր» թերթում (№ 21, 1997թ.):

ՄԱԶԲՐՈՒ

Մինչև 1918թ. հայաբնակ Մազրդու հինավուրց հայկական գյուղը գտնվում է Կուր գետի ձախ ափից 1-2 կմ հեռավորության վրա: Գյուղի մասին մատենագրական տեղեկություններ հայտնի չեն: XIX դարում այն Արաշ կամ Արեշ գավառի սակավաթիվ հայկական գյուղերից մեկն էր: 1853թ. ուներ ընդամենը 119 բնակիչ և Սբ. Գևորգ եկեղեցին:²³ 1891 թ. դրությամբ թեև գյուղն ուներ 42

23. ՀՀՊՊԿԱ, ֆ. 56, գ. 1, զ. 2914, ք. 92:

տուն բնակիչ, սակայն արդեն 16 տարի էր, որ սեփական քահանայից գուրկ էր.²⁴ 1901թ. ուներ 393 բնակիչ (206 ար., 187 իգ.).²⁵ Մագրղուն տուժել է 1905-06թթ. հայ-թուրքական ընդհարումների հետևանքով: Արդեն 1905թ. գյուղի բնակչության թվաքանակը նշված դեպքերի պատճառով նվազել էր ու կազմում էր 261 անձ (154 ար., 107 իգ.).²⁶ Հետագա համեմատաբար խաղաղ տարիներին գյուղի բնակչությունը դարձյալ ավելացել է և 1914թ. դրությամբ կազմում էր 382 մարդ (միայն հայեր):²⁷ Մակայն մի քանի տարի անց Մագրղու գյուղին բաժին հասավ այն, ինչ վիճակվել էր ողջ երկրամասի հայ բնակչությանը: 1917թ. դեկտեմբերին գյուղը Արաշ գավառի մյուս հայաբնակ գյուղերի օրինակով կողոպտվեց: Հաջորդ տարվա ապրիլ ամսին կոտորածի սպառնալիքի տակ մագրղեցիները ընդունեցին «խլամը», սակայն անձնատուր լինելուց հետո դարձյալ բնաջնջվեցին հարևան՝ խլամին ընդդիմացած հայկական գյուղերի նման.²⁸ Հայտնի է, որ 1919թ. քանդակցի, էրմանի բազարցի, հավարիկցի ու Արաշ գավառի այլ գյուղերի հայ գաղթականների թվում կային նաև մագրղուցի փախստականներ, որոնք մշտական բնակության համար տեղավորվել էին Էջմիածին կայարանի մոտ գտնվող Կարխուն (Արշակակերտ) գյուղը.²⁹ Այդպես երկրամասից վերացավ հինավուրց հայկական գյուղերից ևս մեկը՝ Մագրղու:



Մագրղու գյուղի մոտ ցայսօր կանգուն է Ար. Ավագ Նշան մատուռը: Ժողովրդին այն առավելապես հայտնի է եղել Սբ. Խաչ կամ Սբ. Եղիշեն անուններով: Մատուռի միակ մուտքի (արևմտյան ճակատում) բարավորին փորագրված է 8 տող արձանագրություն:

48. ՄԲ. ԱՎԱԳ ՆՇԱՆ մատուռի կարմիր տուֆ քարից կերտված բարավորին փորագրված արձանագրությունը (նկ. 23).
 1867 ԹՎԻՆ ՍԿՍԵԱԼ Ի Ն(Ո)Ր Շ(Ի)Ն(ՈՒԹԻՆ) | ՓՈՔՐԱԳՈՒ(Յ)Ն ՍԱՏՈ(Ի)Ռ Ի Վ(Ե)Ր(Ա) | Ս(ՈՒՐ)Բ ԱՄԳ ՆՇԱՆԻ, ՈՐ Է ՇԻ | ՆՕՂՆ ՍԱԶԻՅԻ ՅՕՍԵՓԻ ՈՐԴԻ ԲԱՐԱՐԱՄ, ՇԻՐԻՆ, ԳԱՄԲԱՐ | ԵՒ ՈՐԴԻ ՈՒՐՇՈՒՏ ԵՒ ՍԱԶՈՒՐՈՒ ԺՈՂ(ՈՎ)ՈՒՐՏ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՕՐՆԻ, ՈՐ ՄԵԶ ՕԳՆԵՑԻՆ:

24. ֆ. 56, ց. 1, գ. 8667, ք. 1, 5:
 25. ֆ. 56, ց. 1-2, գ. 205, ք. 243-244:
 26. ֆ. 56, ց. 1, գ. 10403, ք. 144-145:
 27. "Кавказский Календарь на 1915г.", էջ 155:
 28. ֆ. 245, գ. 12, ք. 1:
 29. Նշված գործը, ք. 22:

ԳՐԵՑԻ Տ(Է)Ր Խ(Ա)Չ(Ա)Տ(ՈՒ)Ր, | ՈՐ ԳԱՐ-Դ(Ա)Յ ՈՂՈՐՄԻ ԱՄԷ:
 Հրատ. Մ. Բարխուտարեանց, էջ 280 (ունի մանր վրիպումներ):

ՔԱՆԴԱԿ

Հայաբնակ գյուղ էր մինչև 1918թ.: Գտնվում էր Կուր գետի ձախ ափին, հնագույն տարանցիկ առևտրական ճանապարհի վրա: Երկրամասի հինավուրց, մարդաշատ ու ծաղկուն բնակավայրերից մեկն էր, գրչօջախ: Մատենագրության մեջ Քանդակը հիշատակվում է սկսած 1628թ-ից: Այդ թվականին գյուղում նորոգված մի ձեռագիր «Անտարան»-ի հիշատակարանում կարդում ենք. «Փառք... Ես՝ տեղ Թաղեոս նորոգել տուի Սբ. Անտարանս յիշատակ ինձ... ի թուին Ռ-ՀԷ (1628), ի գիղս Քանդակ»: ³⁰ Քանդակը իբրև հայաբնակ գյուղ հիշատակվում է նաև 1640թ. «Կուր գետի մյուս ափին Քեմդերե անունով հայկական գյուղ կա, որտեղից նրանք (հայ գյուղացիները) նավակներով անցնում են Սիբուջրուտ և ձեռնածություններ անում»: ³¹ Այնուհետև գյուղը հիշատակվում է 1712թ. (նաև հաջորդ տարիներին) լեզգիների կատարած թալանչիական արշավանքների կապակցությամբ. «Այժմս եկեալ ի Քանտաք անուն գիղօրայս՝ իսպառ տարան»: ³² Հայտնի է, որ մինչ գյուղի վերոհիշյալ ավերումը, այն ուներ շուրջ 500 տուն հայ բնակչություն: ³³ Ավելի ուշ գյուղը թռուցիկ հիշատակվում է նաև 1806թ. վրացական ուղեգրություններում. «... Քուր գետն անցնելով, հասնում են Քանդակ հայկական գյուղը»: ³⁴ XIX դարի կեսերին գյուղն ուներ 60 տուն հայ բնակչություն: ³⁵ 1890-ական թթ. սկզբներին այն կազմել էր 120 տուն (825 մարդ): ³⁶ 1914թ. մարդահամարի տվյալներով գյուղում բնակվում էր 977 հայ: ³⁷

Պատմական հուշարձաններից XIX դարի կեսերին գյուղում հիշվում է փոքրիկ մատուռ, իսկ դարավերջին Սբ. Աստվածածին անունով փայտածածկ եկեղեցին: Այդ եկեղեցու բակում, տապանաքարերից մեկի վրա Մ. Բարխուտարյանցը տեսել, ընդօրինակել ու հրատարակել է մեկ արձանագրություն:

49. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԵԼԻԶ-ՄԵԼՔՈՒՄԻՆ, ՈՐ ԷՐ ՈՐԴԻ ՉԱԼԱՊՕՎԻՆ. ՕՎ ՈՔ ԿԱՐԴԱ, ԴԱ ՈՂՈՐՄԻ, 1840 ԱՄԻ:
 Հրատ. Բարխուտարեանց, 278:

30. «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հատոր Բ, Երևան, 1978, էջ 302:
 31. Է. Չեյքի, էջ 87:
 32. Պատմություն համառօտ Աղուանից երկրի յօրինեալ ի Տ.Եսայի Աղուանից կաթողիկոս Հասան Ջալալեանց, Երուսաղեմ, 1868, էջ 23:
 33. Ս. Ջալալեանց, նշվ. աշխ., էջ 383:
 34. Պ. Ա. Չորանյան, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981, էջ 150:
 35. Ս. Ջալալեանց, նշվ. աշխ., էջ 383:
 36. Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 279:
 37. "Кавказский Календарь на 1915 г.", Тифлис, 1914, էջ 140:

ՉԱՔԱԹԱԼԱՅԻ ՇՐՋԱՆ

Շրջանը, որը կազմավորվել է 1930թ. օգոստոսի 8-ին, իր զբաղեցրած տարածքով (1348 քառ. կմ) համապատասխանում է պատմական Բուն Աղվանքի հյուսիս-արևմտյան մասերին: Այն տարածվում է Ալազան (Աղվան) գետի ձախ կողմում ու հասնում ընդհուպ Մեծ Կովկասի ջրբաժան լեռնագիծը: Սահմանակից է Բելոկանի, Կախի (Ադրբեջան), Մոնախի, Ծիթեյի-Շոարոյի (Վրաստան) և Ռուբուլի շրջաններին (Դաղստան): Բնակչությունը 79.7 հազ. մարդ (1979): ադրբեջանցիներ, վրացիներ, ավարներ, լեզգիներ, ռուսներ, ախախներ, կուրդներ, ծախուրներ, հրեաներ, մինչև 1988-ի բռնագաղթը նաև հայեր (նախկինում եղել են նաև լեհեր, հույներ):

Ըստ մատենագրական տեղեկությունների, ինչպես նաև շրջանի տարածքում պահպանված պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրության՝ առնվազն վաղ միջնադարից այլացել բնակչության հետ մեկտեղ գավառի տարածքում բնակվել են նաև հայեր: Վերջիններս դեռևս հոծ քանակությամբ, բազմաթիվ գյուղերով շրջանի ներկայիս տարածքում բնակվել են ընդհուպ մինչև XVII դարի սկզբները, որից հետո պատերազմների ու առանձնապես լեռնականների կողմից պարբերաբար կրկնվող թալանչիական արշավանքների պատճառով հետզհետե լքել են իրենց բնակավայրերը և տեղափոխվել ավելի ապահով վայրեր: Հայտնի է, որ արտագաղթողների հիմնական մասը հաստատվել է Մոնախի գավառում ու քաղաքներում: Որոշ վայրերում վերաբնակիչները հիմնադրելով նոր գյուղեր, դրանք վերանվանել են իրենց հին լքված գյուղերի անուններով. ինչպես օրինակ Չաքաթալայի մոտ Դիպան և Բուխովլու հին հայկական գյուղերի (ներկայումս գյուղատեղեր են) արտագաղթած հայ բնակչությունը, Մոնախի գավառում հիմնելով նոր գյուղեր, դրանց տվել է միևնույն անվանումները: Այն գյուղերի հայ բնակչությունը, որոնք մնացել էին իրենց հարազատ գյուղերում, XVIII դարի առաջին կեսում շրջանապատկառված բռնությունների, դավաճանափոխության գնով փրկվեցին բնաջնջումից: Հետագա տարիներին, ինչպես և բնական էր, նրանք կորցրին նաև մայրենի լեզուն և ազգային սովորույթների զգալի մասը: XIX դարի սկզբներին գավառի (ներկայիս՝ շրջանի) տարածքում հայեր բնակվում էին միայն Չաքաթալա բնակավայրում: Այդտեղ հայերի թվաքանակը առանձնապես սովաբացավ 1815թ. սկսած, երբ հաստատվեցին մեծ թվով ազուլիսցիներ, իսկ հետագայում նաև այլ տեղերից գաղթած բազմաթիվ հայեր:

Չաքաթալայի շրջանում բազմաթիվ են հայ մշակույթի հետքերը: Շատ բնակավայրերում ու դրանց շրջակայքում նկատելի են հայկական բազմաթիվ եկեղեցիներ, վանքեր, գերեզմանոցներ, գյուղատեղեր ու տեղում հայության երբեմնի աշխույժ, ստեղծագործ ու ծաղկուն մշակութային կյանքի տասնյակ վկայություններ: Առանձնապես արժեքավոր են Մամրուխ, Օխախդերե գյուղերի շրջակայքում պահպանված կիսավեր եկեղեցիները, Դիպան, Բուխովլու գյուղատեղերը՝ իրենց կիսավեր եկեղեցիներով ու գերեզմանոցներով, Չաքաթալայի Սբ. Գևորգ եկեղեցին, գերեզմանոցն ու հասարակական բնույթի բազմաթիվ շենքերը: Շրջանի տարածքում վիճազիր արձանագրությունների ուսումնասիրման աշխատանքներ ցայսօր կատարել է միայն Մ. Բարխուտարյանը: Նա հրատարակել է Սբ. Գևորգ եկեղեցու որմերին եղած 4 արձանագրությունները: Մեր այցելության ժամանակ (1984թ.) եկեղեցին գտանք խիստ ձևափոխված վիճակում: Այն օգտագործվում էր իբրև հանրակացարան և ներքուստ բաժանված էր երեք հարկաբաժինների (յուրաքանչյուրում՝ 6 բնակարան): Պատերի մեծ մասը, ուր փորագրված էին եղել վիճազիր արձանագրությունները սփռված էին, ներկված և հետևաբար դրանցից և ոչ մեկը չկարողացանք վերագտնել: Բացառություն է կազմում եկեղեցու արևմտյան ճակատին ազուլիսցի արձանագիր քարը, որն էլ դուրս էր մնացել Մ. Բարխուտարյանի տեսադաշտից: Հետևաբար մեր հավաքածուն նախկինում հրատարակվածների հետ մեկտեղ կազմում է 5 միավոր:

ՉԱՔԱԹԱԼԱ

Գտնվում է շրջանի համարյա կենտրոնում, Շաքի-Բելոկան մայրուղու վրա, Կովկասյան անտառապատ լեռների հարավ-արևմտյան ստորոտին: Քաղաքի անվան համար ավանդաբար պատմվում է. «... ժամանակաւ Չաքար և Թալայ անուն երկու եղբարց մին՝ Չաքար, հիւսիս արեւելեան կողմը ճար գիւղի մէջ կը բնակի եղեր, իսկ Թալայ՝ հարաւակողմը Թալայ գիւղի մէջ, և թէ այս երկու անուանց միացմամբ յորջորջուեր է երկու գիւղից մէջ գտնուած քաղաքն՝ Չաքարթալայ, և հետզհետե գործածուելով՝ ր տառն ոչնչացեր է ...»:³⁸ Ըստ հայտնի վիճակագրական տեղեկությունների՝ քաղաքում հայերը կազմում էին բնակչության մեծամասնությունը: Այդ իրավիճակը պահպանվել է

մինչև 1918թ. հայերի տեղահանությունը ու կոտորածը: 1876թ. քաղաքն ուներ 1117 բնակիչ:³⁹ 1886թ. 1231 բնակիչ:⁴⁰ Նույն թվականին քաղաքում բնակչությունը, ըստ ազգության ուներ հետևյալ պատկերը. հայեր 510 մարդ (288 արակ., 222 իգակ.), ավարներ 493 մարդ (246 արակ., 247 իգակ.), ռուսներ 167 մարդ (126 արակ., 41 իգակ.), թաթարներ (այժմ՝ ադրբեջանցիներ) 25 մարդ (20 արակ., 5 իգակ.), վրացիներ 20 մարդ (11 արակ., 9 իգակ.), լեհեր 8 մարդ (4 արակ., 4 իգակ.), հրեաներ 8 մարդ (միայն արակ.):⁴¹ 1896թ. քաղաքն ուներ 2803

38. Հ. Ե. Բիբիկեան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903-1905, էջ 766-767:


39. "Кавказский Календарь на 1885г.", Тифлис, 1884, էջ 226:

40. "Кавказский Календарь на 1898г.", Тифлис, 1897, էջ 38-39:

41. "Кавказский Календарь на 1897г.", Тифлис, 1896, էջ 64:

բնակիչ: 42 1908թ.-ին 3890, 43 1914թ.-ին 3562, 44 իսկ 1916թ. 4505 բնակիչ, որից 2165-ը հայեր (1218 արակ., 947 իգակ.): 45

Բռնագաղթի նախօրեին Չարաքալայում բնակվում էին շուրջ 70 տուն հայեր: Քաղաքի Սր. Վարդանյան դպրոցը իր վերջին շրջանավարտներից տվել էր 1953թ., իսկ հետագայում վերածվել ռուսական դպրոցի մասնաճյուղի:



Քաղաքի պատմական հուշարձանների զարդը կազմում է հայոց Սր. Գևորգ եկեղեցին (կանգուն են նաև ռուսական և լեհական մի-մի եկեղեցիները): Այն խիստ ընդարձակ, եռանավ գմբեթավոր կառույց է, շինված գլխավորապես աղյուսով, 1851 թվականին: Տաճարն ունի երեք մուտք, բացված՝ հարավային, արևմտյան և հյուսիսային ճակատներից: 12 նիստանի աղյուսաշեն գմբեթը ներքուստ պահում են թվով չորս բոլորածև հաստահեղույս սյուները: Եկեղեցու տարբեր մասերից բացվում են թվով 36 լուսամուտներ (12-ը՝ գմբեթից, 4-ական՝ հարավային ու հյուսիսային և 3-ական՝ արևելյան ու արևմտյան ճակատներից): Կառույցի ստորին շարվածքներում աղյուսից բացի օգտագործված է նաև գետաքար:

50. Սր. Գեվորգ ԵԿԵՂԵՑԻ, հարավային մուտքի ճակատային մասում եղել է.

ՀԱՅՈՑ 1851 ԹՎԻՆ ՉԱՔԱԹԱԼՈՒ ՂԱՐԻՊԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ ՏՐՕՔՆ ԵՒ ԱՐԴԵԱՄԲՆ ԱՆՈՒԱՄԲ ՍՐԲՈՅՆ

ԳԵՈՐԳԱՅ ՉՕՐԱՎԱՐԻՆ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՌՈՒՄԱՅ ԹԱԳԱՌՈՒԹԵԱՆ ՆԻԿԱԼԱՅ ՊԱՒԼՈՎՉԻՆ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ Ե. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ. Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՍՈՑԱ ՓՈՒՆԱՐՔԱՅՆ ԵՐ ԳՆԵԱԶ ՎԱՐԱՆՅՈՎՆ ԵՒ ՏԵՂԻՈՅՍ ՉՕՐԱԳԼԽԱՊԵՏ ՂԵՆԵՐԱԼ ԳՐԻԳՈՐ ԳՆԵԱԶ ՈՐԲԵԼԵԱՆՈՎՆ ԵՒ ԶԱՀԱՆԱՅՆ ԵՐ ՏԵՐ ՍԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ ԴԱՆԻԷԼՈՎՆ ԵՒ ԹՈՒԱԿԱՆՆ ՀԱՅՈՑ ՌՅ (1851):

Հրատ. Բարխուտարեանց, 274:

Ծանոթ. Վավերագրերի ռուսմասսիքությունից պարզվում է, որ Չարաքալայում հայկական եկեղեցի եղել է և՛ մինչև 1851 թ. կառուցված ու ցայսօր կանգուն շենքը: Միևնույն՝ Սր. Գևորգ անվամբ քաղաքում եկեղեցի հիշվում է օրինակ՝ 1833 թ. (Ֆ. 56, գ. 1, գ. 2319, ք. 2):

51. ՍԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ, ավազանի (մկրտության) ճակատին փորագրված է եղել.

ՅԻՇԱՏԱԿ Է ԴԱՇՏԵՑԻ ՀՕՀԱՆԻՍԻ ՈՐԹՅ ՍՏԵՓԱՆՕՎՆԵՐԻՆ 1851:

Հրատ. Բարխուտարեանց, 274:

52. ՍԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ, դասի աջակողմյան սյան վրա փորագրված է եղել.

1852 ԿԱՆԳՆԵՑԱՒ ՄԻԻՆՍ ՏՐՕՔ ԿԱՆՁԵՑԻ ՍԱՐԳՍԻ, ՊՕՂՈՍԻ, ՅԱՐՈՒԹԻԻՆԻ ԸԱՀՊԱՐՈՆԵԱՆՑ Ի ՅԻՇԱՏԱԿ ԻԻՐԵԱՆՑ:

Հրատ. Բարխուտարեանց, 274:

53. ՍԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ, դասի ձախակողմյան սյան վրա փորագրված է եղել.

1852 ԿԱՆԳՆԵՑԱՒ ՄԻԻՆՍ ԾԱԽԻԻՔ ՂԱՐԱԲԱՂՅԻ ՍԱՐԳՍԻ, ԴԱԹԻ ԵՒ ՍԱՐԳԱՐԻ ԲԱՐԻՆՈՒԴԱՐԵԱՆՑ Ի ՅԻՇԱՏԱԿ ԻԻՐԵԱՆՑ:

Հրատ. Բարխուտարեանց, 274-275:

54. ՍԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ, արևմտյան մուտքի ճակատին ազուցված սրբատաշ քարին վեց տողով փորագրված է (նկ. 24).

ՄՈՒՐԻՔ ԳԱԽԹՍ ՇԻՆԵՑԱՒ ՏՐՕՔ | ԱՐԹԵԱՄԲՆ ՍՂՆԱԽԵՑԻ ՍՏԵՓՈՒՆ ԳՐԻԳՈՐՈՎԻՆ, 1851 ԱՄԻ:

Ի Ս Մ Ա Յ Ի Լ Ի Շ Ր Ձ Ա Ն

Իսմայիլի շրջանը կազմավորվել է 1939թ. նոյեմբերի 24-ին: Մահմանակից է Դուրայի, Շամախու, Աղսուի, Գյուլչայի և Կուտկաշենի շրջաններին: Չբաղեցնում է 2064 քառ. կմ մակերես: Բնակչությունը 53800 մարդ (1979թ. հունվարի 1-ին): Շրջանում կա մեկ քաղաք (Իսմայիլի շրջկենտրոնը), 1 ավան և 107 գյուղ:

Մինչև 1918թ. շրջանի ներկայիս տարածքում հայաբնակ էին հետևյալ 24 գյուղերը. Վանքաշեն, Ռուշան, Բզավանդ, Ղալակա, Ուշուալ, Ազալի Շեն (Նորշեն), Փոքր Գանձակ, Նորշեն, Շուրուրչի, Կուզան, Գիքք, Փաթակլու, Զալբանդ, Բեշխուրդ, Գանձակ, Թոփիշեն, Ավանաշեն, Կարմախան, Աղբուլաղ,

42. "Кавказский Календарь на 1898г.", Тифлис, 1897, էջ 38-39:

43. "Кавказский Календарь на 1910г.", Тифлис, 1909, էջ 254:

44. "Кавказский Календарь на 1915г.", Тифлис, 1914, էջ 125:

45. "Кавказский Календарь на 1917г.", Тифлис, 1916, էջ 190-193:

Դայմադադ, Չարգարան, Քավանդ, Բահիան և Բիլիստան: Մինչև 1988-ը նշվածներից զուտ հայաբնակ էին՝ Ուշտալ, Ագայի Շեն (Նորշեն), Գիրք, Քալբանդ, Քեշխուրդ և Գանձակ գյուղերը: Խառն ազգային կազմով բնակչություն ունեին՝ Վանքաշեն, Ռուշան, Ղալակա, Թոփիշեն, Ավանաշեն, Չարգարան և Քավանդ գյուղերը: Ադրբեջանաբնակ կամ լեզգիաբնակ էին՝ Նորշեն, Շուքուրչու, Աղբուլաղ, Բահիան և Բիլիստան գյուղերը, իսկ անբնակ՝ Բզավանդ, Փոքր Գանձակ, Կուզոան, Փաթակլու, Կարմախան և Դայմադադ գյուղերը:

Շրջանի տարածքում հայ մշակույթի հուշարձանները սփռված են ամենուր: Առավել նշանավոր ու արժեքավոր են Ղալակա և Գիրք գյուղերի եկեղեցիները, Վանքաշեն, Ռուշան գյուղերի գերեզմանոցների խաչքարերը, Ծլիի սրբատեղիի մահարձանը և այլն:

Շրջանի տարածքում պահպանված հայերեն արձանագրությունների ուսումնասիրությամբ նախկինում զբաղվել է միայն Մ. Բարխուտարյանը: Երախտաշատ գիտնականը նշված տարածքից հավաքել ու հրատարակել է 55 արձանագրություն: Մեր կողմից դրանցից վերագտնվեցին միայն 7-ը, մնացածը կամ ոչնչացվել, կամ կորել և կամ վրիպել է մեր տեսադաշտից: Բացի այդ տարված աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են ևս 59 արձանագրություն, որոնք բոլորը միասին (114 միավոր) ներկայացնում ենք ստորև:



ԱԶԱՅԻ ՇԵՆ (ՆՈՐՇԵՆ)

Գյուղը գտնվում է Ղալակա և Ուշտալ հայկական գյուղերի միջև, շրջկենտրոնից 26 կմ հարավարևմուտք: Ըստ գյուղի գերեզմանոցում պահպանված տապանաքարերի ու դրանց արձանագրությունների՝ այն ունի համեմատաբար նոր պատմություն: Այստեղ չկան հնաոճ գերեզմանաքարեր, որպիսիք առատ են հարևան այլ գյուղերում: Գյուղի անվան երկրորդ տարբերակն իսկ վկայում է վերջինիս նոր լինելը: Գերեզմանատան ամենահին տապանագիրը 1796 թվականից է:

Սակայն, գյուղում և շրջակայքում հողային տարբեր աշխատանքների ընթացքում մշտապես գտնվում են հնագիտական բազմատեսակ իրեր, որոնք տեղում բնակավայրի գոյության փաստը տանում են հազարամյակների խորքը: Դրանցում ուշագրավ են մարդու և կենդանիների կավակերտ արձանիկները (այդ թվում պաշտամունքային բնույթի), խեցեղեն զանազան իրերը:

Ագայի Շենը 1861թ. ուներ 55 տուն, իսկ 1890թ. 83 տուն (693 մարդ)⁴⁶ հայ բնակչություն: 1914թ. հունվարի 1-ին գյուղի բնակչությունը կազմում էր 879 մարդ (բոլորն էլ հայեր):⁴⁷ Հարևան հայաբնակ գյուղերի օրինակով սա ևս 1918-20 թթ. մեծ կորուստներ է տվել: Մինչև այժմ համագյուղացիների հիշողություններում թարմ են 1918թ. ամռանը

թուրքական լավ զինված բազմաթիվ ասկյարների դեմ Հարություն Օհանյանի (1892-1976), Գրիգոր Մամուչարյանի (1870-1960) և ուրիշների համարձակ ու անկոտրում մարտերը:

1984թ. գյուղն ուներ 265 հայ բնակիչ (127 արական, 138 իգական):⁴⁸ Նրանք բոլորն էլ 1988-ի դեկտեմբերին բռնագաղթվեցին: Գյուղամիջի Մբ. Աստվածածին եկեղեցին, ըստ ականատեսի վկայության, դեռևս 1890-ական թթ. սկզբներին եղել է անխնամ վիճակում: Այն եղել է կիսով չափ փայտաշեն, որի տեղն իսկ այժմ չի նկատվում:

Գերեզմանոցում պահպանվել են XIX դարին վերաբերող բազմաթիվ արձանագիր տապանաքարեր: Դրանցում ուշագրավ են այնպիսիք, որ նշված է հանգուցյալների ծագումով դարաբաղի լինելը: Կան նաև հոգևորականների շիրմաքարեր:

55. ՏԱՊԱՆԱԶԱՐ գերեզմանոցում, ուղղանկյունաձև, ընկած է կողքի վրա, հարավային երեսին երկտող փորագրված է (նկ. 25).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍՈՒՎԱԶ ԵԿԱՆԻ ՍՈՐԴԻ ԳԱՆԷԼ(ԻՆ), ՈՍԽԵ (1796):

ԱՅ Ա Տ Ա Պ Ա Ն Ս ՈՒ Ա Վ Ա Ջ Ե Կ Ա Ն Ի
ՈՐԴԻ Դ Ա Ն Է Լ Ի Ս Ի Ե Թ Ը

46. Մ. Սմբատեանց, էջ 139:

47. "Кавказский Календарь на 1915г.", Тифлис, 1914, էջ 124:

48. Ըստ գյուղխորհրդի մատյանների:

Ծանոթ. Այս և հաջորդ մի քանի արձանագրություններն առաջին անգամ հրատարակել ենք մեր «Հայ մշակույթի հուշարձանները Շամախու Գարդման գավառում» հոդվածում, («Էջմիածին», 1985, Ը, էջ 50):

56. ՏԱՊԱՆԱԶԱՐ նախորդի մոտ, նույնաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՐԱՊԱՂՅԷ | ԵՏԻԼՅԷ: ՀԱ(Ն)Գ(ՈՒՑ)ՅԱԼ: ՏԱՎՎԻԹԻ | ՈՐԴԻ ՏԵՐՓՈՒՆ ԳՐԻՔՈՐԻՆ, ՌԲԿԱ (1812):
Հրատ. Ս. Կարասպետյան, նշվ. հոդվածը, էջ 50:


57. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ, նույնաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՐԱՊԱՂՅԻ ԼՐԱՊԵՏԻ ՈՐԴԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ, ՌԲ | ՄՀԳ (1825):
Հրատ. Ս. Կարասպետյան, նշվ. հոդվածը, էջ 50:

58. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ, նույնաձև. Ա(ՍՏՈՒԱ)Տ ՈՂՈՐՄԻ ՏԵՐԻՍԱՐԳԻՄԻՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ|ԵԱՆՅ, 1875 Թ:
Հրատ. նույն տեղում:

Ծանոթ. Արխիվային փաստաթղթերում քահանա Սարգիս Հարությունյանի մասին բազմաթիվ հիշատակություններ կան սկսած 1839 թ-ից (ՀՀՊՊԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 824, ք. 2): Նրա մասին տեղեկություններ կան նաև հմր. 2596, ք. 66 և հմր. 3428, ք. 17 փաստաթղթերում՝ համապատասխանաբար 1851 և 1855 թթ. հիշատակումով: Կա նաև 1865թ. հիշատակություն «Արարատ» անսագրում (1870թ., էջ 319): Հայտնի է, որ 1882թ. Ազայի Շեն գյուղի համար քահանայացու էր ընտրվել նրա որդին՝ դպիր Մարտիրոս Տեր-Սարգսյան Հարությունյանցը, որն այդ ժամանակ 39 տարեկան էր (ֆ. 56, ց. 1, գ. 7653, ք. 7-8):

59. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույն տեղում, նմանաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏԵՐ | ՅՈՎՀԱՆՆԵՍԻՆ, ՈՐ ԷՐ ՈՐԴԻ ՏԵՐ ՍԱՐԳԸՍԻՆ | ՅԱՐՈՒԹ(ԻՆ)Ե(Ա)Ն(Ց), 1862:

60. ԳՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ճակատին, գտնվում է գյուղի հյուսիսային ծայրում (նկ. 26).
ԱՅԻԻԲ, ԲԵՆ | ԱԶԱՅ ՇԵՆ, 1907:



Հրատ. նշված հոդվածը, նույն տեղում:
Ծանոթ. հայտնի է, որ դեռևս 1892թ. մայիսին Ազայի Շենի հասարակությունը գումարել էր ընդհանուր ժողով և վճռել, որ գյուղում հարկավոր է հիմնել արական միդասյա դպրոց (ֆ. 27, ց. 1, գ. 49, ք. 188): Մակայն, ինչ-ինչ պատճառներով չի հաջողվում ծրագիրն իրականացնել: Ինչ վերաբերում է 1907թ. բացված սույն արձանագիրը կրող դպրոցին, ապա սա միայն սկզբում է եղել եկեղեցական ծխական (այսինքն՝ հայկական): 1913թ. մի վավերագրից պարզվում է, որ այն արդեն պետական (կառավարչական) տիպի դպրոց էր (ֆ. 27, ց. 1, գ. 215, ք. 6):

61. ԱՂԲՅՈՒՐԻ ՇԵՆՔ, գտնվում է գյուղի հարավային ծայրում, թեք սարավանջին: Կառուցված է համակ սրբատաշ քարերով, ճակատին (նկ. 27).
ՅԻՇԱՍԱԿ ՍԱՐՎԷԼԻ ԹԱՎԱՐԵԱՆՅ, 1908 Թ:

ԱՎԱՆԱՇԵՆ

Գյուղը գտնվում է շրջկենտրոնից 14 կմ հարավարևելք, Գարդման գետի աջ կողմում, գետափից 4 կմ հեռու: Ավանաշենի (այժմ՝ Դոշաքյան) վերաբերյալ մատենագրական տեղեկություններ հայտնի չեն: Ըստ ժողովրդական ստուգաբանության՝ 1799թ. գյուղում իր 20 հազար յուրայինների հետ հաստատվել է արցախցի Ավան հարյուրապետը,⁴⁹ որից և ծագում է գյուղի Ավանաշեն անվանումը:

XIX դարի կեսերին գյուղն ուներ 80 տուն հայ բնակչություն:⁵⁰ 1861թ. այն կազմում էր 100,⁵¹ 1865թ. 120,⁵² 1890-ին՝ 130 տուն (970 մարդ)⁵³ հայ բնակչություն:

Գյուղում պահպանված արժեքավոր հուշարձաններից է Սր. Աստվածածին եկեղեցին, որի շինարարական արձանագրությունը ժամանակին ընդօրինակել է Մ. Բարխուտարյանը (ներկայումս պահպանված չէ):

Եկեղեցին եռանավ բազիլիկ է: Քառանիստ ծածկի տակ առնված տանիքը ներքուստ պահում են երկու զույգ սյուները: Արևելյան կողմում կիսաշրջան եզրագծով ավագ խորանն է, որի աջ ու



ձախ կողմերում մեկական ավանդատներ են: Իրենց ավանդական տեղերում են սեղանի վեմ քարն ու մկրտության ավազանը (առաջինը՝ ավագ խորանի մեջտեղում, երկրորդը՝ հյուսիսային պատի մեջ): Եկեղեցին ամբողջապես կառուցված է անտաշ քարերով, կրաշաղախով: Սրբատաշ են սյուները, թաղակիր կամարները, լուսամուտների և մուտքերի անկյունաքարերը:

Եկեղեցու արևմտյան կողմում, մի քանի մետր հեռավորության վրա կանգուն է ռոտունմարանի երկհարկ գեղեցիկ շենքը: Թեև սրա կառուցման ժամա-

49. Ս. Ջալալեանց, էջ 393: Տես նաև՝ Մ. Բարխուտարեանց, էջ 197:
50. Ս. Ջալալեանց, նույն տեղում:
51. Մ. Սմբատեանց, նույն տեղում:
52. Դանիել արքեպիսկոպոս, Այցելութիւն եկեղեցեաց գիտօրէից վիճակին Հայոց Շամախիոյ, «Արարատ» անսագիր, Վաղ-պատ, 1870, էջ 262:
53. Մ. Սմբատեանց, նույն տեղում:

նակը մեզ հայտնի չէ, սակայն այն արդեն 1890-ական թթ. սկզբներին հիշվում է իբրև «փառատոր» կառույց:⁵⁴ Ուսումնարանի հնաշեն ամրակառու շենքը մինչև գյուղի հայերի բռնագաղթը օգտագործվում էր իր նախնական նշանակությամբ (Ավանաշենի միջնակարգ դպրոցն էր):

Եկեղեցու արևելյան կողմում, բլրի գագաթին տարածվում է ընդարձակ գերեզմանոցը: Այստեղ մեր գրած արձանագիր թվագրված էին տապանագրերը վերաբերում էին XIX դարի սկզբներին:

Ավանաշենի հարավ արևելյան կողմում, շուրջ 3 կմ հեռու, մի անտառածածկ բլրի գագաթին տարածվում է հնագույն գերեզմանոցը: Այստեղ բացի տապանաքարերից պահպանվում են նաև պարզունակ հորինվածքով խաչքարեր: Գերեզմանաքարերի մեծ մասն արդեն անցել է հողի շերտի տակ: Պահպանվածներն անարձանագիր են: Հնավայրը հայտնի է «Թարչխ» անվամբ:

62. ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ շինարարական արձանագրությունը.

ՅԻՇԱՏԱԿ Է ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՍ, ՇԻՆԵՑԱԻ ԱՂԱ ԶԱԼԻ ԼԱԶՐՈՎԵՆՅ 1752 ԹՎԻՆ ՓՐԿՉԻՆ:

Հրատ. Բարխուտարեանց, 194:

Ծանոթ. Արխիվային վավերագրերում գյուղի եկեղեցին առաջին անգամ հիշվում է 1851թ. (ՀՀՊՊԿԱ ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 64-65): 1869թ. մարտի 26-ին այն ենթարկվել է կողոպտման. գողացել են՝ մեկ սկիհ, խաչ, վարագույր, ջահ (ֆ. 56, ց. 1, գ. 5347): 1869-82 թթ. եկեղեցին նորոգվել է (ֆ. 56, ց. 2, գ. 5340): Վերջին նորոգության (փայտյա փտած տանիքը պետք է փոխարինվեր քիթեղածածկով) կարիքը զգացվել էր արդեն 1900թ. (ֆ. 56, ց. 1, գ. 9739, թ. 1):

63. ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, հարավային մուտքից աջ՝ պատի մեջ ազուցված սրբատաշ քարին քանդակված է խաչ և թվականը (նկ. 28).

ԹՎ(ԻՆ) ՌՄԼԵ (1786):



ԲԱՂԼԻԱՆ

Գյուղը գտնվում է շրջկենտրոնից 26 կմ հարավ-արևելք, Գարդման գետի ձախ կողմում, բարձրադիր սարահարթի վրա: 1861թ. ուներ 30,

54. Մ. Բարխուտարեանց, էջ 194:

խսկ 1890-ին 36 տուն (233 մարդ) հայ բնակիչ:⁵⁵ 1914թ. Բահլիանն ուներ 172 բնակիչ (բոլորն էլ հայեր):⁵⁶ 1984-ին այստեղ բնակվում էին լեզգիներ և միայն 2 հայ ծերունիներ: Վերջիններս իրենց հարազատ օջախները ստիպված լքեցին 1988-ի հայտնի բռնագաղթի օրերին:

1850թ. գյուղում կառուցված Սբ. Մինաս եկեղեցին ներկայումս գոյություն չունի: Բահլիանի հարավային կողմում, բլրի վրա տարածվում է գերեզմանոցը: Այստեղ բազմաթիվ են XVIII-XIX դարերին վերաբերող արձանագիր տապանաքարերը: Բլրակի գագաթին պահպանվում է անարձանագիր խիստ հողմնահարկված խաչքար (վերնամասն ունի երկթեք լուծում), որը հայտնի ուխտատեղի է: Խաչքարը հայտնի է «Նահատակ» անվամբ:

Հայաթափ գյուղի գերեզմանոցում ուշագրավ են հետևյալ տապանագրերը.

64. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, հարավային երեսին.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՊԵՋԱՆԻ ՈՐԴԻ ԿՈՐ ԲՈՒՆԱՅԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄԼԲ (1783):

65. ՏԱՊԱՆԱԶԱՐ, մույնաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՕՎԱՆԷՄԻ ՈՐԴԻ ԹԱԹՈՍԻՆ, | ԹՎ(ԻՆ) ՌՄԼԲ (1793):

66. ՏԱՊԱՆԱԶԱՐ մախարդի մոտ, մմանաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԵՂՂՈՒԲ(Ի) | ՈՐԴԻ ՏԱԼԼԱԸ ՀԱԳՈԲ(ԻՆ), | ԹՎ(ԻՆ) ՌՄԼԷ (1798):

67. ՏԱՊԱՆԱԶԱՐ, մախարդի մոտ, մույնաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՅՕՍԵՓԻ ԴՈՒՍՏՐ ՄԱՅՐԵԱՆԻՆ ԿՈՒՐՃՈՒՎԱՆՅԻ, ԹՎ(ԻՆ) ՌՄՁԵ (1836):

ԲԶԱՎԱՆԴ

Մինչև 1918թ. հայաբնակ գյուղ, ներկայումս գյուղատեղի շրջկենտրոնից 32 կմ հարավ արևմուտք, Կոկիսոն (Գյոկչայ) գետի ձախ ափի բարձրության վրա: Գյուղը 1861թ. ուներ 35, իսկ 1890-ին՝ 37 տուն (201 մարդ) հայ բնակչություն:⁵⁷ 1914թ. հունվարի 1-ի վիճակագրությամբ գյուղում բնակվում էին 440 մարդ (բոլորն էլ հայեր):⁵⁸

Գյուղատեղում պահպանվել են բազմաթիվ տնատեղեր: Նկատվում է նաև ձորի պոնկին կառուցված երբեմնի Սբ. Աստվածածին եկեղեցու տեղը: Եկեղեցատեղից ոչ հեռու, բարձրադիր տափարակի վրա տարածված է ընդարձակ գերեզմանոցը: Այստեղ մեծաթիվ են XIX դարին վերաբերող արձանագիր տապանաքարերը, որոնցից ուշագրավ են հետևյալները.

55. Մ. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 139:

56. "Кавказский Календарь на 1915г.", Тифлис, 1914, էջ 95:

57. Մ. Սմբատեանց, էջ 139:

58. "Кавказский Календарь на 1915г.", Тифлис, 1914, էջ 100:

68. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև (նկ. 29). ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԶԻԵԱԼԻՆ ՈՐԴԻ | ԶԱՍՊԱՐԻՆ, ԹՎ (ԻՆ) ՈՍԿԳ (1815):

69. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՄԱՐԶՈՒՄԻ ԿՈՂԱԿԻՑ ԱՆԹԱՈՒՆ(ԻՆ), 1816 ԱՄԻ:

70. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԻԼԻՂԵՑԻ | ԲԱՆԻՇԻ ԿՈՂԱԿԻՑ ՄԱՐԵԱՆԻՆ, | ՈՐ Է ԳԻԼՏԱՐԵԱՆՑ, Ի 1871 ԱՄԻ:

71. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏԵՐԱՅՈՒ | ՅԱՐՈՒԹԻՆՆԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ | ԱԳԱՍԻՆ, ՀԱՆԳԵԱԻ Ի ՏԵՐ | 1868 ԱՄԻ:

72. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև (նկ. 30). ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱԼԱՎԵՑԻ ՄԱՐՏԻՐՈՍԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՅՕՀԱՆՆՆ, 1873:

73. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ | ՈՒՇՏԱԼԵՑԻ ԱՆԱԻՆ, ՈՐ Է ՏԸԿԻՆ | ԴԱԻԹԻՆ ԱՍԿԱՐԵԱՆՑ, ՎԱՆԸ. | 1871 ԱՄԻ, ՎԵՐԴԻՆ ԶԱՐՆ Շ(Ի)ՆԵՑԻ | ՄՈՐՆ, Ա(ՍՏՈՒԱ)Ս ՈՂՈՐՄԻ ՀՈՐՆ:

74. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև (նկ. 31, 31ա). ԱՅՍ Է ՏԱՊԱՆ | ԱՂԱՋԱՆԻ, ՈՐ Է | ՈՐԴԻ ԱՎԱՆԻՍԻ | ԲԱԲԱԵԱՆՑԻՆ ՎԱԽԸ. 1904 Թ., 47 Տ.: Մյուս երեսին փորագրված է. ԱՂԱՋԱՆԸ ՄԵՌԱԻ ՄՊԱՆՎԱՍԲ | ԳՆԴԱԿՈՎ ԶԱՂԱԶԸ, ՏԵՐԸ ՊԻՏԻ | ՊԱՅԻ ՏՈՒՆԸ, ՏԵՐԸ ՊԻՏԻ ՇԻՆԻ, | ԵԹԷ ՏԵՐԸ ՉԻ ՊԱՀԷ ԱՎԻՐԱԿԻՐԴԻ ՄԸՆԱ, ԶԱՂԱԶԸ ՈՒՆԱԻՆ Է, | ԱՇԵԱՐՀԸ ՍԱԵԱ ԵՐՋԱՆԻԿ ՏՈՒՆԸ:

ԲԻԼԻՍՏԱՆ

Գյուղը գտնվում է շրջկենտրոնից 30 կմ հարավ-արևելք, Գարդման գետի ձախ կողմում, բարձրադիր հարավահայաց սարավանջին: 1861 թ. ունեւր 20, իսկ 1890-ին՝ 31 տուն (155 մարդ) հայ բնակչություն:⁵⁹ 1914 թ. այն կազմում էր 141 մարդ:⁶⁰

Գյուղի Մր. Աստվածածին եկեղեցին հիմնավեր վիճակում է: Գերեզմանոցում, որը տարածվում է գյուղի արևելյան կողմում, հարավահայաց ձորավանջին, XIX դարից ավելի հին տապանագրեր չգտանք: Պահպանված շուրջ 45 տապանագրերից հետաքրքրական էր մեկը, որում հիշատակություն կար մինչև 1918 թ. հայաբնակ Աղբուլաղ գյուղի մասին:

59. Մ. Սմբատեանց, նույն տեղում:
60. "Кавказский Календарь на 1915г", Тифлис, 1914, էջ 100:

75. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև. ԸՆԳ ՇԻՐՍԱԻՍ ԳՆԻ ՄԱՐՄԻՆ ԵՂԻՍԱԲԷ | ԹԻ, ԳՍԵՐ՝ ԳՐԻԳՈՐԻ ԱՌՈՒՇԱՆԵԱՆՑԻՆ, | ԿԻՆ՝ ԱՂԲՈՒԼԱՂՑԻ ՆԵՐՍԷՍԻ ԳՐԻԳՈՐ ՕՎԻՆ:

ԳԱՆՉԱԿ

Գավառի հիմնավորոց, մարդաշատ ու բարեշեն գյուղերից մեկն էր: Գտնվում է շրջկենտրոնից 29 կմ հարավ, անտառապատ սարերով շրջապատված բարձրադիր գեղատեսիլ վայրում: 1861 թ. գյուղն ուներ 99,⁶¹ 1865-ին՝ 120,⁶² 1890-ին՝ 145 տուն (1031 մարդ) հայ բնակչություն:⁶³ Երկրամասի շատ հայկական գյուղերի օրինակով Գանձակը ևս մեծ կորուստներ է կրել 1918 թ.: 1981 թ. գյուղն ուներ 20 հայ բնակիչ:⁶⁴ Մեր այցելության ժամանակ (1985) Գանձակում բնակվում էին 6 հայ ընտանիք՝ 10 շնչով:

Գյուղում կիսավեր վիճակով, խիստ ձևավորված ու վերակառուցված (տարիներ առաջ օգտագործվել է որպես պահեստ, ներկայումս չի օգտագործվում) դեռևս գոյատևում են եկեղեցու մնացորդները: Պահպանված չորս պատերը կառուցված են անտաշ քարերով, կրաշաղախով: Մրբատաշ են մուտքերի (հարավից և արևմուտքից), լուսամուտների անկյունաքարերը: Հայտնի է, որ եկեղեցին կառուցվել է 1842 թ. և կոչվել Մր. Աստվածածին:⁶⁵ Հիմնավեր վիճակում է ուսումնարանի շենքը, որի շինարարական արձանագրությունը ընկած է եկեղեցուց հարավ, Բայյան Մմբատի տան բակում:

Ուսումնարանի մոտ եղել է հին գերեզմանոց, ուր իբր պահպանված էին եղել VIII դարին բնորոշ զարդարվեստով խաչքարեր: Գրանցից միայն մեկի վրա Մ. Բարխուտարյանցը նկատել ու ընդօրինակել է հակիրճ արձանագրությունը:

Գանձակի հարավային կողմում, մի բլրի գագաթին տարածվում է մի հին գերեզմանոց: Այդտեղ տապանաքարերն ու խաչքարերը մեծ մասամբ խրված են հողի մեջ: Հնավայրը ուխտատեղի էր շրջակա հայ բնակչության շրջանում: Այն հայտնի է «Մուրք Գանձակ» անվամբ:

Գյուղի հյուսիսային կողմում, բարձր տեղում տարածվում է հիմնական գերեզմանոցը: Այստեղ ևս կան հնաժող տապանաքարեր (անարձանագիր) և մի քանի խաչքարեր: Պահպանվում են նաև ավելի քան 500 արձանագիր XIX-XX դարերին վերաբերող տապանաքարեր:

76 ԽԱՉԶԱՐ, ոճը բնորոշ VIII դարին. ԱՍՏՈՒԱՍ ՈՂՈՐՄԻ ԷԻՍԱՐԻՆ. ՄԾ (760): Հրատ. Բարխուտարյանց, 196:

61. Մ. Սմբատեանց, էջ 139:
62. Դանիել արքեպիսկոպոս, նշվ. հոդվածը, էջ 263:
63. Մ. Սմբատեանց, նույն տեղում:
64. «Աղբրջանական Մովսեսական Հանրագիտարան», հ. 6, Բաքու, 1982, էջ 82:
65. Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 195:

Ծանոթ. հրատարակչի ներկայացված ՄԹ բվահանը, իբրև 760 բվական կասկած է հարուցում:

77. ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ-ԴՊՐՈՅԻ (այժմ՝ հիմնավեր) շինարարական քառատող արձանագրությունը Քայան Սմբատի տան բակում (նկ. 32).

ՅԱՄԻ Տ(ԵԱՌ)Ն 1889 ՇԻՆԵՅԱԻ ԴՊՐՈՅՍ ՕԺԱՆԴԱԿՈՒ(ԹԵԱՍ)Բ ՀԱՅՈՑ | ՀԱՍԱՐԱԿՈՒ(Թ)Ե(Ա)Ն ԳԱՆՉԱԿ ԵՒ | ԹՕՓԻ ՇԷՆ ԳԻՒՂՕՐԵԻՑ:

Ծանոթ. 1889թ. Շամախու քեմի առաջնորդ Մ. Սմբատյանը օրհնել է Գանձակի եկեղեցական-ծխական արական միդասյա դպրոցի շենքի հիմքը (Ֆ. 56, ց. 4, գ. 104, ք. 23), որը կառուցվել է քարվեցի Հայրապետ Քոչարյանցի ջանքով և նրա հանգանակությամբ հավաքված դրամով (Ֆ. 56, ց. 3, գ. 978, ք. 2): 1893թ. դպրոցը գանվում էր նյութական կարիքի մեջ (Ֆ. 27, ց. 1, գ. 49, ք. 58), ուսուցիչն էր Չարարիա Չալիյանը: Մինչև 1896թ. դպրոցը մի կերպ պահպանել է իր գոյությունը և փակվել (Ֆ. 27, ց. 1, գ. 206, ք. 1): Գործել է նաև 1911-12 թթ., վերստին փակվել 1912-13 ուս. տարում, վերաբացվել (54 աշակերտով) 1913-14 թթ. (Ֆ. 27, ց. 1, գ. 206, ք. 3):

ԳԻՐԸ

Հին գյուղ է: Գտնվում է շրջկենտրոնից 23 կմ հարավ-արևմուտք, զոգավոր հարավահայաց տեղում՝ երեք կողմից շրջապատված անտառապատ սարերով: Հնում գյուղն ուներ ճանապարհային հանգուցակետի նշանակություն: Այդտեղից էին ճյուղավորվում դեպի Կուզոան⁶⁶ (արևմտյան կողմում), Փաթակլոմ⁶⁷ (հյուսիս-արևելյան կողմում), Քալբանդ⁶⁸ (հարավ-արևելյան կողմում) գյուղերը տանող հնագույն ճանապարհները:

Գիրք գյուղի վերաբերյալ մատենագրական տեղեկություններ չեն պահպանվել, սակայն տեղում գտնված հուշարձանների, վիճազների քննությունը ցույց է տալիս, որ այն առնվազն միջնադարում հայաբնակ մեծ գյուղ էր գավառի բազմաթիվ այլ գյուղերի հետ մեկտեղ:

XIX դարի կեսերին Գիրքն ուներ 100 տուն հայ բնակչություն:⁶⁹ 1861թ. ուներ 130 տուն,⁷⁰ իսկ 1890-ին՝ 227 տուն (1285 մարդ):⁷¹ 1914թ. հունվարի 1-ի վիճակագրությամբ գյուղն ուներ 1860 հայ բնակիչ:⁷²

1918թ. ամռանը գիրքեցիները ուժերի գերագույն լարման, անասան կամքի ու մեծ խիզախումների գնով օսմանյան հրոսակներին կարողա-

ցան պատասխանել բավական ուժեղ ու կազմակերպված ինքնապաշտպանական մարտերով: Դրա շնորհիվ Գիրքի հայերը կարողացան գերծմնալ մասսայական բնաջնջումից,⁷³ և մինչև 1988-ի բռնագաղթը, ի տարբերություն գավառի տասնյակ այլ գյուղերի, Գիրքը շարունակում էր մնալ իբրև հայաբնակ գլխավոր բնակավայրերից մեկը:⁷⁴

Գիրք գյուղում և շրջակայքում պահպանվել են բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձաններ: Դրանցից առավել արժեքավոր են



Սբ. Աստվածածին եկեղեցին (1831 թ.), աղբյուրը (1840թ.), գերեզմանոցը (XV-XX դ.) և այլն: Մեր հետազոտության տեսանկյունից առանձնապես հետաքրքրական է գերեզմանոցը, ուր պահպանվել է արձանագրական հարուստ նյութ: Գերեզմանոցը տարածվում է գյուղի արևելյան կողմում, քեք սարավանջին: Առավել հին մասը զբաղեցնում է հնավայրի հարավային մասը: Այդտեղ պահպանվում են բազմաթիվ հնաճո տապանաքարեր (արձանագիր-թվագրվածները միայն XV դարից են): Պակաս ուշագրավ չէ նաև նոր՝ հյուսիսային մասը (առավել նոր, ժամանակակից մասը տարածվում է գերեզմանոցի արևմտյան կողմում), ուր պահպանված տապանագրերում նշված են հանգուցյալների ծնունդով որ տեղից լինելը: Դրանցում զգալի թիվ են կազմում Արցախի զանազան գյուղերի հիշատակումները: Գիրք գյուղի տարածքից (ներառյալ գերեզմանոցը, որտեղից հավաքած տապանագրերում կատարել ենք խիստ ընտրություն, որովհետև միայն XIX դարի տապանագրերի թիվն անցնում է 600-ից) ստորև ներկայացնում ենք 12 արձանագրության վերձանությունները, որոնցից 3-ը նախկինում հրատարակել է Մ. Բարխուտարյանը (վերջիններիցս 2-ը՝ ներկայումս կորած են):

78. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ուղղանկյունաձև, հարավային երեսին եռատող փորագրված է (նկ. 33).

ՍՈՂՐԱԹՄԻՇ ՈՐԳԻՆ | ԻՐԻ ՂԱՊԱՅ ՊՈՒՇ, ԹՎ(ԻՆ) | ՋԻԳ (1474):

66. Կուզոանի հայ բնակչությունը ոչնչացվել է 1918թ., որից հետո գյուղն ցայսօր անմարդաբնակ է: Մրա մասին մանրամասն տես իր տեղում:

67. Փաթակլոմ նույն վիճակումն է ինչ նախորդը: Մանրամասն տես իր տեղում:

68. Քալբանդը մինչև 1988-ի բռնագաղթը հայաբնակ գյուղ էր (42 տուն՝ 1984թ.) և ուներ միջնակարգ դպրոց (44 աշակերտ, որից 13-ը՝ Գիրքից. 1984թ.):

69. Մ. Ջալալեանց, էջ 390:


70. Մ. Սմբատեանց, էջ 139:

71. Նույն տեղում:

72. "Кавказский Календарь на 1915г.", Тифлис, 1914, էջ 142:

73. ՀՀՊՊԿԱ, ֆոնդ 278, ցուցակ 1, գործ 8, քերթ 45-48: Փաստաթղթի մի հատվածում կարդում ենք. «Գիրք գյուղ վերահաս անբնունքից ազատում է շնորհի մի խումբ զինուած գիտաշինների, որոնք գալիս են եղև Բագուից իրենց տները, դրանց մեծ մասը փոռնոցից եկած զինուորներ էին: Ահա այդ խումբը պատահելով գիղում գիղացիներին՝ հարձակումները ետ մղելիս շրջապատում են թուրքերին ու կոտորած տալով յետ շարտում գիղից և ազատում գիղը, օգնուքին տալով և միա գիղերին»:

74. 1985թ. Գիրք գյուղն ուներ շուրջ 50 տուն հայ բնակչություն:



Հրատ. Բարխուտարեանց, 198:

Ծանոթ. Անձնանուններից երկրորդը հրատարակել է՝ ՂԱՅՊԱՅՊՈՒԲ ձևով:


79. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ԱՅՍ ԶԱՐ ՍԵԼԻՔ ՀԱՍԱՆԻՆ ՀԱՐԱԶԱՏ ՊԱՐՄԱՍ ՍՈՒՐԱՏԻՆ ... ՈՐ Է ՈՐԴԻՆ, ԱՆՈՆՍ ԱՐԱՆ ԸՆԿՎԱՐԴԻ, ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՀՈԳ. ԹՎ. Ռ. (1551):

Հրատ. Բարխուտարեանց, 198:

Ծանոթ. Երկար որոնումները արդյունք չտվեցին, տապանաքարը հնավայրում չգտնվեց:

80. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, հարավային երեսին (նկ. 34).

ԿԱԶՄԵՅՕ Տ(Ա)Պ(Ա)ՆՍ Ի ԹՎԻՆ ՌՃԲ Հ(ԱՅՈՑ) (1653), | Վ(Ա)Ս(Ն) Ա(ՍՏՈՒԾՈ)Յ ՈՂ(ՈՐ)ՄԻ ԱՍ(Ա)Յ(Է)Ք ԸՆԿՎԵՐԴԻ ՀՈԳ(ՈՒՆ):



81. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, երկու երկայնական երեսներին փորագրված է (նկ. 35).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՐԱԶԱՐՈՒ ԳԵՂԵՆՆԵՎԻ, ՏԵՐՕՅԱՆԵՆՅ ՊՕՂՈՍԻ ՈՐԴԻ ՏԻՐԱՅՈՒ | ԲԱՂՏԱՐԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄԾԸ (1809), ԴԵՔՏԵՍԲ Ա(1): || ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՊՈՂՈՍԻ ՈՐԴԻ | ՊԱՂՏԱՍԱՐԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄԾԸ (1809):

Ծանոթ. Ննկի Ննգի գյուղը ԼՂՀ Մարտունու շրջանում է:

82. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՐԱՊԱՐՈՒ Ի ԳՈՒՂԵՆՆԵՎԻ, ՅԸԿԱԿՈՒԱ ԳՐԻԳՈՐԱՅ ... | Ա Տ(Է)Ր - ՍԷԺԼՈՒՄԻ ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐԻ, ԹՎ(ԻՆ) Է ՌՄԿԱ (1812):

Ծանոթ. ՅԸԿԱԿՈՒԱ = Հկակվեցի: Հկակում՝ պատմական Գաք գյուղն է, որը գտնվում է ներկայիս Հաղարոքի շրջանում, Տող գյուղի մոտ:

83. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՐԱՊԱՐՈՒ Ի ԳԻԻՂ ՆԵՆԿԵՑԻ Տ(Է)Ր ՍԱՐԳՍԻՆ ԳՈՒՍՏԲ ՍՕՆԵ, ԹՎ(ԻՆ) ՌՄԿ (1811):

84. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏԵՐԸԵՐԻԿԵՑԻ ՕՀԱՆԻ

ՈՐԴԻ ԴԱՆԱԸ ԱՎԱԶԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄԿԱ (1812), ՓԵՏՐՎԱՐԻ ԻԷ (27):

Ծանոթ. ՏԵՐԸԵՐԻԿԵ-ը՝ Հաղարոքի շրջանի Դրախտիկ գյուղն է:

85. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև.

ԱՅՍ ԵՍՅ, ՈՐ ԱՍԱՅ ԹԷ ՈՒՍԻ ԾՆԱԻ | ԵՒ, ՈՒՐ Է ԹՎԱԾ: ՂԱՐ(Ա)ԲԱՂ ԾՆԱՅ ԵՒ ԳԻՐՔ ԹՎՂԵԱ: ՅԱՐՈՒԹԻՒՆ | ԷԻ Տ(Է)Ր ԵԹԷ ՅԱՐԵԱ ՏԵՍՈՂՔ ԸԻՐՍՂԻՍ ԱՍԷՔ ՈՂՈՐՄԵԱ Ի ՍՐԱ Է ԼՐԱՆԻ | ԵՐԵՍՈՒՆ ԱՍԵԱՅ, ԹՎ(ԻՆ) 1848, Ի 20 ՄԱՐԴԻ:

86. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԱՂՂԱՍԱՐ ԱՒԱԳ | ԶԱՀՆԱՅԻ ՏԵՐ ՄԱՐԿՈՍԵԱՆՅ, | ՈՐ ՎԱՐԵԱԼ ԶՊԱՇՏՕՆ ԶԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ ԶԱՍՍ 47, ՎԱՆԾԱՐՆԵՅԱԻ Ի 1-Ն ՈՒԼԻՍԻ, 1883 ԱՄԻ, Ի ՀԱՍԱԿԻ 73 ԱՍԱՅ:

Ծանոթ. Բաղղասար ավազ քահանա Տեր-Մարկոսյանցը ծնվել է 1810թ., քահանա է ծեռնադրվել 1836 թ. և մինչև իր մահը՝ 1883թ. քահանայագործել Գիրք գյուղի Սր. Պողոս-Պետրոս եկեղեցում: Նրա մասին 1842, 1851, 1858, 1864, 1869 թթ. բազմաթիվ հիշատակումներով փաստաթղթեր են պահպանվել ՀՀՊՊԿ արխիվում (Ֆ. 56, գ. 3558, թ. 1, գ. 2596, թ. 65, գ. 3758, թ. 1, գ. 4469, թ. 1, գ. 5519, թ. 1):

87. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նմանաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԱՐԻԱՄԻ | ԵՐ ՍԱՐԿՈՍԵԱՆՅ, ՈՐ ՎԱՆԾԱՆԵԱՅՅ ՀԱՐԻԻՐ ԱՍԱՅ, Ի | 26 ՕԳՈՍՏՈՍԻ, 1890 ԱՄԻ, Ի ԳԻՒՂՆ ԳԻՐՔ:

88. ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ շինարարական արձանագրությունը.

ԿԱՌՈՒՅԱԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՅԻՇԱՍԱԿ ԳԻՐՔԵՑԻ ԵՐԻՑ ԵՂԲԱՐՅՆ ՊԵՏՐՈՍԻ, ՊՕՂՈՍԻ ԵՒ ԲԱՂՂԱՍԱՐԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՅՈՎԱՍԵՓԵԱՆՅ ԵՒ ՍՕՐՆ ԻԻՐԵԱՆՅ ԱԶԻԶԻՆ, ԹՎ. 1831:

Հրատ. Բարխուտարեանց, 197:

Ծանոթ. Համաձայն 1839թ. գրված մի փաստաթղթի, Գիրքի եկեղեցին կառուցվել է 1832-1837 թթ. ընթացքում Բարվում բնակվող ծագումով գիրքեցիներ, հարազատ եղբայր-իշխաններ՝ Պողոս, Պետրոս և Բաղղասար Հովսեփյանների սեփական միջոցների հաշիվին (ծախսվել էր մինչև 5000 ռուբլի) և օծվել 1838թ. հուլիսի 23-ին Շամախու բեմի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսի կողմից՝ Պողոս-Պետրոս Առաքյալների անունով (ՀՀՊՊԿԱ, Ֆ. 56, գ. 1, գ. 545, թ. 1-2.6): Կարծում ենք, եկեղեցին Սր. Աստվածածին անունով է կոչվել ավելի ուշ ժամանակներում, որևէ հիմնավոր վերանորոգման ենթարկվելուց հետո: 1902թ. օգոստոսի 11-ին օծվել է հիմնովին վերակառուցված եկեղեցին («Մշակ» 1902, № 183, էջ 2):

89. ԱՂԵՅՈՒՐ, գտնվում է գյուղի հարավային ծայրում: Կառուցված է սրբատաշ քարերով: Դակատին մի քարի վրա փորագրված է (նկ. 36).

ԶԱՐԿԱՐԱՆ

Բնության գեղատեսիլ ու ամենաշոյալ տեսա-
րաններով շրջապատված այս գյուղը գտնվում է
Մեծ Կովկասի հարավահայաց անտառածածկ
ստորոտին, շրջկենտրոնից 30 կմ հարավ-արևելք,
Իսմայիլի-Շամախի մայրուղուց 0,5 կմ հյուսիս:
1861թ. Չարկարանն ուներ 119 տուն հայ բնակ-
չություն: 75 1890-ին այն կազմում էր 163 տուն (1025
մարդ): 76 1914թ. հունվարի 1-ին գյուղում բնակվում
էին 1558 հայեր: 77 1918թ. Չարկարանը ենթարկվել
է ավերածության և թալանի: Նրա բնակիչները խու-
սափելով քրիզանցիների հարձակումներից (մտա-
կա գյուղն է, ուր բնակվում են սյունի մահմեդա-
կաններ) ապաստանել են հարևան Բասխա գյու-
ղում (չիա պարսիկներ են, ներկայումս՝ քրքախաս),
ուր մեկ ամիս զոյատևելուց հետո ի վերջո փրկվել
են Ամիրովի (ծնունդով Գլորբեցի) զորքերի գալստ-
յամբ: Տարագրության ժամանակ զարկարանցի
հայերը, որոնք հասել էին մինչև Բաքու և Աշխա-
բադ, սովի ու հիվանդությունների պատճառով մեծ
կորուստներ են տվել: Խորհրդային կարգերի հաս-
տատումից հետո զարկարանցիների մնացորդները
վերստին համախմբվել են այրված հայրենի գյու-
ղում և շենացրել այն: 1986թ. Չարկարանն ուներ 8
տուն բնակչություն, որից 3-ը (5 շունչ) հայեր: 1988-
ից հայաթափ է:

Գյուղում և շրջակայքում պահպանվել են վեց
գերեզմանոցներ, եկեղեցի, սրբատեղեր և այլն:
Գյուղամիջի Սբ. Աստվածածին եկեղեցին ներկա-
յումս խիստ ձևափոխված է: Այն տարիներ առաջ
օգտագործվել է որպես պահեստ (ավելացվել է
երկրորդ հարկը և այլն): Անփոփոխ մնում են չորս
պատերը մարդահասակ բարձրությամբ (ներքին
չափերը՝ 18.50X6.70մ):

Եկեղեցուց փոքր ինչ հարավ-արևմուտք մի
հաստաբուն չորացած ծառի բնի մոտ մի քանի քա-
րերով պատրաստված է սրբատեղի, ուր հավա-
տացյալները մոռ էին վառում:

Գյուղամիջի փողոցները և տների բակերը
ամբողջապես սալահատակ են:

Գյուղից 2 կմ արևմուտք, Թրջան տանող ճա-
նապարհի եզրին տարածվում է «Վարի Բաղի» կոչ-
ված միջնադարյան գերեզմանոցը: Այստեղ պահ-
պանվել են բազմաթիվ անտաշ, անարձանագիր
սալակերպ տապանաքարեր:

Նույնպիսի գերեզմանոց կա «Օհան բլուր»
(թափա) կոչված տեղում (գյուղից 2 կմ հեռու):
Գյուղամիջում են «Բուրդաղանց հանգիստ» և «Շե-
րամի տանի տակի հանգիստ» կոչված տոհմական
գերեզմանոցները: Հիմնական ու գլխավոր գերեզ-


մանոցը գտնվում է գյուղից հարավ-արևմուտք, 1,5
կմ հեռու, ասֆալտապատ մայրուղու ճախ կողմում
(շրջկենտրոնի ուղղությամբ): Ներկայումս այս
հսկայածավալ մի քանի հազարի հասնող տապա-
նաքարերով ծածկված տեղանքը, հայտնի է «Էր-
զան հողի հանգիստ» անունով՝ պատված է անան-
ցանելի մացառներով ու ծառերով: Դրանց տակ
թաքնված շատ տապանաքարեր արձանագիր են
(թվագրվածներից մեզ հանդիպածները XIX դարից
էին): Գերեզմանոցի մի ծայրում մինչև 1988-ը թա-
ղումները շարունակվում էին:

Ըստ տեղական ավանդության՝ հին Չարկա-
րանը գտնվում էր Բիլիստան և Գյուրջևան գյուղե-
րի միջև, խոր ձորում՝ «Շաման» կոչված տեղում:
Ցայսօր այդտեղ ևս պահպանվում են գյուղատեղի
և գերեզմանոցի մնացորդները:

Չարկարանի հարավային ծայրում, ճանա-
պարհի եզրին տարածված գերեզմանոցում պա-
հանվել են շուրջ 30 արձանագիր տապանաքարեր:
Դրանցից թվագրվածները վերաբերում են XVIII-
XX դարերին:

90. ՏԱՊԱՆԱԶԱՐ, վերոհիշյալ գերեզմանո-
ցում, ուղղանկյունաձև, պահպանվում է շրջված
դիրքով (նկ. 37).

ԱՅՍ Է ԵՍԱՊԱՆԵՆ ԳԱՆԸԷՅԻ ԿԻՈՐԿ
...|...|...|, ԹՎ(ԻՆ) ՈՍԻԲ (1773):



91. ԳՅՈՒՂԱՍԻԶԻ ԵԿԵՂԵՑՈՒ Վրա եղել է
այս արձանագրությունը.

ՅԻՇԱՏԱԿ Է ԱՅՍ ԵԿԵՂԵՑԻՍ ՍՎԱՂՆ ...
ՈՐԴԻ, ՈՍՂԷ (1848):

Հրատ. Բաքիատարեանց, 184:

Ծանոթ. Եկեղեցու կառուցման ստույգ թվականը
հայտնի չէ: Այն մեզ է հասել խիստ ձևափոխված: Չի
պահպանվել նաև վերահրատարակվող սույն արձա-
նագրությունը: Արխիվային փաստաթղթերում Չարկա-
րան գյուղում Սբ. Աստվածածին անվամբ եկեղեցի հիշ-
վում է դեռևս 1844 թ. (Ֆ. 56, ց. 1, գ. 3426, թ. 39): Հայտնի
է նաև, որ 1870 թ. եկեղեցու տանիքը գտնվում էր քայ-
քայված վիճակում, և այն նորոգելու բոլորությունը
ստանալու նպատակով գրագրություն էր սկսվել (Ֆ. 56,
ց. 1, գ. 5419, թ. 9):

ԹՈՓԻՇԵՆ

Գտնվում է շրջկենտրոնից մոտ 14 կմ հարավ-
արևելք, բարձրադիր սարահարթի վրա: Գյուղի վե-
րաբերյալ մատենագրական տեղեկություններ
հայտնի չեն: Իբրև հայաբնակ գյուղ բոլորիկ հիշ-
վում է 1806թ. վրացական ուղեգրություններում.
«... գնում են հայկական Թորուշեն գյուղը և իջևա-
նում այնտեղ»: 78 1861թ. գյուղն ուներ 57, իսկ 1890-

75. Մ. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 139:

76. Նույն տեղում:

77. "Кавказский Календарь на 1915г.", Тифлис, 1914, էջ 125:

ին՝ 80 տուն (675 մարդ) հայ բնակչություն: ⁷⁹ 1914թ. հունվարի 1-ի դրությամբ Թուփչենը ուներ 1016 հայ բնակիչ: ⁸⁰ Հարևան հայաբնակ գյուղերի օրինակով սա ևս մեծ կորուստներ է տվել 1918-1919թթ.: 1985թ. գյուղում հայերը կազմում էին շուրջ 10 ընտանիք: Նրանք բռնագաղթվեցին 1988-ին:

Գյուղի հին թաղամասում կանգուն է Մր. Աստվածածին եկեղեցին: Այն ունի եռանավ բազիլիկի հորինվածք: Երկթեք ծածկի տակ առնված թաղակապ տանիքը ներքուստ պահում են երկու զույգ սրբատաշ բոլորածև սյուները: Ունի XIX դարի նմանատիպ բազմաթիվ այլ կառույցներին բնորոշ հիմնական բոլոր առանձնահատկությունները:



Կառուցված է անտաշ ու կոպտատաշ տեղական սպիտակ քարերով: Մուտքի անկյունաքարերը, սյուները, թաղակիր կամարները իրականացված են սրբատաշ քարերով: Եկեղեցու արտաքին չափերն են 9.74X14.18 մ.:

Հայտնի է, որ 1889թ. Թուփչեն և հարևան Գանձակ գյուղերի բնակիչների միացյալ ուժերով երկու գյուղերի երեխաների համար Գանձակում հիմնվել է դպրոց (սրա արձանագրությունը տես Գանձակ գյուղի բաժնում):

Գյուղի մոտ պահպանվել են Հին Թուփչենի ավերակները: Այդտեղ մինչև XIX դարի սկզբները բնակվում էին ներկայիս գյուղի բնակիչների նախնիները. «... Թուրքի շէնս հիմնուած է եղել Ավանաշինի հովտի արևմտեան-բերանում, օղի և ջրի վնասակարութեան պատճառաւ փոխադրուած են բնակիչներն այժմեան տեղս: Բայց կիսաւեր եկեղեցին դեռ մնում է հին զիւղատեղում»: ⁸¹

92. ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, հարավից բացվող միակ մուտքի բարավորին փորագրված է (նկ. 38).

Յ(ԻՍՈՒ)ՄԻ Զ(ԲԻՍՏՈ)ՄԻ | Ս(ՈՒՐ)Բ ԽԱՉ
 ՅԻՇԱՍԱԿ Է Ս(ՈՒՐ)Բ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾՆ-
 (Ա)Յ| ԵԿԵՂԵՑԻՄ, ՇԻՆԵՑԱԻ| ԹՕԲԻ ԳԻԻ-
 ՂԻ ԲՈՒՈՐ | ՀՍՄԱՐ(Ա)Կ ԺՈՂՈՎՈ(Ի)Ր-
 ՂՆ, | ԹՎԻՆ ՓՐԿՉԻ 1851 ԱՄԻ:

Ծանոթ. Թուփչեն գյուղի Մր. Աստվածածին եկեղեցու տանիքը երկու անգամ ենթարկվել է նորոգման: Աշխատանքների իրականացման թույլտվությունը

78. Պ. Ա. Չոբանյան, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981, էջ 151:

79. Մ. Սմբատեանց, էջ 139:

80. «Кавказский Календарь на 1915г.», էջ 190:

81. Մ. Բարխուտարեանց, էջ 195:

ստանալու ակնկալիքով երկու դեպքում էլ, այն է 1867թ. և 1896թ. Էջմիածնի Սինոդին գրվել են համախոսական խնդրագրեր: Առաջին անգամ ցանկանում էին նորոգել տանիքը, ծածկերով այն նոր տախտակամածով (Ֆ. 56, ց. 1, գ. 4981, ք. 3), իսկ երկրորդ անգամ մտադիր էին կրկին նորոգել տանիքը և այն ծածկել քիթեղով (Ֆ. 56, ց. 1, գ. 9213, ք. 1): Երկու դեպքերում էլ հոգևոր իշխանություններից ստացել են վերանորոգումները կատարելու և դրանց համար համապատասխանաբար 450 և 300 ռուբլի ծախսերու թույլտվությունը:

ԿԱՐՍԱԽԱՆ (ԽՈՅԼԻ)

Մինչև 1918թ. հայաբնակ գյուղ, ներկայումս գյուղատեղի շրջկենտրոնից 6-7 կմ հարավ-արևելք: Գյուղը 1861թ. ուներ 36, իսկ 1890թ. 47 տուն (230 մարդ) հայ բնակչություն: ⁸² 1914թ. գյուղն ուներ 242 հայ բնակիչ: ⁸³

Հիմնվուրց գյուղ էր, սակայն XVII-XVIII դարերում ավերվել է և վերստին բնակեցվել ի հաշիվ 1832թ. Թեհրանի Լար գյուղից գաղթած հայերի, ⁸⁴ բայց գյուղի անվանման 2-րդ Խոյլի տարբերակը կարծել է տալիս, թե վերաբնակիչները խոյեցիներ էին: ⁸⁵

Գյուղատեղի տարածքը ներկայումս հերկված է: Չեն պահպանվել ինչպես տնատեղերը, այնպես էլ Մր. Աստվածածին եկեղեցին: Խիտ անտառով ծածկված գերեզմանոցից ժամանակին հայտնաբերվել ու հրատարակվել է 4 տապանագիր:

93. ՏԱՊԱՆԱԶԱՐ, 5 թիզ երկարությամբ և մեկ ու կես թիզ լայնությամբ, աջ երեսին քանդակված են 6 խաչեր և հակիրճ արձանագրությունը (նկարագրությունը՝ Մ. Բարխուտարյանցի):

ԹՎԻՆ ՀԲ. ՄԱԹԻ ՄԻՇ:

Հրատ. Բարխուտարեանց, 193:

Ծանոթ. Կարծում ենք, որ քվականի մեջ գրիչը բաց է բողել հարյուրավորը (եթե իհարկե ընթերցումը ճիշտ է):

94. ՏԱՊԱՆԱԶԱՐ.

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ՓՈՒՆԵՑԱՒ Ի ԳՈՏԻՇԱՅՍ Ի ԶՐԻՍՏՈՍ, ՈՎ ՈՐ ԿԱՐԿԱՅ, ԱՍՏՈՒԱՇ ՈՂՈՐՄԻ:

Հրատ. Բարխուտարեանց, 193:

Ծանոթ. Գոտիշայս տեղանունը մեզ անծանոթ է: Թվում է, թե հրատարակիչը ճիշտ չէ վերծանել:

95. ՏԱՊԱՆԱԶԱՐ, խոյածև, գլուխը կտորրված է: Վրան քանդակված են 2 մարդկանց պատկերներ, թուր և գավազան:

ԹՎ. ՈՒ (1171) ԱՄՐԻՆ ՓՐԽՈՒԼԻՆ;

Հրատ. Բարխուտարեանց, 193:

96. ԽԱՉԶԱՐ, կից է մի տապանաքարին, վրան միայն թվականը.

82. Մ. Սմբատեանց, էջ 139:

83. «Кавказский Календарь на 1915г.», էջ 109:

84. Մ. Բարխուտարեանց, էջ 191:

85. «Մշակ», 1902, № 176, էջ 3:

ԹՎ. ՊԿԸ (1419):
Հրատ. Բարխուարեանց, 193:

ԿՈՒՋՈՒՆ

Մինչև 1918թ.՝ հայաբնակ գյուղ, ներկայումս՝ գյուղատեղ՝ շրջկենտրոնից 22 կմ հարավ-արևմուտք, Գիրք գյուղից 2 կմ արևմուտք: 1861թ. ուներ 21, իսկ 1890-ին՝ 46 տուն (208 մարդ) հայ բնակչություն:⁸⁶ 1914 թ. ուներ 268 բնակիչ:⁸⁷ Գյուղատեղը ծածկվել է մացառներով ու ծառերով: Մրանից շուրջ 1,5 կմ հյուսիս, Թաղթասան կոչված բարձրադիր վայրում պահպանվում է ընդարձակ գերեզմանոցը: Տեղում պահպանվել են շուրջ 15 արձանագիր տապանաքարեր, որոնք վերաբերում են XVIII-XX դարի սկզբներին:

97. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, երկու ծայրերում քանդակված են խաչեր, միջնամասում երկտող արձանագրությունն է (նկ. 39).
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Տ(Է)Ր ՂԱԶՂԱՐԻՆ, ԹՎԻՆ ՌՃԿ (1711):




98. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ՝ նույնաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԿՈՒՋՈՒՆ ԿՈՂԻ ԲՆԱԿԻՉ ՊԱՂԻ ԱԲՐ(Ա)ՎԱՍԻՄԵԱՆԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄՀԳ (1825):

ՂԱԼԱԿԱ

Այս գյուղը Շամախու Գարդման գավառի ամենամարդաշատ ու բարգավաճ գյուղերից մեկն էր: գտնվում է շրջկենտրոնից 28 կմ հարավ-արևմուտք: Ըստ XIX-XX դարերի վիճակագրական տարբեր տվյալների, այն միշտ էլ իր բնակչության թվով գերազանցել է գավառի մյուս հայաբնակ գյուղերին, զիջելով միայն Մատրասային: 1861 թ. Ղալական ուներ 111 տուն հայ բնակչություն:⁸⁸ 1865թ. 170 տուն:⁸⁹ 1883-ին ուներ 1205 բնակիչ:⁹⁰ 1890 թ. 298 տուն (1591 մարդ):⁹¹ 1914թ. հունվարի 1-ին 2466 հայ բնակիչ:⁹² Գյուղը մեծ կորուստներ է տվել 1918 թ. հունիս-հուլիս ամիսներին, երբ թուրքական կանոնավոր զորքերը ներխուժել էին հայկական բնակավայրերը: Այդ իրավիճակում Ղալականը նշանավորվեց իբրև կազմակերպված ինքնապաշտ-

պանության կենտրոն: Մեկօրյա հերոսամարտից հետո թուրքերին հաջողվել է մտնել գյուղ,



ուր բնակիչները մատնվել են փախուստի ու ցրվել զանազան վայրեր: Գյուղն ամբողջովին այրվել է:⁹³ Այդ անհավասար կռվում զոհված անմեղ համազուգահեռների հիշատակը հավերժացրել է գյուղում կառուցված փոքրիկ հուշարձանը: Խորհրդային կարգերի հաստատումից հետո հրաշքով փրկված դպրակեցիները վերստին համախմբվել են հայրենի գյուղում ու շենացրել այն: 1978 թ. Ղալական ուներ 731 բնակիչ:⁹⁴ 1984 թ. գյուղն ուներ 460 հայ (121 տուն) և 196 լեզգի բնակչություն:⁹⁵ Գյուղի ռուսաց միջնակարգ դպրոցում սովորում էին 135 հայ և 40 լեզգի երեխաներ:

Գյուղում և շրջակայքում պահպանվել են բազմաթիվ հնագիտական, պատմաճարտարապետական հուշարձաններ: Գյուղի հին թաղամասում կանգուն է Սբ. Աստվածածին եկեղեցին: Վերջի-



նիս մասին ամենահին հիշատակությունը պատկանում է Դանիել արքեպիսկոպոսին: Մա նշում է, որ եկեղեցին 1865 թ. փայտածածկ էր և ուներ երեք քահանա:⁹⁶ Մինչև 1893 թ. եկեղեցու շենքը մնացել է անփոփոխ: Այդ մասին վկայում է Մ. Բարխուտարյանցը, նշելով. «Եկեղեցին Ս. Աստուածածին, ընդարձակ, ձեղուն փայտաշեն, որ ունի երկու քահանայ, ...»⁹⁷:

1893 թ. հոկտեմբերին Ղալակայում բռնկված հրդեհին զոհ են գնացել Սբ. Աստվածածին եկեղեցին, դպրոցը և շուրջ 90 բնակելի տներ: Դեպքից

86. Մ. Սմբատեանց, էջ 139:

87. "Кавказский Календарь на 1915г.", Тифлис, 1914, էջ 142:

88. Մ. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 139:

89. Դանիել արքեպիսկոպոս, նշվ. հոդվածը, էջ 319:

90. "Кавказский Календарь на 1885г.", Тифлис, 1884, էջ 212:

91. Մրաժամանակ նույն տեղում նշված է, որ գյուղը տալիս էր բրուտագործական հայտնի արտադրանք:

92. Մ. Սմբատեանց, նույն տեղում:

93. "Кавказский Календарь на 1915г.", Тифлис, 1914, էջ 131:

93. ՀՀՊՊԿԱ, ֆ. 278, ց. 1, գ. 8, թերթ 46: Միայն այդ օրվա ընթացքում դպրակեցիները տվել են 60-ից ավելի զոհված ու վիրավոր:

94. «Աղբյուրներից հանրապետական Վանքագիտարան» (աղբյուրներից), հատոր 3, Բաքու, 1979, էջ 14:

95. Ըստ գյուղի խորհրդի մատյանների:

96. Դանիել արքեպիսկոպոս, նշվ. հոդվածը, էջ 319:

97. Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 207:

հետո բարձրացի ու թիֆլիսեցի հայերի շրջանում կազմակերպված դրամական հանգանակության շնորհիվ վերաշինվեցին բազմաթիվ շենքեր, և որ կարևորն է՝ սկսեց կառուցվել նոր, այս անգամ արդեն ցարդ կանգուն եկեղեցին: Վերջինս եռանակ գմբեթավոր բազիլիկ է կառուցված համակ սրբատաշ գորշ գույնի քարերով: Ամենայն հավանականությամբ նոր եկեղեցին կառուցվել է հին փայտածածկ եկեղեցու տեղում:

Ղալակա գյուղի տարածքում խիստ արժեքավոր է հին գերեզմանոցը, որն զբաղեցնում է բավական ընդարձակ մակերես, միաժամանակ փաստելով այն իրողությունը, որ Ղալական հնում ևս մարդաշատ ու ծաղկուն գյուղ է եղել:

Այստեղ պահպանվել են շուրջ 2000 տապանաքար, որոնցից ավելի քան 400-ը արձանագիր է: Դրանցից հները XV-XVI դարերից են:

Գյուղի տարածքում պահպանվում են նաև Շինատեղ, Կեռվ, Ջմանա Խուր հնավայրերը: Վերջինիցս գտնված հնագիտական իրերը հազարամյակների պատմություն ունեն:

99. ԽԱՉԲԱՐ, կանգնեցված տապանաքարի արլ. ծայրում՝ երեսով դեպի արևմուտք. ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԻՆ ԹՎ. ԼԳ (585):

Հրատ. Բարխատարեանց, 209:

Ծանոթ. Եթե հրատարակիչը չի սխալվել ընդօրինակման մեջ, ապա կարծում ենք զրիչը բաց է բողիկ հարյուրավորը, գուցե ևս հազարավորը նույնպես:

100. ԽԱՉԲԱՐ, նախորդի օրինակով. ԱՃ ՈՂՈՐՄԻ ՄԱԹՈՍԻՆ ԹՎ. Հ (621):

Հրատ. Բարխատարեանց, 209:

Ծանոթ. տես՝ նախորդ ծանոթագրությունը:


101. ՏԱՊԱՆԱԲԱՐ, ուղղանկյունաձև, վրան բանդակված է նեո ու պղեղ և խաչ (նկ. 40). ԹՎ(ԻՆ) ՌՃԾ (1501):



102. ՏԱՊԱՆԱԲԱՐ ուղղանկյունաձև, վերնամասը երկթեք հորինվածքով (նկ. 41).

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ԿԱԶՄԵԱԼ ԳԱՊԱՆ | ՈՐՊԵՍ ԵՏԵԱԼ Ի ՄԷՁ ԶՆՏԱՆ ՈՐ ԺԱՄՆ ՏԻՏՐ | ԳԱՍԱԴՆ Է ՀԱՐԿԱՅՆ ԶՆԱԶՆԱ ՏԻՊԻՐ ՂԱԶԱՐՍ Է ԱՆՊԻՏԱՆ ԾՄԱՌ՝, ԾՆՕՂ ՍՈՐԱ ՄՕՄԷՍ | Զ(Ա)Ղ(Ա)ՆԱՆ, ԹՎ(Ի)Ն ՌԵ(Ի)ՃԵՆ ՎԱՆՃԱՆԵՅԱԻ ԿԵ(ՍԱ)ԻՐԷԻԵԱՆ:

Ծանոթ. հասկանալի չեն (թեև հստակ ընթերցվում է) ՏԻՏՐ ԳԱՍԱԴՆ բառերը: Թվականը՝ որոշ վերապահումով վերծանում ենք 1656:



103. ՏԱՊԱՆԱԲԱՐ նախորդի մոտ, նույնաձև (նկ. 42).


ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ԵՂԵԱԶԱՐԻՆ | ՌՃԿԷ (1718) ԹՎԻՆ ՀԱՆԳԵԱԻ Ի ԴՈՔ | ՆԱՀԱՅ ՊԵՏԻՆ, Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ԱՍԷԲ Տ(Է)Ր ՄՕՄԷՍ ՈՐԳԻ ԵՂԵԱԶԱՐԻՆ:



Ծանոթ. հասկանալի չէ «Ի ԴՈՔ ՆԱՀԱՅ ՊԵՏԻՆ» արտահայտությունը:

104. ՏԱՊԱՆԱԲԱՐ, ձգված, ուղղանկյունաձև (նկ. 43).

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ՍԱՆԱՄԻՆ, ԿԱՍԱՐԵՅԱԻ ԿԱՄԵՆ | ԱՐԱՐՉԻՆ ՌՃԿԷ (1718) ԹՎԻՆ, ԳՐԵՅԱԻ ՉԵՌԱՄԲ Տ(Է)Ր | ՅՈՎՀԱՆՆԻՍԻՆ, ՕՎ ՈՐ ԿԱՐԿԱՅ ՄԵԿ ԼԻԱՅ ԲԵՐԱՆ ՈՂՈՐՄԻ ԱՍԷԲ ԵՂԵԼՈՅՍ:



105. ՏԱՊԱՆԱԲԱՐ, ուղղանկյունաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ | ՉԱՐԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԿՈՂԱԿԻՑ ՎԱՌԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄՀԱ (1822):

106. ՏԱՊԱՆԱԲԱՐ, ուղղանկյունաձև. ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ԲԱԼԱՄԻ ՏԵՐ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ, ՏԵՐ ԳԱՍՊԱՐԵԱՆՑ ՀԱՆԳԵԱԻ Ի ՏԵՐ 1892 Ա. 11 ՕԳՈՍՏՈՍԻ, 38 ԱՄԱՅ ՀԱՍԱԿԻ || ՏԵՄԱՆՈՂԸ ԱՅՍ ԱՆՇՈՒՆՉ ՏԱՊԵՆԱԿ ԵՂԻՑԻ ՉԵՁ ԷԼ ՅԱՅՏԻ ՕՐԻՆԱԿ, ՈՐ ԱՇԽԱՐԹԻՍ ՓԱՌԸՐ ՓՈՒՉ Է ԵՎԿԱՐՏԱԿ, ՄԻԱՅՆ ԲԱՐԻ ԳՈՐԾ, ԲԱՐԻ ԱՆՈՒՆ ԿՄՆԱՅ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՍԱԿ:

107. ՏԱՊԱՆԱԲԱՐ, նախորդի մոտ, նույնաձև.

ԱՍՏ ՀԱՆԳՉԷ ՏԵՐ ՆԷՐՄԵՍ ԲԱՀԱՆԱԻՆ ՏԵՐ ԳԱՍՊԱՐԵԱՆՑԻՆ, ՎԱՆ. 1899 Թ. || ԱՄԱՅ 57 ՀԱՍԱԿԻ, ՕՎ ՏԵՐ ՀԱՅՐ ՄԵ-

ՈԱՐ, ԹՈՂԻՐ ԱՆՍԱՀ ԱՆՈՒՆ ՅԻՇԱՏԱԿ ԶՈ ԳՈՐԾՔԵՐՈՎ ԴԱՐՉԱՐ ԲԱՐԻ ՕՐԻՆԱԿ, ԴՈՒ ՍՈՒՐԲ ԳՈՐԾԻ ՀԱՍԱՐ ԵՂԱՐ ՆԱՀԱՏԱԿ:

Ծանոթ. *Ղալակեցի Հարություն Տեր-Գաբրիելյան Տեր-Գասպարյանը ծնվել է 1842 թ.: 1860-68 թթ. սովորել է Շամախու հոգևոր դպրոցում: 1888 թ. Շամախու բնիկ առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոսից ձեռնադրվել է քահանա և վերանվանվել՝ Տեր Ներսես Տեր-Գաբրիելյան Տեր-Գասպարյանց: Քահանայագործել է Ղալակայի Սբ. Աստվածածին եկեղեցում՝ 11 տարի: Մահացել է 1899 թ. (ՀՀՊՊԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8365, ք. 1, 4, 7):*

108. ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, շինարարական արձանագրությունը.
ԿԱՌՈՒՑՄԻ ՏԱՃԱՐՄ ԱՅՍ ԱՐԴԵԱՄԲԸ ԵՎ ՋԱՆԻԻԸ ՀԱՅՈՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԱԼԱԿԱ ԳԵՂՁ, ԻՍԿ ԾԵՓՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ՄԻՔԱՅԵԼԻ ԾԱՏՈՒՐԵԱՆ 1867:

Հրատ. *Բարխուտարեանց, 207:*

Ծանոթ. *Այս արձանագրությունը վերաբերում է գյուղի ներկայիս եկեղեցու տեղում եղած հին եկեղեցու կառուցմանը, որը այրվել էր 1893թ. հոկտեմբերի 8-ին բռնկված հրդեհի ժամանակ: Նշենք նաև, որ Ղալակայում 1867 թ. շատ առաջ էլ եկեղեցի եղել է և այս արձանագրությունը հավանաբար փորագրվել է կատարված հիմնավոր նորոգումներից մեկի առթիվ: Արխիվային փաստաթղթերում միևնույն Սբ. Աստվածածին անվանը եկեղեցի Ղալակայում հիշվում է օրինակ 1824 թ. (ֆ. 56, ց. 1, գ. 3617, ք. 7): Հայանի է նաև, որ 1858թ. եկեղեցին գտնվում էր քայքայված ու խախտված վիճակում և այդ առթիվ նախատեսվում էին վերանորոգման աշխատանքներ: 1862 թ. Շամախու կոնսիստորիան Էջմիածնի Սինդոնի գեղարկել է, որ Ղալակայի եկեղեցու վնասված տեղերն ու բերությունները վերացված էին (ֆ. 56, ց. 1, գ. 3684, ք. 1, 18):*

109. Սբ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, նվիրատվական արձանագրություն փորագրված այժմյան եկեղեցու հարավային պատին (նկ. 44).
Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ԴԱԼԱԿԱՎԵՆԱԿ ԳՐԻԳՈՐ ԲԱՐԴԱՆԵԱՆՑԻ ՀՈԳԻՈՅՆ, ՈՐ ՆՈՒԻՐԵՑ Ս(ՈՒՐ)Բ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԾԻՆՈՒԹԵԱՆ | ԵՒ ՋԳԵՍՏԻ 300 ԲՈՒՔԼԻ:

Ծանոթ. *Արձանագրությունը փորագրվել է 1902 թ. կամ նրանից հետո, քանի որ նոր եկեղեցու կառուցումը, որ սկսվել էր 1899 թ. ու շարունակվել կարճժամկետ ընդմիջումներով, ավարտվել էր 1902 թ. (ֆ. 56, ց. 1, գ. 8958, ք. 23): Նորաշեն եկեղեցին օծվել է 1903 թ. նոյեմբերի 3-ին («Նոր-Դար», 1903, № 195, էջ 1):*

110. ԽԱՉՔԱՐ, Կեով գերեզմանոցում:
ԹՎ. ՊՀ (1421):
Հրատ. *Բարխուտարեանց, 209:*

111. ԱԾ. ՈՂՈՐՄԻ ԶԱՐԱՄԻՆ:
Հրատ. *Բարխուտարեանց, 29:*

ՆՈՐՇԵՆ ԿԱՍԽՈՒԹԱՇԵՆ

Գյուղը անցյալում կոչվել է նաև Ենգիբենդ (թուրքերեն քարզանությունը): Խորհրդային տարիներին այն վերանվանվել էր Կրմզի Օկտյաբր (Կարմիր Հոկտեմբեր): Գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հարավ-արևմուտք, անտառներով շրջապատված արևմտահայաց սարալանջին: 1861 թ. գյուղն ուներ 70 տուն, իսկ 1890-ին 132 տուն (828 մարդ) հայ բնակչություն:⁹⁸ Նորշենի հայ բնակչությունը մեծ կորուստներ է տվել 1918 թվականին: 1984թ. գյուղում բնակվում էին շուրջ 30 տուն լեզգիներ և միայն երկու հայ ծերունիներ:

Գյուղամիջի Սբ. Աստվածածին եկեղեցին այժմ գտնվում է հիմնավեր վիճակում: Եկեղեցատեղի շուրջ տարածվում է գերեզմանոցը: Այդտեղ տապանաքարերը (արձանագիրները՝ մոտ 180 հատ) վերաբերում են XIX-XX դարերին:

Գյուղից 1,5 կմ հարավ-արևմուտք անտառածածկ բլրի զագաքին գտնվում է Սբ. Ծիլիպ ուխտատեղին: Տեղում պահպանվում են հիմնավեր եղեկեցին և կոթող-մահարձանը:

Նորշենի հյուսիսային կողմում տարածվում է մի հին գերեզմանոց, ուր պահպանված գերեզմանաքարերից Մ. Բարխուտարյանցն ընդօրինակել է 4 արձանագրություն:

112. ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՍՈՒԼԹԱՆ ԽՈՒԼԻՆ ԹՎ(ԻՆ) ԴԷ (648):

Հրատ. *Բարխուտարեանց, 200:*
Ծանոթ. *Թվականի մեջ հնարավոր է, որ գրիչները բաց են թողել հարյուրավորը:*

113. ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՆԻԿԱՐԻՆ ...:
Հրատ. *Բարխուտարեանց, 200:*
Ծանոթ. *Եղծված է թվականը:*

114. ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՐՈՒԹԻՒՆԻՆ ԹՎ. ՋԳ (1454):
Հրատ. *Բարխուտարեանց, 200:*

115. ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՋԱՆՈՒՆ ԹՎ. ՋԿՁ (1517):
Հրատ. *Բարխուտարեանց, 200:*
Ծանոթ. *Դժվար է որոշել, թե այս մի քանի վիճագրերը խաչքարի՞ վրա են եղել փորագրված թե՞ տապանաքարի:*

ՇՈՒՔՈՒՐՉԻ

Շուքուրչի գյուղը գտնվում է շրջկենտրոնից 16 կմ հարավ-արևմուտք, Դավա-բաթան ձորի արևելյան կողմում, անտառներով շրջապատված գեղատեսիլ վայրում: Մ. Բարխուտարյանցը վկայում է, թե շուքուրչեցիների նախնիները գաղթել են Արցախի Խաչեն գավառի Բալլուջա, Դաշբուլաղ, Խանձր և Ղշլաղ գյուղերից:⁹⁹ Եթե այս ճշմարիտ է,

98. Մ. Մմբատեանց, էջ 139:
99. Մ. Բարխուտարեանց, էջ 199:

իսկ դրա օգտին է խոսում գյուղի տարածքում հին հուշարձանների բացակայության հանգամանքը, ապա Շուքուրչին հիմնված պիտի լինի XVIII դարի վերջին կամ XIX դարի սկզբին: Գյուղը 1886թ. ուներ 24 տուն, 224 շունչ հայ բնակիչ:¹⁰⁰ 1912թ. այդ թիվը աճել էր ու հասել՝ 54 տան, 335 մարդու:¹⁰¹ 1918թ. Գանձակի թուրքերի ղեկավարությամբ տեղի թուրքերը (հարևան գյուղերից) Շուքուրչին նախ ավերել են, ապա կատարել սպանություններ, գերեվարել՝ կանանց ու աղջիկներին:¹⁰² Գյուղի երկրորդ ու վերջնական ավերումը տեղի է ունեցել նույն թվի հունիսի վերջին, երբ օսմանյան կանոնավոր բանակը հասել էր Կարամարյամ-Վարամարգան: Բնակիչների մեծ մասը կարողացել էր հապճեպ միանալ դեպի Շամախի նահանգող հայկական զորքին:¹⁰³ Մինչև 1950-ական թթ. Շուքուրչիում թիչ թվով հայեր էին բնակվում: Դրանից հետո գյուղը բնակեցվեց լեզգիներով:

Շուքուրչի գյուղում կիսավեր դրության մեջ պահպանվում է եկեղեցին ու գերեզմանոցը: Եկեղեցին կառուցվել է ծնունդով շուքուրչեցի՝ Շամախի քաղաքում վերաբնակված Հովհաննես և Պետրոս Ջավադյան Խալաֆյանց եղբայրների սեփական միջոցներով 1862-1865 թթ.: Ներկայումս նրա հարավային կողմում քայքայված, բայց կանգուն վիճակում է եկեղեցին կառուցված եղբայրներից մեկի՝ Պետրոսի տապանաքարը:

116. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ունի կոթողի ձև, քառանկիստ է, մի երեսին փորագրված է բազմատող ընդարձակ արձանագրությունը (նկ. 45).

ՄԻՇԽԱՐՀ ԾՆԱՐ ԵՒՄՇԽԱՐՀԻՆ ՄՇԱԿՂԱՐԶԱՐ: | ԱՆԴՈՐՐՈՒԹԻՒՆ՝ | ԲԱՐԻ ԳՈՐԾԻ ՈՒ ՍԵՐԻ | ՄԵՋ ՄԻԱՅՆ ԳՏԱՐ, ԱՐԴ,ՈՐ ԹՈՂՆԵՍ ՓՈՒԹԻ-ՏԱՏԱՄԿՈՎ ԼԻ ԱՅՍ | ԱՇԽԱՐՀ, ԲԱՐՈՒԹԻՒՆՔԴՂ ԺԼԱՏ ԸԱՏԵՐԻՆ ՊԻՏ | ՄՏԻՊԷՆ ՄԱՂԹԵԼ ՀՈՂՈՅԴ | ԱՆԱՆՅ ՀԱՆԳԻՍՏ ՈՒԿ ԿԵԱՆՔ ԽԱՂԱՂ: | ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԸՈՒՔՈՒՐԻՉԵՑԻ ԼՈՒՍԱՀՈՒԳԻ ՊԵՏՐՈՍ ՋԱՎԱԴԵԱՆ ԽԱԼԱՓԵԱՆՑԻ: ԾՆԱԻ Ի 1846 ԱՄԻՒ ԵՒ ՎԱՆՃԱՆՑՑԱԻ Ի 20ՅՈՒՆՈՒԱՐԻ 1888 ԱՄԻ:

Ծանոթ. Պետրոս Ջավադյանը ոչ միայն օժանդակել է եկեղեցու կառուցմանը, այլև միջոցներ է տրամադրել նրա հետագա վերանորոգումների համար: 1888թ. նաև նրա միջոցների հաշվին է իրականացվել եկեղեցու տանիքի նորոգումը: Իր մահվանից հետո գործը ավարտին է հասցրել եղբայրը՝ Հովհաննեսը (ՀՀՊՊԿԿ, ֆ. 56, ց. 1, գ. 6880, ք. 1, գ. 8379, ք. 1, «Արարատ» ամսագիր, 1888, օգոստոս, էջ 511):

100. ՀՀՊՊԿԿ, ֆ. 56, ց. 1, գ. 9287, ք. 9-10:
101. ՀՀՊՊԿԿ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, ք.13: Տես նաև՝ ֆ. 56, ց. 1, գ. 11686, ք. 9:
102. ՀՀՊՊԿԿ, ֆ. 278, ց. 1, գ. 8, ք. 46,52:
103. Նշված գործը, ք. 45: Ա. Հ. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կոիվերը, Երևան, 1984, էջ 230-231:

Գավառի հին ու նշանավոր գյուղերից մեկն է: Գտնվում է շրջկենտրոնից 13 կմ արևմուտք, զոգավոր անտառազուրկ սարահարթի վրա: 1861 թ. ուներ 105, իսկ 1890-ին՝ 62 տուն (420 մարդ) հայ բնակչություն:¹⁰⁴ 1914թ. Ռուշանն ուներ 601 բնակիչ (բոլորն էլ հայեր):¹⁰⁵ Ռուշանի հայությունը հարևան Վանքի և մոտակա այլ գյուղերի օրինակով մեծ կորուստներ է տվել 1918թ. ամռանը:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո գյուղի բնակչության չնչին մնացորդները, վերստին համախմբվելով հայրենի գյուղում, շենացրել են այն: Վերջին 2-3 տասնամյակներում գյուղի բնակչությունը համարվել է նաև զգալի թվով լեզգիներով ու աղբբեջանցիներով: Մինչև 1988-ի բռնազաղթը գյուղի միայն մի փոքր մասն էին կազմում հայերը (շուրջ 25 տուն):

Ռուշանը հարուստ է հայկական պատմա-ճարտարապետական հուշարձաններով: Գյուղամիջում կանգուն է Մր. Աստվածածին եկեղեցին:



Սա ունի երկու մուտք՝ հարավից և արևմուտքից: Հարավային մուտքի ճակատակալ քարը կրում է 1872 թ. շինարարական արձանագրությունը:

Գյուղի հարավ-արևմտյան ծայրում, բլրի բարձրության վրա տարածվում է ընդարձակ գերեզմանոց: Այդտեղ պահպանված արձանագիր գերեզմանաքարերից հները վերաբերում են XIX դարի սկզբներին (ավելի հներն անարձանագիր են): Տապանագրերի թիվը (մինչև XX դարի սկզբներին) անցնում է 150-ից:

Գյուղում ուշագրավ են բնակելի մի քանի հին տները: Դրանցից մի քանիսն ունեն շինարարական արձանագրություններ:

Ռուշանից ցած, հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմերում՝ միմյանցից 2-4 կիլոմետր հեռավորության վրա, խիտ մացառներով ու ծառերով ծածկված, մեղմաթեք հյուսիսահայաց լանջերին պահպանվել են մի քանի հին գյուղատեղեր իրենց գերեզմանոցներով: Դրանք հայտնի են՝ Մուրատ խան, Բեշ քյանը, Շոր Աղբյուր, Ճղպորի (Ընկուզենյաց) անուններով:

117. ՏԱՊԱՆԱԳԻՐ Մուրատ-Խան կոչված գյուղատեղի գերեզմանոցում.

104. Մ. Մնրատեանց, էջ 139:
105. "Кавказский Календарь на 1915 г.", էջ 176:

ԹՎ(ԻՆ) Շ (1051):
Հրատ. *Բարխուտարեանց, 202:*

118. ՏԱՊԱՆԱԳԻՐ, նույն տեղից.
ԹՎ(ԻՆ) Ո (1151):
Հրատ. *Բարխուտարեանց, 202:*

119. ԹՎ(ԻՆ) Չ (1251):
Հրատ. *Բարխուտարեանց, 202:*

120. ԹՎ(ԻՆ)
Հրատ. *Բարխուտարեանց, 202:*


121. ԹՎ(ԻՆ) ՊԱ (1352):
Հրատ. *Բարխուտարեանց, 202:*

122. ԹՎ(ԻՆ) ՋԻԳ (1474) ԳԱԼՍՏԵԱՆ:
Հրատ. *Բարխուտարեանց, 202:*

123. ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԴԱԴԻՆ ՀՈ-
ԳԻՆ, ԹՎ(ԻՆ) ՋԼ (1481):
Հրատ. *Բարխուտարեանց, 202:*

124. ԳԼԽԱԿԱԼ ՄԵԾ ՔԱՐԻ ՎՐԱ՝ ԲԵՉՔՅԱՆՈՂ
ԳՅՈՒԴԱՆՏԵՂԻ ԳԵՐԵԳՄԱՆՈՅՈՒՄ.
ԹՎ(ԻՆ) ՊՉԳ (1435), ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ
ՍԱՐԳԻՍ ԶԱՀԱՆԱՅԻՍ:
Հրատ. *Բարխուտարեանց, 202:*

125. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, հա-
րավային երեսին գլխավայր փորագրված է (նկ. 46).
ԹՎ(ԻՆ) ՋԻԳ (1495), | ՈՐ ՇԱՏԻՊԱԿՆ |
ԱԽԲՆԵՐՆ ԿԱՅՆԱԻ ԵՐԵՏ ՆԱՅԱՆ
ՄԵԴՔ ՈՒՆԵՐ ...:
Հրատ. *Բարխուտարեանց, 202 (ընդօրինակել է
փոքր ինչ աղավաղված):*




126. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ՝ ՇՈՐ աղբյուր գյուղա-
տեղի գերեզմանոցում.
ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՆՈՒՆՋԱՐԻՍ, ԹՎ-
(ԻՆ) ՊԺԸ (1369):
Հրատ. *Բարխուտարեանց, 202:*

127. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.
ՍԱՌԱՅ, ԹՎ(ԻՆ) ՋԱ (1452):
Հրատ. *Բարխուտարեանց, 202:*

128. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.
ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՇԱՀՈՒՄԻՍ, ԹՎ(ԻՆ)
ՋԽԷ (1498):
Հրատ. *Բարխուտարեանց, 22:*

129. ԽԱՉՔԱՐ, վերնամասից ջարդված
(նկ.47).
ԹՎ(ԻՆ) ՋԽԸ (1499):



130. ԽԱՉՔԱՐ գտնվում է ճղաքրի (Ընկու-
զենյաց) կոչվող գյուղատեղիի գերեզմանոցում.
ԿԱՆԳՆԵԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ՍՏԵՓԱՆԻ
ԿՈՂԱԿԻՅՆ ԿՈՒԼՈՆ, ԹՎ. ՇԽԳ (1095):
Հրատ. *Բարխուտարեանց, 202:*

131. ԽԱՉՔԱՐ, նույն տեղում.
ՍՈՒԼԹԱՆ ...:
Հրատ. *Բարխուտարեանց, 203:*

132.
ՆԻԿԱՆԼԱՅ, ԹՎ(ԻՆ) ՋԽԱ (1499):
Հրատ. *Բարխուտարեանց, 203:*

133.
ՈՒՄԻՏ ... ՋԽԱ (1499):
Հրատ. *Բարխուտարեանց, 203:*

134. ՔԱՐԻ ՎՐԱ
ԼՈՒՆ ՔԱՆԴԵՅ ՄԵՐ ԳԵՂԸ:
Հրատ. *Բարխուտարեանց, 203:*

135. ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, հարա-
վային մուտքի բարավորին փորագրված շինարա-
րական արձանագրությունը (նկ. 48).
ՅԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ | ՌՈՒՇԱՆԱՇԵՆՈՒ
ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱ | ԵԳԵՂԵՑՈՒ 1872
ԱՄԻ:

Ծանոթ. Արխիվային տարբեր փաստաթղթերից
երևում է, որ Ռուշան գյուղում 1872 թ. առաջ էլ միևնույն
Սր. Աստվածածին անվամբ եղել է եկեղեցի: Կատար-
ված զանազան նորոգական ու վերակառուցման աշ-
խատանքների վերաբերյալ պահպանվել են զգալի թվով
փաստաթղթեր (ՀՀՊՊԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4581, 3684,
5340):

136. ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ, երկհարկ, առաջին
հարկի մուտքերից մեկի բարավորին փորագրված

է կառուցման թվականը (1985-ին անբնակ էր) (նկ. 49).


1886 ԹԻՎ | ԸՍՏԵՓԱՆ | ՍԱՓԱՐՕՎ:

137. ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ, գտնվում է եկեղեցու հյուսիս-արևմտյան կողմում, տան տերն էր Մակիյան Գեմաղին: Տան հարավային ճակատին, պատշգամբի ներսում փորագրված է շինության թվականը (նկ. 50).

ԿԱՌՈՒՑԱՒ ՏՈՒՆՍ Ի ՎԱԵԼՈՒՄՆ | ՅՈՎ-ՀԱՆՆԻՄԻ ՊՈՂՈՍԵԱՆՅ, 1896 ԱՄԻ:

ՎԱՆԶ (ՎԱՆՔԱՇԵՆ)

Գավառի հինավուրց գյուղերից է: Գտնվում է շրջկենտրոնից 20 կմ արևմուտք, Կոկիտն (Գյուլչայ) գետի ձախ կողմի բարձրության վրա, ձորագրված լին, գետափից մոտ 4 կմ հեռու: 1850-ական թթ. գյուղն ուներ 60 տուն հայ բնակչություն:¹⁰⁶ 1861թ. այն կազմել է 140, իսկ 1890-ին՝ 182 տուն (1015 մարդ) հայ բնակչություն:¹⁰⁷ 1904 թ. հունվարի 1-ին Վանքաշենն ուներ 195 տուն՝ 1063 բնակիչ:¹⁰⁸ 1914թ. գյուղն ուներ 1131 հայ բնակիչ:¹⁰⁹ Հայտնի է, որ 1918 թվականին, թուրքերի ներխուժման ժամանակ գյուղն ուներ 1300 հայ բնակիչ:¹¹⁰ Նույն



թվականի ամռանը Վանքաշենը նշանավորվել է որպես կազմակերպված ինքնապաշտպանության կենտրոն: Այդտեղ հավաքվել են գավառի հայկական շուրջ 10 գյուղերի բնակիչները. «Հասարածների թիւը հասնում է 10-12 հազարի, որով կազմակերպում են ինքնապաշտպանութեան զորքը: Դիմադրութիւնը լինում է օրհասական. արդէն շրջապատուած թուրք զօրքի և տեղական ամբոխի կողմից:

Դիմադրութիւնը տևում է չորս օր, որի ընթացքում հայերը միշտ յաղթող են լինում»:¹¹¹ Նույն թվականի օգոստոսին, երբ հարևան գյուղերի հայ բնակչությունը ցրվել էր իրենց տեղերը, թուրքերը նորից են հարձակվում Վանքաշենի վրա. «Օգոստոսի սկզբներումն էր թուրք չաուշը գալիս է Վանք գիւղը հրամայում է բոլորին հաւաքուել եկեղեցու

բակը, յայտարարելով, որ կարևոր խօսելիք կայ յօգուտ գիւղացիներին: Գիւղի երիտասարդները վատ բանի հոտ են քաշում և ուզում են պատուպարուել անտառները, բայց մեծերը հակառակ են լինում (կասկածելով) առարկելով թէ դրանով կասկածի և կոտորածի առիթ կտան և այլն: Գիւղացիք չեն հաւատում չաուշին, բայց և այնպես հաւաքում են մեծ ու փոքր եկեղեցու բակը: Մի տեղ որից փախչելու ոչ մի հնար չկայ, երեք կողմը անդունդ է մի տեղ ունի, որի դեմն էլ չաուշի մարդիք են պահում: Մինչև այդ հաւաքում է նախօրոք հրախորում գազանացած ամբոխը: Սկսում են իրենց դժոխային ծրագիրը: Նախ ջօկում են գիւղի եղած գեղեցիկ կին, աղջիկ և փոքրահասակ երեխաներին ու սկսում են կապտուել մնացողներին, որպես թէ տանում են Իւանովկայ գիւղը փաշի մոտ և հազի դուրս բերելով գիւղից սկսում են սոսկալի ու չտեսնուած գազանութիւնը տանջելով ու ծաղրելով կոտորում են բոլորին, շատ քչերին է յաջողում ազատուել այդ սպանդանոցից, որից յետոյ թալանում են ամբողջ գիւղը: Ազատուածներից շատերը մահանում են սովից: Նույն վիճակին են ենթարկում և միւս չգնացած գիւղերը (բայց ինչ-որ տեսել է Վանք գիւղը Աստուած հեռու տանի)»:¹¹² Աղբրեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո հրաշքով փրկված վանքաշենցիները վերստին համախմբվեցին հայրենի գյուղում: 1985թ. գյուղում բնակվում էին լեզգիներ, աղբրեջանցիներ և քիչ թվով հայեր (շուրջ 12 տուն): Վերջիններս հայրենի գյուղը հարկադրաբար լքեցին 1988-ի հայտնի բռնազաղթի օրերին:

Վանքաշենը հարուստ է պատմական հուշարձաններով: Գյուղի հին թաղամասում, որը տարածվում է տեղանքի ամենաբարձր մասում, նկատվում են հիմնավեր Սբ. Հովհաննես եկեղեցու մնացորդները:

Գյուղի հյուսիս-արևմտյան բարձրադիր ծայրում տարածվում է հին գերեզմանոցը, ուր թաղումները ցայսօր շարունակվում էին մինչև 1988-ի բռնազաղթը:

Վանքաշենից նույն ուղղությամբ 0,5 կմ հեռու, թեք անտառածածկ սարալանջին պահպանվում են ընդարձակ գյուղատեղի, հիմնավեր եկեղեցու և գերեզմանոցի մնացորդները: Հնավայրը հայտնի է Ավերակ Հին Վանք անվամբ:

Կարևոր են նաև Շաքլու կամ Շաքուլու գյուղատեղին իր գերեզմանոցով գյուղից 2 կմ հյուսիս-արևմուտք և Կարմիր-Քերձ հնավայրը: Գյուղի տարածքում են գտնվում նաև Նահատակ սրբավայրն ու Ջիվանշիրապատ քաղաքատեղիի ավերակները:

Հնավայրերում պահպանված գերեզմանաքարերից նախկինում ընդօրինակվել ու հրատարակվել է 15 արձանագրություն: Դրանց մի զգալի մասը ներկայումս չի պահպանվել կամ անցել է հողի շերտի տակ: Տեղում մեր հետազոտության շնորհիվ հայտնաբերվեց ևս 10 նախկինում չհրատա-

106. Ս. Ջալալեանց, էջ 389:

107. Մ. Մմբատեանց, էջ 139:

108. "Кавказский Календарь на 1907г.", Тифлис, 1906, отдел II, էջ 176:

109. "Кавказский Календарь на 1915г.", էջ 103:

110. ՀՀՊՊԿԱ, ք. 278, ց. 1, գ. 8, քերթ 45:

111. ՀՀՊՊԿԱ, նույն տեղում:

112 Նույն տեղում:

րակված արձանագրություն (գյուղամիջի գերեզմանոցի ավելի քան 200 տապանագրերից, որոնք վերաբերում են XIX-XX դարին, ստորև ներկայացնում ենք միայն 2 առավել ուշագրավ տապանագրերը):

138. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գյուղի հյուսիս-արևմտյան ծայրում տարածված գերեզմանոցում, ուղղանկյունաձև, հարավային և հյուսիսային լայնական երեսներին փորագրված է ընդարձակ արձանագրություն.

ԹՎԻՆ ՌՃԿԶ (1717) ԷՐ: | ԱՅՍ Է ՏԱ(ՊԱ)Ն ՍԷԼԻՍԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՍԷԼԶԻՍԻՆ | ԵՂԲԱԻՐ ՕՀԱՆԻՆ, ՍՕՐՆ ՆՈՐԱՅ ՍԱՐԵԱՆԻՆ | (Ս)ԱՀՆ, ՈՐ ԵԿԱԻ ՎԱ(Ն)ԸՆ ԵՍՐԱԸՍ ԿԱՊԱՍ | ՄԵՈԱՅ, ՈՐ ՔԱՀԱՆԱՅ, ՈՐ ԿԱՐԴԱՅ ՀՈԳՈՅ | ԱՄԻ: || ԼԱԿՉԻՆ, ՈՐ ՎԵՐ ԿԱՅԱԻ ԲՕՈ ԵԼԱԻ:

Հրատ. *Բարխուտարեանց, 206 (վրիպումներով):*

Ծանոթ. *Ըստ Մ. Բարխուտարյանցի կողմից արված մեկնաբանության՝ տապանաքարը կերտվել է Մելիսի հիշատակին, որը «մեռա մահտարածման հիանդությանը: Բայց մեռնելուց առաջ յաղթեց երկրիս վերայ արշառող Լեկզիներին, կապտեց գերիներ (եսրանքս) և բողոնելով մեռա այս քաջն. ԶՈՒ ԷԼԱԻ նշանակում է յաղթուեց Լեկզին»:*

139. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ, ուղղանկյունաձև.

ԱՅՍ Է՛ ՏԱՊԱՆ ՅԱՐՈՒԹԻ, ՈՐ Է ՈՐԴԻ Տ | ... ԹՎ(Ի)Ն ՌՃԿԷ (1718):

140. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, աչքի է ընկնում իր մեծ չափերով.

ԱՅՍ Է ՏԱՍԲԱՐԱՆ ՊԵՏՐՈՍ ԻՇԵԱՆԻՆ | ԲԱՋԱԲԱՆ ՈՐԴԻՈՅ ԻԶԲԱՇԵԱՆ ՏՈՀՄԻՆ | ՈԳԵԼԻՑ ԶԱՄԱԿ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ | ՊՄԱԿԵԱԼ ՅԱՐՔԱՅԵՆ ԱՍՊԵՏԻ ԽԱՉԻՆ, | ՈՐՈՅ ԲԱՋ ԱՆՈՒԱՆ ՅԻՇԱՍԱԿ ԲԱՐԻՆԻ ՍԷՐՏՍ ՀԱՅՎԱՋԱՆՑ ԱՆՍՈՒԱՅ ՊԱՀԻՆ | Վ(Ա)ԽՃԱՆԵԱԼ ԾԵՐՈՒՆԱՋԱՐԴ ՀԱՍԱԿԻՆ | Ի 13 ՄԵՊԴԵՄԲԵՐԻ 1859 ԹՈՒԱԿԱՆԻՆ:

141. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԿԱԲԱԼԵՐ ՌՈՒՍՏԱՍԻՆ, ՈՐ ԷՐ ՈՐԴԻ ՊԵՏՐՈՍԻՆ ԱՈՒՎԵԼԵԱՆՑ, ՎԱՆՃ. 1860 ԱՄԻ:

142. ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ, շինարարական արձանագրությունը (չի պահպանվել).

ՅԻՇԱՍԱԿ Է ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻՍ ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐԻՆ, ԹՎ. ՈՄՆԵ (1826), ՂԱԲԱԼԱՅ:

Հրատ. *Բարխուտարեանց, 203:*

Ծանոթ. *Մի աղբյուր վկայում է, թե եկեղեցին իր ծախսով Տեր Աբրահամ Գրիգորյանը կառուցել էր 1820թ. («Նոր-Դար», 1888, № 85, էջ 1): Ինչպես տեսնում ենք թվականի մեջ 6 տարվա տարբերություն կա: Հայտնի է, որ Վանքաշեն գյուղի եկեղեցին 1858 թ. նորոգության կարիք ուներ: 1862 թ. Շամսիաու հոգևոր իշխա-*

նությունները Էջմիածնի Սինողին գեղուցել են Սր. Հովհաննես եկեղեցու նորոգման աշխատանքների բարեհաջող ավարտի մասին (Ֆ. 56, ց. 1, գ. 3684, ք. 1,18): 1875թ. եկեղեցին կրկին նորոգման կարիք ուներ: Այս անգամ հարկավոր էր նորոգել փասած փայտածածկ տանիքը (Ֆ. 56, ց. 1, գ. 6558, ք. 1): Նույն թվին հոգևոր իշխանություններից տասցել են աշխատանքները սկսելու թույլտվությունը (նշված գործը, ք. 2): Վիճակը բարդացավ 1876թ. ապրիլի 2-ի երկրաշարժի հետևանքով, երբ խախտվեցին եկեղեցու դռները (Ֆ. 56, 1, գ. 7393, ք. 1): Միայն 1888թ. վանքաշենցիները կարողացան ավարտել եկեղեցու վերանորոգման մեծածավալ աշխատանքները: Նույն թվի նոյեմբերի 6-ին այն օժել է Շամսիաու թեմական առաջնորդ Մեսրոբ արքեպիսկոպոս Մմբառյանցը (Ֆ. 56, ց. 1, գ. 7393, ք. 5: «Նոր-Դար», 1888, № 205, էջ 2):

143. ԽԱՉԲԱՐ, Հին Վանքաշենի (ավերակ) գերեզմանոցում.

ԹՎԱԿԱՆ Ծ. (601):


Հրատ. *Բարխուտարեանց, 204*

Ծանոթ. *կարծում ենք, գրիչը քաջ է բողոլ հարյուրավորը:*

144. ԽԱՉԲԱՐ, սրածայր ավարտվող վերնամասում 3 եղծված տողով (նկ. 51)

ԱՍՏՈՒԱՑ ՈՂՈՐՄԻ ԱՅ ԲԱՍԱԼ:

Հրատ. *Բարխուտարեանց, 204:*



145. ԽԱՉԲԱՐ.

ԸՍՊԸՆԴԻԱՐ ՍԼԲԱՐ, ՎԱԹԱՆԴ ԱՐ ԿԱՐՄՐԱԳԵԼ, ՄՍՋԱՐԱՅ ՈՐԴԻ, ԱՃ ՈՂՈՐՄԻ ...:

Հրատ. *Բարխուտարեանց, 204 (մյրդար=կարվածատեր):*

146. ԽԱՉԲԱՐ.

ԹՎ(ԻՆ). Կ(611):

Հրատ. Բարխուտարեանց, 204:

Շանոթ. Եթե ընդօրինակման մեջ սխալ չկա, ապա մեր կարծիքով թվականի մեջ գրիչը բաց է թողել հարյուրավորը:

147. ԽԱՉԹԱՐ, արևմտահայաց երեսին մանր խազավոր գրությունը (նկ. 52).


ԵՄ ԳԻԳՈՉ ՈՒ ԲԵԿԱՅ ԿԱ(Ն)՝ ԳՆԵՑԱԸ ՁԽԱՂՉՍ ԳԻԳԵՐԻ, ԹՎ(Ի)Մ ՉՃԽԸ (1399) ԽԲ: Ա(ՍՏՈՒԱ)Տ ՈՂՈՐՍԻ:



Հրատ. Բարխուտարեանց, 204 (ունի բազմաթիվ աղավաղումներ):

148. ԽԱՉԹԱՐ, շրջանագծի մեջ առնված հավասարաթև խաչի տակ փորագրված է միայն թվականը (նկ. 53).


Ի ԹՎ(ԻՆ) ՊԾԲ (1403):



Հրատ. Բարխուտարեանց, 204 (բաց է թողել սկզբի Ի տառը):


149. ԽԱՉԹԱՐ, արևմտահայաց երեսին՝ խաչի շուրջ (նկ. 54).

Ա(ՍՏՈՒԱ)Տ ՈՂՈՐ(Մ)Ի ԵՐԳԱՅՉԵՐԻ: Ի ԹՎ(ԻՆ) ՉՃԾԹ (1410):



150. ԽԱՉԹԱՐ (նկ. 55)

Ի ԹՎ(ԻՆ)ՁԽ (1491) Ա(ՍՏՈՒԱ)Տ ՈՂՈՐՍԱՏ ՈՂՈՐՍԱ Ե...ԻՆ:




151. ԽԱՉԹԱՐ, կիսով չափ խրված հողի մեջ և քերված արևմտյան կողմի վրա (նկ. 56).

ԹՎ(ԻՆ)ՊԺԵ (1366):

152. ԽԱՉԹԱՐ, գեղաբանդակ, արևմտյան երեսին (նկ. 57).

ԴՆԱԲ(Ա)Ր, ԸՍՏԻ Ի ԹՃՍՇԽՅ (անհասկանալի - Ս.Կ.), Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՒ ՇԱԲԱՐԻՆ, ԲԱՆԴԻՉԱՅ ՆՈՐԱՅ ԶԱՄ:

153. ԽԱՉԶԱՐ, ճակատին մեկ եղծված տող. ԱՅ...ԼԱ...ԻՍ:



154. ԽԱՉԶԱՐ, ստորին մասում. ԹՎ(ԻՆ)ՋԳԵ (1546):

Վանք գյուղից 1,5-2 կմ հյուսիս, Շաքլու կամ Շաքլուլու գյուղատեղի գերեզմանոցից Բարխուտարյանցը հրատարակել է 3 արձանագրություն: Տեղում գտանք դրանցից միայն մեկը և մեկ ուրիշն էլ՝ նորահայտ:

155. ՏԱՊԱՆԱԶԱՐԻ վրա. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ԱՂՈՐՆԳՈՒԽԻՆ, ՓՈՒԽԵՑԱԻ Ի Զ(ՐԻՍՏՈ)Ս Ի ԹՎ. ՊԾԷ (1408):
Հրատ. *Բարխուտարյանց, 205:*

156. ՏԱՊԱՆԱԶԱՐԻ վրա. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ԱԼԱՀԴԱՏԻՆ ԹՎ. ՋԻԲ (1493):
Հրատ. *Բարխուտարյանց, 205:*

157. ՏԱՊԱՆԱԶԱՐԻ հարթ երեսին, ունի անկանոն եզրագիծ. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ԽՈՆԴՇԱՅԻՆ, Ի ԹՎ(ԻՆ) ՊԾԸ (1409):
Հրատ. *Բարխուտարյանց, 205:*

158. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև.

Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՍԻ ԱՍԻ ... ՇԻՆ:
Վանք գյուղի տարածքում Քոռ Աղբյուր կոչված գյուղատեղիի գերեզմանոցից Բարխուտարյանցը ընդօրինակել է 5 արձանագրություն:

159. ԹՎ. Ճ. ԽԱՉԱՏՈՒՐ:
Հրատ. *Բարխուտարյանց, 205:*

160. ԱԾ ՈՂՈՐՍԻ ՄԵԼԻՔԻՆ ԹՎ. ՊԾԳ (1454):
Հրատ. *Բարխուտարյանց, 205:*

161. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ԱՂԱՃԱՆԻՆ, ԱԾ. ՈՂՈՐՍԻ ՆՍԱ, ԹՎԻՍ ՊԻԳ (1374):
Հրատ. *Բարխուտարյանց, 205:*

162. ԱԾ ՈՂՈՐՍԻ ՇԱՀՐԱՆԻՆ:
Հրատ. *Բարխուտարյանց, 205:*

163. ԹՎ. ՌՃ (1651). ԱԾ ՈՂՈՐՍԻ ՆԱՊԱԹԻՆ:
Հրատ. *Բարխուտարյանց, 206:*

ՈՒՇՏԱԼ

Ղալակա գյուղից 3 կմ արևելք, զոգավոր սարահարթի վրա տարածվում է գավառի հիմնավորք ու մինչև 1988-ը հայաբնակ գյուղերից մեկը՝ Ուշտալը: Մա 1861թ. ուներ 60 տուն հայ բնակչությամբ:¹¹³ 1890-ին այն կազմում էր 139 տուն (1071 մարդ):¹¹⁴ 194 թ. ուներ 203 տուն՝ 1297 (754 արական, 543 իգական) բնակիչ:¹¹⁵ 1914 թ. հունվարի 1-ին գյուղն ուներ 1465 հայ բնակիչ:¹¹⁶ 1984թ. գյուղն ուներ 294 բնակիչ, որից 291-ը հայեր (125 արական, 166 իգական), մնացածը աղբյուրացիներ:¹¹⁷

Գյուղի Սր. Աստվածածին եկեղեցին ներկայումս գոյություն չունի: Ուշտալի հարավային ծայրում, թեք լանջին տարածվում է ընդարձակ, հին գերեզմանոցը: Մրա մի կողմում թաղումները շարունակվում էին մինչև հայերի բռնագաղթը: Տեղում պահպանվել են բազմաթիվ տապանաքարեր, որոնց մեծ մասն ունի XIX-XX դարերին վերաբերող արձանագրություններ: Դրանց թիվն անցնում է 200-ից: Գերեզմանոցի հին մասում պահպանվում են մի քանի հնաձև տապանաքարեր (այդ թվում մեկ խոյածև գերեզմանաքար), որոնցից մեկն ուներ XVIII դարի սկզբի արձանագրություն:

164. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, հարավային երեսին երկտող փորագրված է (նկ. 59). ԱՅՍ Է ԳԱՊԱՆ ԳՈՒՆԱՉԱՐԻՆ, ՈՐ ՄԱՀՕՔՆ ՓՈՒԽԵՑԱԻ ԱՌ Ա(ՍՏՈՒԱ)Ծ, ՌՃԿՉ (1717) ԹՎԻՆ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՍԻ ԱՍԷՔ, ԱՍԷՆ:


113. Մ. Սմբատյան, էջ 139:

114. Նույն տեղում:

115. "Кавказский Календарь на 1907г", Тифлис, 1906, отдел II, էջ 176:

116. "Кавказский Календарь на 1915г", էջ 193:

117. Ըստ գյուղխորհրդի մատյանների:




ՓԱԹԱԿՆՈՒ¹¹⁸

Մինչև 1918 թ.՝ հայաբնակ գյուղ, այնուհետև գյուղատեղ՝ շրջկենտրոնից 18 կմ հարավ, Գիրք գյուղից 4 կմ հյուսիս-արևելք, անտառապատ սարերով շրջապատված գեղատեսիլ վայրում: 1861 թ. ուներ 27, իսկ 1890 թ. 46 տուն (317 մարդ) հայ բնակչություն:¹¹⁹ 1914 թ. հունվարի 1-ի վիճակագրությամբ Փաթակուն ուներ 470 հայ բնակիչ:¹²⁰

Գյուղում գտնված պատմական հուշարձաններից Սր. Աստվածածին եկեղեցին ներկայումս գոյություն չունի: Գյուղատեղի հյուսիս-արևմտյան ծայրում, բարձրադիր, խիտ անտառածածկ սարալանջին պահպանվում է երբեմնի գյուղի գերեզմանոցը: Այստեղ կա XVIII դարից մինչև 1918 թ. վերաբերող արձանագիր շուրջ 60 տապանաքար: Առավել հները անարձանագիր են:

165. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, հարավային երեսին միատող փորագրված է. ՈՒՄԴԱ ՂԱՍՈՒՄԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՃԿԶ (1717):

166. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև, հարավային երեսին երկտող (նկ. 60). ԱՅՍ Է ԴԱՊԱՆ ՅԱԶԼԻՐ ԽԱՆԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՃԿԶ (1717):



ԲԱՎԱՆԴ

Գյուղը գտնվում է շրջկենտրոնից շուրջ 24 կմ հարավ-արևելք, անտառազուրկ սարահարթի վրա: 1861 թ. ուներ 101, իսկ 1890-ին՝ 84 տուն (566 մարդ) հայ բնակիչ:¹²¹ 1904թ. ուներ 84 տուն՝ 850 (400 արական, 450 իգական) հայ բնակիչ:¹²² 1914 թ. գյուղն ուներ 676 բնակիչ:¹²³ Բռնագաղթից առաջ

118. Ըստ գիրքեցի հայերի վկայության՝ գյուղի հին անունը եղել է Փեթակ: Այն բացատրվում է տեղում մեղվաբուծության շատ զարգացած լինելու հանգամանքով: Հետագայում այլազգիներից աղավաղվել ու դարձել է Փաթակուն:

119. Մ. Սմբատևանց, էջ 139:

120. "Кавказский Календарь на 1915г", էջ 193:

121. Մ. Սմբատևանց, էջ 139:

122. "Кавказский Календарь на 1907г", Тифлис, 1906, отдел II, էջ 176:

123. "Кавказский Календарь на 1915г", էջ 139:

գյուղում հայերը կազմում էին չնչին մասը՝ 6 տուն (1986 թ.):

Գյուղում վերակառուցված և ձևափոխված վիճակով գոյություն ունի Սր. Գևորգ եկեղեցին: Դրա հարավային մուտքի ճակատակալ քարին փորագրված է շինարարական արձանագրությունը: Գերեզմանոցում պահպանվել են XVIII-XIX դարերին և XX դարի սկզբներին վերաբերող ավելի քան 150 արձանագիր տապանաքար: Գերեզմանոցի ծայրում կան նաև քիչ թվով նոր ժամանակների շիրմաքմբեր:

167. ՄԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ, շինարարական արձանագրությունը ազուցված հարավային մուտքի ճակատում (նկ. 61).

ԳԱՌՈՒՑԱԻ Ս(ՈՒՐ)Բ Գ(Ե)ԻՈՐԲ ԵԿ(Ե)Ղ(Ե)ՑԻՄ Ի ԲԵԻԱՆՂ ԳԻՒՂԻ ԸԱՍԱՐԱԿ ԺՈՂՎՈՒՐԲ, 1846:

Ծանոթ. Ուշագրավ է, որ եկեղեցու մասին պահպանված երկու հիշատակություններում («ՀՂՊԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, ք. 10 և գ. 5293, ք. 1»), որ կան 1853 և 1868 թթ. վերաբերող տեղեկություններ, այն նշված է Սր. Աստվածածին անվամբ: Ենթադրելի է, որ անվանափոխությունը տեղի է ունեցել եկեղեցին հիմնավոր վերանորոգման ենթարկված լինելու պատճառով:

168. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գերեզմանոցում, ուղղանկյունաձև, 3 երեսներին փորագրված է արձանագրություն (գլխավորապես հարավային երեսին), իսկ վերնամասի հարթության վրա քանդակված է նետ ու աղեղ (նկ. 62).

ԱՅՍ ԸԱՆԳՍԻԻԿԷՉԱՆՇ ՍԷՏՐԱԿԻ ՍՕՍԷՍԵՆՅ:



Ծանոթ. Գրությունը և քանդակները բնորոշ են XVIII դարին: Մյուս երկու երեսների գրությունները թերի են պահպանված: ԿԷՉԱՆՇ-ն արդյո՞ք կիչանեցի ի մասան ունի (գյուղ՝ ներկայիս Մարտակերտի շրջանում):

ԲԵՇԵՆՈՒՐԴ

Գտնվում է շրջկենտրոնից 28 կմ հարավ, մի խոր ձորի մեջ:

Գավառի մարդաշատ ու նշանավոր գյուղերից մեկն էր: Հայտնի է, որ 1861 թվականին գյուղն ուներ 115 տուն հայ բնակչություն, իսկ 1890-ին 170 տուն (917 մարդ):¹²⁴ 1904 թ. ուներ 173 տուն՝ 985 (525 արական, 460 իգական) հայ բնակիչ:¹²⁵ 1914 թ. Բեշխուրդն ուներ 1104 հայ բնակիչ:¹²⁶ 1918-19 թթ.

124. Մ. Սմբատևանց, էջ 139:

125. "Кавказский Календарь на 1915г", էջ 176:

126. "Кавказский Календарь на 1915г", էջ 140:

Քեշխուրդը ևս մեծ կորուստներ է տվել: 1984 թ. գյուղում բնակվում էին ընդամենը 9 տուն (միայն հայեր): Նրանք բոլորն էլ 1988-ին ենթարկվեցին բռնագաղթի:

Քեշխուրդում պահպանված ուշագրավ հուշարձաններից է Մր. Աստվածածին եկեղեցին, կառուցված գյուղի հյուսիսային կողմում: Եկեղեցին



ունի եռանավ բազիլիկի հորինվածք: Կառուցված է անտաշ և սրբատաշ քարերով (վերջիններով՝ մուտքերը, անկյունաքարերը, սյուները և թաղակիր կամարները): Հիմնական առանձնահատկություններից է ուղղանկյունաձև լուծված ավազ խորանը: Ունի երկու մուտք արևմուտքից և հարավից: Վերջինիս բարավորին փորագրված է շինարարական արձանագրությունը:

Քեշխուրդի արևմտյան կողմում, արևելահայաց թեք լանջի վրա, տարածվում է գյուղի ընդարձակ գերեզմանոցը: Այդտեղ պահպանվել են հարյուրավոր անտաշ ու սրբատաշ գերեզմանաքարեր: Մեր գտած բոլոր արձանագիր տապանաքարերը վերաբերում էին XIX-XX դարերին: Դրանց թիվը անցնում է 350-ից:

Գյուղամիջում պահպանվում է նաև 1893 թ. կառուցված և ցայսօր անխափան գործող քարաշեն աղբյուրը:

Գյուղում կան բազմաթիվ ուշագրավ և ժողովրդական ճարտարապետության ուսումնասիրության առումով խիստ կարևոր կանգուն կամ արդեն կիսավեր բնակելի տներ (բոլորն էլ, առանց բացառության ներկայումս անօգտագործելի են և արագորեն շարունակվում են քայքայվել ու փլչել):

Դրանցից հները վերաբերում են XIX դարի կեսերին:

169. ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, հարավային մուտքի բարավորին փորագրված է (նկ. 63). ՅԻՇԱՏԱԿ Է Ս(ՈՒՐ)Բ Ա(ՍՏՈՒԱ)ԾՄԱԾՆԱ ԵԿԵՂԵՑԻՍ ՇԻՆԵՑԻՆ ՔԵՇԽՈՒՐԴ

ԳՈՒՂԻ ՀԱՍԱՐԱԿՈՒ(ԹԻ)ԻՆՆ:
Վիմագրից ձախ, շրջանակից դուրս փորագրված է.

ԵՒ ՎԱՂԻՉԸՆ Է| 8040 | ՄԱՆԵԹ|:

Շրջանակի աջ կողմում փորագրված է.

Ի 1860 ԱՄԻ:

Շրջանակից դուրս, չորս անկյունների մոտ փորագրված է.

Յ(ԻՍՈՒ)Ս Ն(Ա)Չ(ՈՎՐԵՑԻ)| Թ(Ա)Զ(ԱԻՈՐ) ՀՐ(ԷԻՑ):

Հրատ. Բարխուտարեանց, 196 (մանր վրիպումներով):

Ծանոթ. Ցայսօր կանգուն այս եկեղեցու կառուցումից առաջ էլ Քեշխուրդ գյուղում գոյություն է ունեցել ավելի հին եկեղեցի, որը 1858 թ. գտնվում էր քայքայված ու խախտված վիճակում (Ֆ. 56, ց. 1, գ. 3684, ք. 4): 1865 թ. թեմի առաջնորդ Դանիել արքեպիսկոպոսը գեկուցել է նոր եկեղեցու կառուցման ավարտի մասին (Ֆ. 56, ց. 1, գ. 4183, ք. 3): Թերի էր մնացել միայն տանիքը, որի ծածկը շինվեց 1867 թ.: Այդ թվին Շամախու հոգևոր իշխանությունները Մինողին գեկուցել են նոր եկեղեցու հիմնավոր կառուցման ավարտի մասին (Ֆ. 56, ց. 1, գ. 3684, ք. 21): 1885թ. դրությամբ նախատեսվում էր կրկին եկեղեցու քայքայված տանիքը նորոգել, քիթեղապատել ու այդ նպատակի համար ծախսել մինչև 1000 ռուբլի (Ֆ. 56, ց. 1, գ. 7942, ք. 1): Նույն թվին հոգևոր իշխանությունները տվել են վերանորոգման աշխատանքները սկսելու բյուրավորությունը:

170. ԱՂԲՅՈՒՐ, ճակատին քանդակված է խաչ, որի թևերի միջև և ստորին մասում՝ ուղղանկյունաձև շրջանակի մեջ փորագրված է (նկ. 64).

ՅՈՐԴՈՐՈՆՈԳ ԵԻԿԱՐԳԱԴՐՈՒ(ԹԵ-ԱՍ)Բ | ԾԻ(ԱԿԱՆ) Զ(Ա)Հ(ԱՆԱ) ԹԱԴԵՈՍՅԵՐ ՍԱՐԳԱՐԵԱՆՅ | ՇԻՆԵՑԻԱ ԱՂԲԻՐՍ ԾԱՆԻԻԸՆ ՇՂԱԲԷԳ ՄԵՀՏԻ ԲԷԳՈՂԱԻ ... 1893 ԱՄԻ :

Ծանոթ. Թաղևու Հովհաննիսյան Տեր-Մարգարյանը (կամ Միքայելյանը) 1867-1872 թթ. սովորել է Շամախու թեմական դպրոցում: Քեշխուրդ գյուղի համար Շամախու Մր. Աստվածածին մայր եկեղեցու քահանա է ձեռնադրվել 1886թ. հուլիսի 27-ին, 29 տարեկան հասակում (Ֆ. 56, ց. 1, գ. 7969, ք. 3-4, 26): Հայտնի է, որ Թաղևուր մինչ ձեռնադրությունը ապրում էր Բազմում և քավական բարձր աշխատավարձով (ամսական 60ռ.) աշխատում մի հայտնի տպարանում, բայց ընդառաջ գնալով համադրույցիների թախանձանքին հայրենի գյուղի համար ձեռնադրվում է քահանա («Նոր - Դար», 1886, N133, էջ3):

Կ Ո Ւ Տ Կ Ա Շ Ե Ն Ի Շ Ր Ջ Ա Ն

Շրջանի ներկայիս տարածքը համապատասխանում է պատմական Բուն Աղվանքի Կապաղակ գավառի տարածքին: Այն զբաղեցնում է 1548 քառ. կմ մակերես և տարածվում է Մեծ Կովկասի հարավահայաց լանջերին ու հովիտներին: Մահմանակից է հարևան Վարդաշենի, Շաքիի, Աղդաշի, Գյուլշայի, Իսմայիլի, Դուբայի Դուսարի և Դաղստանի հանրապետությունից Ախտիի շրջաններին: Շրջանի տարածքում զգալի թիվ են կազմում XVIII դարում կրթնափոխ եղած (մահմեդականացած) հայերի գյուղերը

(Վանդան, Բում, Մեխուրավախ, Կուտկաշեն և այլն): Մինչև 1988-ի բռնագաղթը կային նաև մայրենի լեզուն կորցրած, սակայն արյան գնով հարազատ կրոնը պահած՝ այսպես կոչված թրքախոս-հայերի գյուղեր (Մուլթան-Նուխի, Միրզաբեկլու): Կարևոր էր նաև գլխավորապես ուտիախոս հայերով բնակեցված Նիժ գյուղը, որի բնակիչները ևս բռնագաղթվեցին 1988-89 թթ.: Շրջանի ներկայիս տարածքում մինչև 1918 թ. հայաբնակ էին 12 գյուղեր, Գիրդադյուլ, Չանադրուլադ, Ամուրավան, Բլեղշեն, Բեկլար քյանդ, Միրթենգիջա, Թուսիկ, Ծիրիկ, Մուլթան-Նուխի, Ջուրու, Միրզաբեկլու, Նիժ: Դրանց մի մասը ներկայումս վեր է ածվել գյուղատեղերի, իսկ մյուս մասն էլ աղբբեջանաբնակ է կամ լեզգիաբնակ: Մինչև 1988-ը քիչ թվով հայեր բնակվում էին Մուլթան-Նուխի, Ամուր-ավան, Միրզաբեկլու և որ գլխավորն է Նիժ գյուղերում (դրանցից ոչ մեկում չկար հայկական դպրոց կամ բաժին):


Պատմական հուշարձաններից մեծաթեք են՝ Կապաղակ քաղաքատեղին, Նիժ, Մուլթան-Նուխի գյուղերի եկեղեցիները, Վանքասարի եկեղեցին, Ամուրավանի խաչքարերով հարուստ գերեզմանոցները և այլն:

Շրջանի ներկայիս տարածքից մախկինում արձանագրություններ հավաքել ու հրատարակել է միայն Մ. Բարխատարեանցը (թվով 21 միավոր): Ցավոք դրանցից մեզ հաջողվել է վերագտնել ու ստուգել միայն 2 արձանագրություն: Մնացածները կամ կորած են և կամ վրիպել են մեր տեսադաշտից: Դրանցից զատ տեղում կատարված աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են ևս 62 արձանագրություն, որով և ներկայացվող ընդհանուր հավաքածուն կազմում է 83 արձանագրություն:

ԱՄՈՒՐԱՎԱՆ

Գավառի հին ու նշանավոր հայկական գյուղերից մեկն էր: զանվում է շրջկենտրոնից 25 կմ հարավ-արևելք, Կոկխոն (Գյուլչայ) գետի աջ կողմում, բարձրադիր սարահարթի ծայրում, ձորագրվախին: 1914 թ. ուներ 1174 բնակիչ (բոլորն էլ հայեր):¹²⁷ 1918 թ. երկրամասի բազմաթիվ այլ հայաբնակ գյուղերի շարքում մեծ կորուստներ տվեց նաև Ամուրավանը: Խորհրդային կարգերի հաստատումից հետո ի տարբերություն հարևան Բլեղշեն, Բեկլարքյանդ, Չանադրուլադ, Միրթենգիջա, Ծիրիկ և Թուսիկ գյուղերի՝ Ամուրավանում վերահաստատվեցին կոտորածներից հրաշքով փրկված համազյուղացիները և մասամբ շենացրին այն: 1985 թ. հայերը կազմում էին գյուղի բնակչության մի փոքր մասը՝ շուրջ 10 ընտանիք:

Ամուրավանը հարուստ է պատմական հուշարձաններով: Գյուղամիջում կանգուն է 1891 թ. նորոգված Մր. Ամենփրկիչ եկեղեցին: Մա ունի երկու մուտք՝ արևմուտքից և հարավից: Վերջինիս



բարավորին պահպանվում է շինարարական արձանագրությունը:

Գյուղի հարավային ծայրում տարածվում է ընդարձակ գերեզմանոցը: Այստեղ պահպանվում են XVIII-XX դարերին վերաբերող շուրջ 200 արձանագիր տապանաքարեր: Գյուղից 3-4 կմ հյուսիս-արևելք, Կոկխոն գետի աջ կողմում, լայնա տարած հարթավայրում, որը ներկայումս ծածկը-

ված է խիտ անտառով ու դժվարանցանելի մացառով, տարածված են ընդարձակ գյուղատեղի ավերակները: Հնավայրը հայտնի է «Պառավի բաղ» անվամբ: Առավել ուշագրավ է գյուղատեղի գերեզմանոցը: Այստեղ պահպանվել են բազմաթիվ խաչքարեր ու տապանաքարեր (մի մասն՝ արձանագիր):

Գյուղատեղի հյուսիսային կողմում, խիտ անտառի մեջ, հիմնավեր եկեղեցու շուրջ տարածվում է մեկ այլ հին գերեզմանոց, ուր ևս պահպանվել են շատ խաչքարեր ու տապանաքարեր: Այս հնավայրն էլ հայտնի է «Ուզուխի գերեզմանոց» անվամբ:


171. ՄԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ, հարավային մուտքի կիսաշրջանաձև եզրագծով բարավորին քառատող կամարաձև փորագրված է (նկ. 65). ՆՈՐՈԳԵՑԱԻ Ս(ՈՒՐ)Բ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՍ ԱՐԴԵԱՄԲԸՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՆՍՏԱՆՍՆՈՒԹԵ(Ա)Ն ԱՄՈՒՐԱՎԱՆՈՒ, Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԶԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵ(Ա)ՆՑ, |1891 ԱՄԻ:

Ծանոթ. Ամուրավանում դեռևս 1850 թ. հիշվում է Մր. Գևորգ անվամբ եկեղեցի (Ֆ. 56, ց. 1, գ. 2649, թ. 1): 1888-1889 թթ. գյուղում Մր. Գևորգյան անվամբ հիշվում է 1883 թ. բացված եկեղեցական-ծխական դպրոցը (Ֆ. 27, ց. 1, գ. 72, թ. 3: Ֆ. 27, ց. 1, գ. 35, թ. 14): Մրանից հետևում է, որ այդ ժամանակ եկեղեցին ևս դեռևս կոչվում էր Մր. Գևորգ: 1986թ. դրությամբ դեռևս կանգուն եկեղեցու սույն արձանագրությունից պարզվում է, որ այն 1891 թ. ենթարկվելով հիմնավոր նորոգության միաժամանակ վերստին օծվել է և վերանվանվել Մր. Ամենփրկիչ:

172. ՏԱՊԱՆԱԶԱՐ, (գյուղի գերեզմանոցում) ուղղանկյունաձև, հարավային երեսին երկտող փորագրված է (նկ. 66).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՐԱԿԱՏԻ ՈՐԴԻԲԱԿՎԵՐՏԻՆ, ԹՎԻՆ ՈՍԼԵ (1786):

127 "Кавказский Календарь на 1915г", т. 88:



172ա. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, նախորդի մոտ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԽԱՉԱՆԵՄԻ | ՈՐԴԻ ՀԱՅ ԲԱՊԵՏԻՆ, ԹՎ(ԻՆ)Ն ՈՄԾԲ (1803):

173. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԽԱՉԱՆԵՄԻ | ՈՐԴԻ ՅԱՐՈՒԹԻՆ, ՕՎ ՈՐ | ԿԱՐԹԱ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ԱՄԻ, ԹՎ(ԻՆ)Ն ՈՄԾԸ (1809):

174. ՏԱՊԱՆԱԶԱՐ Պառապի բաղի գերեզմանոցում.

ՀԱՆԳԻՍ ՈՒՍՍԱ ՍՈՒԲԱՏԻՆ, ԹՎ. ՉԱ (1252):

Հրատ. Բարխուտարեանց, 215:

175. Նույն տեղում.

ԹՎ. ՊԵ (1356) ՍՈՒԼԹԱՆ ՇԱՀ:


Հրատ. Բարխուտարեանց, 215:

176. ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԳՈՒԲԱԹԻՍ ԹՎ. ՀԱՅՈՑ Ձ(1451):

Հրատ. Բարխուտարեանց, 215:


177. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, հարավային երեսին ուռուցիկ տառերով քառատող փորագրված է (նկ. 67).

ԹՎ(ԻՆ) ՁԺԵ (1466): Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ Տ(Ե)Ր ՈՎԱՆԵՍԻՆ, ԽԻՍ ՔԱՐԻ ՍԱՂԳ ԷՐ:



Հրատ. Բարխուտարեանց, 215 (միանգամայն անսխալ):

178. ԽԱՉԶԱՐ, կանգնեցված է նախորդ տա-



պանաքարի արևելյան կողմում՝ երեսով դեպի արևմուտք, միևնույն հանգուցյալի հիշատակին (նկ. 68).

ԹՎ(ԻՆ) ՁԺԵ (1466) | (ԿԱ)ՆԳՆԵՑԱԼԻ Ս(ՈՒՐ)Բ | ԽԱՉՍ Ի | ՓՐԿՈՒԹԻ(ԻՆ)| Տ(Ե)Ր ՈՎԱՆԵՍԻՆ:

179. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, հարավային երեսին ուռուցիկ տառերով քառատող փորագրված է.

ԹՎ(ԻՆ) ... Գ: Ա(ՍՏՈՒԱ)Ծ | ՈՂՈՐՄԻ ... ԱՁԱ... | ԽԻՍ ՔԱՐԻ ՍԱՂԳ ԷՐ:

Ծանոթ. № 177 արձանագրությունը կրող տապանաքարի օրինակով այս տապանաքարը ևս իր արևելյան ծայրում ունի մոտավորապես նույն բովանդակությունը պայտուհախոր արձանագրությանը հասցրած:


180. ԽԱՉԶԱՐ, կից է նախորդ տապանաքարին արևելյան կողմից՝ երեսով դեպի արևմուտք (նկ. 69).

ԹՎ(ԻՆ) Ձ...: Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ... Ա ՁԱ...:

Ծանոթ. Ինչպես տապանաքարի, այնպես էլ խաչքարի արձանագրություններում եղծված է և քվականի, և անձնանվան մասը: Իրար լրացնող արձանագրություններից պարզ է միայն քվականի հարյուրավորն ու միավորը, այն է՝ Ձ և Գ տառերը: Հետաքար անկախ տասնավորի ինչ լինելուց արձանագրությունները կարելի է քվազրել XV դարի երկրորդ կեսից մինչև XVI դարի առաջին կեսը:

181. ԽԱՉԶԱՐ, արևմտահայաց երեսին փորագրված է.

ԹՎ(ԻՆ) ՁԽԵ (1496) ... ԱՁԿԱՐ:



182. ԽԱՉԶԱՐ, նույն կերպ (նկ. 70). ԹՎ(ԻՆ) ՈՒՁ (1587) | ՀԱԻՎԱՅԻՆ:

183. ԽԱՉԶԱՐ, նախորդի օրինակով. ԹՎ(ԻՆ) ՁԽ (1491) ՊՍԼԱՅ:


184. ԽԱՉԶԱՐ, նախորդի օրինակով. ԹՎ(ԻՆ) ՁԽԱ (1492) ՆԿՈՒԴԻՆ:

185. ԽԱՉԶԱՐ, նախորդի օրինակով.

(Հ)ԱՅՈՑ ԹՎ(ԻՆ) Ջ (1451) Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ԸԱՅՂՈՒԲԱԹԻՍ:


Ծանոթ. Թվում է, թե սա Մ. Բարխուտարյանցի հրատարակած և մեր վերահրատարակած № 176 արձանագրությունն է (համեմատիր):

186. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, հարավային երեսին երեսին փորագրված է (նկ. 71).
ԹՎ(ԻՆ) ՋԾԴ (1505) ԱԶԻԶ:




187. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի օրինակով. Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ՅՈՎԱԴԵՄՄ Ս(Ա)Ր (ԿԱՎԱ)Գ(Ի)Ն, ԹՎ(ԻՆ) ՈՂ (1555):

188. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի օրինակով (նկ. 72).
ԹՎ(ԻՆ)ՋԼԸ (1489) Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ |




Խ(Ո)ՃԱՅ ԽՈՒՍԱՐԸԱՅ:

189. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի օրինակով (նկ. 73).



ԹՎ(ԻՆ) ՋԼԹ (1493): ԹԱՍԱՍ:

190. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի օրինակով (նկ. 74).



ԹՎ(ԻՆ) ՋԾԵ (1506) ԲԱՃԱՆ:

191. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի օրինակով (նկ. 75).


Ի ԹՎ(ԻՆ) ՈՇԳ (1604) | Տ(Է)Ր ՄՏԵ՛ ՓԱՆՈՍ:



Ծանոթ. Թվականի մեջ տասնավորը՝ Ծ-ն խիստ հողմնահարված է և ներկայացնում ենք որոշ վերապահումով: «Ուզուխ» կոչված գերեզմանոցում գտանք միայն մեկ արձանագրություն: Նույն հնավայրից Բարխուտարյանցը ժամանակին հավաքել ու հրատարակել է 7 արձանագրություն:


192. ԽԱՉԶԱՐ (նկ. 76).

ԹՎ(ԻՆ)ՋԸ (1459): Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂ(ՈՐ)ՄԻ Վ(Ա)ՆԽՈՍԻՆ:



193. ԽԱՉԶԱՐ, սրածայր (երկրեք) վերնամասի տակ և ստորին խաչաքների երկու կողմերում (նկ. 77).

ԹՎ(ԻՆ) ՋԼԳ (1494) Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ...:



194. ԽԱՉԲԱՐ, վրան քանդակված են հավասարաթև չորս խաչեր, վերնամասի ամբողջ երկարությամբ ձգվում է միատող հակիրճ արձանագրությունը (նկ. 78, 78ա, 78բ).

ԹՎ(ԻՆ) ՋԱՃԵ (1556), ՃՈՒՆՇԻԲ:

195. ԹՎ. ՃԻ (671) ՍՈՏՈՒՄԱԿ:

Հրատ. *Բարխուտարեանց, 215:*

Ծանոթ. *Եթե վերձանությունը ճիշտ է, ապա գրիչը ակնհայտ կերպով բաց է թողել հազարավորը՝ Ո-ն:*

196. ԹՎ, Մ (751) ԲԱՅՈՒՄ:

Հրատ. *Բարխուտարեանց, 215:*

Ծանոթ. *մեր հավարած նյութի ուսումնասիրությունը մեզ ենթադրել է տալիս, թե Մ. Բարխուտարյանցի ընդօրինակություններում պարզապես գրիչներն են բաց թողել հազարավորները (եթե հրատարակման մեջ սխալ չկա), որն էլ պատճառ է դարձել դրանց թվագրությունները VII-VIII դարեր հասցնելու համար:*

197. ԹՎ. ՇԻԲ (1073) ՋՈՆՏԱՐ:

Հրատ. *Բարխուտարեանց, 215:*

198. ԹՎ. ՉԽ (1291) ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ

ԽՈՏԲԱՇԵՒ ՀՈԳՈՒՆ:

Հրատ. *Բարխուտարեանց, 215:*

199. ԹՎ. Ջ (1451) ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ

ԱՍԼԱՆԻՆ:

Հրատ. *Բարխուտարեանց, 215:*

200. ԱՐՏԱՇԻՐ ՋՈՒՇԵՐԻ ՈՐԴԻ ԹՎ. ՋԼԲ.

(1483):

Հրատ. *Բարխուտարեանց, 215:*

201. ԹՎ. ՋԿԱ (1512), ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ

ՃՈՒՄՆՇԻՐԻ ՀՈԳՈՒՆ:

Հրատ. *Բարխուտարեանց, 215:*

Ի դեպ «Նոր-Դար» օրաթերթի թղթակից՝ Սյունեցին անձամբ լինելով Ամուրավանում և նրա շրջակայքում, գիել է, որ «ժամհատ» անունով տեղում, որն ընկնում էր Ամուրավանից հյուսիս, պահպանվում էին պարիսպների, աշտարակների, գերեզմանների ավերակներ, իսկ «Ղայարաշի» կոչված տեղում, որն էլ նույն հնավայրի մի մասն էր, կար նաև եկեղեցի. «... կայ մի եկեղեցի, որի քարերի վերայ արձանագրություններ կան: Այդ արձանագրությունները հայերեն չեն, այլ նմանում է արաբերենի և քրդերենի, իսկ ճակատին նկարում են խաչեր և մի քանի հայոց տառեր Հ. Ա. Ե. և այլն: ...այստեղի մի քարի վերայ կարդացի հետևյալ գրությունը հայերեն ...» («Նոր-Դար», 1887, № 86, էջ 2)

202. ԱՅՍ ԳԵՐԵՉՄԱՆՈՑԻ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՕՐԱԿԱՆ ԱՂ Է ԳՆԱՅԵԼ 20 ԳՐՎԱՆՔԱՅ ԵՎ ՏԱՆ ԱՆԳԱՄՆԵՐՆ ԵՆ 210-Ը, ՈՐԻ ՄԷՋ ՏԻՐԵԼ Է ՄԵՐ ԵՎ ԽԱՂԱԳՈՒԹԻՒՆ:

Ծանոթ. *Խիստ կասկածում ենք մի այսպիսի թվանդակությանը արձանագրության գոյության վրա:*

Թվում է, թե պրն. Սյունեցին ժողովրդական աստված վիճագրի տեղ է ընդունել:

ԲԼԵՂԵՆ

Մինչև 1918թ. հայաբնակ գյուղ, այնուհետև գյուղատեղի շրջկենտրոնից շուրջ 24 կմ հարավարևելք, Ամուրավանից 3 կմ հյուսիս: 1888 թ. գյուղն ուներ 42 տուն (301 մարդ) հայ բնակչություն: 1914թ. հունվարի 1-ի վիճակագրությանը գյուղում բնակվում էին 265 հայեր: 1918-19 թթ. Բլեղչենի բնակչությունը ամբողջապես զոհ է գնացել երկրամաս ներխուժած թուրք ջարդարարների կազմակերպած կոտորածներին: Ներկայումս անբնակ գյուղի տարածքը հերկված է: Բազմաթիվ տների և Սբ. Մինաս եկեղեցու հետքերն անգամ չեն երևում: Գյուղատեղի մի տեսարանավոր ծայրում պահպանվում է միայն գերեզմանոցը, ուր մնացած բազմաթիվ տապանքարերից շուրջ 30 արձանագրվածները՝ բոլորն էլ վերաբերում էին XIX-XX դարերին:

203. ՏԱՊԱՆԱՔԱՐ, գերեզմանոցում, ուղղանկյունաձև.

ԱՆՓՈՓԵԱԼ ԿԱՅ ԱՍՏ ԲԼԵՂԵՑԻ | ՀԱՅ-ՐԱՊԵՏՆ ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ, | ՈՐ ՎԱԽՆՃԱՆ ԸՆԿԱԼԱԻ ԱՈ | ՀԱՅՐ 1857 ԱՄԻ:

204. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ուղղանկյունաձև.

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ԲԼԵՂԵՑԻ | ՄԱՐԳԱՐԱ ՔԱՀԱՆԱՅԻՆ ՏԵՐ | ՍԱՐԳԻՍԵԱՆ, ՈՎ ՈՔ ՀԱՆԳԻՊԻ | ԽՆԴՐԷ ԱՍԵԼ Ա(ՍՏՈՒԱ)Շ ՈՂՈՐՄԻ 1860 ԱՄԻ:

205. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ուղղանկյունաձև.

ԱՍՏ ԱՍՓՈՓԵԱԼ Է ԲԼԵՂԵՑԻ ԳՐԻԳՈՐՆ ԳԱՀՐԱՄԱՆԵԱՆ ՕՀԱՆԵԱՆՑ, 1872 ԱՄԻ:

206. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ուղղանկյունաձև.

ՅԱՅՍՍ ՏԱՊԱՆԻ ՀԱՆԳՉԻ | ԽԱՉԱՏՈՒՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, | ՈՐԸ ՎԱԽՆՃԱՆՎԵՑԱԻ 1874 | ԱՄԻ 15 ՍԵՊՏ. Ի Գ(ԻՐՆ) ԲԼԵՂ:

207. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ուղղանկյունաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԻԼԻՂԵՑԻ ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ|ԳՐԻԳՈՐԵԱՆ ԴԱՎԻԹԵԱՆՑ, ՇՆԵԱԼ 1830 ԱՄԻՎԱԽՆՃ. 1898 ԱՄԻ, ՆՈՅ. 15, Ա(ՍՏՈՒԱ)Շ ՈՂՈՐՄԻ:

Ծանոթ. *Հայտնի է, որ 1870 թ. Բլեղ գյուղը քահանա չուներ: Նրա բնակիչներին հովվում էր Ամուրավանի շրջիկ քահանա Տէր-Հարություն Հակոբյանը: Բլեղիցների պահանջով իրենց համար քահանա է ձեռնադրվել համագյուղացի Հարություն Գրիգորյան Տեր-Դավթյանը, որի ձեռնադրության թույլտվությունը հոգևոր կառավարությունից ստացվել էր 1873 թ. (Ֆ. 56, ց. 1, գ. 5575, ք. 8):*

128 Մ. Բարխուտարեանց, 215

129 "Кавказский Календарь на 1915г.", էջ 100

Գյուղը գտնվում է շրջկենտրոնից 7 կմ արևմուտք, համանուն գետի ափին: Աղբյուրներից հայտնի է, որ Բումի հայ բնակչությունը կրոնական հալածանքներից ստիպված դավանափոխ է եղել XVIII դարի կեսերին: Դեռևս 1725 թվականին Պետրոս Մեծին օգնության խնդրանքով դիմած հայկական գյուղերի շարքում հիշատակվում են նաև Բումի ներկայացուցիչները՝ քահանա Տեր Մինասը և ոմն Պայրամ:¹³⁰ Գավառի այլ գյուղերի հետ մեկտեղ Բումի հայ բնակչությունը ֆիզիկական բնաջնջումից փրկվելու հույսով ուրացավ հարազատ կրոնն ու ընդունեց մահմեդականությունը: Թեև սկզբնական շրջանում այդ երևույթը որոշակի ձևական բնույթ էր կրում և ինչպես իրենք բնակիչներն էին խստավանդում. «...ցերեկն թրթուքիւն ենք անում, գիշերն հայութիւն...»¹³¹ այնուամենայնիվ մշտական հալածանքներն ու սարսափը, դաժան մահապատիժները տարիների ընթացքում կամաց-կամաց ավելի արմատացրին մահմեդականությունը: Հավատափոխությանը, ինչպես և բնական էր հաջորդեց մայրենի լեզվի կորուստը, իսկ ավելի ուշ անգամ ազգային շատ հնավանդ սովորույթների մոռացումը:

1851 թ. Բում գյուղն ուներ 768 մահմեդական ծագումով հայ բնակչություն:¹³² 1874 թ. գյուղի բնակչության թիվն աճել էր մինչև 1208 շունչ:¹³³ 1890-ական թթ. Բումը հիշվում է իբրև ավան՝ 416 ծուխ բնակչությամբ:¹³⁴ 1976 թ. Բումն ուներ 3808 բնակիչ:¹³⁵

Բում գյուղում և շրջակայքում պահպանվել են հին գերեզմանոցներ, եկեղեցիներ, բերդեր: Գյուղի հյուսիսային ծայրում պահպանվում են «Գյավոր դալա» (Բրիստոնեի բերդ) կոչված ամրոցի մնացորդները (IX-XIV դարեր): Բերդի արևելյան և արևմտյան կողմերով գետակներ են հոսում: Համեմատաբար լավ վիճակում են բերդի հարավային և արևելյան կողմերի պարսպապատերը՝ շինված անտաշ գետաքարերով, կրաշաղախով: Բերդից արևելք, գետակի ձախ ափում տարածվում է ընդարձակ գերեզմանոց, ուր պահպանվել են բազմաթիվ տապանաքարեր: Հնավայրում Մ. Բարխուտարյանը գտել է միայն մեկ տապանագիր: Գերեզմանոցի արևմտյան ծայրում, գետակի նույն ափին («Մուրթուզա-բեկի ջրաղացի հիսիսային կողմում») Մ. Բարխուտարյանը պահպանվում է մի ստորգետնյա սրբատաշ քարերով շինված մատուռ-դամբարան:¹³⁶ Բումից հյուսիս, գետակի ձախ կողմի բարձրության վրա պահպանվում են մեկ այլ քարուկիր ամրոցի ավերակները:

130. Г. А. Эзов, Сношения Петра Великаго с Армянским народом, СПб, 1898, էջ 427-428:

131. Մ. Բարխուտարյան, Աղուանից պատմություն, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 85:

132. "Кавказский Календарь на 1852г.", Тифлис, 1851, էջ 79:

133. "Кавказский Календарь на 1885г.", Тифлис, 1884, էջ 215:

134. Մ. Բարխուտարյան, Աղուանից երկիր և դրացիք, էջ 291:

135. Աղբյուրական Սովետական Հանրագիտարան (աղբյուրներ), հ. 2, Բաքու, 1978, էջ 350:

136. Մ. Բարխուտարյան, Գլխ. աշխ., էջ 255:

Բումի հյուսիսային ծայրում, լեռնաճյուղի վերջավորության վրա պահպանվում է «Եղիշ Առաքել» հայտնի սրբավայրը: Ըստ ավանդության այդտեղ էր գտնվում այն փոսը, ուր չարագործները նետել էին Սր. Առաքյալի մարմինը՝ նահատակելուց հետո: Հետագայում Վաչագան բարեպաշտ թագավորը Եղիշե Առաքյալի սուրբ մասունքները փոխադրում է Արցախ (Ջրվշտիկ վանք), իսկ այդ հորի մոտ կանգնեցնում սյուն. «Իսկ յետ բազում ժամանակաց բարեպաշտն վաչագան՝ Աղուանից արքայ, կանգնեաց սիւն ի գրի նահատակութեանն Եղիշայի»:¹³⁷ Արդեն XIX դարի վերջերին այդ սյունը պահպանված չէր, իսկ հորը մեծ մասամբ լցված էր հողով. «Այսու ամենայնիվ յաճախում է հայերից և մահմեդականներից (նկատի ունի կրոնափոխ հայերին Ս. Կ.) ուխտատրաց մեծ բազմութիւն»:¹³⁸

Հետաքրքրական է, որ միայն XIX դարի երկրորդ կեսում (մահմեդականություն ընդունելուց ավելի քան 100 տարի հետո) Բումի (ինչպես նաև նույն ճակատագրին արժանացած հարևան այլ գյուղերի) մահմեդական ծագումով հայ բնակիչները սկսեցին կառուցել նոր կրոնից պահանջված աղոթատեղիներ՝ մզկիթներ: Այդպիսի աղոթատեղի 1874 թ. դրությամբ Բում գյուղում երեքն էին:¹³⁹

Հայտնի է, որ այդ աղոթատեղիից գլխավորի մոտ գտնվում էր. «Աւանիս եկեղեցին...»:¹⁴⁰

208. ՏԱՊԱՆԱԸԱՐ,
ԹՈՒԻՆ ՍՍ (752):
Հրատ. Բարխուտարյան, 255:

ԳԻՐԴԱԳՅՈՒՆ

Մինչև 1918թ. հայաբնակ գյուղ, ներկայումս գյուղատեղի շրջկենտրոնից 33 կմ հարավ, Կոկիսուն (Գյուկչայ) գետի աջ կողմում, Բզավանդ գյուղին դեմ հանդիման (միավորված է Մեխրիի գյուղխորհրդին): 1890-ական թթ. գյուղն ուներ 140 տուն՝ 985 բնակիչ (բոլորն էլ հայեր):¹⁴¹ 1914 թ. մարդահամարով Գիրդայում բնակվում էր 1140 մարդ:¹⁴²

Գյուղի արժեքավոր հուշարձաններից էր Սր. Աստվածածին եկեղեցին (չի պահպանվել), գերեզմանոցը: Մ. Բարխուտարյանը գյուղի տարածքից հավաքել ու հրատարակել է 4 արձանագրություն:

209. ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, շինարարական արձանագրությունը.

ՇԻՆԵՑԱԻ Մ. ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՑՑԻՍ Ի ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵՆԷ ԳԻՐԴԱԳԻՒԼԵՑԻՈՑ 1881:

137. Մովսես Կաղանկատացի, Պատմություն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 12:

138. Մ. Բարխուտարյան, էջ 256:

139. "Кавказский Календарь на 1885г.", Тифлис, 1884, էջ 215:

140. Մ. Բարխուտարյան, նույն տեղում:

141. Նշված աշխ., էջ 213:

142. "Кавказский Календарь на 1915г.", Тифлис, 1914, էջ 110:

Հրատ. Բարխուտարեանց, 213:

Ծանոթ. հայտնի է, որ 1881 թ-ից առաջ էլ Գիր-
դաղյուզ գյուղում եկեղեցի կար: Մա միևնույն Սբ. Աստ-
վածածին անվամբ հիշվում է դեռևս 1851 թ. (Ֆ. 56, ց. 1,
գ. 2596, ք. 100):

210. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գերեզմանոցում, վրան
քանդակված մեծ, հնաձև խաչ ու նախշեր և միայն
մեկ տառ.

Հ:

Հրատ. Բարխուտարեանց, 213:

211. ՏԱՊԱՆԱԶԱՐ,
ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՍՈՂՈՍՈՒՆԻՆ, ԹՎ.
ԾԳ(654):

Հրատ. Բարխուտարեանց, 213:

Ծանոթ. ԹՎՈՒՄ է, գրիչը բաց է թողել հազարավորը՝ Ռ-ն:

212. ՏԱՊԱՆԱԶԱՐ.
ՕՎԱՆԷՍ, ԹՎ. Ռ-ՃԽԸ (1699):
Հրատ. Բարխուտարեանց, 213:


ՄԻՐՉԱԲԵՎԼՈՒ

Այս գյուղը գտնվում է շրջկենտրոնից 13 կմ
հարավ-արևմուտք, կից՝ Չորլու գյուղին: 1888թ.
ուներ 35 տուն (300 շունչ) հայ բնակիչ:¹⁴³ 1914 թ.
հունվարի 1-ի դրությամբ գյուղի բնակչության թիվը
կազմում էր 361 մարդ:¹⁴⁴ Միրզաբեկյուն գավառի
թրքախոս հայերով բնակեցված նշանավոր գյուղե-
րից մեկն էր: 1918-19թթ. թուրքական ագրեսիայի
ժամանակ միրզաբեկյուցիները ևս՝ թեև թրքախոս,
սակայն, որպես քրիստոնյա հայեր զերծ չեն մնա-
ցել կոտորածներից: Մինչև 1988-ի բռնազաղթը
գյուղում, բացի թրքախոս հայերից (շուրջ 30 ըն-
տանիք), բնակվում էին նաև լեզգիներ և աղբրե-
ջանցիներ: 1981 թ. գյուղի ամբողջ բնակչության
թիվը կազմում էր 628 մարդ:¹⁴⁵

1988-ին Միրզաբեկյուցի հայերը գաղթեցին դե-
պի Ռոստովի մարզ: Գյուղում պահպանվում է Սբ.
Աստվածածին եկեղեցին (փայտածածկ), որի արև-
մտյան ճակատի վրա կանգուն է փայտաշեն զան-
գակատունը: Եկեղեցին ունի երկու մուտք (հարա-
վից և արևմուտքից): Կառուցված է գլխավորապես
աղյուսով և մասամբ անտաշ ու կոպտատաշ քարե-
րով, կրաշաղախով: Ըստ հորինվածքային ու ոճա-
կան առանձնահատկությունների բնորոշ է XIX
դարի երկրորդ կեսում կառուցված եկեղեցիներին:

Միրզաբեկյու գյուղի պատմության ուսումնա-
սիրության առումով խիստ արժեքավոր են գյուղի
գերեզմանոցում պահպանված տապանագրերը:
Այստեղ բազմաթիվ են անտաշ տապանման տապա-
նաքարերը: Կան նաև շուրջ 20 սրբատաշ ուղղանկ-
յունաձև տապանաքարեր: Վերջիններիցս միայն 5-
ը արձանագրված գտանք: Տեղում նշենք, որ ավելի

ուշ շրջանի և ընդհուպ մեր օրերը հասնող տապա-
նագրերում հայերեն արձանագրություններ չկան:



Դրանք բոլորն իրականացված են ոռսերեն կամ
որ ավելի գերակշռող է, աղբրեջաներեն:

213. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գյուղի հարավային ծայ-
րում տարածված գերեզմանոցում, ուղղանկյու-
նաձև.

Ի ՅԱՅՄ ՏԱՊԱՆՍ ԱՆՓՈՓԵԱԼ Է ՄԻՐ-
ՉԱԲԱՎԼՈՒԵՅԻ ԽԱՂՉԻ ՅԱԿՈԲԵԱՆ ՍԱՐ-
ԳԻՍՍԵԱՆՅ, ՈՎ ՈՔ ՀԱՆԴԻՊԻ, ՍԱԷ Ա(Ս-
ՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ, 1869 ԱՄԻ:

Ծանոթ. այս և հաջորդ մի քանի արձանագրու-
թյունները առաջին անգամ հրատարակել ենք «Լրարեք
հասարակական գիտությունների» ամսագրում (1988,
№ 1, էջ 40-52):

214. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև, նախորդի մոտ.
ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆԸՆ ՄԻՐՉԱԲԵՎԼՈ-
ՒԵՅԻ ՅՕՎՍԷՓ ՄԱՐԿՈՍԵԱՆ ՄԱՐԳԻ-
ՍԵԱՆՅ, 1870:

215. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ.
Ի ՇԻՐՄԻՍ ԵԴԵԱԼ ՄԱՐՄԻՆ ՍԱՀԱԿԱՅ |
ՍԱԳԻՆԵԱՆՅ ՏՈՀՄԵՆ, ՈՐԴԻՈՅ ՅԱԿՈՎ-
ԲԱՅ, | ՅԱՅՅԷ ՅԱՆՅՈՂԱՅ Ի ԽՈՐՈՅ ԿԱՐ-
ԴԱՅ | ՓՈՒԵԱԼ ՀՈԳԻՈՅՆ ԱՍՏՈՒԱԾ Ո-
ՂՈՐՄԵԱ | 1897 ԱՄԻ 15 ՄԱՐՏԻ Ի ԳԻՂՆ
ՄԻՐՉԱԲԵՎԼՈՒ:

Ծանոթ. Սահակ Սագինյանը գյուղական դատա-
վոր էր, բարեգործ և հարուստ անձնավորություն (չորրե-
ւեցի Ղազար քահանայի հարազատ մոր քեռին): Տես՝
Ղազար քահանա Յովսէփեանց, Այնարկներ ուտիացի
և մահմեդական հայերի մասին, Թիֆլիս, 1904, էջ 29:

216. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ ուղղանկ-
յունաձև.

ԱՍՏ ՏՆԻ ՄԱՐՄԻՆ ԲԱԼԱՍԱՆ ԽՈՒՍԻՐ
ՏԷՐ ԴԱՆԻԷԼ | ԱԶԳԱԷ ՏԷՐ ԱՒԱԳԵԱՆՅ,
1899 Թ.:

143. Մ. Բարխուտարեանց, էջ 244:

144. "Кавказский Календарь на 1915г.", էջ 158:

145. Աղբրեջանական Սովետական Հանրագիտարան (աղբրե-
ջաներեն), Բաքու, 1982, հ. 6, էջ 591:

217. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, նախորդի մաս.

Ի ՄՄԻՆ ՏԱՊԱՆԻ ԱՄՓՈՓԵԱԼ ԳՆԻ | ՄԱՐՄԻՆ ՎԱՐԳԱՆԻ, ՈՐԳԻ ՄԻՆԱՄԵԱՆԻ | ԱԶԳԱԻ ՊԵՏԻԵՄԵՆՅԻ, ՎԱՆՃԱՆԵՑԱԻ | 1909 ԱՄԻ, 28 ԻՆ ԴԵԿՏԵՄԵՐԻ:

ՆԻԺ

Կապաղակ գավառի հինավուրց ու նշանավոր գյուղերից է: Գտնվում է շրջկենտրոնից 20 կմ հարավ-արևմուտք, լայնատարած աղբյուրաշատ դաշտավայրում, ծածկված փարթամ բուսականությամբ: Մատենագիր աղբյուրներում Նիժը հիշատակվում է սկսած 1724-1725 թթ.-ից (Պետրոս Մեծին օգնության խնդրանքով գրված մամակներում):¹⁴⁶ Նիժը հայտնի է որպես գավառի գլխավոր հայաբնակ գյուղերից, ուր մեծամասնություն են կազմում ուտիախոս հայերը: Կան նաև քիչ թվով կրոնավորներ եղած հայեր (ներկայումս իրենց համարում են աղբյուրաբնակներ): XIX դարի կեսերին Նիժն ուներ 500 տուն բնակչություն:¹⁴⁷ 1890-ական թթ. Նիժն արդեն գյուղաքաղաք էր և ուներ շուրջ 800 տուն (5008 մարդ) բնակչություն:¹⁴⁸ 1914թ. հունվարի 1-ի դրությամբ Նիժում բնակվում էին 10655 մարդ:¹⁴⁹ Նիժը հայկական այլ գյուղերի հետ մեկտեղ մեծ կորուստներ է տվել 1918-1919 թթ. ենթարկվելով թուրքական ագրեսիային: Խորհրդային կարգերի հաստատումից հետո զանազան վայրեր ցրված Նիժեցիները վերադարձել են ամայացած հայրենի գյուղն ու վերստին շենացրել այն: 1982 թ. գյուղն ուներ 5929 բնակիչ:¹⁵⁰ 1988-89 թթ. ընթացքում գյուղի բոլոր քրիստոնյաները ենթարկվեցին բռնագաղթի:

Նիժը բաղկացած է չորս մեծ թաղամասերից: Սրանք էլ իրենց հերթին բաժանված են այլ ավելի փոքր մասերի: Ինչպես հիմնական թաղամասերը, այնպես էլ նրանց առանձին մասերն ունեն իրենց



146. Ա. Արբահամյան, Ուղիների դիմումը Պետրոս 1-ին, «Էջմիածին» 1952, ապրիլ, էջ 39-40: Գ. Ա. Эзов, Сношения Петра Великого с Армянским народом, СПб, 1898, էջ 427-428:

147. Ա. Ջալալբանց, նշվ. աշխ., էջ 381:

148. Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 245:

149. «Кавказский Календарь на 1915г.», էջ 165:

150. «Աղբյուրաբնակն Սովետական Հանրապետության» (աղբյուրաբնակներն), հ. 7, Բաքու, 1983, էջ 272:

առանձին անվանումները: Գյուղի ամենահին թաղամասը Միջին կամ Դարա-մախլա կոչվածն է:

Այստեղ պահպանվում է Սբ. Եղիշե եկեղեցին՝ կառուցված Եղիշե Առաքյալի գերեզմանի տեղում: Հայտնի է, որ եկեղեցին ավերվել էր XVIII դարի սկզբներին: Ներկայիս կանգուն եկեղեցին կառուցվել է ավերված հին եկեղեցու տեղում 1823 թվականին: Ըստ շինարարական արձանագրության թվագրության Նիժի հաջորդ եկեղեցին կառուցվել է 1869 թ. (հիմնվել է 1866թ.) գյուղի ներքին կամ Դարաքաղ թաղամասում Սբ. Աստված. շին անվամբ: Եկեղեցու կառուցմանը մեծապես օժանդակել է տեղի իշխան Գալուստ հարյուրապետը. «Նիժ ա-



սացեալ զհղում ուտիաբարբառ ազգասեր Գալուստ իւզբաշին իւր հայրենի հետոց ընթացակից լինելով, ցոյց տուաւ նորերումս իւր ջերմեռանդութեան զովելի պտուղը, կանգնելով իւր սեպհակա-նութիւնից մի գմբեթաձև փառատը կոփածոյ քարամբք եկեղեցի. այս ազգասիրի ջերմեռանդութեան, ցոյցը տեսնելով, եւ փոխանորդ արժանապատիւ Հայր Արիստակէս վարդապետը, նորա ազգասիրական եւ Աստուածահաճոյ ձեռնարկը օրհնելէն զկնի, յորդորեց, որպէս զի կատարելագործ է իւր բարեգործութիւնը, յաւելլով ի վերայ՝ եւ մի վարժարան նոյն իսկ եկեղեցոյ պարսպի մէջ ուտիախոս մանկտեաց դաստիարակութեան համար»:¹⁵¹ Հայտնի է, որ 1876 թ.-ից սկսած գործում էր նաև վերևում հիշատակված կառուցվելիք դպրոցը:¹⁵² Ի դեպ այն ստացել էր Սբ. Մեսրոպյան անվանումը և անխափան գործել շուրջ 75 տարի:¹⁵³ Թե եկեղեցին և թե նախկին եկեղեցական-ժխական Սբ. Մեսրոպյան դպրոցի շենքը ներկայումս պահպանվում են գրեթէ անվնաս:

Նիժի Վերջին կամ Պիժելու թաղամասում, որը գրադեցնում է գյուղի հարավային մասը, գոյություն ուներ Սբ. Լուսավորիչ եկեղեցին: Վերջինս ներկայումս հիմնավեր վիճակում է: Նրա քարերով կառուցված են այլ շենքեր: Սրա շրջակայքում տարածվում է գերեզմանոցը:

Գյուղի Վերին կամ Մալքել թաղամասում, որը տարածվում է Նիժի հյուսիսային ծայրում ցայսօր իր ողջ շքեղությամբ կանգուն է Սբ. Աստվածածին

151. Յ. Մելքոնեան, Խմբագրութեան Արարատ ամսագրոյ, «Արարատ», 1869, օգոստոս, էջ 81:

152. ՀՀՊՊԿԱ, ֆ. 56, ց. 3, գ. 62, ք. 42-43:

153. Ս. Բարայեան, էջեր իմ օրագրից (անտիպ):

եռանալ գմբեթավոր բավական ընդարձակ ու շքեղ եկեղեցին: Սա գյուղի եկեղեցիների շարքում ամենից ուշ կառուցվածն է, որ և փաստում է տվյալ



ծամանակաշրջանում բնակավայրի խիստ բազմամարդության իրողությունը: Սա հիմնադրվել է 1890 թ. և ավարտվել XIX դարի վերջերին (արձանագրության մեջ ավարտի քվականի միավորը չի փորագրված): Եկեղեցու արևելյան և հարավային կողմերում տարածվում է ընդարձակ գերեզմանոցը: Նիժ գյուղի գերեզմանոցներից և եկեղեցիների որմերից հավաքել ենք թվով 13 արձանագրություն, որոնք բոլորն էլ հրատարակվում են առաջին անգամ:

218. ՄԲ. ԵՂԻՇԵ ԵԿԵՂԵՑԻ, քառատող շինարարական արձանագրությունը փորագրված է ղոնազլիսին (նկ. 79).

ԿԱՌՈՒՑԵԱԼ Ի ՅԱՅՍ ԵԿԵՂԵՑԻ ԱՆՈՒՄԱՐ Ս(Ր)ԲՈՒՆ ԵՂԻՇԵԻ, ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՄ(Բ)Ե ԵՆԳԻԲԱՐԵԱՆ Տ(Ե)Ր | Ա(ՍՏՈՒԱ)ՏԱՏՈՒԲ Զ(Ա)Հ(Ա)Ն(Ա)Յ ԵՒ ԵՂԱՅՐ ՅՕՀԱՆԻ ԼՈՒՍԱՆՐՉԱԿԱՆ | ...:

Ծանոթ. 4-րդ տողում միայն մի կիսատ բառ է փորագրված: Մր. Եղիշե եկեղեցու վերաբերյալ պահպանվել են արխիվային վավերագրեր: Այն հիշատակվում է 1851 թ. (Ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 98), 1869 թ. կատարված գողության առիթով (Ֆ. 56, ց. 1, գ. 5322, ք. 1), 1879 թ. նորոգման առիթով (Ֆ. 56, ց. 1, գ. 7067, ք. 1), 1885 թ. (Ֆ. 56, ց. 1, գ. 8112, ք. 1), 1917 թ. (Ֆ. 56, ց. 4, գ. 816, ք. 1-3) և այլն:

219. ՄԲ. ԵՂԻՇԵ ԵԿԵՂԵՑԻ, շինարարական արձանագրություն՝ փորագրված նախորդից քիչ բարձր, բարավորին (մոտավորապես կրկնում է նախորդ արձանագրության բովանդակությունը) (նկ. 80).

ԿԱՌՈՒՑԵԱԼ Ի ՅԱՅՍ ԵԿԵՂԵՑԻ ԱՆՈՒՄԱՐ ՍՐԲՈՅ | ԵՂԻՇԵԻ

ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՄԲ | ԵՆԳԻԲԱՐԻ,
ՈՐ Տ(Ե)Ր Ա(ՍՏՈՒԱ)ՏԱՏՈՒԲ, ՈՐ
Է ՅՈՀԱՆՋԱՆՆԻ ԻՒՐՈ ...:

220. ՄԲ. ԵՂԻՇԵ ԵԿԵՂԵՑԻ, ներսում, ավագ խորանի մոտ արևմտահայաց պատին սվաղից դուրս մնացած մի քարի վրա մեծ մասամբ փակագիր ու անհասկանալի ոճով փորագրված է.

ԱՅՍ Է Ս(ՈՒՐ)Բ ԵԿԵՂ(Ե)ՑԻ | ԸՆՆՈՂ ԴՂՈՐԱՆՅ ... | ... ՋԱԶԱՐ, ԵՍ | ԱՎԵՏԻՍ ԳՐ(Ե)ՑԻ ԵՏ Թ(ՎԻՆ) | 1823:

Ծանոթ. Թվականի մեջ տասնավորը կասկածելի է (ծածկված է սվաղի շերտով):

221. ՏԱՊԱՆԱԶԱՐ, Մր. Եղիշե եկեղեցու հարավային պատի տակ, մուտքի առջև (նկ. 81).

Ի ՅԱՅՍ Է Ս(ՈՒՐ)Բ ԵՂ(Ի)ՇԵՑԻ ԸՆՆՈ(Ղ) ԱՅՍ Է ՀԱՆԳՈ(Ի)ՑԵԱԼ ՆԻԺԵՑԻ ՋՈՂԱՆԵԱՄՆՅ ԵՆԿԻԲԱՐԻ ՈՐԹԻ ՕՀԱՆՋԱՆՍ Է ԵՒ | ԻՒՐ ՈՐԴԻ ԱՆԻՇԱՏԱԿ Տ(Ե)Ր ԱԵՏԻՍ ԻՍ | ԱՅՍ ԶԱՐՍ ԲԵՐԵԼ ԿԱՄ ԴԱՇԵԼ ԵՒ ԳԻՐ | ԳՐԵԼ, Օ(Վ) ՈՐ ԸՆԴԵՐՑԻ Ա(ՍՏՈՒԱ)Տ ՈՂՈՐՄԻ ԻՒՐԱՆ ԾՆՈՂԱՅՆ, Թ(ՎԻ)Ն ՈՍՉԹ (1840):

Ծանոթ. Արձանագրության մեջ հիշատակված Տեր Ավետիսը Նիժ գյուղի Միջին քաղի քահանաներից էր և մահացել է 1873 թ.:

222. ՆԵՐՔԻՆ ԹԱՂԻ ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, հարավային մուտքի բարավորին փորագրված է (նկ. 82).

ՈՍՏԱԿԵՄԵԱՆՅ ՅԻՇԱՏԱԿ ԿԵՆԴԱՆԵԱՅ ԵՒ ՆՆՋԵՑԵԼՈՅ | ԻՒՐԵԱՆՅ ՀԻՄՆԵՑԱԻ Ի ԹՎԻՆ | ՀԱՅՈՅ ՌՅԺԵ (1866), ԱԻԱՐՏԵՑԱԻ ՌՅԺԸ (1869):

Ծանոթ. Ինչպես Նիժի մյուս եկեղեցիները, այնպես էլ այս եկեղեցու կառուցումից առաջ էլ տեղում եղել է ավելի հին եկեղեցի: Արխիվային վավերագրերում սրա մասին հիշատակություն կա 1839թ., երբ այն ենթարկվել է կողորպտման ու հրդեհման (Ֆ. 56, ց. 1, գ. 562, ք. 1, 12-13):

223. ՆԵՐՔԻՆ ԹԱՂԻ ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, մույն ճակատում նախորդ արձանագրությունից քիչ բարձր (նկ. 83).

ԿԱՌՈՒՑԱԻ Ս(ՈՒՐ)Բ ԵԿԵՂԵՑԻՍ | Ա(ՍՏՈՒԱ)Տ(ԱՇՆԱՅ) ԱՐԴԵԱՄԲԸ ՆԻԺԵՑԻ ԳԱ | ԼՈՒՍՏ, ԽԱՉԱՏՈՒՐ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԱՐՁՈՒՄ, ՉՈՐԻՅ ՀԱՐԱՋԱՏ ԵՂԱՐՅ, ՌՂՀ (1870):

224. ՆԵՐՔԻՆ ԹԱՂԻ ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, նախորդ արձանագրությունից ձախ (արևմուտք) ուղղանկյունաձև շրջանակի մեջ փորագրված է (նկ. 84).

ԵՂԱՋԱՐԵԱՆ | ԽԱՉԱՏՈՒՐ | ԻՇԽԱՆՆ ՈՒՏԻ | ՅԵՐԿԱՆՅ ԻՒՐ | Ի ՇԻՆՈՒԹԻ(Ի)Ն | ՏԱՃԱՐԻՍ | ԵՏ ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ | ՌՈՒԲԼԻՍ:

225. ՎԵՐԻՆ ԹԱՂԻ ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, հարավային մուտքի բարավորին քանդակված է խաչ, որից ցած 6 տող շինարարական արձանագրությունը (նկ. 85).

Ի 1890 Թ(ՎԻ)Ն ՄԿՍՈՒԵՑ | ԱՅՍ ՆԻԺ ԳԻՒՂԻ ՎԵՐԻՆ ԹԱՂԻՍ Ա(ՍՏՈՒԱ)ՏԱԾԻՆ | ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹ(Ե)Ն | ԾԱԽՔՈՎ, ԱԻ(ԱՐ)Տ 189. Թ.:

Ծանոթ. Սույն արձանագիրը կրող ներկայումս կանգուն եկեղեցու կառուցումից առաջ էլ տեղում եղել է ավելի հին եկեղեցի: Վավերագրերից մեկում Նիժի Վերին քաղի Մր. Աստվածածին եկեղեցին հիշատակվում է 1860 թ. (Ֆ. 56, ց. 1, գ. 4047, ք. 1): Վիճազում կառուցման ավարտի քվականի վերջին տառը չի փորագրվել: Ամենայն հավանականությամբ վիճազից փորագրվել է մինչև ամբողջ եկեղեցու կառուցելը, իսկ երբ ավարտել են, մտացել են ավելացնել քաջ բողոք թիվը:

ՋՈՐԼՈՒՒ

226. ՎԵՐԻՆ ԹԱՂԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ Ե-
ԿԵՂԵՅԻ, հարավային մուտքի ճախ կողմում պա-
տի սվաղի շերտի վրա նկարված է էջմիածնի Մայր
տաճարն ու շրջակա շինությունները և երկու տո-
ղով նկարի վերին ու ստորին եզրերում սպիտակ
ներկով գրված է հետևյալը (նկ. 86).

... ԷՋՄԻԱԾՆԻ ՅԻՇԱՍԱԿ Է ՋԱՆԻ ԳԱ
ԼՈՒՍՏԵԱՆՆ | ... ՈՐԴԻ ԱՌԱՔԵԼ ՎԵՋԻ-
ԲԵԱՆԻՅ, 1914 Թ. ՅՈԿՏ(ԵՄԲԵՐ):

227. ՏԱՊԱՆԱՔԱՐ, գերեզմանոցում, ուղ-
ղանկյունաձև.

ԱՅՍՕՐ ՓՈՒԽԱՏՐԻ ԼՈՒՍԱՓԱՅԼ ՀՈԳԻՍ
Ի ՅԵՐԿԻՆ | ԹՈՂԵԱԼ ՍԱՐՄԻՆ ԻՄԼՈԿ Ի
ՏԱՊԱՆԻՍ | ՋԱՆՈՒՆ ՄԵՂՍԱԼԻ ՅՈՎ-
ՀԱՆԵՍ ԶԱՀԱՆԱՅԻՍ, | ՈՐԴԻ ՄԱՀՏԵՄԻ
ԱՌԱՆ ԴԱԼԱՔԵԱՆՅԻՍ, ԵՄ Ի ԳԵՂՋԵՆ
ՆԻԺԵՑՈՅ ՈՒՏԻԱԽՈՍ ՅԵՂԷՆ | ԱՆՋԱ-
ԻԱԿ ԵՐԹԱՍ ԱՌ ՏԵՐՆ ԱՄԵՆԻՍ | ՀԱՆ-
ԴԻՊՈՂ ԳԵՐԵՋՄԱՆԻՍ ՅԻՇԵՍՋԻՔ ՋՈ-
ՂՕՐՄԻՍ | ՎԱԽՃԱՆԵԱԼ ԴԵԿՏ. 27-ԻՆ
1910 ԱՄԻ:

Ծանոթ. Իրրև քահանա հիշվում է 1898 թ-ից (Ֆ. 56,
g. 1, q. 9351 p. 6):

228. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նույնաձև (նկ. 87).

ԱՍՏ ԱՍՓՈՓԵԱԼ Ի ՇԻՐՄԻ ՀԱՆԳՉԻ
ՍԱՐՄԻՆ ՄԱՀՏԵՄԻ ԱԲԱՆԻՍ | ՆԻԺԵՅ-
ԻՈՅ ՊՈՂՈՍԵԱՆ ԴԱԼԼԱՔԵԱՆՅ ՈՒՏԻԱ-
ԽՈՍ ՅԵՂԻՍ | ԾԱՌԱՅ Զ(ՐԻՍՏՈ)ՄԻ, ՀԱՅ
ԼՈՒՍԱԲՈՐԻՉ ԱՐՏԵՆ ՏԱՌԱՆՈՂԻՍ | ՊԱ-
ՍԵՄ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՉՈՂ ՄԱՀՎԱՆ
ՀՐԵՇՏԱԿԻՍ, | ՈՎ ՀԱՆԴԻՊՈՂՔ ՏԱՊԱ-
ՆԻՍ ՅԻՇԵՍՋԻՔ ՋՈՂՈՐՄԻՍ, ՎԱՃԼ.
1892 ԱՄԻ:

Ծանոթ, Արձանագրի սկզբի 3 տողերը առաջին
անգամ հրատարակել է Հրատուչ Առաքելյանը՝ իր «Ու-
ղիներ» հոդվածում («Բրան Նամե», 1994 թ, № 2, էջ 13):

229. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նույնաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՋԱՌԱՄԵԱԼ ԾԵՐՈՒՆԻՆ
ԻՇԽԱՆ ՆԻԺԵՅԻՈՅ | ՊՈՂՈՍ ՄԱՏԹԵՈ-
ՍԵԱՆԻՆ, ԼՈԿ ԱՍՎԻ ԱՆՈՒՆ ԻՄ ԱՇ-
ԽԱՐՀԻՆ ԱԶԿԱԻ | ԼՈՒՍԱԲՈՐՉԻՆ, ՈՒ-
ՏԻԱԽՈՍ ՅԵՂԻՆ, ԶԳՈՂՆ Է ՏԱՊԱՆԻՍ
ՋԱՐԻՆ | ՄԻՆԱՍ ԹՈՌՆ ՍՈՐԻՆ ՎԱՃԼ.
1877 ԱՄԻ 2 ՍԱՐՏԻ:

Ծանոթ. Դարձյալ հրատարակված է նույն հոդվա-
ծում՝ քաղվածաբար:

230. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ուղղանկյունաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆԻ ԱՆՓՈՓԵԱԼ ԴՆԻ ՍԱՐ-
ՄԻՆ ՈՒՏԻԻԱՋՆ ԴԱԻԹ ԴԱՆԻԵԱՆ ՋԱՐ-
ԳԱՐԵԱՆՅ, ՎԱՃԼԱՆՎԱՅ 1909 ԳԻՆ, 50
ԱՍԱՅ ԵՒ ԻՐ ԵՂԱՅՐԸ Է | ԱՂԱԿՈՒՍ
ԴԱՆԻԵԱՆՅԻՆ:

231. ՏԱՊԱՆԱՔԱՐ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԱՐԿՈՍ ԱՂԱՋԱՆԵԱ-
ՆԻՍ, ԻՇԽԱՆ ՆԻԺԵՅԻՈՅ ՈՒՏԻԱԽՈՍ
ՅԵՂԻՍ, ԱԶԳԱԻ ՀԱՅ ԴԱԻԱՆՈՂ ԼՈՒՍԱ-
ԲՈՐՉԻՍ ...

Մինչև 1918 թ. թրքախոս հայերով, ներկա-
յումս աղբյուրանցիներով բնակեցված այս գյուղը
գտնվում է շրջկենտրոնից 13 կմ հարավ-արևմուտք,
Կուտկաշեն-Վարդաշեն մայրուղու ճախ կողմում,
Միրզաբեկլու գյուղին զրեթե կից: Գյուղի անվան
ամենահին հիշատակությանը հանդիպում ենք
1725թ. օգնության խնդրանքով Դևտրոս Մեծին
գրված մի նամակում: Վերջինս գրված էր գավառի
մի քանի նշանավոր գյուղերի ազդեցիկ անձանց
կողմից: Դրանց թվում էր. «... Չորրորի Ալլահվեր-
դիե, ...»: ¹⁵⁴ XIX դարի վերջերին Ջորլուն ուներ 45
տուն (345 մարդ) քրիստոնյա-թրքախոս հայ բնակ-
չություն: ¹⁵⁵ Գյուղի բնակչությունը մեծ կորուստներ
է տվել 1918-19 թթ.:

Գյուղի պատմական հուշարձաններից կան-
գուն, սակայն մեծապես ձևափոխված վիճակով
պահպանվում է Սբ. Աստվածածին քարաշեն,
փայտածածկ եկեղեցին: Առանձնապես կարևոր է
հայաթափ գյուղի գերեզմանոցը, ուր պահպանված
շուրջ 50 գերեզմանաքարերից միայն 4-ի վրա
գտանք արձանագրություն:

232. ՏԱՊԱՆԱՔԱՐ, գերեզմանոցում, ուղ-
ղանկյունաձև (նկ. 88).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱԲԱԼՈՒ ՋՈՐԼՈՒՎԷՅԻ
Տ(Է)Ր ԱԲՐՀԱՄԻՆ, | ԹՎ(ԻՆ) ՌՄԿԴ (1815):

233. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ուղղանկյունաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԱՐՏՐՕՍԻ | ԿՈՂԱԿԻՅ
ՍՈՒՐՄԱՅԻՆ, | ԹՎ(ԻՆ) ՌՄԿԶ (1817):

234. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նույնաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԵԼՔՈՒՄԻՆ, ՈՐ Է | ՈՐԴԻ
ՇԱՀՍՈՒՎԱՐԻ, ՕՎ ՈՔ | ԿԱՐԴԱ Ա(ՍՏՈՒ-
Ա)Ծ ՈՂՈՐՄԻ ԱՍԵՔ, | ԹՎ(ԻՆ) ՌՅՁ (1857):

235. ՏԱՊԱՆԱՔԱՐ, սալանման անտաշ քար
է, հարթ երեսին փորագրված է.

ՏԱՊԱՆՍ Է ԱԼԼԱՀՎԵՐԱՆԻ, ՈՐԴԻ | ԷՐ
ՀԱՄԲԱՐՉՈՒՍ ՕՍՄԱՆԵԱՆՅԻ, | ՄԱՅՐ ԷՐ
ՆՈՒԲԱՐԸ, ԿԵՆՆ ԷՐ ՋԱՌՆՆՇԱՆ, ՈՐԴԻՔ
ՍՈՐԱ ԳՐԻԳՈՐ ՈՒ | ... ԳԻՆԿԵԱՋԱՐ:

ՄԻՐԹԵՆԳԻՋԱ

Մինչև 1918 թ. հայաբնակ, ներկայումս՝ աղբ-
րեջանաբնակ գյուղ շրջկենտրոնից հյուսիս (միա-
վորված է Լազայի գյուղխորհրդի հետ): 1890-ական
թթ. գյուղն ուներ 50 տուն (245 մարդ) հայ բնակ-
չություն: ¹⁵⁶ 1914 թ. հունվարի 1-ի վիճակագրությամբ
գյուղում բնակվում էին 296 մարդ (բոլորն էլ հա-
յեր): ¹⁵⁷ Միլիոնգիջայի արժեքավոր հուշարձան-

154. Դ. Ա.Эзов, նշվ. աշխ., էջ 427-428:
155. Մ. Բարխուտարենանց, նշվ. աշխ., էջ 244:
156. Նշվ. աշխ., էջ 216:
157. "Кавказский Календарь на 1915г.", էջ 181:

ներից էին Սր. Գևորգ եկեղեցին (չի պահպանվել) և հին գերեզմանոցը, ուր բացի տապանաքարերից (արձանագիրները հասնում են մինչև XX դարի սկզբները) պահպանվել են նաև խաչքարեր:

236. ԽԱԶԶԱՐ, գերեզմանոցում.
ՀԳ (624) ԹՎ. ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՇՈՂԱ-
ՔԱԹԻՆ:

Հրատ. *Բարխուտարեանց, 217:*

237. ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ...:

Հրատ. *Բարխուտարեանց, 217:*

238. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գյուղից արևելք, ձորի մեջ.
ԹՈՍԱՍ ԺԲ ԹՎԻՈՋ:

Հրատ. *Բարխուտարեանց, 217:*

Ծանոթ. «Բայց քե այդ թուականում գործածական էին այս ձև տղագրությունն և տառերն» (Մ. Բարխուտարեանց, էջ 217):

ՍՈՒԼԹԱՆ-ՆՈՒԽԻ

Գտնվում է շրջկենտրոնից 14-15 կմ հարավ-արևմուտք, Կոտկաշեն - Աղդաշ մայրուղու վրա: Այն բաղկացած է երկու թաղամասից՝ արևելյան և արևմտյան: Մրանք համապատասխանաբար տարածվում են մայրուղու աջ ու ձախ կողմերում: 1874 թ. գյուղն ուներ 746 հայ (առաքելական) և 281 քաքար (սյուննի) բնակչություն:¹⁵⁸ 1888 թ. գյուղում բնակվում էին միայն հայեր (առաքելական, քրքախաս) 152 տուն՝ 1019 մարդ (521 արական, 498 իգական):¹⁵⁹ 1914 թ. գյուղի բնակչության թիվը կազմում էր 1110 մարդ (բոլորն էլ հայեր):¹⁶⁰ Գյուղը մեծ կորուստներ է տվել 1918-1920 թթ. ենթարկվելով երկրամաս ներխուժած օսմանցիների և տեղի մուսավաթականների համատեղ կազմակերպած հայաջինջ կոտորածներին: 1985 թ. հայերը կազմում էին գյուղի բնակչության մի փոքր մասը և բնակվում էին միայն արևմտյան թաղամասերում (25 տուն): Նրանք հայրենի գյուղը հարկադրաբար լքեցին 1988-ի հայտնի բռնազաղթի օրերին:



Մ. Բարխուտարյանցը նշում է, որ գյուղի արևելյան թաղում էր շուկան, իսկ արևմտյանում. «Նորաշեն և փառաուր եկեղեցին» ս. Աստուածա-

ծին»:¹⁶¹ Սա ունի եռանակ բազիլիկի հորինվածք: Այն քարաշեն է, փայտածածկ: Մրա որմերին երկու տեղ պահպանվել են արձանագրություններ:

Գյուղի արևելյան թաղամասերում կիսավեր վիճակով պահպանվել է մեկ այլ եկեղեցի: Սա հորինվածքով կրկնում է նախորդին: Այս եկեղեցու կարևոր առանձնահատկություններից է ուղղանկյունաձև ավագ խորանը (փայտաշեն ծածկը այստեղ չի պահպանվել, ներկայումս օգտագործվում է իբրև ամառային կինոթատրոն): Ըստ ոճական, շինարարական, ճարտարապետական առանձնահատկությունների եկեղեցին կառուցվել է XIX դարում: Հայտնի է, որ 1874 թվականին արդեն գյուղում գոյություն ուներ 2 եկեղեցի, հետևաբար, եթե արևմտյան թաղի եկեղեցու շինության թվականը ստույգ հայտնի է (1873), ապա արևելյան թաղի վերոհիշյալ եկեղեցին էլ կառուցված պետք է լիներ առնվազն մինչև 1874 թ.:

Գյուղի արևմտյան թաղում, Սր. Աստվածածին եկեղեցուց քիչ հարավ-արևմուտք տարածվում է գյուղի ընդարձակ գերեզմանոցը: Տեղում պահպանվել են XVIII-XIX դարերի և XX դարի սկզբներին վերաբերող բազմաթիվ ուշագրավ տապանագրեր: Գերեզմանոցի մի ծայրում թաղումները շարունակվում էին մինչ 1988-ի բռնազաղթը: Վերջիններս տապանագրերի լեզուն ի տարբերություն հնեների՝ հայերեն չէ, այլ աղբյուրաբանական կամ ռուսերեն:

Արևելյան թաղում, արքայակաղնու մի այգում Մ. Բարխուտարյանցը ժամանակին տեսել ու ընդօրինակել է, մի տապանագիր: Քարի վրա քանդակված է եղել թուր, նետ ու աղեղ, ձեռնափայտ (գավազան) և մկրատ: Տապանագրաբան կից եղել է մի խաչքար, որի արձանագրությունն էլ հրատարակել է երախտաշատ գիտնականը: Ցավոք, մենք այն տեղում չենք գտել և առնելով Մ. Բարխուտարյանցից անփոփոխ վերահրատարակում ենք:

Արձանագրությունները պարունակող գյուղի տարբեր հնավայրերից ստորև ներկայացնում ենք 19 արձանագրություն, որից մասկիմում հրատարակված են եղել միայն 2-ը:

239 ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, հարավային մուտքի ճակատակալ քարին փորագրված է հնգատող շինարարական արձանագրությունը (նկ. 89).

Բ(Ե)ՐԻ ԶԱՐՆ ԱՅՍ Խ(Ա)Չ(Ա)Տ(ՈՒ)Ր ԱԹ(Ա)Բ(Ե)Կ(ԵԱՆՑ)| Ի 1873 ԱՄԻ, 10 ԻՆ ՍԷԿ-ՏԵՍԲ(Ե)ՐԻ ՇԻՆԵՑ(Ա)Ի | Ս(ՈՒ)ՐԲ ԱՍՏՈՒԱԾ(Ա)ԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՍ ԾԱԽՈՒՔ | ՀԱՍԱՐԱԿՈՒԹ(Ե)ԱՆ, Ի ԺԱՍԱՆԱԿԻ ԶԱՀԱՆՈ(Ի)Մ Է| ԱԻԻՏԻՍ Զ(Ա)Հ(Ա)Ն(Ա) Տ(Ե)Ր ԻՍՐԱԷԼԵ(Ա)ՆՑ, ՍՕԼԹԱՆ (Ն)Ո(Ի)ԽԻ:

Ծանոթ. *շինարարական բնույթի այս փնմագիրը կրող ցայսօր կանգուն եկեղեցու տեղում հնում եղել է ավելի հին եկեղեցի: Վերջինիս վերաբերյալ արխիվային փավերագրերում հիշատակություններ կան 1839 թ. (եկեղեցին ենթարկվել է կողոպտման ֆ. 56, g. 1, q. 562, p. 11),*

158. "Кавказский Календарь на 1885г.", Тифлис, 1884, էջ 216:
159. Մ. Բարխուտարեանց, էջ 242:
160. "Кавказский Календарь на 1915г.", էջ 183:

161. Մ. Բարխուտարեանց, էջ 241:

1843 թ. (հիշ. նույն առիթով ֆ. 56, ց. 1, գ. 1374, թ. 1): 1895 թ. նախատեսվում էին նորոգչական աշխատանքներ (ֆ. 56, ց. 1, գ. 9130, թ. 3): Ինչ վերաբերում է վիճագրի վերջում հիշատակված ծխական քահանա Տեր-Ավետիսին, որը ձեռնադրվել էր 1870 թ. ապրիլի 19-ին (ֆ. 56, ց. 1, գ. 5567, թ. 2), ապա սա, որպես գյուղում քահանայագործող երկու հովիվներից մեկը, հիշվում է նաև 1877 թ. (ֆ. 56, ց. 1, գ. 6886, թ. 40): Մրան հիշում է նաև Մ. Բարխուտարյանը մոտ 1890 թ., որը քահանայի տանը տեսել էր մի հին «Հայսմավոր»՝ գրված բամբակի թղթի վրա (նշվ. աշխ., էջ 241): Մեկ այլ անթվակիր վավերագրից պարզվում է, որ քահանան մահացել է մարտի 29-ին (տարեթիվը չի նշված) մոտ 65 տարեկան հասակում: Մահվանից դեռ 6 տարի առաջ արդեն չէր քահանայագործում, բայց միշտ անշահախնդիր ծառայում էր ժողովրդին: Հայոց դպրոցների փակվելուց հետո էլ նա մասնավոր կերպով ձրի հայերեն էր սովորեցնում երեխաներին (ֆ. 227, ց. 1, գ. 72, թ. 62):

240. ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, ներսում՝ հյուսիսային պատի մեջ ագուցված մկրտարանի սրբատաշ քարի հարավահայաց երեսին փորագրված է.

ՅԻՇԱՏԱԿ Է Ս(ՈՒՐ)Բ ԱԲԱԶԱՆՆ ԷՐ | ԷՐԵՑԻ ՈՐԴԻ ԳԱԼՈՒՍԻՆ ԵՒ ԻՒՐ ԿՈՂԱԿԻՑ ՍԱՆԳՈՒԽՏԻՆ Ե(Ի) ՈՐԴՈՅՆ ՂԱՐԱՎՁԻՆ, ՕՀԱՆԻՆ, ԱԲԲ(Ա)ՀԱՄԻՆ:

Ծանոթ. Էրեր գյուղը, կարծում ենք, Վարանդայի շերտերն է (այժմ՝ ԼՂՀ, Մարտունու շրջանում):

241. ԽԱՉՔԱՐ, արևելյան թաղում արքայակաղնու մի այգում, կից մի տապանաքարի.

ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԵԱ ԻՌՍԱՍՄԻՆ, ԹՎ. ՄԷ (758):

Հրատ. Բարխուտարյանց, էջ, 242:

Ծանոթ. Նկարագրված տապանաքարի քանդակները (թուր, նետ ու աղեղ, ձեռնափայտ կամ ավելի ճիշտ գավազան և այլն) ճշտությամբ կրկնված են գավառի արիշ հին գյուղերի գերեզմանոցներում պահպանված տապանաքարերի վրա (Ռուշան, Ամուրական, Գյանդխան, Ղալակա և այլն): Ի դեպ արձանագրվածները XIV-XVI դարերից են: Տվյալ դեպքում Մուրան-Նուխի տապանաքարը՝ կից խաչքարով, մենք տեղում չենք գտել և վիճագիրը, որը թվագրված է ՄԷ-758 թ. ստուգելու հնարավորություն չենք ունեցել:

242. ՏԱՊԱՆԱՔԱՐ, արևմտյան թաղի մեծ գերեզմանոցում, ուղղանկյունաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Տ(Է)Ր ԻՍՐԱԷԼԻ ԿՈՂԱԿԻՑ ԱՆՆԱԻՆ Է, ԹՎ(ԻՆ) ՌԲԴԻՆԳ (1795):

Ծանոթ. «Թ. Փ. » ստորագրությամբ մի ուշագրավ հողվածում, որը 1889-ին տպագրվել է «Նոր-Դար» օրաթերքում (№ 65, էջ 3), կարդում ենք. «...Տեր Դանիելի արքի Տեր Իսրայելը բռնակալ խաների, սուլթանների հալածանքներից խոյ տալու համար, բոլոր ժողովրդով փախել է Կովկասեան լեռների անտառներն, որտեղ գիշերը սաստիկ քամոց մի ահագին ծառ արմատախիլ լինելով՝ իր տակ կոտորում է շատ շատերին և Տեր Իսրայելի կին՝ Աննային օրօրացի երեխայով (դրանց գերեզմանները եկեղեցու բակումն են): Տեր Իսրայելը վախճանուել է ՌՄՉՁ թ. (82 տարի է), իսկ կինը - ՌՄՆԴ թ. ...»:

243. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախարդի մոտ, նույնաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՊԱԼՈՒ ՆՈՒԽԵՑԻ ԱՔԱՐԻ ՈՐԴԻ ՄԻՆԱՍԻՆ Թ(ՎԻՆ)ՈՒՍԿԻ (1815), ՄԱՀԻՄԻ Ժ (10):

244. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նույնաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՊԱԼՈՒ | ՆՈՒԽԵՑԻ ՃԱՆԱՆԻՆ, ՈՐԴԻ | ՅՕՀԱՆԵՍԻՆ, ԹՎ(ԻՆ) ՈՒՍԿԻ (1815):

245. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՐՄՆՈՅ ՏԵՂԻ ՄԵԾ | ԻՇԽԱՆ ԱԹԱՔԻՇԻ ԻԺՁԲԱՇԻՆ, ՈՐ Է | ՈՐԴԻՊԱՏԱԼԻ, ԲՆԻԿ ՍՈ(Ի)ԼԹԱՆ

246. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՔԱԼԱԽԱՆԵՑԻ ԽՈՉԱ ԸՍՏԵՓԱՆԻՆ, ԹՈՌՆԸ | ԱՌԱՔԵԼԻՆ, ՌՄԿԵ (1816):

247. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՊԱԼՈՒ ՆՈՒԽԵՑԻ | ԴՈՒՐՄԻՇԻՆ, ՂԱՐԱԿԱՏԻՆ, Թ(ՎԻՆ) ՈՒՍԿԵ (1816):

248. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՊԱԼՈՒ ՆՈՒԽԵՑԻ ՄԱՐԳԻՍԻ ՈՐԴԻ | ՅՕՍԷՓԻՆ Ե, ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ՄՍԱ ՄԷԿ ԵՐԻՎԱՆ ՍՐՏԻՒ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ԱՍԱՅԷՔ ԵՒ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՁԵՁ ՈՂՈՐՄԵՍՅԻ, ԹՎ(ԻՆ) ՈՒՍԿԸ (1819):

249. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՆՈՒԽԵՑԻ Տ(Է)Ր ԱԼԻՔՍԱՆՆ ԿԱԼՈՒՍԻՆ, ԹՎ(ԻՆ) ՈՒՍԿԷ (1838):

250. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՆՈՒԽԵՑԻ Տ(Է)Ր ԿԱՐԱՊԵՏԻ | ԿՈՂԱԿԻՑ՝ ԱՆԹԱՌԱՄԻՆ, 1840 ՅՈՒՆԻԱՐԻ ԺԷ (17):

251. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՐԻԱՄԻ, ՈՐ Է ԴՈՒՍՏՐ Տ(Է)Ր ՁԱՔԱՐԻ, ԿՈՂԱԿԻՑ ԷՐ ՅՈՀԱՆԵՍԻ, ՈՐԴՈՅՆ ԿԱՐԱՊԵՏ | Ք(Ա)Հ(Ա)Ն(Ա)ՅԻ, 1844 ԱՊՐԻԼԻ 8-ԻՆ ՎԱՆՃԱՆԻ:

252. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏՈՒՐԱՄԵՇ | ՈՂԱԼԻ ԱՔԱՐԻ ՈՐԴԻ | ԲՈԼԻ ԻԺՁԲԱՇԻՆ, | 1846 ԱՄԻ, ՄԱՐՏԻ 1:

253. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ուղղանկյունաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԻ, ՈՐ Է ՈՐԴԻ Տ(Է)Ր ԻՍՐԱԷԼԻ, ԹՈՌՈՆ ԿՈՉԻ ՔԱՀԱՆԱՅԻ, ՆԱԽԱՄԵԾԱՐ ՏԷՐ ԳԱՆԻԷԼ, | ՍՈՔԱԵՆ ԱՉԳ ՔԱՀԱՆԱՅԻ, Ի ԲՆԵ ՍՈՒԼԹԱՆ ՆՈՒԽԻ, | ՅԱՄՍ 30 ՍԱ ՁԵՌՆԱԴՐԻ, ՎԱԹՍՈՒՆ ԱՄԻ ԱՌ ԳՈՒՂԻ ՏԷՐ ՓՈՒԽԻ, | ՈՐ ՀԱՆԴԻՊԻ ՍՈՅՆ ՏԱՊԱՆԻ ՄԻ ՁԱՆՑ ԱՌՆԷ ՀՈԳԻ(Ո)Ց ԱՄԻ, 1846 ԱՄԻ, Ի 4 ԱՌՈՒՐՆ

ԱՄՅԻՄԻ, ՅԱՍՄ Է ՎԱԽՃԱՆԻՎԱՆԳԻՊՕ-
ՂԱՅԳ ԱՂԱՉԵՄ ՏԵՐ ՈՂՈՐՄԻ ԱՄԵԼ ԱՂ-
ԹԵՄ, | ԻՍԿ ՈՐ ԱՌՆԹԵՐ ԿԱՆ ՈՒՇԻՄ
ՄՏՕԶ ՈՂՈՐՄԻ ԴԱՆ:

Ծանոթ. *Տապանագրի ուշագրավ տվյալները ավելի
ևս լրացնելու համար մեջ ենք բերում մասնույց քաղված
հետևյալ նյութը. «...Ամուլուեցիները հաստատ հայեր են
եղած, որովհետև նրանց մի ժամանակ հովուել է Մու-
թան-Նուխու քահանայ Տէր Դանիէլը, որ այժմեան քա-
հանայ Տէր Անտիսի պապի պապն է: Եփրեմ կաթողի-
կոսն Տէր Դանիէլից Ամուլի գիւղացի մի մնջեցյալի հոգե-
բաժին փողն է պահանջել հրամանով. (այդ բոլորը մինչև
անցեալ տարի մնում էր Տէր-Անտիսի տանը, այժմ, ինչ-
պէս իրենք են ասում չկայ):...» (շարունակությունը տես՝
№ 242-ի ծանոթ., «Նոր-Դար», 1889, № 65, էջ 3):*

254. ՏԱՊԱՆԱԶԱՐ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ԱՍԼԱՆ
ԲԵԿԻ, | ՈՐԴԻ(Ո)Յ ՂԱՐԱՊԱԳՅ(Ի) ՋՐԱ-
ԵՐԳԵՑԻ | ԱԹԱԲԵԿԵԱՆՅ ՅԱԿՈՎԲԷ
ԿԻՈՐ ՅԱՍՏԻՃԱՆԻ ԿՕԼԼԵԺՄԿԻՅ
ՍԵԿՐԵՏԱՐԻ | Ի ԿՁ (46) ԱՄԱՅ ԻՐ
ՀԱՍԱԿԻ 18⁸/₃₀ 47:

Հրատ. *Բարխուտարեանց, 242-243: Հրատարա-
կիչը բաց է թողել 4-րդ ամբողջ տողը, ունի նաև այլ վրի-
պումներ:*

Ծանոթ. *Մ. Բարխուտարյանը նշում է, որ այս Աս-
րանքիչը Ջրաբերդի Կուսակառ գյուղի Մելիք-Վանու
բռն էր և այդ կողմերում վարել է դատավորի պաշտոն:*

255. ՏԱՊԱՆԱԶԱՐ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱԲԱԼՈՅ ՆՈՒԽԵՑԻ ՏԵՐ
ԿԱՐԱՂԵՑԻ ՈՐԴԻ ԳՊԻՐ ՅՕՀԱՆՆԵ-
ՄԻՆ, ՈՐ ՎԱԽՃԱՆԵՑԱՒ 1851 ԱՄԻ, Ի 26
ՓԵՏՐՎԱՐԻ, ԻՍԿ | ԹԱՂԵՑԱՒ ՄԵՐՁ ԱՌ-
ՀԱՅՐՆ ԻՐԵՆՈՒՄ:

256. ՏԱՊԱՆԱԶԱՐ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍՈԼԹԱՆ ՆՈՒԽԵՑԻ ՆԱ-
ՋԱՐԵԱՆՅ ՂԱՆԻՊԵԿԻ ՈՐԴԻ ԱՆՅԻՇԱ-
ՏԱԿ ՅՈՍԵՓԻՆ, | 1860 ԱՄԻ, 24 ՅՈՒՆՎԱՐ:

257. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև.

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՍԱՐՄԻՆ ՍՈՒԼԹԱՆ ՆՈՒ-
ԽԵՑԻ ՃԱՎԱՅԻՐՂԵՏՐՈՍԵԱՆ, ՈՐ Է |
ԿՈՂԱԿԻՅ ՍԱՐԶԱՐԱՅԻԸ(Ա)ՀԱՆԱՅԻ ՏԵՐ
ՍԱՐԳԻՍԵՂԱՆ Ի ԲԼԵԳԻՑԻ, 1861 ԱՄԻ:

Շ Ա Մ Ա Խ Ո Ւ Շ Ր Ձ Ա Ն

Ջրաղեցնում է Բուն Աղվանքի արևելյան մասը: Համապատասխանում է միջնադարյան Շիրվանի կենտրոնական մասին: Ներկայիս շրջանը իր բռնած տարածքով ամենից ընդարձակն է Ադրբեջանի հանրապետության տարածքում (զբաղեցնում է 3.9 հզ. քառ. կմ): Ունի մեկ քաղաք (շրջկենտրոն Շամախին), 2 քաղաքատիպ ավան, 1 բանավան, 103 գյուղ: Սահամանակից է Ադսուի, Իսմայիլի, Մաշքաղայի, Մալյանի, Մաքիբաբադի և Քյուրդամիրի շրջաններին: Մինչև 1918 թ. շրջանի ներկայիս տարածքում հայաբնակ էին 15 գյուղեր. Մատրասա, Քարքանջ, Բալախան, Արփավուտ, Խանիշեն, Դարա-Քարքանջ, Միրիշեն, Մեյսարի, Չարխու, Սաղիան, Փախրաբուշ, Գյուրջիլար, Ղաջար, Տվարիշեն և Բալիշեն: Մեծ թվով հայեր ապրում էին նաև Շամախի քաղաքում: Հայաբնակ բոլոր գյուղերն առանց բացառության տեղաբաշխված են շրջանի նախալեռնային գոտում (իհարկե, հնում այդ ցանցը ձգվում էր շատ ավելի հյուսիս, մինչև Կովկաս լեռների փեշերը): Շրջանը հարուստ է հայկական պատմական հուշարձաններով: Առանձնապես նշանավոր են Սաղիանի, Մեյսարու, Փախրաբուշի վանքերը: Մատրասայի, Բալախանի եկեղեցիները: Սաղիան, Մատրասա, Մեյսարի, Քարքանջ գյուղերի հիմնավորը գերեզմանոցները, ուր պահպանվել են խոյաձև տապանաքարեր, խաչքարեր: Հնավայրերի մեծ մասում պահպանվել են նաև արձանագրություններ: Դրանց մի զգալի մասը, որ հավաքել ու հրատարակել էին նախկին ուսումնասիրողները, հուշարձանների ավերման, ոչնչացման հետևանքով ներկայումս պահպանված չեն: Այդպիսիները ստուգման հնարավորություն չունենալու պատճառով վերահրատարակում ենք՝ առնելով հրատարակված օրինակների համեմատական ուսումնասիրությամբ դուրս բերված առավել վստահելիները: Ընդհանուր առմամբ շրջանի ներկայիս տարածքից նախկինում հրատարակված են եղել 86 արձանագրություն: Դրանցից տեղերում պահպանված գտանք միայն 6-ը, որոնց թերությունները վերացնելով ու ստուգելով՝ ներկայացնում ենք ստորև: Բացի այդ՝ ներկայացվում է նաև նախկինում չհրատարակված, նորահայտ 56 արձանագրություն, ըստ որում շրջանից մեր ամբողջ հավաքածուն կազմում է 142 միավոր արձանագրություն:

ՄԱՏՐԱՍԱ

Շրջանի հին ու նշանավոր հայկական գյուղերից էր: Գտնվում է շրջկենտրոնից (Շամախուց) 7 կմ հարավ-արևմուտք: Հայ մատենագրության մեջ Մատրասան հիշատակվում է սկսած 1403 թվականից: Այդ թվականին գյուղում գրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «... ի յերկիրս Շրվանայ, ի գեղջս որ հորջորջի վերածայնելով

Մատրասայ, ընդ հովանեա մօր լուսոյ սուրբ Աստուածածնիս, ի նեղ և ի դառն և ի յանձկացեալ ժամանակիս ...»: ¹⁶² Մատրասան ինչպես հնում, այնպես էլ մինչև 1988-ի բռնագաղթը մնում էր որպես զավառի գլխավոր ու հայաշատ բնակավայրերից մեկը: Այն 1861 թ. ուներ 340 տուն բնակչությ-

162. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ԺԵ դար, մասն Ա, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 31-33:

յուն (բոլորն էլ հայեր):¹⁶³ 1874 թ. գյուղն ուներ 2187 հայ բնակիչ:¹⁶⁴ 1890-ին՝ 566 տուն (2810 մարդ):¹⁶⁵ 1914 թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղում բնակվում էին 4611 մարդ (բոլորն էլ հայեր):¹⁶⁶ 1918 թ. ամռանը օսմանյան բանակի և մուսավաթականների համատեղ հարձակման ժամանակ Մատրասան նշանավորվեց, որպես կազմակերպված դիմադրության կենտրոն, ուր պատասպարվել էին շրջակա 16 հայաբնակ գյուղերի բնակիչները: Հերոսամարտը տևել է 3 օր, որից հետո թշնամիներին հաջողվել է գրավել գյուղն ու այն ենթարկել սուկայի ջարդի ու թալանի:¹⁶⁷ Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Մատրասան վերստին շենացավ ու դարձավ շրջանի ամենամարդաշատ ու բարգավաճ գյուղերից մեկը: 1988-ի բռնագաղթի նախօրեին ուներ շուրջ 1700 հայ բնակիչ:



Մատրասան հարուստ է պատմական հուշարձաններով: Գյուղի հարավ-արևելյան ծայրում կանգուն վիճակով պահպանվում է Սբ. Աստվածածին եռանավ զմբեթավոր սրբատաշ քարերով կառուցված եկեղեցին: Վերջինիս արևմուտքից կից է եռահարկ, այրմագարդ ռոտոնդայով ավարտվող զանգակատունը:

Գյուղի կենտրոնում պահպանվում է 1870 թ. ցայսօր գործող հայոց դպրոցի շենքը: Այն բավական ընդարձակ կառույց է, իրականացված համակ սրբատաշ քարերով:

Մատրասայի հյուսիս-արևմտյան կողմում ցայսօր անխափան գործում է քարաշեն բազմակն աղբյուրը՝ հիմնադրված 1867 թվականին:

Նույն ուղղությամբ գյուղի ծայրում տարածվում է ընդարձակ ու հին գերեզմանոցը: Այստեղ պահպանվել են մոտ 3000-4000 տապանաքարեր: Դրանց մեծ մասն անմշակ սալատապաններ են: Քիչ չեն նաև սրբատաշ ուղղանկյունաձև գերեզմանաքարերը, որոնց մեծագույն մասը (շուրջ 400) ունեն XIX-XX դարերին վերաբերող արձանագրություններ: Գերեզմանոցի մի ծայրում թաղումները ցայսօր շարունակվում են: Հնավայրում առանձնապես ուշագրավ են պահպանված մի քանի խաչքարերը, որոնցից մեկն ուներ նաև արձանագրություն, թվագրված՝ 1598-ով: Կարևոր է դրանց զարդաքանդակների ունեցած խիստ ընդհանրությունը բուն Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի շատ հնավայրերում պահպանված խաչքարերի զարդամոտիվների ու ոճի հետ: Խաչքարային արվեստի

դասական օրինակների նմուշների զոյության փաստը Բուն Աղվանքի այս հեռավոր անկյունում, դասական օրինակների նմուշների զոյության փաստը Բուն Աղվանքի այս հեռավոր անկյունում, վկայությունն է այն իրողության, որ երկրամասի հայ բնակչությունն ապրում էր մշակութային աշխույժ կապերով Հայաստանի այլ շրջանների հետ:

258. ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ, շինարարական արձանագրությունը.

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՍ ՇԻՆԵՔԻՆՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԱԴՐԱՍԱՅ. 1860 ԱՄԻ 30-ԻՆ ՄԱՅԻՄԻ:

Հրատ. Բարխուտարեանց, 167: Սմբատեանց, 547:

Ծանոթ. Ըստ տեղացիների վկայության՝ այս արձանագրությունը վաղուց է, որ ոչնչացած է: Վերջին տարիներին մատրասեցի նկարիչ-գյուղագիր Մուրեն Դասարյանի խորհրդով մոտավոր հիշողությամբ ու հաշվարկով եկեղեցուն կից զանգակատան արևմտյան ճակատին փորագրել են 1864, իբրև շինության թվական: Ինչ վերաբերում է Մատրասայում եկեղեցու զոյության պատմությանը ապա վերևում նշվեց, որ 1403 թ. գյուղում հիշվում է համանուն եկեղեցի, իսկ XIX դարում, մինչև 1860 թ. նույնպես բազմիցս հիշվում է Սբ. Աստվածածին անունով եկեղեցի: Հայտնի է, որ 1843 թ. այն ենթարկվել էր կողոպտման (Ֆ. 56, ց. 1, գ. 1391, ք. 1), 1859 թ. եկեղեցին գտնվում էր քայքայված վիճակում և մատրասեցիք առաջարկում էին կառուցել նոր եկեղեցի՝ հնի տեղում (Ֆ. 56, ց. 1, գ. 3813, ք. 1): Ինչպես պարզվում է ներկայացված արձանագրությունից 1860 թ. նոր եկեղեցին իսկապես շինվել է, որը, սակայն, մեծապես վնասվել էր 1868 թ. երկրաշարժից (Ֆ. 56, ց. 1, գ. 5538, ք. 1): 1874 թ. եկեղեցու տանիքն արդեն քիքեղածածկ էր (մինչ այդ սալապատ էր), բայց դեռևս կային նորոգումների այլ չկատարված աշխատանքներ (գ. 5538, ք. 3): Վերջիններս ավարտեցին 1875 թ. (Ֆ. 56, ց. 1, գ. 6214, ք. 3): Վերջին նորոգումները նախատեսվում էին կատարել 1901 թ. (Ֆ. 56, ց. 1, գ. 9816, ք. 1-2): Մինչև 1988-ը եկեղեցին կանգուն ու անվնաս էր: Օգտագործվում էր որպես ցորենի պահեստ:

259. ԱՂԲՅՈՒՐ «Մեծ» գտնվում է գյուղամիջում, քարաշեն, ճակատի թիվագոտու տակ քանդակագարդ շրջանակի մեջ փորագրված է շինարարական 6 տողանոց արձանագրությունը (նկ, 90).

ԱՂԲԻՐՍ ՇԻՆՈՒՎԵՑԱԻ ԻՎ ԾԱՆԻԻՔ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒԻ ԺԱՍԱՆԱԿԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՐԻՍԱՀԱԿԵԱՆՅԻ ՏԱՆՈՒՏԵՐՈՒԹԵԱՐՆ ԵՒ ԲԱԼԱՍԻ ՂԱՍԱՐԵ(Ա)ՆՅԻ ՕԳՆԱԿԱ(Ն) Ի 1867 ԱՄԻ Ի 10 ԻՆ ՀՈԳՏԵ(ՄԲԵՐԻ), Ի ՄԱՏՐԱ(ՍԱ):

Գրակ. Արձանագրությունը մանր վրիպումներով ընդօրինակել է նաև Զաջրերունին (անտիպ է):

Տես՝ ՀՀՊՊԿԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, ք. 19:

Ծանոթ. Արձանագրության չորս անկյուններում փորագրված են ՎՐՊ, ՄՂ և ՎՐՊ, ԱՓ: Զաջրերունին դրանցից առաջինը վերծանել է. «ՎԱՐՊԵՏ Մ.Ղ. (Մեղքոն Գահրամանեանց)»: Կարծում ենք, որ երրորդն էլ վարպետի անուն է: Ի դեպ հայտնի է, որ տանուտեր Տեր-Սահակյանցի նախածեղնությամբ աղբյուրի կառուցման համար ժողովուրդը հանգանակել էր 2000 ռ. («Նոր-Դար», 1887, № 130, էջ 2):

163. Մ. Սմբատեանց, էջ 139:

164. "Кавказский Календарь на 1885г.", էջ 211:

165. Մ. Սմբատեանց, նույն տեղում:

166. "Кавказский Календарь на 1915г.", էջ 157:


167 ՀՀՊՊԿԱ, ֆ. 278, ց. 4, գ. 4, քերթ 56:

260. ՉԻՆԱՐԴԱՐԻ ԱՂԲՅՈՒՐԸ, գտնվում է Մատրասայից 1-2 կմ հյուսիս-արևելք, ճակատին ազուցված քարին փորագրված է հետևյալը.
1867 ԱՄԻ ՅԻՇԱՏԱԿՍ | Հ(ՈՎ)ՍԵՓ ԿԻՆ
ԾԱՂԻԿ, ՈՐԴԻՆ՝ ՍԴԵՓԱՆ | ՍԱՐԴԻՐՈՍ՝
ՍՈՒՐԱԴԵ(ԱՆ)Յ:

261. ԱՂԲՅՈՒՐ, գտնվել է Մատրասայից Շամախի տանող ճանապարհին.
ԱՅՍ Է ՅԻՇԱՏԱԿՍ ՍԱՐԱՍԱԲՆԱԿ ՍԱՐ
ՔԱՐԱՅ ԱՆՏՕՆԵԱՆՅ ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆՅ
1886 ԱՄԻ 6 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ:
Գրակ. *Քաջքերունի (անտիպ է): Տես՝ ՀՀՊՊԿԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, քերթ 20:*

262. ԳԵՐԵՉՄԱՆԱՔԱՐ, սպիտակ մարմար, տեղահան է արված, ջարդված ու գլորված Սր. Աստվածածին եկեղեցու արևելյան կողմը, թեք լանջին (սկզբնապես գտնվել է եկեղեցու բակում):
Ի ՏԱՊԱՆԻՍ | ԿԱՅ ՍԱՐՄԻՆ | ՍԱՐԳԻՍ |
ԴՕՆՂԱՐԵԱՆՅ Ծ. | 1805 Թ. + 1890 Թ. | ՍԱ
ՕՐԻՆԱԿ | ԵՂԱԻՐ՝ ԲԱԶՄԱՅ՝ | ... ԴՍԵԱՅ՝
| ՉՏՈՒՆՍ, ՉԱՅԳԻՍ | ԵՎ ԿԱԼՈՒԱԾՍ | ՆԱ
ԴՊՐՈՅԻՆ | ԿՏԱԿԵԱՅ:
Ծանոթ. *Հայտնի է, որ այս Սարգիս Դոնդարյանցը մեծապես օժանդակել է նաև Սր. Աստվածածին եկեղեցու շինությանը (տես՝ Մ. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 546):*

263. ԽԱՉՔԱՐ, գերեզմանոցում, հիմնախաչի վերին երկու կողմերում (թվականը) և աջ եզրին փորագրված է հակիրճ արձանագրությունը (նկ. 91).
ԹՎ(ԻՆ) ՈՒԽԷ (1598), ԲԱԶՆ ԱՌՆԱԿԱՆ
ԳԻՉ ԻՒԱՆԻՆ, ԾԱՍՐՕՍԱԿԻՆ:



Ծանոթ. *Խաչքարը գտնվում է կիսով չափ հողի մեջ խրված վիճակում, սակայն դատելով դիրքից (երեսով դեպի արևելք է), այն գտնվում է ոչ իր սկզբնական տեղում, այլ միայն հետագայում են մատրասեցիները պահպանման նպատակով այն կանգնեցրել (ավանդականին հակառակ դիրքով):*

264. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ուղղանկյունաձև.
ԸՆԴ ՅԱՅՍՄ ՏԱՊԱՆԻՍ ՀԱՆԿՉԻ | ՍԱՐ-
ՄԻՆՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՍԱՍՈՒԷԼԻ | ՈՐԴ-
ԻՈՅՆ ՍԱՐՈՒԹԱՅԻ ԴՈՆՂԱՐԵԱՆՅԻ |
ՀՈԳԱՔԱՐՉՈՒԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ
ԳԵՂՁՍ ՍԵՐՈՅ ՍԱՏՐԱՍԱՅԻ | ՀԱՆԳԵԱԻ
Ի ՏԵՐ 15 Դ(Ե)ԿՏԵՄԲԵՐԻ | 1889 ԱՄԻ:

265. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նույնաձև.
ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՍԱՐՄԻՆ ՍԱՏՐԱՍՈՒ
ԵՐԵՎԵԼԻ ԶԱԶ ԵՎ ՊԱՏԻՒՄՈՐ ՏԱՆՈՒ |
ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ Է ՖԵՆՏԻ-
ԵԱՆՑԻ, ՎԱՆՃԱՆԵԱԼ Է 61 ԱՍԱՅ ՀԱՍԱ
ԿԻ, | Ի 1901 ԹԻԻ, 15-ԻՆ ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՍԷՔԻ
Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ:

ՄԵՅՍԱՐԻ

Մեյսարին մոտակա վանքի շնորհիվ մի առանձին հռչակ ուներ ողջ զավառում: Սրա անվան ստուգաբանությամբ զբաղվողները տվել են տարբեր բացատրություններ:¹⁶⁸ Գյուղը գտնվում է շրջկենտրոնից շուրջ 16 կմ արևմուտք: Ըստ ավանդության հնում գյուղն ունեցել է մինչև 70 տուն բնակչություն,¹⁶⁹ սակայն ստույգ վիճակագրական տեղեկությունները XIX դարից են: 1850-ական թթ. գյուղն ուներ 30 տուն հայ բնակչություն:¹⁷⁰ 1861 թ. գյուղն ուներ 40 տուն, իսկ 1890-ին՝ 80 տուն (500 մարդ) հայ բնակչություն:¹⁷¹ 1914 թ. հունվարի 1-ին մարդահամարով այստեղ ապրում էր 705 հայ:¹⁷² Մ. Բարխուտարյանցը, որը գյուղ է այցելել 1880-ական թթ. վերջին նշում է, թե եղած 88 տնից 25-ը՝ բնիկներ էին, իսկ մնացածը արցախահայ վերաբրնակիչներ՝ գաղթած Շոշու, Ավետարանոց (Չանախչի), Հաղրոթ, Յոր և Տող գյուղերից:

Մեյսարին հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով: Գյուղամիջում կանգուն

168. Մ. Ջալալյանցը գրում է. «... գիտն Մեյսարի, որ առեալ է զանում իւր ի հեղիկ հողոց, հանապազ հնչելոց ...» (նշվ. աշխ., էջ 397): Մ. Բարխուտարյանցը բացատրում է հետևյալ կերպ. «Պարսկերէն մէյ նշանակում է գինի և սեւա՛ր՝ գլուխ, իսկ Մէյսարի՛ գլխատր գինի» (նշվ. աշխ., էջ 169): Մ. Սմբատյանցը նշում է. «Մասերի և այժմ Մեյսարի բարդ զանազան մեկնութեանք են բացատրում գիտացիք. բայց ես կարծում եմ թէ ի պատիւ մասանց սրբոց որ այն վանքումն են եղել, անուանել են Մասերի վանք, կամ Մերավանք այն է Մերտվբայ վանք, ինչպէս Գողթանեաց գաւառի Մարվան գիւղը, իսկ թէ այլազգական բառ համարելով Մեյսարին այնպէս բացատրենք. հետեւեալը դուրս կը գայ:

Մասերի՛ նշանակէ հանրախօսական ստորագրութեան քոտք, բազմակնիք, զամեն մահսերագրութիւն, որպէս երեւի վանքի մօտի ժողովուրդ լինելով Մեյսարեցիք՝ սովորած են եղել միշտ մահսերագրութեանք բողոքել վանահօրից, որպէս եւ Սաղիանցիք եւ այլք» (նշվ. աշխ., էջ 142):

Սեգ առավել հավանական է թվում Մ. Սմբատյանցի առաջադրած առաջին տարբերակը: Ի դեպ, վանքը «Մասերի» ձևով է հիշատակում նրա առաջին գիտնական այցելուներից մեկը՝ Հ. Շահխաբունյանցը (նշվ. աշխ., էջ 381):

169. Ջալալեանց, էջ 397: Սմբատեանց, էջ 144:

170. Նույն տեղում:

171. Սմբատեանց, էջ 139:

172. "Кавказский Календарь на 1915г.", էջ 157:

վիճակով պահպանվում է Սբ. Աստվածածին քարաշեն, փայտածածկ եկեղեցին:

Մեյսարու հյուսիս-արևմտյան կողմում, 0,5-1 կմ հեռու, խոր կիրճի ձորաբերանում պահպանվում են Մեյսարու վանքի ավերակները, ընդարձակ գերեզմանոցը: Վանական հուշարձանախումբը, որը



Մեյսարու վանքի տեսքը դարասկզբին



Մեյսարու վանքի տեսքը 1980-ական թթ.

բաղկացած էր երկու միմյանցից փոքր-ինչ հեռու, առանձին խմբերից ներկայումս գտնվում է հիմնավեր վիճակում: Այն վերջին տարիներին պայթեցվել է, իսկ սրբատաշ զրեթե բոլոր քարերը տեղափոխվել են գյուղ այլ շենքեր կառուցելու նպատակով: Ամենացավալին այն է, որ այդ բարբարոսությանը զոհ են գնացել նաև տեղում՝ եկեղեցիների որմերին փորագրված XVII-XIX դարերին վերաբերող բազմաթիվ արձանագրություններ:

Նախկին հետազոտողները բարերախտաբար ընդօրինակել ու հրատարակել են Մեյսարու վանքի արձանագրությունները, սակայն դրանցում առկա են բազմաթիվ տարրերություններ, տարրնթերցումներ, որը հաճախ կասկածելի է դարձնում թե մեկ և թե մյուս ընդօրինակության ճիշտ լինելու հարցը: Ինչևէ, հնարավորություն չունենալով դրանք վերստուգել, ստորև ներկայացնում ենք մեր կարծիքով առավել վստահելի ընդօրինակությունները: Մեյսարու գյուղից, վանքից, գերեզմանոցից նախկինում հրատարակված է եղել 17 արձանագրություն: Դրանց հավելելով նորահայտ 3 արձանագրություն՝ բոլորը միասին ներկայացնում ենք ստորև.

266. ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, գյուղամիջում, հյուսիսային մուտքի ճակատակալ քարին փորագրված է.

ՆՈՐՈԳԵՑԱԻ Ի ՀԻՄԱՆԷ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒ
ԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՍ ՄԵՅՍԱՐԻ ԳԵՂՁ
ԾԱԽԻԻՔ ԵՎ ԱՐԴԵԱՄԲԸ ՇԱՄԱԽԵՑԻ
ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ՊԱՐՕՆ ԳԱԼԸՍ
ՏԵԱՆ ԵԱՆՑ,
ՅԻՇԱՏԱԿ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԾՆՈՂԱՅ Ի-
ՐՈՅԻ | ԹԱԳԵՈՍ
ԱՌԱԳ ԶԱՀԱՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՎ
ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ
..... ՅԱՄԻ ՏԵԱՌՆ ԻՆ ՀԱՅՈՑ

Ծանոթ. Մեյսարու գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին հիշատակվում է 1851 թ. (Ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 63): 1874 թ. մեյսարեցիք մի խմբազարդ ղեկն էին հոգևոր իշխանությանը՝ 1869 թ. երկրաշարժից մեծապես տուժած իրենց եկեղեցին հիմնավորապես վերստին շինելու (հնի տեղում) ցանկությամբ: Դրա բույրավորությունը ստացել էին նույն թվականին (Ֆ. 56, ց. 1, գ. 6442, ք. 1): 1895 թ-ին այն հիշվում է. «... խարխալ, հող է կտուրով, ցած պատուհաններով եւ դռներով մի խոնավ եկեղեցի ...» («Նոր-Դար», 1895, № 160, էջ 3): 1902թ երկրաշարժից. «... Նորաշեն եկեղեցին ստացել էր մեծ ճեղքումները ...» («Մշակ», 1902 № 32, էջ 1): Ստացվում է, որ այս արձանագրությունը փորագրվել է 1895-1902 թթ. ընթացքում քայքայված հին եկեղեցու տեղում՝ նորի կառուցման կապակցությամբ:

267. ՄԱՍԱՆՑ ԿԱՍ ՄԵՅՍԱՐՈՒ ՎԱՆՔ, ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, մուտքի վերնամասում արտաքուստ փորագրված է եղել.

ՔՐԻՍՏՈՍԻ ԹՎԻՆ ՌՈՁ (1680): ԱՐԴ ԵՍ
ՀՈՒՄԿ ԱՆՏՈՆ ՎԱՐԴԱՊԵՏՍ ՆՈՐՈԳԵ
ՑԻ ՉԱՍՏՈՒԾԱԾԻՆ ՎԱՆՔՍ, ՈՐՔ ՀԱՆ
ԴԻՊԻՔ ՄԱ ՅԱՂՕԹՍ ՅԻՇԵՑԻՔ Ի ՏԵՐ,
Ի ՌՃԻԹ (1680)ԹՎԻՆ ՀԱՅՈՑ:

Հրատ. Շահխաթունեանց, 381 (վերջից չունի թվականի մասը): Ջալալեանց, 399 (սկզբից և վերջից չունի թվականները): Մմբատեանց, 147 (սկզբից թվականի ՌՈՁ-ի փոխարեն ունի ՌՁԾ): Քաջբերունի, անտիպ է (սկզբից չունի թվականը), տես՝ ՀՀՊՊԿԱ, ֆ. 57, ց. 1, գրքը 439, թերթ 37:

268. ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, ներսում բեմի արևմտահայաց երեսին եղել է.

ՅԻՇԵՑԻՔ Ի ՔՐԻՍՏՈՍ ՉՁՈՒՂԱՅՈՑ
ԴԱՇՏԵՑԻ ԲԱՆԴՈՒՐԻ ՈՐԴԻ ԽՕՁԱՅ
ՇԱՀՎԷԼԻՆ, ՈՐ ՇԻՆԵԱՅ ՉԲԵՄ ԵՒ
ՉԴՈՒՐՆ ՅԻՇԱՏԱԿ ՀԱՍՏՐԷՆ ՆՆՁԵՑԵ
ԼՈՅՆ, ԹՎ. ՌՃԿՁ (1717):

Հրատ. Ջալալեանց, 399 (խիստ աղավաղումներով): Մմբատեանց, 148 (որից և առնում ենք):

269. ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, տանիքի վրա՝ գմբեթից բացվող մուտքի ճակատին եղել է. ՇՆՈՐՀՕՔՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԱՌՈՒՑԱԻ ՍՈՒՐԲ ԽՈՐԱՆՍ ԱՆՈՒԱՄԲ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅՆ ԵՒ ԵՐԿՆԱՅԻՆ ՉՐԱՅՆ, ԱՂՈԹԻՔ ԵՒ ԲԱՐԵՍՕՍՈՒԹԵԱՄԲ ՍՈՅԱ ՈՂՈՐՍԵԱՅ ՏԵՐ ԱՍՏՈՒԾ ԱՆՏՕՆ ԵՒ ՎԼԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԱՅՆ, ՄԱՆԱԲԱՆԴ

ՍՈՒՐԲ ՈՒՆՏԻՍ ԱՇԽԱՏԱՒՈՐԱՅՆ, ԵՒ ՆՈՒԷՐՔ ԵՒ ԸՆԾԱՅ ԲԵՐՈՂԱՅՆ ԵՒ ՀԱՎԱՏԱՅԵԼՈՑ Ի ՅԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՂՈՒՆԻՅ ՏԵԱՌՆ ՍԻՄԵՕՆԻ ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏԵՐ ԵՐԵՄԻԱՅԻՆ, ԹՎ. ՌՃԼԷ (1688):

Հրատ. *Ջալալեանց, 399-4: Մմբատեանց, 149 (ն-րից և առնում ենք):*

270. ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, մույն մուտքի մոտ պատի վրա (այնտեղ, ուր 1680 թ. արձանագրությունն էր փորագրված) եղել է (նկ. 92).

ԵՍ ՄԵՍԵՐԵՑԻ ԱԲՐ(Ա)ՀԱՄԻ ՈՐԴԻ ՄԱՀ ՏԵՄԻ ՕՍԷՓՍ ՆՈՐՈՂԵՑԻ Ս(ՈՒՐ)Բ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾՆԱՅ ՎԱՄԼԻ ԱՌ(Ա)ՋՆ, Թ(ՎԻ)Ն ՌՄԿԱ (1812):

Հրատ. *Մմբատեանց, 147 (գրեթե անսխալ):*

Ծանոթ. *Այս արձանագրությունը այն եզակիներից է, որը պահպանվել է տեղում՝ եկեղեցու ավերակների մեջ:*

271. ՏԱՊԱՆԱՔԱՐ, գտնվել է եկեղեցու մույն կողմի պատի տակ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ. ՈՐ ԵՎ ԼԻՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԵՅՍԱՐՈՒ ՎԱՆՔԻ, ՌՄՀԱ (1822):

Հրատ. *Մմբատեանց, 147:*

272. ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՆՅԱԿՆԵՐ, գտնվում էին Մր. Աստվածածին եկեղեցու շուրջ (այժմ սրանք ևս հիմնավեր են): Մրանց որմերին եղել են.

ԵՍ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՍ ԳՐԵՑԻ Ի ՌՃԿ ԹՎ. (1711):

Հրատ. *Մմբատեանց, 149:*

273. ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՆՅԱԿՆԵՐ, նախորդի մոտ.

ՅԻՇԱՏԱԿ Է ՄԵՆԵԱԿՍ ԴԻԱՐԲԱԼԵՐԵՑԻ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՈՐԴԻ ՎԱՐԴԱՆԻՆ:

Հրատ. *Մմբատեանց, 149:*

Ծանոթ. *Ամենայն հավանականությանը փորագրվել է սենյակների շինության առթիվ և հետևաբար (համեմատելով № 272 արձանագրության հետ) կարելի է բվագրել մինչև 1711 թ.:*

274. ԴԱՐՊԱՍ, պարսպի քանդված դռան մոտ ընկած քարի վրա եղել է.

ԵՍ ՄԱՏՐԱՍՑԻ ՏԵՐ ՄԱՀԱԿԻ ՈՐԴԻ ՊԵՏՐՈՍ ՇԻՆԵՑԻ ԴԱՐՎԱԶՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՄ ԿԵՆԱԿԻՅ ՍԱՐԻԱՄԻՆ ԵՒ ԻՄ ՈՐԴՈՒ ԵՒ ԹՈՌԱՆՑ:

Հրատ. *Մմբատեանց, 150:*

275. ՄԲ. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ, գտնվում էր հիմնական հուշարձանախմբից հարավ-արևելք (մույնպես հիմնավեր է): Մրա խորանի (բեմի) արևմտահայաց երեսին փորագրված է եղել.

Ի ԹՎԻՆ ՌՃԵԿԻ (1718) ՎԵՑԻՅ ՏԱՄԱՆՑ ԵՆԹԵԿԻ, Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԷՋՄԻԱԾՆԱՅ ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, ԼՈՒՍԱՒՈՐՉԻ:

ՓՈՒՆԱՆՈՐԴԻ, ԳԱՆՉԱՍԱՐԱՅ ԱՈՒՐԲ ԱԹՈՌԻ, ՏԵԱՌՆ ԵՍԱՅԵԱՅ ԵՒ ՏԵՐ ՆԵՐՄԷՄԻ, ՅԱՅՄՄ ԵՐԿՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ, ՊՕՂՈՍ ԱՆՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՅՈՐԴՈՐԱՆՕՔ ԲԱՐԵՄԻՐԻ ԱՆՏՕՆ ԱՆՈՒՆ ՔԱՀԱՆԱՅԻ ՊԱՏՃԱՌ ԵՂԵՒ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻ, ԴԱԹԻ ՈՐԴԻ ԿԱՐԱՊԵՏԻՆ, ԻԻՐ ԿՈՂԱԿԻՅՆ ԳՈՒԼՆԱՐԻՆ, ԻԻՐԵԱՆՑ ՈՐԴՈՅՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԻՆ, ՆՈՐԱԲՈՂԲՈՋ ՊՕՂՈՍԻՆ, ԱՅԼ ՅԻՇԱՏԱԿ ԹԱԴԷՆՈՍԻՆ, ԻԻՐ ԿՈՂԱԿՑԻՆ ՍԻՄԱՅԻՆ, ՈՐԴՈՅՆ ԻԻՐԵԱՆՑ ԱՐՁԱՄԱՆ ԿՕԿՉԻՆ, ԻԻՐ ԿՈՂԱԿՑԻՆ՝ ՏԱՍՏԱԳՈՒԼԻՆ, ԵՂԻՍԱԲԵԹ ԻԻՐԵԱՆՑ ՆՈՒՆ, ԴԱՏԵՐՆ ԻԻՐԵԱՆՑ ՄԱՆԻԵԱՅԻՆ, ԾԱՂԿԵԱԼ ՈՐԴՈՅՆ ԿՈԿՃԱՅԻՆ, ԿԱՐԱՊԵՏԻՆ, ԵՒ ՍԱՐԳՍԻՆ, ՋԻ ԱՅՍ ԷՐ ԻՂՉ ՄԵՐՈՅ ՍՐՏԻՆ ԵՒ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՀԱՍՈՒՑԻՆ:

Հրատ. *Շահխաթունեանց, 381-382: Ջալալեանց, 398-399: Բարխատարեանց, 170-171: Մմբատեանց, 159: Ընդօրինակել է նաև Ջաջրբունին (անտիպ է) ՀՀՊՊԿԼ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 36 և «Շամ-Բէկզաղէ»-ն («Նոր-Դար», 1896, № 14, էջ 3):*

Ծանոթ. *Ներկայացնում ենք նշված հրատարակությունների համադրությունից ստացված արձանագրության առավել ամբողջական ու վստահելի պատկերը:*

276. ՄԲ. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ, մուտքի վրա փորագրված է եղել.

ԹՎԻՆ ՌՃԿԸ (1719) ՇԻՆԵՑԱԻ ՄԲ. ՆՇԱՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՅԻՇԱՏԱԿ ԱՄԵՆԱՅՆ ԲՐԻՍՏՈՆԷԻՅ ՆՆՋԵՑԵԼՈՅ՝ ԵԿԱՅ ԵՒ ԲՆԱԿԱՅ, ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ԵՒ ԾԵՐՈՅ ԵՒ ՏՂԱՅՈՅ, ՄԱՆԱԿՆՎ ՋՈՒՂԱՅԵՑԻ ԳԷՈՐԳԻ ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ՊԵՏՐՈՍԻՆ ԵՒ ՇԱՄԱԽԵՑԻ ՅԱԿՈԲԻ ՈՐԴԻ ԹԱՄՈՒՐԻՆ ԵՒ ՕՀԱՆԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՅՆ ԵՂԻՍԱՊԵՏԻՆ ԵՒ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՈՐԴՈՅՆ ՄԱՏԹԷՆՈՍԻՆ. ՈՎ ԸՆԹԵՐՅՕՂՔ ՅՈՐԺԱՍ ԸՆԹԵՆՆՈՒԹ ՅԻՇԵՑԵՔ Ի ՅԱՂՈԹՍ ՉԷՐ ԱՆԴՈՆ ԱՆԱՐՁԱՆ ՔԱՀԱՆԱՅՆ. ՅԻՇԵԱԼ ԼԻՋԻՔ ԱՌԱՋԻ ԱՆՍԱՀ ԳԱՌԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ԱՄԷՆ:

Հրատ. *Շահխաթունեանց, 381: Ջալալեանց, 399: Բարխատարեանց, 171: Մմբատեանց (վերջրել է Շահխաթունյանցից), 158, 161:*

Ծանոթ. *Ներկայացնում ենք նախորդ հրատարակությունների համադրմամբ:*

277. ՄԲ. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ, արևմտյան մուտքի մոտ, արտաքուստ ձախ կողմում եղել է.

ՆՈՐԱԿԱՌՈՒՑԵԱԼ ՏԱՃԱՐՍ ՄԵՍԱՐՈՒԳԻՐԻ, ՈՐ ԿՈՉԵՍՑԻ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ Է ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՍԻՐՈՅ ՅԻՇԱՏԱԿ ԲՆԱԿՉՈՒՀՈՅ ՇԱՄԱԽՈՒ ԲԱՂԱՔԻ ԱՆՆԱՅԻ, ԿՈՂԱԿՑԻ ՊԱՐՈՆ ՅՈՀԱՆՆԵՍ ԲԱԼԱՆԹԱՐԵԱՆՑԻ, ՈՒՆՏԱՒՈՐՔՆ ԵՒ ՀԱՆԴԻՊՈՂՔՆ ԹՈՂ ՄԻԱԲԵՐԱՆ ՏԱՆ ՋՈՂՈՐ-

ՄԻՍ ԲԱԼԱՆԹԱՐԵԱՆՑԻՆ, ԹՈՒԻՆ 1879,
ԱՄԻ, 29 ՕԳՈՍՏՈՍԻ, Ի ԳԻՒՂՆ ՄԷՅԱՐԻ:

Հրատ. *Մմբատեանց, 157: Առավել ամբողջական է
Քաջբերումն ընդօրինակածը, որից և առնում ենք
ՀՀՊՊԿԱ, նշվ. փաստաթուղթը, թերթ 37 (անտիպ է):*

Ծանոթ. Այս վիճագրից տեղում միայն մի փոքրիկ
բեկոր է պահպանվել, սկզբի երկու տողերի թերի մնա-
ցած արձանագրությամբ:

278. ՄԲ. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ, ներսում փորագր-
ված է եղել.

ՅԻՇԱՏԱԿ Է ԽՈՐՀՐԴԱՆՈՑՄ ՉԱԼԱՊՈՒ
ՈՐԴԻ ՂԵՒԱՆԴԻՆ ԵՒ ԻՐԻ ԿՈՂԱԿՑԻՆ
ՓԱՐՈՒՆ, ՈՐԴԻՈՅՆ ԱՔԳԱՐԻՆ, ԴԱՆԻԷ-
ԼԻՆ ԵՒ ՉԱԼԱՊԻՆ:

Հրատ. *Ջալալյանց, 399: Մմբատեանցը վերցրել է
նրանից (էջ 160): Մենք ևս առնում ենք Ջալալյանցից:*

279. ՄԲ. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ, հարավային պա-
տի վրա եղել է.

ՅԻՇԱՏԱԿ Է ԽՈՐՀՐԴԱՆՈՑՄ ԽԱՐՓԵՐԹ-
ՑԻ ԸՍԱՁԻ ՈՐԴԻ ՈՂԱՆԻՆ, ՊՕՂՈՍԻ ՈՐ-
ԴԻ ՇԱՀԻՆԻՆ ԵՒ ԻՐԵԱՆՅ ՇՆՈՂԱՅՆ
ԳՈՂԱՐԻՆ:

Հրատ. *Ջալալյանց, 399: Մրանից վերցրել է
Մմբատյանցը, 161: Մենք առնում ենք Քաջբերումն ըն-
դօրինակությունից (անտիպ է, ՀՀՊՊԿԱ, նշվ. փաստա-
թուղթը, թ. 37):*

Ծանոթ. *Ջալալյանցը «Խարփերթցի Ըսազի որդի
Ոհանին» հատվածի փոխարեն ունի «Խամփերթցի
Ռամազին որդույ Հանին» իսկ «Շահինին»-ի փոխա-
րեն «Շայնին»:*

280. ՄԲ. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ, հյուսիսային սկի-
հի պատուհանի տակ.

ՅԻՇԱՏԱԿ Է ՍՈՒՐԲ ԽՈՐՀՐԴԱՆՈՑՄ ԳՈ-
ՏՈՒ ՈՐԴՈՅ ԱՐՈՒԹԻՒՆԻՆ, ԳՈՁԱԼԻ ՈՐ-
ԴԻ ԱՐԳԱՄԻՆ:

Գրակ. *Ընդօրինակել է միայն Քաջբերումին, որից
և առնում ենք (ՀՀՊՊԿԱ, նշվ. փաստաթուղթը, թերթ 35):*

281. ՄԲ. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ, ներքուստ հյու-
սիսային պատի վրա եղել է.

ՅԻՇԱՏԱԿ Է ՍՈՒՐԲ ԱՒԱԶԱՆՍ ԻՐԻ ԵՂ
ԲԱՅՐ ՈՒՎԱԶԻՆ ԵՒ ՇՆՈՂԱՅՆ:

Գրակ. *Վերցրել ենք Քաջբերումուց (միակ ընդ-
օրինակությունն է, անտիպ): Տես՝ ՀՀՊՊԿԱ, նշվ. փաս-
տաթուղթը, թերթ 36:*

282. ՄԲ. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ, արևմտյան դռան
վրա, խաչանիշ պատկերի թևերի միջև փորագր-
ված է եղել.

ՌՃԿԸ (1719):

Գրակ. *Ընդօրինակել է միայն Քաջբերումին, որից
և առնում ենք: Տես՝ ՀՀՊՊԿԱ, նշված փաստաթուղթը,
թերթ 37:*

283. ԱՂԲՅՈՒՐ, գտնվում է Սբ. Նշան եկեղե-
ցու հարավային կողմում: Մրա ճակատին փո-
րագրված է եղել.


ՄԷՍԱՐՈՒ ԳԻՒԴԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՑԵԱԼ

ԱՂԲԻՐՍ Է ԱՆՍՈՌԱՆԱԼԻ ՄԻՐՈՅ ՅԻ-
ՇԱՏԱԿ ԲՆԱԿՉՈՒՀՈՅ ՇԱՍԱԽՈՒ ԲԱՂԱ-
ՔԻ ԱՆՆԱՅԻ, ԿՈՂԱԿԻՑ ՊՐ. ՅՈՂԱՆԵՍ
ԲԱԼԱՆԹԱՐԵԱՆՑԻ, ԹՈՒԻՆ 1879 ԱՄԻ,
29 ՕԳՈՍՏՈՍԻ, ԳԻՒՂՆ ՄԷՍԱՐԻ:

Հրատ. *Մմբատեանց, 158: Քաջբերումի (անտիպ
է), ՀՀՊՊԿԱ, նշվ. փաստաթուղթը, թերթ 37:*

284. ՏԱՊԱՆԱԲԱՐ, ուղղանկյունաձև, գտն-
վում է Սբ. Նշան եկեղեցու շուրջ տարածված գե-
րեզմանոցում (նկ. 94).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ... | ԻՍ ... ՈՐԴԻ Տ(Է)Ր
ՊԵՏՐՈՍԻՆ, ԹՎԻՆ ՌՃԽԴ (1695):



285. ԽԱՉԲԱՐ, գտնվում է գերեզմանատան
նոր մասում: Այն տեղադրված է նոր հանգուցյալի
հիշատակին՝ մեջքի վրա պատկեցված վիճակով:
Խաչքարի վերին և ստորին ծայրերում փորագր-
ված է մեկական տող արձանագրություն (նկ. 95,
95ա).

ՊԵՏՐՈՍ ԿԱԶ(ՄՈ)ՂԱՍ(ՈՒՐ)Բ Խ(Ա)Չ(Ի)Ս:



Ծանոթ. Գրչությունն ու զարդարանդակների ոճը բնորոշ է XVII-XVIII դարերին:

Մեյսարու վանքը հայտնի գրչության կենտրոն էր: Այստեղ ստեղծված բազմաթիվ ձեռագրերից մի քանիսը հասել է մինչև մեր օրերը: Գրանցից 2-ը պահպանվում են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում: Ձեռագրերից մեկը «Աւետարան» է գրված 1695 թ. Կիրակոս երեցի կողմից (ստացող՝ Սալվար),¹⁷³ իսկ մյուսը՝ «Ժողովածու» (17-րդ դար, գրիչ՝ Վլաս):¹⁷⁴

ՇԱՀՈՒՄՅԱՆԱՎԱՆ (ԽԱՆԻՇԵՆ)

Գյուղը գտնվում է շրջկենտրոնից 12 կմ հարավ-արևմուտք, մի բարձրադիր ու տեսարանավոր սարավանդին: 1851 թ. ուներ 95 բնակիչ (բոլորն էլ հայեր):¹⁷⁵ 1890-ին այն կազմում էր 210,¹⁷⁶ իսկ 1914 թ. հունվարի 1-ին 392 հայ բնակիչ:¹⁷⁷ 1986 թ. գյուղում բնակվում էին 5-6 տուն հայեր, որոնք 1988-ին բռնազաղթվեցին:



Գյուղում պահպանվել է Սբ. Հարություն եկեղեցին: Այն մեզ է հասել խիստ ձևափոխված ու վերակառուցված տեսքով: Կառուցված է անտաշ քարերով, կրաշաղախով: Անկյունաքարերը իրականացված են սրբատաշ քարերով:

Գյուղի հարավային ծայրում, թեք սարավանդին կառուցված են երեք աղբյուրներ: Գրանցից մեկն ունի թվով 4 հպակիճ արձանագրություն:

XIX-XX դարերի արձանագիր տապանաքարերով առանձանպես հարուստ է գյուղի հյուսիս-արևելյան կողմում, թեք բլրավանդին տարածված գերեզմանոցը:

286. ԱՂԲՅՈՒՐ, կառուցված է համակ սրբատաշ քարերով, ճակատին փորագրված է հետևյալ արձանագրությունը (նկ. 96).

ՉԱՅՍ ԱՂԲԻՐԻՍ ՇԻՆԵԱՅ | ՅԻՇԱՍԱԿՈՒԹԵԱՆ ԽԱՆԻՇԵՆԻՅԻ ԴԱՄԻՐՉԻ ԳՐԻԳՈՐ | ՅԱՐՈՒԹԵԱՆ, ԹԻՒՆ 1869 ԱՄԻ:

Ծանոթ. Դամուրջյանց Հարություն Գրիգորյանը (այսպես է վկայված փավերագրում) ըստ երևույթին հայրենասեր ու բարեգործ անձնավորություն էր: Գրա օգտին է խառն այն հանգամանքը, որ 1865 թ. (այսինքն՝ դեռ մինչև աղբյուրի կառուցումը) նա ձեռնամուխ է եղել

հայրենի գյուղում սեփական ծախսով եկեղեցի կառուցելու գործին (Ֆ. 56, ց. 1, գ. 4630, ք. 1):

287. ԱՂԲՅՈՒՐ, նախորդի մոտ փորագրված է (նկ. 96).

ՆՈՐՈԳԵՅ | ՋՐԻ ԱՄԲԱՐԸ ԽԱՆԻՇԵՆԱԲՆԱԿԻՉ | ՀԱՅՐԱՊԵՏ:

288. ԱՂԲՅՈՒՐ, նախորդի մոտ, երկու ծայրերում փորագրված է թերի պահպանված արձանագրություն (լրացնում է 1869 թ. արձանագրությանը):

ԿԻՆ|ՍՈՐ(Ա)Յ ԱՂԱ|ՓԻՆ:|...|ՈՐԴԻԲՆ| Ս(ՈՐԱ)Յ

289. ԱՂԲՅՈՒՐ, կից նախորդին՝ սրբատաշ այլ քարի վրա.

ԱԲԱՆԵՍԵԱՆ ԱԲԱՆԵՍԵԱՆՑԸ ԻՐԻ ՅԻՇԱՅ(Ա)ԿԻՆ, 1912 ԹԻՒՆ:

290. ՏԱՊԱՆԱԲԱՐ, ուղղանկյունաձև (նկ. 97). ԱՍՏ ՀԱՆ(Գ)ՉԻ ՍԱՐՄԻՆԸ ՇԱՀՈՒՄԵԱՆ ԳԻՒՂԱՅԻ | (ԽԱՆԻ ՇԻՆ) ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԱԼ ԵԶՄԱՆ ՍԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՍԵՎՈՒՆՑ, ԿՆԵԵԱՅ ՉԿԵԱՆՍ ԻՐԻ 70 ԱՄԱՅ ՀԱՍԱԿԻ 1857-1927, ԱՄԵՔ Ա(ՍՏՈՒԱ)Տ ՈՂՈՐՄԻ:

Ծանոթ. Տապանագիրը փաստում է, որ Խանի-շեն գյուղի վերանվանումը տեղի է ունեցել 1920-ական թթ.:

291. ԵՐԿԱԹԱՉՈՒՅԼ ԽԱՉ. ընկած է եկեղեցու պատի տակ (նկ. 98):

Երեք խաչաքների ծայրում գրված է.

«Դ.Ա.Պ.» տառերը, իսկ մեջտեղում՝ «1894»:

ՇԱՄԱԽ

Երկրամասի հիմնավորը ու զլխավոր քաղաքներից մեկն է: Ունի պատմական չափազանց հարուստ անցյալ: Այն հիշատակվում է դեռևս II դարում՝ Պտղոմեոսի կողմից՝ Սամելխիա ձևով:¹⁷⁸ Ըստ հայկական աղբյուրների՝ քաղաքը շինվել է (հավանաբար նորոգվել - Ս. Կ.) Շաք Խազրի (խազարների թագավորն էր) կողմից Աղվանից Վիրո կաթողիկոսի (595-629) գահակալության տարիներում. «Տէր վիրոյ ամս երեսուն և երեք: Սա զբազում ամս ի դիպահոջ լեալ ի դրան Խոսրովու Պարսից արքայի, և յետ մահուան նորա ազատեալ, եկն յերկիր իւր: Սա թափեաց զգերեալսն Հայոց, Վրաց և Աղուանից ի Շաքայ խազրէ, յորդոյն Ջերու խաքանայ՝ որ գերեաց զաշխարհս: Սա շինեաց քաղաքս հինգ յանուն Շաքայ՝ զՇաքառ, զՇաքմոր, զՇաքի, զՇիրուան, զՇամայիսի ...»:¹⁷⁹

Քաղաքի կառուցման վերաբերյալ ուշագրավ

173. «Ցուցակ ձեռագրաց», հ. Ա, ձեռ. № 3187:

174. Նույնի՝ հ. Բ, ձեռ. № 5997:

175. "Кавказский Календарь на 1852 г.", Тифлис, 1851, էջ 92:

176. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 139:

177. "Кавказский Календарь на 1915 г.", Тифлис, 1914, էջ 195:

178. «Ասիայի երրորդ քարտեզը» ըստ Պտղոմեոսի: Քարտեզը վերականգնել է ՀՄՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը (Հայկական Սովետական Հանրազիտարան, հատոր 9, Երևան, 1983, 416 էջից հետո ներդիր քարտեզ):

179. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությունը Կ. Ա. Մելիք Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 195:

տեղեկություններ են հաղորդում նաև օտար աղբյուրները: Դրանցից մեկում նշված է, թե այն կառուցել է իբն Շուջա Շիրվանի թագավորը՝ Հարուն իսախիֆի (786-809) օրոք:¹⁸⁰ Հետագա դարերում քաղաքը, որն ուներ վարչական կենտրոնի նշանակություն, ընկել է օտար տիրապետողների լծի տակ: Այն նվաճել են արաբները, պարսիկները (որչ երկրամասի հետ մեկտեղ), մոնղոլ-թաթարները:

Վերջիններիս կողմից քաղաքի պաշարման ժամանակ 1220-1221թթ. քաղաքաբնակները ուժեղ դիմադրություն են ցույց տվել. «Երբ թաթարները վրաց (քուրջեր) երկրից վերադարձան, դիմեցին Դարբանդ-Շիրուան, պաշարեցին Շամախի քաղաքը, կովի բովեցին բնակիչների հետ, որոնք համար կերպով դիմացան պաշարմանը: Մակայն թաթարները աստիճաններով բարձրացան պարիսպը: Ասվում է նաև, որ նրանք հավաքեցին ուխտերի, կովերի, ոչխարների և մեռածների դիակներ թե իրենցից, թե ուրիշներից և այս բոլորը իրար վրա զցելով ստեղծվեց մի բլուր, որի վրա բարձրանալով քաղաքի վրա տիրապետող դիրք ունեցան: Կովեցին բնակիչների հետ, սակայն սրանք դիմացան, և երեք օր սաստիկ կռիվ եղավ: Երբ արդեն քիչ էր մնացել, որ [թաթարները] գրավեին, նրանք իրար ասացին՝ սրից ազատում չկա, ուստի ավելի լավ է համբերել ու պատվով մեռնել: Այդ գիշեր նրանք դիմացան: Գիշերը դիակները նեխեցին ու [կույտը] նստեց և թաթարները այլևս պարսպի դիմաց բարձր դիրք չունեին և ոչ էլ գերակշռություն կովի մեջ: Մակայն նրանք կրկին գրոհեցին և սկսեցին կովել: Բնակիչները հոգնած, ուժասպառ ու թուլացած էին, ուստի ընկճվեցին, իսկ թաթարները գրավեցին քաղաքը, շատերին կոտորեցին, ունեցվածքը կողոպտեցին և այլանդակություններ գործեցին»:¹⁸¹

Շամախին հայաշատ է եղել հնագույն ժամանակներից, իսկ միջնադարում նրանք կազմում էին քաղաքի ամբողջ բնակչության ճնշող մեծամասնությունը: Շամախին ծննդավայր էր ժամանակի մի շարք հայ ազդեցիկ մտավորականների: Հայտնի է, որ Գրիգոր Տաթևացու (1346-1409) 12 աշակերտներից մեկը շամախեցի էր. «... Յունան ի Շամախու ...»:¹⁸² Քաղաքի բնակչության ազգային կազմի վերաբերյալ առաջին տեղեկություններին հանդիպում ենք XV դարի աղբյուրներում: Դրանցում վկայված է այն իրողությունը, որ ստվար հայ բնակչություն ուներ ոչ միայն Շամախի քաղաքը, այլ նաև շրջակա գավառները:¹⁸³

Իտալացի ճանապարհորդ Ջոզեֆա Բարբարոյի 1471-1478 թթ. կատարած ուղևորության նկարագրություններում կարդում ենք. «... Շամախի, մի քաղաք Մարաստանում, Թեցիքիայի սահմաններում, որի իշխանը կոչվում է Շիրվան Շահ, որ քաղաքը ի պահանջել հարկին կարող է տալ ինչը եւ տասը հազար ծխավոր: Գտնվում է դեպի Բագվի ծովը վեց օրվան ճանապարհի հեռու, ...: Այս շատ լավ քաղաք է, ունի չորս հազարից հինգ հազար տուն, եւ շինում է մետաքս, կտավ եւ ուրիշ բաներ իրենց եղանակով: Գտնվում է Մեծ Հայաստանում,¹⁸⁴ եւ բնակիչների մեծ մասը հայ են»:¹⁸⁵ 1488 թ. կարմրագույն սոֆիները (դարափափախ) հարձակվում են Շամախու վրա եւ խաբեությանը զրավում այն. «Որ եւ ժողովեաց յայսմ ամի արս իբրև ԽՌ- (40000), եւ զնացեալ խաբեությանը եմուտ ի Շամախի, եւ զամենեսեսան, որ ի ձեռն էած ի քրիստոնէից եւ ի տաճկաց՝ զարս եւ զկանայս սրով կոտորեաց, եւ զքաղաքն ամենայն հրով այրեաց ...»:¹⁸⁶ 1500-1501 թթ. Շամախին գրավել են պարսիկները. «Ռ-Շ (1500) քվին Մովին Շամախի էառ, զՇրվանշէն սպանեց»:¹⁸⁷ Ուշագրավ է նշված դեպքերին արձագանքած հետևյալ հիշատակությունը. «Յայսմ ամի, որ էր թուականն Հայոց ՋՇ (1501) եղև բազում ոճիր պատերազմի, զի դարձեալ գորացան ազգն Դանիշմանաց, որ Իմամայիբ կոչին, ի յաշխարհէն Արտաիլու, որ Կարմիր զլուխ Սօֆիբ [կոչին]: Եւ ելեալ բազում զօրօք յարևելից եւ եկեալ մտին յԵկեղեաց գաւառն, որ է Եզրնկայն եւ մնացին ի Վարդավաւտն մինչ ի յաշուն: Եւ անտի ելեալ դիմեցին դարձեալ յարևելս ի յաշխարհն Ադուանից, որ է Շաք եւ Շամախի եւ առին զթագաւորն, եւ զեկելիրն եւ բազում արարարին, եւ թագաւորեցին, եւ նստան բոլոր տարի մի»:¹⁸⁸ 1529 թ. քաղաքը ենթարկվում է նոր ավերածության «... եւ յետ ժամանակաց Տէրն Շամբարայ, այսինքն Շամախու ըմբռնէ զորդին Սքանդարայ, եւ կապանօք յղէ առ Շահուլին: Ուստի զայրացեալ Սքանդարն զօրս ժողովէ, եւ զնացեալ աւերէ զաշխարհն Շամախու, եւ մտեալ ի Շամբար զբազում ոգիս սրախողորս առնէ, տինա 360 մօլայից զզլուխս հատալն»:¹⁸⁹

180. «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին» կազմեց՝ Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 181-182:

181. Իբն Ալ-Ասիր, արաբական աղբյուրներ Բ, քարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Վանդյանի, Երևան, 1981 էջ 304-305:

182. «Մանր ժամանակագրություններ», կազմեց՝ Վ. Հակոբյան, հատոր Բ, Երևան, 1956 էջ 352 (այսուհետև մեջբերումներ կատարելիս նշելու ենք ՄԺԲ, համապատասխան էջերով):

183. Ըստ երկրամասում պահպանված նյութական մշակույթի հուշարձանների՝ ենթադրելի է, որ ավելի վաղ ժամանակներում էլ այդպես է եղել, միայն թե ձեռքի տակ չունենք գրավոր տեղեկություններ:

185. Հովի. Հակոբյան, Ուղեգրություններ, հատոր Ա, Երևան, 1932, էջ 199:

186. «Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ», մասն Գ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 107 (այսուհետև մեջբերումներ անելիս նշելու ենք ԺԵԳ, համապատասխան էջերով):

187. Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատոր Ա, Երևան, 1951, էջ 195 (այսուհետև՝ ՄԺԱ, համապատասխան էջերով):

188. ՄԺԱ, էջ 126:

189. Խաչատուր արեղայի Չուրայեցուց, Պատմութիւն Պարսից (ԺԸ դար), աշխատութեամբ Բարբեկ վարդապետի Աղաւելեանց, Վաղարշապատ, 1905, էջ 89:

1541 թ. Շամախին գրավել է պարսից Շահ Թահմազը. «Շահ Թահմազ, որդի շահ Իսմայիլին նստալ քախտ քվին ՋՀԵ (1526): Եւ քվին ՋՂՕ (1541) զնաց էառ Երևան, Գանջայ, Շամախի, ...»: ¹⁹⁰ XVI դարի 2-րդ կեսում, ինչպես վկայում են աղբյուրները, Շամախին բավական տուժել էր արշավանքներից և կիսավեր վիճակում էր, սակայն դարձյալ ուներ հոծ հայ բնակչություն, որոնք կազմում էին քաղաքաբնակների մեծամասնությունը: Այս մասին ուշագրավ է անգլիացի ճանապարհորդ Անթոնի Ջենքինսընի 1557-1572 թթ. կատարած ուղևորությունից հետևյալ հատվածը. «... այս քաղաքը (Շամախին - Ս. Կ.) ծովից ուխտով յոթը օրվան ճանապարհի հեռու է, բայց հիմա շատ ավերակ է, բնակված գլխավորապես հայերից ...»: ¹⁹¹ 1578 թ. պարսից շահ Խուդաբանդայի ¹⁹² օրոք Անդրկովկաս ներխուժած օսմանցիները գրավել են նաև Շամախին. «Ռիէ (1578) քվին Լալա փաշեն զՇամախի էառ»: ¹⁹³ Շամախին օսմանցիների կողմից նոր ավերման ենթարկվեց նաև 1580 թ. «Օսմանցուց քազաուր սուլթան Մուրատ, որդի Մելիմին. սերասերը սորա առին զՆախչվան, և միս ամին էառ զՏեմուր-Ղափուս, և զբազում զօրս առաքեաց աշխարհն Պարսին և էառ զԹեվրիզ, զԵրևան, և զԿենճե և զԱրաշ և զՇամախի. զՇրվան մինչ ի Թիֆլիս ...»: ¹⁹⁴ 1583 թ. ձեռնարկվում է Շամախու բերդի կառուցումը: Այդ աշխատանքները ավարտվում են 45 օրվա ընթացքում: Երկու տարի անց քաղաքը կրկին ավերվում է օսմանյան Օսման փաշայի գլխավորությամբ. «Ի քվին ՌԼԳ (1585) Օսման փաշան անթիս հեծելը զնաց խառ ... և տիրեց ... զՇիրան, զՇամախի ...»: ¹⁹⁵ Միայն XVII դարի սկզբներին պարսիկները ի վիճակի եղան լուրջ դիմադրություն ցույց տալ թուրքերին և 1607 թ. վերագրավեցին այն. «... ապա առեալ զամենայն զօրս իր զնաց ի վերայ Շամախու՝ և նստալ ի վերայ բերդին, շրջապատեալ և պաշարեալ զնա: Եւ որպէս պատմեցաք վասն Գանջայոյ՝ նովին օրինակալ պատերազմեալ ընդ Շամախույ էառ զնա յՕսմանցուց: Եւ զօրսն Օսմանցուց սրով կտորեաց. և զընտանիս զինչ աւարեալ յափշտակեաց: Եւ կարգեաց ի նմա իշխան զՉիֆիդար խանն, ...»: ¹⁹⁶ 1663 թ-ից Շամախու խան է հիշվում նախկինում Երևանի խան՝ Նաջաֆդուլին. «Յամի Ռ-ճԺԲ (1663) որ Նաջաֆդուլի խանն Երևանայ մագուլ ելալ, տարան Շամախի, խանութին տվին»: ¹⁹⁷ Մա մահացել է 1667 թ.: 1668 թ.

Շամախին մեծապես տուժել է ուժեղ երկրաշարժից: Աղբյուրները հայտնում են, որ արհավիրքը փլատակների տակ էր թողել 6-7 հազար բնակիչների. «Թվին Ռ-ճԺԵ յունվարի դ (4) ումն Ազովիս կամաց շարժ եկաւ: Այս շարժս էլ յունվարի դ (4) ումն Շամախի քաղաքն յենց եկաւ, որ մինչի գ, էո հոգի մեռան: Շատ սարայ, բերք ու պարիսպ փլաւ, վասն մեղաց մերոց»: ¹⁹⁸

Երկրաշարժի հետևանքների մասին հայտնի են նաև այլ վկայություններ. «Իսկ Շամախի քաղաքն հիմն ի վեր լեալ ամենեւին տապալեցաւ, որ բնաւին ոչ մնաց շինուածք և անթիս մարդիկը մեռան, զորոց զքին սատուած միայն գիտէ»: ¹⁹⁹ Կամ. «Ի-արձեալ Ռ-ճԺԵ (1668) յաուր նաւակատեաց Յայտնութեան տեառն մերոյ ի լուսանալ առաւօտին, որ յասելն փառք ի բարձունս, ահագին որոտմամբ և սաչին զողաց երկիրն Շամախու, Գանճայու և Թիլիսու և Երևանա: Ապա ումնեք երկրի վնաս ոչ եղև, բայց միայն Շամախու, տեսցուց եղբայրք և զգոշացուրք, որպէս ասէն մարգարէն՝ «ո հայի երկիր և տա զողալ սմա» և այլն. զի եղև յայտնի և մեծ հրաշք, որ աղօթից զօրութիւնն ցուցալ յայտնապէս, զի որչափ ժողովուրդ, որ կային ի Շամախոյ քաղաքին յեկեղեցին բնաւին ոչ քար մի անկալ, ոչ Ա (1) մարդոյ զարար եղև, այլ արտաքոյ եղեալքն ընդ հողով կորեան և կործանեցան»: ²⁰⁰ Կամ. «Ռ-ճԺԵ (1668) ին շ(ա)րժ եղև և Շ(ա)մ(ա)խի խոր զնաց»: ²⁰¹

XVIII դարի սկզբներից սկսած հաճախակի են դառնում լեռնաբնակ լեզգիների ²⁰² ասպատակությունները: 1720 թ. ամռանը ²⁰³ լեզգիները հարձակվում են քաղաքի վրա, ութ օր պաշարած դրությամբ պահում այն, կռվում, սակայն գրավել չեն կարողանում. «... ի Ռ-ճԻԱ (1722) թուին օգոստոսի տասն, զրոն տունալ առհասարակ միահաղոյն ազգս այս Լակզիք, որ ամենայն գլխատրօք իւրեանց որք էին այտքիկ, ... ամենայն զօրութեամբ իւրեանց եկին ի վերայ քաղաքին Շամախու, և յաւուրս ութ սաստիկ կոտուցան, և ոչ կարացին առնուլ»: ²⁰⁴

Ապա լեզգիները մի գիշերվա մեջ հանկարծակի թողնում են պաշարումը և վերադառնում իրենց երկիրը: Օգովելով առիթից «Եւ ապա քաղաքացիքն Շամախու սկսան ամբացուցանել զկողմանս քաղաքին ցանկովք խորագունիք, և շրջապատ որմովք»: ²⁰⁵ Հաջորդ՝ 1721 թ. Շամախին ենթարկվում է լեզգիների նոր հարձակման. «Ի-արձեալ ի սոյն քվին (1721-Ս. Կ.) և օգոստոսի ամսոյն

190. ՄԺԲ, էջ 427:

191. Հովհ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 372:

192. «Շահ Խուդաբանդայ, որ էր որդի շահ Թահմազին և եղբայր շահ Իսմայիլին ... նստալ քախտ քվին ռիէ (1578): ... ի սորայ ժամանակս առին Օսմանցիք զԹաւրիզ, զԵրևան, Գանջայ, Շամախի» (ՄԺԲ, էջ 428):

193. ՄԺԱ, էջ 145:

194. ՄԺԲ, էջ 516:

195. ՄԺԱ, էջ 173:

196. Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղաշապատ, 1896, էջ 97: Տես նաև՝ ՄԺԱ, էջ 145: Խաչատուր արեղայի Ջուղայեցուց, Պատմութիւն Պարսից, էջ 126:

197. Ջաբարիա Ազովեցու օրագրությունը, Երևան, 1938, էջ 62:

198. Նշվ. աշխ., էջ 74:

199. ՄԺԱ, էջ 251:

200. ՄԺԱ, էջ 243-244:

201. ՄԺԲ, էջ 272:

202. Վերջիններս սյունի մահմեդականներ էին, իսկ քաղաքաբնակ մահմեդականները՝ շիա պարսիկներ էին:

203. Պատմիչը քվականը նշել է Ռ-ճԼԱ (1722), սակայն միաժամանակ նշել, որ դեպքերը տեղի են ունեցել լեզգիների կողմից Շամախու գրավումից (1721) մեկ տարի առաջ, օգոստոս ամսին:

204. Եսայի Հասան Ջալալեանց, Պատմութիւն Համառօտ Աղուանից երկրի, Յերուսաղէմ, 1868, էջ 30-31:

205. Նշվ. աշխ., էջ 31:

Կովկաս լեռնային բնակեալ Լազգիքն եկեալք առին զքաղաքն Շամախի եւ ամենայն Պարսիկքն սուր սուսերի մաշեցին եւ ամենայն մերձակայ գաւառս՝ եթէ Շաքի, Շրվան եւ Ղարալայ աւարի առեալ, քանդեալ քայքայեցին, որ է այժմ այս պէս»։²⁰⁶ Դեպքերն ավելի հանգամանորեն են նկարագրված Եսայի կաթողիկոսի պատմության մեջ. «Կարծեալ եկին վերոյ յիշեալ լեռնականքն քանգաւառսցինն յոյժ ամբոխիւք, եւ պատերազմեցան ուժգնութեամբ զաւուրս երկոտասան, եւ սպա առին զքաղաքն Շամախի ի Ռճճ թուին Հայոց, օգոստոս ամսոյ, ի սուրբ Աստուածածնի պահոցն, յաւուր չորեքշաբթի»։²⁰⁷ Լեզգիները ոչնչացնում են շիա մահմեդականներին. «Իսկ հայ ազգ քրիստոնեայքն թէ բնակիչք քաղաքին, եւ թէ այլ զիւղօրէից՝ ոչ այնքան վնասեցան կոտորմամբ, այլ սակաւ ոմանք. զի խնայեցին ի նոսա ողորմութեամբն Քրիստոսի. այլ աւարումն ընչիցն ոչ սակաւ եղեւ»։²⁰⁸ 1734 թ. քաղաքը նվաճում է պարսից Նադիր շահը եւ մեծ թվով գերիներ վերցնում քրիստոնյաներից։²⁰⁹

Մնացած փոքրաթիվ քաղաքաբնակ հայության համար 1735 թ. Աբրահամ կաթողիկոսը պարսից կառավարությունից թույլտվություն է ստանում ավերակ Շամախու մոտ, Գյուլիստան բերդից մեկ ժամվա ճանապարհ հեռու նոր բնակավայր հիմնել. «Այլ և վասն բնակութեան, զի զՇամախին ավերեալ էր եւ քակեալ զՎալիմամաքն, յորժամ էառ՝ յառաջ քան զգայն ի Կենճէ, եւ Ը (8) ժամու ճանապարհ հեռու ի Շամախուցն հողէ բերդ մի շինեալ, հրամայեաց զմնացեալ շամախեցիքն անդ բնակեցուցանել։ Եւ զի էր օղն ապականեալ, եւ տեղն՝ շոդային եւ ջուրն՝ պակաս եւ տաճկունք, որք են լազկիք եւ սյուննիք, վշտացուցանէին եւ նեղացուցանէին զառապեալսն, այսինքն՝ զազգն մեր, վասն որոյ խնդրեցին բազում անգամ կրկին բնակիլ ի արեւել Շամախու քաղաքն, որ եւ բարկացեալ՝ իսպառ քանդեաց։ Վասն որոյ անճարացեալ եկին առ իս աղերս։ Որ եւ ես սրտապնդեալ արգ արարի մեծի Վալիմամաքին եւ խնդրեցի ի մմանէ տալ հրաման՝ շամախեցի հայոց արտաքոյ նոր շինած բերդին, ժամու մի ճանապարհ իեռի ի բերդէն, ի տեղի մի վայելուչ, զոր նոքա խնդրեցին, զի շինեսցեն վասն իրեանց բնակութիւն, եւ՝ հող ըստ պիտոյից զի տնկեսցեն այգիս եւ արացեն արտս։ Այլ եւ ի գետոյն, զոր գտանիր արդ մերձ, առու մի ջուր, զի առոգանիցի գեղն եւ արտորայքն եւ այգիքն իրանց։ Այլև՝ շինելոյ եկեղեցի մի, զի անհնար է հայոց ազգին առանց եկեղեցի(ւ)ոյ բնակիլ է տեղի մի՝ թեև դրախտ իցէ»։²¹⁰ Նադիր շահի մահից հետո (1747) հայերը թողնում են իրենց նորաստեղծ բնակավայրը և վերստին հաստատվում Շամախում 1750 թ.։ 1752 թ. քաղաքին կրկին տիրում են լեզգիները։²¹¹

206. ՄԺԲ, էջ 430:
207. Եսայի Հասան Ճալալեանց, նշվ. աշխ., էջ 31-32:
208. Նշվ. աշխ., էջ 33:
209. Աբրահամ կաթողիկոսի Կրետացոյ Պատմագրութիւն անցիցն իրոց եւ Նատր-շահին պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 58: Տես նաև՝ Մ. Բարխուսարեանց, Աղոտանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 157:
210. Աբրահամ կաթողիկոսի Կրետացոյ Պատմագրութիւն ..., էջ:
211. Խաչատուր արեղայի Ջուղայեցոց, Պատմութիւն պարսից, էջ 287-288:

XVIII դարի վերջերին որոշ խանություններ և առաջին հերթին Շամախու Մուստաֆա խանը ոչ միայն չենթարկվեց պարսից կառավարությանը, այլև սպաստամբություն բարձրացրեց. «... եւ միայն Շամախի էր ի միջի անդ ապստամբ։ Վասնորոյ առաքեաց Աղայ Մահմատ խանն զքաջ զօրավարին իր գեներալայի խանն բազում զերկիրն եւ պատեալ պաշարեաց զամբոցն՝ ուր էին արգելեալ ինքն նախարարն Շամախոյ»։²¹²

Նույն թվականին Շամախի են մտնում ռուսական զորքերը։ «Նսանն Մատաւայ լմացեալ (գեներալ Ջուրովի գալու մասին - Մ. Կ.) առաքէ գաւառջնորդն հայոց գՅօհան վարդապետն միջնորդ հաշտութեան առ Ջուրովն բարեխօս ունելով զբարձր սրբազան Յովսէփ արքեպիսկոպոսն Արդուբեան զգերեալն ընդ մեծին Ջուրովայ հրամանալ քագուհոյն։ Ջուրով խոնարհի ի հաշտութիւն, բայց խնդրէ գյուսալի պատանդ խանն Մաղաւեայ տհաճեալ ընդ այս փախչի ի Ղարաբաղ, իսկ եղբայր նորա տայ զորդին իր ի պատանդ եւ ինքն գրաւեալ զպատի խանութեան նստի ի Շրուան ...»։²¹³ Ջուրովի վերադարձից հետո Մուստաֆա խանը կրկին վերադառնում է Շամախի, հալածում խան հոչակված ու Շիրվանը կամավոր ռուսներին հանձնած իր եղբորը, ինչպես նաև Հովհան վարդապետին, որը իր միջնորդությամբ կարգավորել էր Շիրվանը Ռուսաստանին առանց կովի միացնելու հարցը. «... գՅօհան վարդապետն որպէս խանկարիչ այր միջնորդութեան չարաչար տանջէ եւ բրածծե՛ծ առնէ եւ առեալ ի նմանէ գտոյժս շնորհէ զկեանս եւ յինքն գրաւեալ դարձեալ զխանութիւն այնր աշխարհի (Շիրվանի-Մ. Կ.), բարեկարգէ գտուն եւ զհայսն միշտ պահէ ի խաղաղութեան»։²¹⁴ XIX դարի առաջին քառորդում Մուստաֆա խանը հայերին փոխադրում է քաղաքից հյուսիսարևմուտք, Կովկասի ֆիթ կոչված լեռան մոտ։ Տարաբախտ հայերը այստեղ բնակվում են մինչև ռուսների կողմից Շամախու վերջնական գրավումը (1805) և խանի Պարսկաստան փախչելը (1818)։²¹⁵ Դրանից հետո, մի վերջին անգամ, արդեն խիստ սակավաթիվ շամախաբնակ հայերը վերադառնում են հայրենի քաղաք։ Շամախու և ամբողջ Շիրվանի ռուսական տիրապետության տակ անցնելուն պես (1805 թ., դեկտեմբերի 27) հայերն անցնում են խաղաղ ստեղծագործ աշխատանքի։ Կառուցում են բազմաթիվ քարաշէն հասարակական շէնքեր, աղբյուրներ, կամուրջներ, տներ, նորոգում են հին եկեղեցիներ, կառուցում նորերը։ Յարական կառավարության նախաձեռնությամբ իրականացված արդեն առաջին վիճակագրական տեղեկություններից պարզվում է, որ XIX դարի կեսերին քաղաքում հայերը կազմում էին բնակչության փոքր մասը։

212. Հայկական աղբյուրները Աղայ Մոհամադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, աշխատասիրությամբ Ռ. Տ. Տիտանյանի, Երևան, 1981, էջ 68-69:
213. Նշվ. աշխ., էջ 160-161:
214. Նշվ. աշխ., էջ 162:
215. Մ. Մնբատեանց, նշվ. աշխ., էջ 332:

Մա, ինչ խոսք, բնական էր, քանի որ հայերի թիվը սկսել էր նվազել դեռևս XVIII դարի սկզբներից՝ լեզգիների արշավանքների հետևանքով: Հինավուրց հայաշեն ու հայաշատ այս քաղաքը դառնալով անընդհատ պատերազմների թատերաբեմ, տալով արտագաղթ, անթիվ գերիներ, կոտորածներ, ենթարկվելով տեղի իշխողների կազմակերպած բռնի տեղահանություններին ի վերջո մեծապես հայաթափ է եղել: Մյուս կողմից կամաց կամաց ավելանում էր մահմեդական տարրը, որը հարյուրամյակներ շարունակ թիկունքում վայելում էր մահմեդական իշխողների հովանավորությունը: Տարածքի Ռուսաստանի հետ միավորվելուց հետո քաղաքում երևան եկավ նաև ռուս ազգաբնակչություն: Այսպես, 1851 թ. Շամախու բնակչությունն ուներ հետևյալ ազգային կազմը:²¹⁶

Մուսուլմաններ (գլխավորապես պարսիկներ)	արական	իգական	միասին
Հայեր (ռասափորչական)	6256	5492	11748
Հայեր (լուսինական)	3287	2951	6238
Հայեր (լուսինական)	11	13	24
Ռուսներ (ուղղափառներ)	1276	309	1585
Մալականներ, այդ թվում՝	276	212	488
Մտառորարյոց (հնածես)	3		3
Սկոպցով	96	38	134
Վրացիներ	67	43	110
Եվրոպացիներ (կաթոլիկ)	25	15	40
Հրեաներ	10	6	16

1916թ. քաղաքն ուներ 27752 բնակիչ, որից 4564-ը հայեր (2344 արական, 2220 իգական), 1737-ը ռուսներ:²¹⁷

1883 թ. քաղաքում կար 3 ուղղափառ եկեղեցի, 2 հայկական եկեղեցի և 2 մզկիթ:²¹⁸ 1890-ական թթ. սկզբներին Շամախին ուներ հետևյալ նկարագիրը. «Շամախի քաղաքը առանձին բերք ու պտուղ չունի բոլորը շրջակա գիւղերից, եւ առանելապես Աղսու գիւղիցն են բերում. որովհետև իբրեւ իբր թէ ազնի քաղաքացիք արժան չեն համարում այգեգործությանը եւ երկրագործությանը պարապել: Շամախու շրջապատում կան միայն մի քանի այգիներ, որոնց մէջ նշանաւոր է արքունի ճանապարհի վրայ պարոն Եագոր Իւանիչ Քալանթարեանցի այգին, Շամախու նշանաւոր եւ յայտնի արհեստն է մետաքսագործութիւնը, որոյ համար կան արհեստանոցներ՝ բայց ասիական հին ձեւով. սակայն բաւական լաւ գործուածներ են պատրաստում, գոր օրինակ՝ թաշկինակ, վերմակի երես, պարանոցապահ (շարֆ-վզի) եւ այլն:

216. "Кавказский Календарь на 1852г.," Тифлис, 1851, էջ 429:

217. "Кавказский Календарь на 1917г.," Тифлис, 1916, էջ 178-179:

218. "Кавказский Календарь на 1885г.," Тифлис, 1884, էջ 211:

Շամախու քաղաքական բերքերն են՝ 1. Հայոց և Ռուսաց եկեղեցիքն. 2. Հայոց և Ռուսաց տղայոց ուսումնարաններն. 3. Հայոց օրիորդաց դպրոցն. 4. Հայոց գրադարան-ընթերցարանն և 5. Հայոց թատրոնը:²¹⁹ Հայտնի է, որ օրիորդաց ուսումնարանը երկդասյան էր և կոչվում էր Մթ. Մանդխտյան:²²⁰ Ուշագրավ է նաև քաղաքին վերաբերող մեկ այլ առավել հանգամանակից նկարագրություն շարադրված 1920թ. «Ներքին, հարաւային հարթ հրապարակի վերայ սփռուած է թաթարների թաղը իրենց տներով, խաչաձև փողոցներով, մէջիղներով, աղբիւրներով, բաղնիքներով, պարտեզներով, կաշէ-գործական գործարաններով (տաբադխանա) եւ քաղաքի գլխատըր բազարով եւ առևտրական խանութներով ու մազազիններով:

Այնուհետև դեպի վեր, լանջի վերայ շարունակում են քաղաքի հայկական թաղը եւ բազարի մի մասը իրենց տներով, փողոցներով, աղբիւրներով եւ այլն:

Իսկ վերի՝ երկրորդ հարթավայրի վերայ տարածուած է քաղաքի նոր մասը, աւելի գեղեցիկ եւ կանոնաւոր մասը, հայոց եւ խառն ռուսների հետ քրիստոնէայ թաղը, լայն՝ խաչաձև փողոցներով: Այդտեղ են ռուս ուղղափառ եկեղեցին, հայոց եկեղեցին, հայ լիւտերականաց և ռուս մալականների ժողովարանները, քաղաքի այգին, պետական գանձարանը, բանտը, հասարակաց կուրը, պետական վատողատունը, պոստ-հեռագրատունը, գորանոցը, հաշտարար դատարանը և այլ հիմնարկութիւնները:

Քաղաքի բոլոր փողոցները ծածկուած են քարով, միայն մի փողոց խճածածկ է և համարում է առաջին փողոց, և նա սկիզբն է Շամախի-Աղսու-Քիւրտամիր խճուղու:

Նոր քաղաքն են հայ եւ ռուս բնակչութեանց աչքի ընկնող տները. գոր օրինակ հանգուցեալ Ալեքսանդր Լալայեվի տունը իւր պարտեզով, որ խիստ բարձրությունից նայում է ներքի բազարի՝ թաթարների թաղի և մէջիղների վերայ: Նա շինած է տերութեան կողմից Շամախին նահանգական քաղաք եղած շրջանում և այդ տան մէջ բնակում էր նահանգապետը: Հայոց եկեղեցուց քիչ ցած բարձրանում է Նազարեանների եռայարկ սրբատաշ ամուր տունը, որ իրեն գոյութիւնը անսասան պահել է երկրաշարժերի դէմ:

Ապա գալիս են խճածածկ փողոցի վերայ Քալանթարեանների երկյարկանի քարաշեն տունը, Մարգսեանի և այլոց տները: Միս փողոցների վերայ Տեր-Ստեփանեանի, Արզումանեանի, Եգանեանի, Գեանջեցեանի և այլոց բազմաթիվ տները:

Ապա գալիս են փողոցների վերայ հայոց խանութներ: ... Տեղում բոլոր աղբիւրներից անուանի է քարաշեն, ծորակահոս Բչարա բուլաղը, հայոց թաղի բարձրադիր հարթութեան վերայ: Մա շատ յարգի է և ծառայում է իբրև գրոսավայր, մանաւանդ շոգ եղանակների ժամանակ: Երբեմն լինում է մեծ բազմութիւն, մանաւանդ մայիսին, գատկին և

219. Մ. Մմբատեանց, նշվ. աշխ., էջ 281:

220. Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր ..., էջ 162:

Համբարձմանը:

Միսն է նորաշեն քարաշեն բանտի աղբիւր կոչուած, քաղաքին բոլորովին մոտիկ, կալանատուր-ների բանտի կողքին: Ուրիշ շատ տեղ կան աղ-բիւրներ, բայց շատերը շինուած չեն, ծորակ չու-նին, անյարմար են»:²²¹

Շամախին գտնվում է ակտիվ սեյսմիկ շրջա-նում և բազմիցս վնասվել է ուժեղ երկրաշարժերից: Հայտնի են 1668, 1806, 1828, 1859, 1869, 1872, 1875, 1886, 1888, 1902 թվականների ուժեղ երկրա-շարժերը: Քաղաքն առանձնապես սուժել էր 1828 թ. հուլիսի 9-ի և 28-ի ուժեղ շարժից, որով փլվել են 247 տուն և 30 խանութ:²²² 1869 թ. օգոստոսի 21-ի կեսօրին տեղի ունեցած երկրաշարժից փլվել է 5000 տուն:²²³ Աղետարեր էր մասնավաճող 1902 թ. հուն-վարի 31-ի երկրաշարժը,²²⁴ որը խլեց շատ զոհեր:

Շամախու ճարտարապետական արժեքավոր կառույցներից էին հայկական երկու եկեղեցիները (ներկայումս հիմքից քանդված են և տեղերում նոր շենքեր կառուցված): Մրանք հանձինս որմերին փորագրված մի քանի ընդարձակ արձանագրու-թյունների ունեին նաև պատմական մեծ արժեք և կարևոր էին քաղաքի պատմության ամբողջական ուսումնասիրության առումով: Եկեղեցիներից հինը, որն առավել հարուստ էր արձանագրություններով պարբերաբար կրկնված երկրաշարժերի հետևան-քով մեծապես վնասվել էր և արդեն 1881 թվակա-նից դարձել անգործածելի: Ըստ արձանագրու-թյունների այն կառուցվել էր 1701 թ. ավելի հին եկե-ղեցու տեղում և մասամբ նրա քարերով:

Նոր եկեղեցին, որ նույնպես կոչվում էր Սբ. Աստվածածին, կառուցվել է 1845-1850 թթ. ընթաց-քում:



Շամախի քաղաքի եկեղեցիներում ու դպ-րատներում ստեղծվել են բազմաթիվ ձեռագրեր: Դրանցից մեզ են հասել Մարտիրոս գրչի 1742 թ. ստեղծած «ժողովածու»-ն,²²⁵ գրիչ և քարգմանիչ Հաքիմ Շաղուպ Բարբիջանի 1717-1720 թթ. հայա-տառ-պարսկերեն գրված «Անետարան»-ը,²²⁶ «Աղօ-թագիրք» 1765 թ. (ստացող Անտոն երեց, ավարտել

է Սաղիանի վանքում)²²⁷ և այլն:²²⁸

Շամախին ունեցել է երեք հայկական գերեզմա-նոցներ. «մինը քաղաքի արեւելեան կողմին՝ կից քաղաքին՝ շատ հին. երկրորդը քաղաքի հիւսիսա-յին՝ շատ նոր, որոյ մօտ է «Բէչարայ բուլաղ» անու-նով աղբիւրը. իսկ երրորդը 3-4 հարիւր տարուա-նից՝ հարաւային կողմումն՝ «Քալախանի» անո-ւամբ, ...»:²²⁹ Մեզ է հասել միայն մեկը (հյուսիսա-յին կողմում), ուր և թաղումները շարունակվում էին մինչև 1989 թ. վերջին հայերի բռնազաղթը:



Ներկայումս Շամախին Ադրբեջանի հանրա-պետության գլխավոր քաղաքներից է: 1976 թ. ուներ 20 հազար բնակիչ:²³⁰

1986 թ. քաղաքն ուներ ընդամենը 60 տուն (շուրջ 200 մարդ) հայ բնակչություն, որոնք 1988-89-ին ենթարկվեցին բռնազաղթի:

Շամախին ծննդավայր է հայ մեծամուն շատ մտավորականների: Այստեղ են ծնվել գրողներ Կոստան Չարյանը, Ալեքսանդր Շիրվանզադեն, դերասան Հովհաննես Աբեյյանը և շատ ուրիշներ:

292. ՀԻՆ ԵԿԵՂԵՑԻ, մուտքի ճակատին եղել է. Ի ՌՃԾ (1701) ԹՎԻՆ ՀԱՅՈՑ. Ի ԺԱՄԱՆԱԿԱՍ ԸԱՀ ՍՈՒԼԹԱՆ ՀՈՒՄԵԻՆ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՐՔԱՅԻՆ ՊԱՐՄԻՑ, ՈՐ ԵՒ ԸՍՏ ԽՆԴՐՈՅ ԹԻՖԼԻՉԵՑԻ ՍԱՆԳԻՆԻ ՈՐԴԻ ԷԼՉԻ ԹԱԳԻՆ ՀՈՔՄ ԷՐ ՏՈՒԵԼ ՎԱՄՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ, ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՊԱՀԵՍՑԷ ԵՒ ԷԼՉԻ ԹԱԳԻՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՆՆՁԵՑԵԼՈՅՆ ՀԱՆԳԻՍՏ ԵՒ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ՊԱՐԳԵԿԵՍՑԷ, ԵՒ ԱՐԳՄԵՔ ԹԻՖԼԻՉԵՑԻՔՍ ...:

Հրատ. *Սմբատեանց, 258-259: Բարխուտարեանց, 160: Արձանագրության արտագրության հեղինակ է նաև շամախեցի Սաղա Ալեքսանդրյանցը, («Մեղու Հայաստանի», 1873, № 20, էջ 1) որը նշում է, որ այն փորագրված է եկեղեցու հարավային առավել փոքրիկ զավթի*

221. ՀՀՊՊԿԱ, ֆ. 57, ց. 1, գործ 439, քերթ 3-7:
222. Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 158:
223. «Արարատ» Բ տարի, 1869, սեպտեմբեր, էջ 104 (հողվածի հեղինակն է Անդրեաս արքեպիսկոպոսը):
224. Գալուստ Տէր-Մկրտչեան, Շամախու երկրաշարժը և բնա-կան հաստատութեանց Բազու փոխադրելու խնդիրը, «Արա-րատ» 1902, փետրվար, էջ 133-135:
225. «Յուցակ ձեռագրաց», հատոր Բ, ձեռ. հմր. 8361:
226. Նույն տեղում, ձեռ. հմր 8492:

227. Նույն տեղում, ձեռ. հմր. 9729:
228. Մատենադարանում պահվում են նաև Շամախի քաղաքում ստեղծված հետևյալ ձեռագրերը. «Մոռիրդատետր» 1825 թ. (ձեռ. հմր. 2941), «Զրիստիանոսի ճանապարհորդությունը» 1844 թ. (ձեռ. հմր. 8499), գրիչ Առաքել Բիչարայով՝ ստացող՝ Գեորգ Գեոկչանեանց, «Մէյեաղ Շամախեցի, երգարան» 1861 թ. (ձեռ. հմր. 10005), գրիչ՝ Մսեր Մսերեանց, «Պետրոս Մաղաթեան (Մէ-յեաղ), Մատենագրութիւնը» գրիչ՝ հեղինակը (ձեռ. հմր 7655), ձեռ. հմր. 9295 և այլն:
229. Սմբատեանց, էջ 227:
230. «Հայկական Մովսեսական Հանրագիտարան», հատոր 8, Երևան, 1982, էջ 439:

վրա: Սադայի 1873 թ. կատարած արտագրության և մեր երկու հրատարակիչների վերծանություններում կան առանձին տարբերություններ: Նախ թվականը ունի Ռ-ճԾԵ (1706) ձևով, ապա բոլոր ԵՒ շաղկապների փոխարեն ունի ՌԻ շաղկապը:

Ծանոթ. Կասկածից վեր է, որ Շամախում հայկական եկեղեցի եղել է 1701 (կամ թե 1706) թվականից շատ առաջ: Գուցե և վաղ միջնադարից, սակայն դրա վերաբերյալ տեղեկությունները հաստիպակա առատ են սկսած XIX դարի սկզբներից: Հայտնի է, որ երբ քաղաքից արքայազնը հայերը 1820 թ. վերադարձել էին Շամախի, հին եկեղեցին գտել էին գոմի վերածած՝ տեղում հաստատված վրանարևակ թուրքերի կողմից: Շուտով հայերը կարողացել էին թուրքերից ետ գրավել ու մաքրել եկեղեցին (Ֆ. 234, գ. 1, գ. 9, թ. 1): Կարճ ժամանակ անց եկեղեցին վնասվում է երկրաշարժից՝ 1828 թ. (Ֆ. 56, գ. 1, գ. 2957, թ. 5): Հայտնի է, որ 1839 թ. եկեղեցին գտնվում էր խիստ քայքայված ու վթարային վիճակում (Ֆ. 56, գ. 1, գ. 55, թ. 1): 1852-54 թթ. դիմումներ էին եղել եկեղեցու նորոգման թույլտվություն ստանալու խնդրանքով: Դրա իրականացման համար հարկերից ետ գրավել ու մաքրել էին (Ֆ. 56, գ. 1, գ. 2957, թ. 4-5): Եկեղեցու նորոգման ժամանակ տանիքը ծածկել էին կարածեթով, իսկ զանգակատան վրա կառուցել փայտյա գմբեթ, ծախսվել էր 535 ռ. (Ֆ. 56, գ. 1, գ. 2957, թ. 15): 1857 թ. շամախցիները խնդրում էին հին եկեղեցու տեղում շինել նոր եկեղեցի (Ֆ. 56, գ. 1, գ. 3604, թ. 1): Եկեղեցու նոր խարխուլմը տեղի էր ունեցել 1859 թ. մայիսի 30-ի ժամը 6-ի և մայիսի 31-ի ժամը 8-ի երկրաշարժերի հետևանքով (Ֆ. 56, գ. 1, գ. 3844, թ. 1: Ֆ. 27, գ. 1, գ. 1, թ. 1): 1863 թ. խնդրվել, իսկ 1864 թ. թույլտվություն էր ստացվել եկեղեցու տանիքի նորոգումը իրականացնել 400 ռ. ծախսով (Ֆ. 56, գ. 1, գ. 4373: Ֆ. 56, գ. 1, գ. 4373, թ. 6): 1872 թ. նոր ուժեղ երկրաշարժից (հունվարի 16-ին) հետո եկեղեցին, թեև, մնացել էր կանգուն, սակայն բոլոր կողմերից ճաքճաքված ու խարխուլված պատերով (Ֆ. 56, գ. 1, գ. 6041, թ. 1): Այս եկեղեցու վերջին հիշատակության (1889 թ.) համաձայն, այն գտնվում էր քայքայված և վաղուց ի վեր կիսակործան վիճակում: Համարադարացիները այդ առթիվ ներկայացրել էին առաջարկություն՝ քանդել և վաճառել եկեղեցու տանիքի դեռևս չփտած գերանները: Դրա թույլտվությունը եւ ստացվել էր նույն թվականին (Ֆ. 56, գ. 1, գ. 171, թ. 1-2):

293. Հին ԵԿԵՂԵՑԻ, արևմտյան մուտքի ճակատի հյուսիսային կողմում փորագրված է եղել. ՀԱՒԱՏԱՐԻՄ ԱՆՏԵՍ ԲԱՆԻՆ, ՓՈՂԵԱԼ ԲԱՐՈՋ ԵՐԿՆԱՌՐԻՆ, ՅԵՐ ԳՐԻԳՈՐ ՀԱՅՐ ԾԵՐՈՒՆԻՆ, ՎԱՌԵԱԼ ՄԻՐՈՎ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ, ՊԱՏՃԱՌ ԵՂԵՒ ԱՅՍ ԸԻՆՈՒԹԵԱՆ, ԵՒ ՅՈՐԴՈՐԻՉ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ: ՎԱԶՄԵԱԼ ՏԱՃԱՐ ՄԵԾ ԱՐՔԱՅԻՆ, ՀՐԱԻՐԵԼՈՎ ՅԵԿԵՂԵՑԻՆ, ՎԱԶՈՒՄ ԱՇԽԱՏ ԵՒ ՉԱՐՉԱՐԱՆԸ, ՀԱԶԻԻ ԿԱՐԱՅ ՈՒ ԿԱՏԱՐԱՆ, ՍԱՏՈՒԱԾ ՏԱՅԵ ԻՐ ԵՕԹՆԱՐՓԵԱՆ, ԵՐԱՆԱԻՏ ՉԱՅՆԻՆ ԱՐԺԱՆ, ՅԵՒ ՅԵՍ ԱՍՏԵԱՅՍ ԵԼԱՆԵԼՈՅ, ԱՐԺԱՆ ԱՌՆԵ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ, ՎԱԶԱՐՈՐԴԻ ՀԱՐԻՐՈՐԴԻ, ԵՒ ՎԵՑ ՏԱՍԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴԻ: Ռ-ճԿԵ (1718):

Հրատ. Բարխուտարեանց, 159-160 (որպէս հաստատվածների բացթողումներով): Մնրատեանց, 258 (որից և առնում ենք):

294. Հին ԵԿԵՂԵՑԻ, ներքում մկրտարանի ավազանաձև քարի վրա (պատկանում էր ավելի հին եկեղեցու) եղել է.

ՍՈՒՐԲ ԱՒԱԶԱՆՍ ՅԻՇԱՏԱԿ Է Ի ԲՐԻՍՏՈՍ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՄԱՆԱԹԻՆ՝ ԲԱՐԵԽՕՍԵՑԵԸ ՎԱՍՆ ՀԱԳՈՅ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԻՆ ԵՒ ԻՐԻ ԿՈՂԱԿՑԻՆ Ի ԲՐԻՍՏՈՍ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՍՈՒԼԹԱՆ ԿԻԼԻՆ, ԹՎԻՆ Ռ.Զ (1587) ԻՆ:

Հրատ. Մնրատեանց, 259 (որից և առնում ենք): Բարխուտարեանց, 160 (ունի մանր վրիպումներ):

295. Հին ԵԿԵՂԵՑԻ, մուտքի մոտ ազուցված մի խաչքարին կարդացվել է միայն թվականը. Ռ-ճԹ (1610):

Հրատ. Մնրատեանց, 259:

296. ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ (ՆՈՐ) ԵԿԵՂԵՑԻ, մուտքի մոտ գտնվում էր աղա Պետրոս Հակոբյանի գերեզմանը, որի միջոցներով կառուցվել էր այդ եկեղեցին՝ փայտածածկ, եռանավ, ներքուստ վեց սյունների վրա (այժմ թե եկեղեցին և թե ընդարձակ արձանագրությանը տապալանաքարը չեն պահպանվել):

ԱՂԱՅ ՊԵՏՐՈՍ ՅԱԿՈՎԵՏԱՆ ՆԵՐՍԻՍԵԱՆՑ ՅԱԶՆՈՒԿԱՆ ՏՈՂՄԵ ՄԵԼԻՔԵԱՆՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԱՆՈՒՆ ԲԱՂԱՔԱՅԻ ԵՒ ԱՍՊԵՏ ՍՐԲՈՅՆ ԱՆՆԱՅԻ ԵՐՐՈՐԴԱՍՏԻՃԱՆԻ, ՀԱՆԳԵԱԻ Ի ՏԵՐ Ի 20 ԱՊՐԻԼԻ 1856 ԱՄԻ, Ի ՀԱՍԱԿԻ ԾԵՐՈՒ ԹԵԱՆ:

Չափածո շարունակվում է.
ԸՆԴԵՂՐ ԿՈԹՈՂԸ ՀԻՄ ԵՒ ԱՐՉԱՆՔՎԵՄԸ ԲԱՐԱԿՈՓ՝ ՅԱՐԴԱՐԻՆ. ՎԻՐԲԸ ԲԱՆԴԱԿԻՆ՝ ԳՈՎԵՍՏԸ ՏՈՂԻՆ՝ ԲԱՆԸ Ի ՆՈՒՄԻՆ՝ ՅԵՐԻԻՐԻՆ |ԶԻ ԶՄԵՈՒԵԼՈՅՆ, ԶԻ ԶԱՆՑԵԼՈՅՆ՝ ՄԻՇՏ ԱՌ ՅԱՊԱՅՆ ԿԵՆԱՅ ՃԱՌ|ՓՈՒՄԱՆ ԳՈՐԾՈՑ՝ ԳԻՐ ԽՕՍԵՍՑԻ՝ ԳՈԳ ՎԷՊ ԱՆԱՆՑ՝ ԿԱՅՑԷ ԲԱՐ: ԻՄԿ ԲԵՉ ԱՌ ԻՆՉ՝ ԱՐՉԱՆ ՎԻՍԱՐԴ՝ ԿԱՍ ՈՍԿԵԶՈԾ՝ ՆԵՐԲՈՂԵԱՆ|ԵԹԷ ԴՈՒ ԻՆՔՆ ԲԵՉ ԿԱՌՈՒՅԵՐ՝ ԶԱՍՐԱԿԱՌՈՅՑ ՄԱՀԱՐՉԱՆ. |ԵԿԵՂԵՑԻՄ ԱՅՍ ՏԻՐԱՍՕՐ՝ ԸՈ ՊԵՐՃ ԱՆՈՒՄ՝ ՄԻՇՏ ԲԱՐՈՋ, |ԲԵՉ ՕՐՀՆՈՒԹԻՆ՝ ԱՌԻՐ ԱՌԻՐԻ՝ ՄԱ ԵՐԳԵՍՑԷ՝ ՅԱԻԻՏԵԱՆ: |ԵՐԹ ՎԱՃԱՌԵԱ ԱՍԱՑ ՅԻՍՈՒՄ՝ ԶԻՆՉՍ ԸՈ ՏՈՐԻ ԱՂԱՍԱՑ, |ԱՀԱ ԳԱՆՉԸ ԻՄ ՏԵՐ ԲԱՐԵՆԱՍ, ԿԱՐՕՏԵԼՈՅ ԱՀԱ ՀԱՅ, |ԶԱՅՄ ԱՍԱՅԵՐ՝ ՏՈՒՆ ԸԻՆՑԵՐ՝ ԴՈՒ ԱՍՏՈՒԾՈՅ ՀՈՅԱԿԱՊ, |ԵՒ ԶԿԱՅՄԵՐՆ ԵՏՈՒՐ ԿԱՅՄԵՐ, ՈՐ ԶԲԵՉ ԽԱՉԻՐ՝ ՊՄԱԿԵԱՑ: |ԱՂԷ ԸՈ ԳԱՆՉԸ՝ ԱՆԴ ԵՆ ՅԵՐԿԻՆՄ՝ ԱՆԱՊԱԿԱՆ՝ ԿԵՆԴԱՆԻ. |ՀԱՒԱՏԸ ԵՒ ԳՈՐԾԸ՝ ԱՆԴ ՉԵՆՆ Ի ՉԵՆՆ՝ ԲԵՉ ԶՈՒԳԸՆԹԱՑ ՅԱՏԵՆԻ |ԱՆՄԱՀ ԱՆՈՒԱՆԴ ԱՉՆԻՒ ՏՈՂՄԻՐ՝ ԳՈՐԾՈՅ ԲԱՐԵԱՑ՝ ՅԻՇԱՏԱԿ, |

ՔՈՅԻՆԱՍՏԵՂԾ ԴԱՐՈՒՅ Ի ԴԱՐ՝ ՏԱՅՑԷ ՏԱՃԱՐՄ ԱՍՏ ՅԵՐԿԻ:

Հրատ. Բարխուտարեանց, 160-161: Սմբատեանց, 259-261:

Ծանոթ. Հայտնի է, որ *Շամախու նորակառույց Մր. Աստվածածին մայր եկեղեցին* օծվել է 1851 թ. (Ֆ. 56, ց. 1, գ. 2807, ք. 1): Արդեն 1858 թ. եկեղեցու փայտաշեն զմբեթի վերաբն ու տանիքները կարոտ էին նորոգման (Ֆ. 56, ց. 1, գ. 3684, ք. 4): *Քաղաքի համանուն հին եկեղեցու օրինակով մայր եկեղեցին ևս մեծապես վնասվել էր 1859 թ. մայիսի 30-ի և 31-ի երկրաշարժերից* (Ֆ. 56, ց. 1, գ. 3844, ք. 1): 1870 թ. մայր եկեղեցու քիթելյա տանիքը ներկելու, խաղովակներն ուղղելու, շուրջը եղած կարասպապատը նորոգելու (հարավային և արևելյան կողմերում քանդվել էր երկրաշարժից) ծրագիր էր կազմվել, որի իրականացումը պահանջել էր 200ռ. արծաթ դրամ (Ֆ. 56, ց. 1, գ. 5419, ք. 11): *Եկեղեցին նոր ավերման էր ենթարկվել 1872թ. հունվարի 16-ին, ժամը 10-ին տեղի ունեցած ուժեղ երկրաշարժից:* Այս անգամ ամբողջապես փլվել է եկեղեցու և կից զանգակատան զմբեթները, աննորոգելի ճաքել էր արևմտյան պատը և տեղ-տեղ այլ հատվածներում (Ֆ. 56, ց. 1, 6041:Ֆ. 234, ց. 1, գ. 44, ք. 1): 1894թ. մայր եկեղեցու քիթելյա ծածկը քայքայված էր և նախատեսվում էր փոխարինել նորով (Ֆ. 56, ց. 1, գ. 8987, ք. 1): 1902թ. դրությամբ նույն քվի հունվարի 31-ի երկրաշարժի հետևանքով մայր եկեղեցին շատ տեղերից խախտվել էր, գտնվում էր վթարային վիճակում, իսկ ժամերգությունը դադարեցվել էր (Ֆ. 56, ց. 1, գ. 9874, ք. 3): Հետագայում այլևս այս եկեղեցին նպատակահարմար չեն գտել նորոգել, այլ 1908-10 թթ. կառուցել են նոր եկեղեցի սրբատաշ քարերով: Ի դեպ մինչ այդ, հենց 1902թ. կառուցել էին մի փայտաշեն մատուռ՝ ժամանակավորապես այդտեղ եկեղեցական արարողություններ կատարելու համար:

297. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, գտնվում էր նույն եկեղեցու դռան արևմտյան կողմում.
ԸՆԴ ՎԻՍԱԻՄ ՀԱՆԳՉԻ ՍԱՐՄԻՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՑ, ԾՆԵԼՈՅ Ի 19 ՓԵՏՐՎԱՐԻ, 1833 ԱՍԻ, ՎԱՆՃԱՆԵԼՈՅ Ի ՍՂՍԿՈՒԱ, Ի 15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1879 ԱՍԻ:
Հրատ. Բարխուտարեանց, 161-162: Սմբատեանց, 261:

298. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, գտնվում էր «Քալախանի» կոչված զերեզմանոցում
Ի ՏԱՊԱՆԻՄ ԵԴԱԻ ՍԱՐՄԻՆ՝ ՀՈԳԻՆ ԴԱՐՉԱԻ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ՝ ՆԱԽՁԵԻԱՆՑԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ՝ ՏՈՀՄԻՆ ՊԱՏՈՒԵԱԼ ՍՄՔԱՏԵԱՆՑ, ԵՂՔԱՅՐ ԷՐ ՍԱ ԱՌԱՋ ՆՈՐԴԻՆ՝ ՍԵԾԻ ԱՐՀՈՅՆ ՍԵՍՐՈՔԱՅ. ԵՒ ԳՈՐԾԱՎԱՐ ԵՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՆՄԻՆ ԳՈԼՈՎ ՅԱՐԱՎԱՅ:
Հրատ. Սմբատեանց, 277:
Ծանոթ. Սա Շամախու բնի առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի եղբայրն էր, որ մահացել էր 1892 թ. համաճարակից:

299. **ԿԱՍՈՒՐՋ**, գտնվում էր քաղաքի մոտ Չողալա կամ Չանգալավա կոչված գետի վրա:

Այն միաթոխք էր, կառուցված սրբատաշ քարերով: Սրա հյուսիսային ծայրում, արևելյան ճակատին «արաբական զուցե պարսկական կամ տաճկական արձանագրութեան շարքում կարդում ենք կարճ, հայերեն գրութեամբ հետևյալը».

ՎԱՐՊԵՏ ՅԱԿՈՔ ՕՍՄԱՆՑԻ, 1828:

Գրակ. Քաջբերունի, ՀՀՊՊԿԱ, նշվ. փաստաթուղթ, քերթ 3:

Ծանոթ. Քաջբերունին նշում է, թե. «Շամախի քաղաքի տնատեր բնակիչներից մինը պահում էր իր տանը, քաղաքում, լու փողոցի վերայ ազո՞ւղ դեղատուն և ազգանունով կոչում էր Օսմանցով: Սա զուցե յիշեալ վարպետի սերունդն է» (նույն տեղում): Կարևոր է նաև, Մ. Սմբատյանցի վկայությունը. «կամուրջը Հաջի Ռահիմի ծախիք շինել է հայ ազգի ուստայ Օհանը 1827 թոին, ըստ արձանագրութեանն» (նշվ. աշխ., էջ 297): Ինչպես տեսնում ենք ընթերցումները խիստ տարբեր են:

300. **ԱՂԲՅՈՒՐ «ՍՌԻՍԱԲՈՒԱՂ»** գտնվում է քաղաքի կենտրոնական մասում: Կառուցված է



սրբատաշ քարերով, կամարակալ: Ներսում ազուցված սրբատաշ քարին փորագրված է վեց տողանոց շինարարական արձանագրություն (նկ. 99).
ԱՅՍ ՍՌԻՍԱԲՈՒԱՂԻ | ԱՂԲԻՐՍ ԿԱՌՈՒՑՁԻՆ | ... ՎԱՐՅՔԱՏՈՒՐՈՒԹ- (ԵԱ)Ն ԻՐԵԱՆՑ ՇԱՄԱԽՈՒ ՀԱՅՊՈՅ՝ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻ(ԻՆ)Ն, Ի 1 ՅՈՒՆԻՍԻ, 1863 ԱՍԻ:

Ծանոթ. այս աղբյուրի ջուրը նվազել էր 1872 թ. երկրաշարժի հետևանքով. «Քաղաքիս հայոց բաժնի մի աղբիւր (Մուսարուղաղի) մեծ շարժի օրից գրեթէ կիսով չափ քարակած է այժմ: Ոմանք ասում են, թէ նոյն օրը յիշված աղբիւրի ջրից ծծմբի հոտ էր գալիս» («Մշակ», 1872, № 7, էջ 3)

301. **ԱՂԲՅՈՒՐ**, գտնվում էր քաղաքի քարայրների քաղ կոչված մասում, ուներ հետևյալ արձանագրությունը.

ՅԻՇԱՏԱԿ Է ԱՂԲԻՐՍ ԱՂԱ ՀԱՅՐԱՊԵՏ Գ. ԹԱՌՈՒՀԵԱՆՑ, 1864:

Գրակ. Քաջբերունի, ՀՀՊՊԿԱ, նշվ. փաստաթուղթ, քերթ 3-5 (անտիպ է):

302. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, քաղաքի նոր զերեզմանոցում, ուղղանկյունաձև (նկ. 100).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՎԱՂԱՍԵՌ ԵՐԻՏԱՍԱՐԳ ԼԵՒՕՆԻ | ՍԻԵԱԿ ՈՐԴԻՆ՝ ԳԱԼՈՒՍԻ

ՆԵՐՄԵՍԵԱՆՑ ՏՈՂՄԻՎԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՔՈՎ ՁՈՂ ԳՆԱՅԻ | ԹՈՂԻ ԾՆՈՂԱՅՍ Ի ՍՈՒԳ ՏՐԴՈՒՄ ԱՐՏԱՍՎԱԼԻ, ՀԱՆԳԵԱՅ Ի ՏԵՐ 19 ԱՄԱՅ, 20 ՕԳՈՍՏՈՍԻ | 1905 ԱՄԻ Ի ՇԱՄԱԽԻ, ԽՆԴՐԵՄ ԱՍԷՔ Ա(ՍՏՈՒԱ)Ճ ՈՂՈՐՄԻ:

303. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախորդի մոտ (նկ. 101). ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ՇԱՄԱԽԵՅԻ ԳԱ ԼՈՒՍՏ ՆԵՐՄԵՍԵԱՆՑԻՆ, ՁՈՂԳՆԱՅ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՔՈՎ | ԹՈՂԵԼՈՎԻՐ ԿՆՈՋՆ Ի ՍՈՒԳ ԵՒ ԱՆՄԵՒԻ-ԹԱՐ, ՎԱՆՇԱՆՎԵՅԱԻ 60 ԱՄԱՅ ՀԱՄԱԿԻ, 1905 ԱՄԻ, 20-ԻՆ ՕԳՈՍՏՈՍԻ Ա(ՍՏՈՒԱ)Ճ ՈՂՈՐՄԻ:

304. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախորդի մոտ. ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՍԻՐԱՍՈՒՆ ՄԱՐԻԱՄՆ | ԱՍՈՒՍԻՆ ՍԵՐԳԷՅԻ ՊԵՏՐՈՍԵԱՆՑ ԴՈՒՍՏՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ՇԱՐԵԱՆՅ| ԿԵՆԴԱՆԻ ՎԿԱՅ ԿՈՐՇԱՆՍԱՆ ՇԱՄԱԽԻՅԻ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՄԵԿՆ ՅՈՒՆԻԱՐԻ 1902 ԱՄԻ, ՈՐ Ի ՔՍԱՆՍԻԱՍԵԱՅ ՀԱՄԱԿԻ ԵՐԿՆԱՍԼԱՅ, | ԹՈՂՈՒՑ ՋԻՐ ՍԻՐԵԼԻՍ ԱՆՄԵԻԹԱՐ ԵՒ ՍՈՒԳ:

305. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախորդի մոտ. ՀԱՆԳՉԻՍ ՍԵՒ ՀՈՂ Ի ՆԵՐՔՈՅ ՎԻՍԻՆ | ԾՆՈՂԱՅՍ ՊԱՏՈՒԿԱՆ ԱՆՄՈՂԱՆԱԼԻ ՈՐԴԻՆ | ՍԵՐԳԷՅ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ՝ ՇԱՐԵԱՆՑ ԱՉԳԻՅ, ՁՈՂ ԵՂԱՅ 1902 Թ. ԿՈՐՇԱՆՍԱՆ ՇԱՄԱԽԻՅԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՅԻԳՆԱՅԻ ԱՇԽԱՐՀԻՑ ԵՐԵՍՈՒՆՍԻ ԱՍԱՅ, Ի 31-ԻՆ ՅՈՒՆՎԱՐԻ | ԴՍԵՐՅՍ ՈՐԲԻԿ ՈՒ ԾՆՈՂԱՅՍ ՍՈՒԳԻ ՄԷՋ ԹՈՂԻԻՍԿ ԽԵՂԸ ԱՍՈՒՍՆՈՒՍ ԴԱՌՆԱԳԻՆ Ի ԼԱՅԱՆՔՈՂՁ ՇԱՄԱԽԻՆ ԿԱՐՇԵՄ ԱՓՍՈՍԱՅ:

ՄԱՐԻԱՆ

Գավառի ամենափոքր ու պատմության փառավոր էջերով նշանավորված գյուղերից մեկն է: Գտնվում է Շամախի քաղաքից շուրջ 20 կմ արևմուտք, Աղսու-Շամախի մայրուղուց 2 կմ հարավ: Հնում Մաղիանը չափազանց մարդաշատ է եղել: Դրա վառ ապացույցն է գյուղի հին գերեզմանոցը, ուր պահպանվել են մինչև XVIII դարին բնորոշ մի քանի հազար տապանաքարեր: Պակաս ընդարձակ չէ նաև XIX-XX դարերին վերաբերող տապանաքարերով հարուստ գերեզմանոցի հատվածը: Ի տարբերություն շրջակա շատ բնակավայրերի՝ Մաղիանի վերաբերյալ, շնորհիվ իր հոչակավոր եպիսկոպոսանիստ վանքի, մատենագիր աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ հիշատակություններ: Այնուամենայնիվ խոր հնություն ունեցող այս գյուղի Մաղիան անվանումը անվանը աղբ-

յուրներում հանդիպում ենք միայն սկսած 1636 թվականից: Այդ թվականին ոմն Աբրահամ դարի ձեռքով ստեղծված «Աղոթամատույց»-ի հիշատակարանում կարդում ենք. «Արդ՝ գրեցաւ Աղոթամատուցս ի յերկիրս Աղուանից, ի գեօղս որ կոչի Մաղիան, ձեռամբ Աբրահամ դարի, ի խնդրո Շաքեցի Խուրիարի որդի Ռահմէս դարի ...»: ²³¹ Հետագայում Մաղիանը հիշատակվում է մատենագիր ու վիճակագիր այլ բազմաթիվ աղբյուրներում: Գյուղի բնակչության թվի վերաբերյալ առաջին վկայություններին հանդիպում ենք սկսած XIX դարի կեսերից: Նշված ժամանակներում գյուղում արձանագրվել է 50 տուն հայ բնակչություն: ²³² 1861 թ. գյուղն ուներ 75 տուն, իսկ 1890-ին՝ 162 տուն (950 մարդ) բնակչություն: ²³³

1914 թ. հունվարի 1-ի վիճակագրությանը Մաղիանի բնակչությունն աճել էր մինչև 1207 մարդու (բոլորն էլ հայեր): ²³⁴ Երկրամասի շատ գյուղերի օրինակով Մաղիանն էլ մեծ կորուստներ է տվել 1918 թ.: Գյուղը վերստին շենացել է խորհրդային կարգերի հաստատումից հետո: Մաղիանը զուտ հայաբնակ էր մինչև 1970-ական թթ., որից հետո այնտեղ հաստատվեցին նաև ադրբեջանցի վերաբնակիչներ: Գյուղի վերջին հայերը 1988-ին ենթարկվեցին բռնազաղթի:

Մաղիանը չափազանց հարուստ է պատմական հուշարձաններով: Առանձնապես կարևոր է գյուղի հյուսիս-արևելյան ծայրում տարածված խիստ ընդարձակ գերեզմանոցը: Այստեղ պահպանվել են ավելի քան 2 հազար գերեզմանաքարեր: Թաղումների ամենախիտ ու հին շարքերից մեկում ամբողջական տեսքով պահպանվել է նաև խոյաձև մեկ տապանաքար: Թեև արձանագիր քարեր շատ կան (ավելի քան 600), սակայն մեր գտած ամենափոքր թվագրություն ունեցողները XVI դարից էին:

Մաղիանի հաջորդ կարևոր հուշարձանը գյուղամիջի հին եկեղեցին էր: ²³⁵ Ներկայումս այն հիմնավեր է, որի տեղում կատարվել են նոր կառուցապատումներ:

Մաղիանից շուրջ 2-3 հարյուր մետր հեռու, բլրակի գագաթին պահպանվում է Մբ. Նշան կիսավեր մատուռը կառուցված համակ սրբատաշ դեղնագորշավուն տեղական քարերով:

231. «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ» մասն Բ, կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 859-860 (այսուհետև նշելու ենք՝ ԺԷԲ, համապատասխան էջերով):

232. Մ. Ջալալյան, նշվ. աշխ., էջ 394:

233. Մ. Սմբատյան, նշվ. աշխ., էջ 139:

234. «Кавказский Календарь на 1915г.» Тифлис, 1914, էջ 180:

235. Մ. Սմբատյան, էջ 19: Ի դեպ, 1654 թ. ստեղծված մի ձեռագիր «Ժողովածու»-ի հիշատակարանում իբրև գրչության վայր նշված է. «ի գեաղս որ կոչի Մաղիան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս» («Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ» մասն Գ, կազմեց՝ Վազգեն Հակոբյան, Երևան, 1984, էջ 624): Քանի որ գյուղում ու նրա տարածքում քաջի այս եկեղեցուց, Մբ. Ստեփանոս վանքից ու Մբ. Նշան մատուռից այլ պաշտամունքային կառուցվածքներ չկան, ուստի և մնում է ենթադրել, որ խոսքն այս եկեղեցու մասին է, որն և կոչվել է Մբ. Աստվածածին:

Գյուղի հյուսիս-արևմտյան ծայրում պահպանվում է Մաղիանի ամենաճանաչվող ու արժեքավոր հուշարձանախումբը՝ Սր. Մտեփանոս Նախավկայի վանքը: Վանական համալիրը բաղկացած է մեկ եկեղեցուց, միաբանության ու տնտեսական բնույթի շենքերից, պարսպապատերից, դարպասից, աղբյուրներից, գերեզմանոցից:

Մի քանի հարյուրամյակ շարունակ այս վանքում էր նստում Շամախու թեմի առաջնորդը: Եպիսկոպոսանիստ Սր. Մտեփանոսի վանքը կառուցվել է 1660 թ., իսկ հետագայում ենթարկվել մի



ՄԱՔԱՆՈՒ ՍՈՐԵ ՍՏԵՓՈՍԱՆԻ ՎԱՆՔԸ

Տեսքը դարասկզբին



Տեսքը վինչև 1988թ.

շարք վերանորոգումների: XIX դարի երկրորդ կեսին վանքի եկեղեցին գտնվում էր կիսավեր վիճակում և հոգևոր իշխանությունները ստիպված են լինում ի հիման է քանդել այն և նույն տեղում կառուցել նոր եկեղեցի: Այդ աշխատանքները ավարտվում են 1893 թ. փայտաշեն զմբեթի կառուցմամբ:

Մաղիան գյուղի ու նրա տարածքում եղած հուշարձաններից նախկին հետազոտողները հավաքել ու հրատարակել են 25 արձանագրություն: Դրանց հիմնական մասը ներկայումս չի պահպանվել (21 արձանագրություն), իսկ 4-ը՝ բարերախտաբար հաջողվեց վերագտնել տեղում: Վերջիններիս նախկին հրատարակություններում նկատելի էին բազմաթիվ անճշտություններ: Բացի այս, գյուղի տարբեր հնավայրերից հավաքվեց թվով 23 նորոհայտ, նախկինում չհրատարակված արձանագրություն, որով և մեր ստորև ներակայացվող հավաքածուն կազմում է 48 միավոր:

306. ՍԲ. ՍՏԵՓՈՒՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ (խոսքը հին շենքի մասին է, որը կիսավեր վիճակով կանգուն էր մինչև 1878 թ.: Դրա տեղում 1878-1887 թթ. ընթացքում կառուցվել է համանուն նոր եկեղեցին): Բեմի սեղանի ճակատին գրված է եղել.

ԱՐԴ ԵՄ ՍԵՂԱՊԱՐՏՍ Ի ԾՆՈՒՆԴՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿՐԿՈՍ ՊԻՏԱԿ ՎԱՐԳԱՊԵՏ, ԲՆԻԿ ՅԵՐԿԻԵՆ ԱՂՈՒԱՆԻՑ, Ի ԳԵՂՁՆ ՍԱՂԻԱՆՈՒ ԸՆՈՐՀՕՔ ԵՒ ՈՂՈՐՍՈՒԹԵԱՄԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՏՈՒ ԸԻՆԵԼ ՁԵԿԵՂԵՑԻՍ ՎԱՅԵԼՉԱԿԵՐՏ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅՆ ՍՏԵՓՈՒՆՈՍԻ ՆԱԽԱՎԿԱՅԻՆ, Ի ՌՃԹ (1660) ԹՎԻՆ, ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵԱՌՆ ՅԱԿՈՔԱՅ, ԵՒ Ի ԿԱԹՈՒԴԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԳԱՆՉԱՍԱՐԱՅ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԻ ԶՈՐ ԵՒ ԱՂԵՐՍԵՍ ԶՀԱՆԴԻՊՈՂՍԴ ՅԻՇԵԼ ՁԻՍ ԵՒ ՉՏԵՐ ՂԱԶԱՐՆ ՀՈԳԱԲԱՐՉՈՒ ՎԱՆԻՑՍ ԵՒ ՉԱՍԵՆԱՅՆ ԱՇԽԱՍԱՌՐՍ ՍՈՐԻՆ, ՈՐՔ ՅԻՇԵՆ՝ ՅԻՇԵԱԼ ԼԻՑԻՆ ԱՌԱՋԻ ԱՍՏՈՒԾՈՅ, ԱՄԵՆ:

Հրատ. *Շահխաբունեանց, 380: Ջալալեանց, 395: Ծանոթ. Սմբատյանցի ժամանակ վիմագիրն արդեն գոյություն չունի, այն ոչնչացվել էր տեղում նոր եկեղեցի կառուցելու հետևանքով: Միաժամանակ Սմբատյանցը նշում է, որ այդ արձանագրությունից միայն մի կտոր էր պահպանվում, ուր կարդացվում էին ԶԿՐԿՍ (Կիրակոս վարդապետ) ՌՃ. ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ քառերը: Սմբատյանցը անփոփոխ վերահրատարակել է նախկին երկու ընդօրինակությունները (տե՛ս՝ նշվ. աշխ., էջ 50, 52): Ջալալյանցի ընդօրինակության մեջ բաց են թողնված ՊԻՏԱԿ, Ի ԳԵՂՁ ՍԱՂԻԱՆՈՒ, ՁԻՍ ԵՒ քառերը, թվականը՝ ՌՃՂ: Կան նաև այլ մանր տարբերություններ:*

307. ՍԲ. ՍՏԵՓՈՒՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ (խոսքը հին եկեղեցու մասին է), եկեղեցու հյուսիսային պատին փորագրված է եղել.

ՆՈՐՈԳԵՑԱԻ ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՂՄՆ ՏԱՃԱՐԻՍ ՀԱՆԴԵՐՉ ԳԼԽԻ ՍԱԼԻԻՔՆ, ԱՇԽԱՏԱՆՕՔ ԱՌԱՋՆՈՐԴ ՈՍԿԱՆ ՎԱՐԳԱՊԵՏԻՆ ԵՒ Ռ(1000) ԼԻՏՐ ԿԻՐՆ ԿԱՍ ԱՀԱԿԻ ՓՈՂՆ ԸՍԿԱՆԴԱՐԻ ՈՐԴԻ ՍԱՀՏԵՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ԵՏ, ՈՐ ՍԱՄՆԱԿԻՑ ԵՂԵՒ, ԹՎԻՆ ՌՄԼԵ (1786):

Հրատ. *Շահխաբունեանց, 380-381: Ջալալեանց, 395:*

Ծանոթ. Սմբատյանցի հետազոտման ժամանակ այս արձանագրությունը ևս ոչնչացված էր: Նրա պահպանված մի քանի կտորների վրա կարդացվել էին հետևյալ քառերը. ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՂՄՆ, ԳԼԽԻ ՍԱԼԻԻՔՆ, ՈՍԿԱՆ ՎԱՐԳԱՊԵՏ, ԸՍԿԱՆԴԱՐԻ ՈՐԴԻ: Սմբատյանցը անփոփոխ վերահրատարակել է նախկին երկու հրատարակությունները (էջ 50-53): Ջալալյանցը ԱՌԱՋՆՈՐԴ ՈՍԿԱՆ քառերի փոխարեն ունի ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ քառը, ԸՍԿԱՆԴԱՐԻ փոխարեն ՍՊԱՆԴԱՐ: Կան նաև այլ մանր տարբերություններ:

308. ՍԲ. ՍՏԵՓՈՒՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ, արևմտյան ճակատից բացվող մուտքի բարավորին ուղղանկ-

յունաձև շրջանակի մեջ առնված սրբատաշ քարին 9 տողով փորագրված է (նկ. 102).

ՉՔՆԱՂ ՏԱՃԱՐՍ Ա(ՍՏՈՒԱ)ՃԱՅԻՆ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅՆ|ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԽԱԽՎԿԱՅԻ Ի ՀԻՄԱՆՅ ՆՈՐՈԳԵ|ՅԱԻ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍ(ԵՆԱՅՆ) ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ | ՍԱԿԱՐԱՅ ԱՌԱՋՆՈՑ. ՋԱՆԻԻԸ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՇԱՍԱԽՈՒՅ ՏԵԱՌՆ | ԹԱԳԷՆՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԱՐԳԵԱՄԲ ԲԱՐԵՊՊԱՇՏՕՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԲԱԳՈՒ ԲԱՂԱՔԻ,| ԵՒ ՎԻՃԱԿԻ ՆՈՐԻՆ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ 1335,| ԵՒ ՓՐԿՉԱԿԱՆ 1886 ԱՄԻ:

Հրատ. Մմբատեանց, 18:

Ծանոթ. 1878 թվականից սկսվել է Մաղիանի հին վանքի քայքայված շինությունների քանդումը և տեղում նոր եկեղեցու կառուցումը (Ֆ. 56, ց. 1, գ. 8337, ք. 1): Այդ աշխատանքների ավարտման ժամանակը հստակ երևում է ներկայացված արձանագրություններից: 1899 թ. բարձրակարգ Նիկողայոս Թադևոսյանի միջոցներով Մաղիանի վանքում սրբատաշ քարերով կառուցվում են երեք սենյակներ՝ գեղեցիկ սրահով: Մի սենյակ էլ կառուցում է պարոն Թ. Այվազյանը իր միջոցներով (Ֆ. 56, ց. 1, գ. 373, ք. 52): 1903 թ. եկեղեցու արևմտյան դռան կողպեքը կտրելով՝ անհայտ ոճրագործները զոդացել էին զորգեր ու կարպետներ (Ֆ. 56, ց. 1, գ. 476, ք. 1): 1906 թ. նախատեսվում էր ներկել վանքի քիթեղյա տանիքը, շուրջը սալահատակել և վանքապատկան տան սյունները նորոգել (Ֆ. 56, ց. 1, գ. 10638, ք. 1):

309 ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ, հարավային ճակատից բացված մուտքի բարավորին փորագրված է 6 տողով (նկ. 103).

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ ՇԱՍԱԽՈՒՅ|ՍԵՍՐՈՎԸ ԵՊ(Ի)Ս(ԿՈՊՈՍ) ՍՄԲԱՏԱՆՅ ՆԱԽԻՋԵԻԱՆԱՅԻ | ԷՕԾ ՋՏԱՃԱՐՍ ՅԵՏ ԲԱՆԱԼ ՏԱԼՈՅ ԶՀԱՐԱԽԱՅԻՆ | ՆՈՐ ԳՈՒՌՆՍ Ի ՅԻՇԱՏԱԿ ԾՕՂԱՅՆ ԵՒ ՅԱՆԱՐՏ|ԱՇԵԼՈՅ ԶՇԻՆՈՒ(Թ)Ի(ԻՆ) ՏԱՃԱՐԻՍ Ի ՀԱՅՐ(Ա)Պ(Ե)ՏՈՒ(Թ)Ե(ԱՆ) ԱՍ(ԵՆԱՅՆ) ՀԱՅՈՑ | Տ(ԵԱՌՆ) ՍԱԿԱՐԱՅ. ՅԱՄԻ Տ(ԵԱՌՆ) 1887 ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ 4378:

Հրատ. Մմբատեանց, 19-20:

310 ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ, հարավային ճակատում, նախորդ արձանագրությունից փոքր ինչ բարձր, ձախ կողմում ուղղանկյունաձև շրջանակի մեջ առնված սրբատաշ քարին փորագրված է (նկ. 104).

ՕԺԱՆԴԱԿԵԱՅ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՍ ՀԻՆԳ ՀԱՐԻԻՐ ԲՈՒԲԼԻ ԴՐԱՍՕԸ ԲԱԳՈՒԱԲՆԱԿ ԹԱԳԷՆՍ ԱԽԱԳ ԲԱՀԱՆԱՅՆ ԲՈՒԴԱԳԵԱՆՅ ԵՒ ԵՂԲԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՈՎՍԷՍ, ԵՂԻԱ ԵՒ ԵՆՈՎՔ, ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1880:

Հրատ. Մմբատեանց, 20:

311 ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ, նախորդ արձանագրության օրինակով մուտքից աջ, յոթ տողով փորագրված է (նկ. 105).

ՕԺԱՆԴԱԿԵ(Ա)Յ ՇԻՆՈՒ(Թ)Ե(Ա)Ն| Տ(Ա)Ճ(Ա)ՐԻՍ ՀԻՆԳ ՀԱՐԻԻՐ Բ(ՈՒ)ԲԼԻ ԴՐԱՍՕԸ ԲԱԳՈՒԱԲՆ(Ա)Կ | ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆ Պ. | ԳԷՆՐԳ ՅՈՎՀԱՆՆԷՍ|ԵԱՆ ԲԱԱՆԹԱՐԵ(Ա)ՆՅ| ՅԱՄԻ Տ(ԵԱ)ՌՆ 1881: Հրատ. Մմբատեանց, 21:

312 ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ, հյուսիսային ճակատի արևելյան կողմում ուղղանկյունաձև քանդակագարդ խորշի մեջ, սրբատաշ քարին 6 տողով փորագրված է (նկ. 106).

ՀԻՄԻՍԱՅԻՆ ՈՐՄՆ Ս(Ր)Բ(Ո)Յ(Ն) ՏԱՃԱՐԻՍ | ՇԻՆԵՅԱԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱ(Մ)Բ ՀԱՍԱ|ՐԱԿՈՒԹԵԱՆ ՍԱԳԵԱՆՈՒԳԵՂՋ| ԸՆԴ ՎԵՐԱԿԱՅՈՒԹԵԱ(Մ)Բ ՍԱՀԱԿ| ԲԱՀԱՆԱՅԻ ՅՈՆԱՆԵԱՆՅԻ Թ(Ի)ԻՆ Հ(ԱՅՈ)Ց|1335 ԵՒ ՓՐԿՉԱԿԱՆ 1886 ԱՄԻ:

Հրատ. Մմբատեանց, 20:

Ծանոթ. Մաղիան գյուղի քահանա Սահակ Հոնանյանը իր սեփական միջոցներից վանքի նորոգմանն էր հատկացրել 150 ռ. (Ֆ. 56, ց. 1, գ. 8337, ք. 1): Նա վախճանվել է 52 տ. հասակում, որից 27 տ. քահանայագործել է Մաղիանում: Հանգուցյալի մարմինը 1889 թ. հուլյ. 7-ին ամփոփեցին Սր. Ստեփանոս եկեղեցու հր-արդ կողմում («Նոր-Դար», 1889, № 174, էջ 2):


313 ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ, արևելյան ճակատին փորագրված է (նկ. 107).

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1893 | ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ 4385| Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒ(ԹԵԱ)Ն ԱՍ(ԵՆԱՅՆ) ՀԱՅՈՑ|Տ. ՄԿՐՏՉԻ, ՏՆՕՐԷՆՈՒ(ԹԵԱՍ)Բ ԱՌ(Ա)ՋՆՈՐԴԻ ԹԵՄԻՍ ՄԵՍՐՈԲ ԱՐՔԵՊ(Ի)Ս(ԿՈՊՈՍ)Ի|ՍՄԲԱՏԱՆՅ ՇԻՆԵՅԱԻ ԿԱԹ(ՈՒ)Ղ(Ի)ԿԷՆ | ՎԱՆԻՅՍ 600 ԲՈՒԲԼԻ ՏՐՕԸ ԲԱԳՈՒԱԲՆԱԿ Պ(Ա)Ր(Ո)Ն ՆԻԿՕԼԱՅԻ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԹԱԳԻՆՍԵ(Ա)ՆՅ Ի ՅԻՇ(Ա)Տ(Ա)Կ ՀԱՆԳՈՒՅԵ(Ա)Լ ՍԱՐԻԱՍՈՒ ԴԱՏԵՐ ՀՕՐԵԳՕՐ ԻԻՐՈՅ|ԶԱԲԱՐԻԱՅԻ ԹԱԳՈՍԵԱՆՅ:

Հրատ. Մմբատեանց, 79:


314 ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ, հարավային ճակատում, արևային ժամացույցի տակ, փակագիր (նկ. 108).

ԵՍ ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ, 1887:



315. ՇՏԵՄԱՐԱՆ, փոքրիկ քաղածածկ ուղղանկյունաձև հատակագծով շենք է: Բացի արևելյան ճակատից, որն իրականացված է սրբատաշ քարերով, մնացած մասերը կառուցված են անտաշ քարերով, կրաշաղախով: Արևելյան ճակատից բացված միակ մուտքի աջ կողմում եռատող փորագրված է (նկ. 109).

Ի ՌՃԿԴ (1715) ԹՎԻՆ ՇԻՆԵՑԱՊՉԵՌԱՍԲ



Ա(ՍՏՈՒԱ)ՇԱՏՈՒՐԻ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ:

Հրատ. Սմբատեանց, 74:

316. ՏՆՏԵՄԱՏՈՒՆ, քառակուսի հատակագրով անտաշ և կոպտատաշ քարերով (անկյունաքարերը սրբատաշ են), կրաշաղախով կառուցված բավական ամրակուռ շենք է: Ներքուստ, չորս անկյուններում կան մեկական քաղածածկ սենյակներ: Շենքի կենտրոնական մասի ծածկը, որն այժմ մասամբ քանդված է, երդիկաձև է եղել: Սենյակներից բացվում են բազմաթիվ խորշեր, բուխարիներ, լուսամուտներ: Երկու մուտքերն էլ բացված են արևելյան ճակատից: Շենքի տանիքի մաքրման աշխատանքներ կատարելիս 1888 թ. հայտնաբերվել է տնտեսատան շինարարական արձանագրությունը.

ՇԻՆԵՑԱԻ ՏՆՏԵՄԱՏՈՒՆ, ՍՈՎԵԱԼ ՍԱՐԳՈՅ ՍՐՏԻՆ Է ՍԻՆ, ՈՎ ՍՈՐԱ ՄԵՋ ԼԻՆԻ Ի ԶՈՒՆ, ԱՂՕԹՔ ԱՌՆԷ ԳԻՇԵՐՆ Ի ԲՈՒՆ, ՄԱԳԹԵՄ ՅԻՇԵԼ ԵՒ ԶԻՍ Ի ՆՈՅՆ, ՎԼԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԻՏԱԿ ԱՆՈՒՆ, ՎԵՐԱՉԱՅՆԻ ՇԻՐՎԱՆԱՏՈՒՆ,

ԹՎԻՆ ՌՃԻՆ (1691):

Հրատ. Սմբատեանց, 73:

317. ՏՆՏԵՄԱՏՈՒՆ, արևմտյան պատի մեջ արտաքուստ ազուցված սրբատաշ քարին փորագրված է հետևյալ քառատող արձանագրությունը (նկ. 110).

ՀԱՅՅԷ ՀԱՐԿ ... ԲՈՂ ՅԱՅՍ ԶՈՒՐԵՆ | ՅԻՇԵ ՈՂՈՐՄԻ ՀԻՆ ՎԱՐՅՔ ԱՐԱՐԻ Վ(Ա)ՄՆ ԱՂ

ԹՎԻՆ ՌՃԻՆ | ... ՅՈՎՀԱՆՆԵՍԻՆ
Ծանոթ. Հայտնի է, որ Շամախու բեմի առաջնորդ Դանիել արքեպիսկոպոսը, նպատակ ունենալով վերանորոգել ամբողջ վանքը, հասցրել էր նորոգել միայն տնտեսատան շենքը, ծախսելով դրա վրա 78ռ. 93 կոպ. (Ֆ. 56, g. 1, q. 4870, p. 4): Ծրագրված մնացած աշխատանքները



տանքները չեն իրականացվել առաջնորդի մահվան պատճառով (1868 թ.): Կարծում ենք, որ տնտեսական այս արձանագրությունը փորագրվել է այդ նորոգման առթիվ և հետևաբար մինչև 1868 թ.:

318. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ, գտնվում էր եկեղեցու արևելյան կողմում: Սրա մուտքի ճակատին եղել է.

Ի ԹՎԻՆ ՌՄԿԵ (1816) ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՆՆ ԵՓՐԵՄԻ ԵՒ Ի ՅԱՌՈՒՐՍ ԴԱՏԱՌՈՐՈՒԹԵԱՆ ՍՈՒՍԱՖԱՅ ԽԱՆԻՆ, ՇՆՈՐՀԻՒ ԱՄԵՆԱԶՕՐԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ՈՐ ՄԻՇՏ ՀԵՂՈՒ ԶՇՆՈՐՀՍ Ի ՎԵՐԱՅ ԱՐԱՐԱԾՈՅՍ ԱՌԱԽԵԼ ԶԲԱՐԻ ՅԻՇԱՏԱԿՍ ՇԻՆՈՂԱՅ: ՈՒՍՏԻ ԵՒ ԵՍ ՅՈՒՄԱՅԵԱԼ Ի ՏԷՐ ԵՏՈՒ ՇԻՆԵԼ ԶՇԻՆՈՒԱԾՍ Ի ՅԱՐԵԻԵԼԵԱՆ ԿՈՂՄՆ ՏԱՃԱՐԻՍ ԵՒ ԹՈՂԱՈՎ Ի ՅԱՊԱԿԱՅՆ ԲԱՐԻ ՎԱՅԵԼՈՂԱՅ ՆԱԵՒՍ ՈՐՈՅ, ՈՐՔ ՈՒՆԻՆ ԶԱՇԽԱՏԱՆՍ ԵՒ ՏՈՒՐՍ Ի ՎԵՐԱՅ ՍՈՐԱՅ, ԶՎԱՐՉՍ Ի ՏԵԱՌՆԷ ԸՆԿԱԼՑԻՆ, ՈՐ ԵՒ ԻՍ ՎԱՌԵԱԼ Ի ՍՐԲՈՅ ՍՐԲՈՅՆ ՄՏԵՓԱՆՆՈՍԻ ԵՒ ԾԱՌԱՅ ՆՈՐԻՆ ԵՒ ՅՈՐԻՆՈՂ ՇԻՆՈՒԱԾՈՅՍ ՅՕՀԱՆ ԽՈՆԱՐՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՄԱԽՈՅ Ի ԶԱՂԱՔԱՆԻՇ ԳԻՒԴԻՅՆ ԿԻԼԻՍՏԱՆՈՒ:

Հրատ, Ջալալեանց, 395 (ունի բազմաթիվ վրիպումներ): Սմբատեանց, 73-74 (առավել ճշգրտված հրատարակությունն է, որից և առնում ենք):

Ծանոթ. Ջալալյանցի մոտ բացակայում են ԱՄԵՆԱՅՆ, իսկ ավերացված են ՈՐՔ ՈՒՆԻՆ (ԶԱՇԽԱՏԱՆՍ ԵՒ քառերից հետո), ՍՈՒՐՐ (ՍՐԲՈՅՆ քառից հետո) բառերը: Թյուր ըմբերցման հետևանքով աղավաղված են մի շարք բառեր: Այսպես՝ ԵՏՈՒ ՇԻՆԵԼ ԶՇԻՆՈՒԱԾՍ -ի փոխարեն կարդացվել է ԵՏՈՒ ՇԻՆԵԼ ԶՀՆՉԱՆՍ, ՅԱՊԱԿԱՅՆ ԲԱՐԻ ՎԱՅԵԼՈՂԱՅ ՆԱ ԵՒՍ ՈՐՈՅ-ի փոխարեն ՅԱՊԱԿԱՅՍ ՎԿԱՅԵԼՈՅ ԵՆ Ի ՆՈՅԱ, ԾԱՌԱՅ ՆՈՐԻՆ ԵՒ ՅՈՐԻՆՈՂ ՇԻՆՈՒԱԾՈՅՍ ՅՕՀԱՆ-ի փոխարեն ԾԱՌԱՅ ՆՈՐԱ ՕՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՆՕՂ ՇԻՆՈՒԱԾՈՅՍ ՕՀԱՆ, ԶԱՂԱՔԱՆԻՇ-ի փոխարեն ԶԱՂԱՔԱԳԻՒՂԻՅՆ և այլն: Օհան շամախեցի եպիսկոպոսը Սաղա-նի վանքում առաջնորդ (հավանաբար նաև Շամախու բեմի) հիշատակվում է նաև 1811 թ. (Ֆ. 56, g. 1, q. 3558, p. 2): Այս այն Օհանն էր, որի գործում միջամտությամբ հնարավոր եղավ Շամախու գրավումը առանց պատերազմի՝ գեներալ Ջուրյուկի կողմից, որի համար ինքը հետո խիստ պատժվեց Շամախուց փախած, ապա վերադարձած Մուստաֆա խանից (տես՝ Շամախի քաղաքի պատմության բաժինը, էջ 93):

319. ՎԵՐՆԱՏՈՒՆ, ունեցել է հետևյալ արձանագրությունը (չեն պահպանվել և շենքը, և արձանագրությունը):

ՇԻՆԵՑԱԻ ՎԵՐՆԱՏՈՒՆՍ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՍՈՒՏԱՏԱՅԱՅ ԽԱՆԻՆ, ՉԵՌԱՄԲ ՕՀԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՇԱՄԱԽԻՈՅ ԵՒ ՅԻՇԱՏԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ԵՂՐԹՐՆ՝ ԽԱՉԱՏՈՒՐԻՆ ԵՒ ՇՆՈՂԱՅ ՂԱՐԱԲԱՂԵՏԻ ՂԱԶԱՐԻՆ ԵՒ ԹԱՄԱՐԻՆ, ԹՎԻՆ ՌՄԿՁ (1817):

Հրատ. Ջալալեանց, 395: Մնքատեանց, 53 (անփոփոխ վերահրատարակել է Ջալալյանցի հրատարակածը): Մենք ևս առնում ենք Ջալալյանցից:

320. ԳԱՐՊԱՍ, ունեցել է հետևյալ արձանագրությունը, որը փորագրել է տվել դալակեցի Մարգիս վարդապետը պարսպապատերի ու դարպասի նորոգման ու կառուցման առթիվ.

ՇԻՆԵՑԱԻ ՉԵՌԱՄԲ ՎԱՆԱՀԱՅՐ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԻՐՁԱԲԷԿԵԱՆՑ, 1870 ԱՄԻ:

Հրատ. Մնքատեանց, 74:

Ծանոթ. Մարգիս վարդապետը տեղում վանահայրության պաշտոնը վարում էր 1852 թ. սկսած («Նոր-Դար», 1887, № 66, էջ 3): 1871 թ. մայիսի 6-ին Մաղիանի վանքի վանահայր Մարգիս վարդապետը գրել էր, որ վանքի շուրջ տարածված պարսպապատը հարկավոր էր նորոգել, մանավանդ դրա իսպառ ավերված արևմտյան ու հարավային հատվածները: Նույն քվին ստացվել էր թույլտվությունը (Ֆ. 56, գ. 1, գ. 5848, թ. 1-2): Այս Մարգիս վանահոր վերատեսչությանը Մաղիանի վանքին կից 1869 թ. քաջվել է վանական դպրոց («Արարատ» 1869, օգոստոս, էջ 80-82):

321. ՋԱՆԳ, կախված է կիսավեր դարպասից: Ստորին մասով միատող շրջանաձև ձգվում է նվիրատվական արձանագրությունը (նկ. 111).

ՅԻՇԱՏԱԿ ԵՏ ՋԱՆԳԱԿՍ ՂԱՐԱԲԱՂԵՏԻ ՀԱՇՏԱՐԽԱՆ ԲՆԱԿԵԱԼ Տ(Ե)Ր ԱԽԵՏԻ ՈՐԴԻ ԲՈՅԱՆՉԻ ՍՏԵՓԱՆՆ, Ի ԴՈՒՌՆ ՇԱՄԱԽՈՒ ՎԱՆՔԻՆ՝ ՆԱԽԱՎԿԱՅ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ Ս(ՈՒՐ)Բ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ, Ի 1816 ԱՄԻ:

322. ԱՂԲՅՈՒՐ, կառուցված է սրբատաշ քարերով: գտնվում է եկեղեցու և տնտեսատան միջև: Ծակատին ազուցված քարին քառատող փորագրված է (նկ. 112).

ՅԻՇԱՏԱԿ | ԵՓՐԵՄ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՇՏԱՐԱՎԿԵՑԻՈՅ 1903 ԱՄԻ:

Ծանոթ. 1903 թ. Եփրեմ վարդապետ Մուրխայանի առաջնորդության վերջին տարին էր: Նույն քվին նրան փոխարինեց Ընծակ վարդապետը («Նոր-Դար», 1903, № 105, էջ 1):

323. ՏԱՊԱՆԱԶԱՐ, հուշարձանախմբի շուրջ տարածված գերեզմանոցում, եկեղեցու արևմտյան պատի տակ, սալաձև (նկ. 113).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆՆ ՄԱՐԿՈՍԻ, Ի ՀԱՆԿՈՒՑԵԱԼ ԸՆԴ Զ(ՐԻՍՏՈՍ)ԻՆ ՈՐ Ի ԵՐԿՐԻՍ ՇԱՄ(Ա)ԽԵՑԻ ԱԶՆԱՎՈՒՐԻ Տ(Ե)Ր ՓԻ-

ԼԻՊՊՈՍԻՈՍԻԱ (1792) ԹՎԻՆ, Ի ԱՍՍԵԱՆԸՆ ՄԱՅԻՄԻ ԺԵ(15):

ԱՅԵ ՏԱՊԱՆ. ՄԱՐԿՈՒՆ ՀԱՆԿՈՑԵԱԿ ԸՆԴՔԻՆ
ՈՒՆԵՐԻՍ. ՉԱՄԽԵՑԻ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԵՒ ՓԻԼՊՊՈՍ
ՌՄԻԱ ԲԷ | ԱՆՆՆԸՆ ԱՅԻՄ. ԺԵ

324. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև սալաքար, նախորդի մոտ (նկ. 114).

ԱՅՍ ՏԱՄՊԱՐԱՆ ԻՍ Տ(Ե)Ր ՓԻԼԻՊՊՈՍԻՆ, | ՈՐ Է Ո(Ր)ԴԻ Ա(ՍՏՈՒԱ)ՇԱՏՈՒՐԻՆ ՇԱՄ(Ա)ԽՈՒ ԱՄԻԱԶ ԶԱՀԱՆԱԽՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄԻԵ (1776):

ԱՅՍ ՏԱՊԱՐԱՆԻ ՏՐՔԻԼՊՊՈՍԻ
ՈՒՆԵՐԻ ԱՅ ԱՏՈՒՐԻՆ ՉԱՄԻՈՒԱԻ
ԱԿԻՔԱՀԱՆԱԽՆ: ԲՆՄ. Ի. Ե

325. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդին կից, նույնաձև (նկ. 115).

ԱՅՍ Է Տ(Ա)ՊԱՆ ՇԱՄ(Ա)ԽԵՑԻ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՏԵՐՎ ՓԻԼԻՊՊՈՍԻ ՈՐԴԻՆ ... ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Տ(Ե)Ր ՕՀԱՆԻՆ, ԹԻՒՆ ՌՄԿԳ (1815):

326. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև սալատապան, եկեղեցու արևմտյան պատի տակ.


ԱՅՍ Է ՏԱՊԱՆ | ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄԵ (1758):

ԱՅԵ ՏԱՊԱՆ
ԻԳՆԱՏԻՈՍՎԱ
ԴԼՊԵՏԻ ԲՆՈ
ՄԷ

Հրատ. *Սմբատեանց, 75* (թվականի 4-րդ տարում եղած ՄԷ տառերը չի նկատել և 1758-ի փոխարեն ստացել 1551 թ.):

327. ՏԱՊԱՆԱԶԱՐ, եկեղեցու արևմտյան մուտքի առջև, սալամանա ուղղանկյունաձև (նկ. 116).

ԱՅՍ Է Տ(Ա)ՊԱՆ ԹԵՓԼԻՉԷՑԻ ՂԱԶԱՐԻ (Ո)ՐԴԻՒ ՄԷԼԸՈՒՄԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՃՁԶ(1737):



Հրատ. *Սմբատեանց, 76:*

328. ՏԱՊԱՆԱԶԱՐ, եկեղեցու հարավային մուտքի առջև, կողքի շրջված դիրքով: Ունի 16 կարճ տողերով արձանագրություն: Կենտրոնում գավազանի քանդակն է: Պահպանվել է խիստ եղծված ու հողմնահարված (նկ. 117).

ԱՐՓԻ ՊԱՆԾԱԼԻ ՀՐԱՇԱՎԳԵՂ ԶԱՐՍԱՐԱԼԻ ՏԱՊԱՆ Տ(ԵԱՌ)Ն ՅՈՎՀԱՂՆՈՒ ԱՐՔԵՂ(Ի)Ս(ԿՈՊՈՍԻ)Ն ԷՐ ՍԱՂԱՌԱՋՆՈՐԴ ՍԱԳԻԱՆՈՒՒ ՈՒԽՏԻ, ՓՈՒՏԻ ԹՅԱԻ ԱՌ ՏԷՐ ՅՈՒՅՄՆ ԱՍԵՆԻ, 1832 ԹՈՒԻ ՅՈՒԼԻՍ ԱՍՏՈՅԻՐՄԱՆ ԵՒՈՒԹԻ:

Հրատ. *Սմբատեանց, 75* (արձանագրության առավել վնասված ու անընթեռնելի հատվածները լրացրել ենք ըստ նախորդ հրատարակության):

329. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ունեցել է հետևյալ արձանագրությունը (այս և գերեզմանոցից ներկայացվելիք մնացած տապանագրերը ներկայումս տեղում չեն պահպանվել).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ
.... ԹՎ. Ռ(1551):

Հրատ. *Սմբատեանց, 76:*

330. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ԱՅՍ Է ՀՆԱԳԻՍ ԹԻՖԼԻՉԷՑԻ ՅԱԳԻՆԻ ՈՐԴԻ ՍՍԱՄՈՐԹ ԱՍԼԱՆԻՆ ԹՎ. ՌՃՁԶ (1737):

Հրատ. *Սմբատեանց, 76:*

331. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԻԱՅՆԱԿԵԱՅ ՏԷՐ ՅՈՎ ՍԵՓ ՎԱՐԴԱՊԵՏԻ: ... ՌՄԽԸ (1798) ԹՎԻՆ:

Հրատ. *Սմբատեանց, 76:*

332. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գտնվում էր աղբյուրի ճանապարհի վրա.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԵՂԻԱԶԱՐ ԱՐՔԵՂԻՍԿՈՊՈՍԻ, ՈՐ Է Ի ԳԻՒԴԷՆ ՏՈՒՏԱՅ, ԹՎ. ՌՄԹ (1760):

Հրատ. *Սմբատեանց, 74:*

333. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գտնվում էր հարավային մուտքի առջև.

ՎԻՃԱԿԱՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ՇԱՍԱԽՈՅ ԳԱՆԻԷԼ ԱՐՔԵՂԻՍԿՈՊՈՍ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ ՏԱՐՕՆԵՑԻ, ՎԱԽՃԱՆԵՑԱԻ 41 ԱՄԱՅ, Ի 4 ՅՈՒԼԻՍԻ 1868 ԱՄԻ:

Հրատ. *Սմբատեանց, 75:*

Ծանոթ. Երախտաշատ հազարականը, 1865 թ. այցելելով թեմի բոլոր հայաբնակ գյուղերն ու հուշարձանները, իր տպավորությունները շարադրել է մի ստվարածավալ հոդվածաշարում, որն էլ լույս է տեսել 1870 թ. մահվանից 2 տարի անց («Արարատ» 1870, էջ 229-231, 257-263, 318-323): Վանքի նորոգման գաղափարով ռզևերված առաջնորդը Բաքվի, Ղուրայի, Դարբանդի հայերի շրջանում հանգանակություն էր կատարել ու հավաքել 778 ռ. 93 կոպ.: Այդ նպատակին 300 ռ. էլ նվիրել էր կաթողիկոսը: Մակայն արքեպիսկոպոսի անժամանակ մահը (1868թ.) խափանել էր ծրագրի իրականացումը (Ֆ. 56, ց. 1, գ. 4870, թ. 4):

334. ԽԱՉԸԱՐ, գտնվում էր արևմտյան մուտքի մոտ: Վրան անձև մանր գրերով գրված է եղել.

ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ ՍԱԼԻԲՃԱՆԱՅ, ԱՒԱԸԱՅ, ՊԱՊԱՃԱՆԱՅ:

Հրատ. *Սմբատեանց, 75:*

335. ԽԱՉԸԱՐ, ունեցել է մեծ չափեր.

ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ Ե ԹՈՒՄԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ԲԱՐԵԽԱՄ ՏԷՐ ԵՓՐԵՄԻՆ:

Հրատ. *Սմբատեանց, 75:*

336. ԽԱՉԸԱՐ, կից է եղել նախորդին.

ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՕՍ ԵՂԻՍԱԲԷԹ ԿՈՒՄԻՆ, ՌՃԳ (1654):

Հրատ. *Սմբատեանց, 76:*

337. ԽԱՉԸԱՐ, գտնվել է վանքից վերև, «Նահատակ» կոչված ուխտատեղի-մատուռի մոտ. ՅԻՇԱՏԱԿ Ե ԱՍՏՈՒԾԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԹՈՒԻՆ ՌՃԿԴ (1715):

Հրատ. *Սմբատեանց, 71:*


338. ՏԱՊԱՆԱԶԱՐ, վանքի հյուսիս-արևմտյան կողմի թեք բլրալանջին տարածված գերեզմանոցում: Անկանոն եզրագծով սալատապան է (նկ. 118).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՐՊԱՆ ՈՐԴԻ ՈՒՐ ՄԷԻՑԻ ԱՇՂ ՓԱՐՄԻՆ, ԹՎԻ(Ն) ՌԵ (1556):



339. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, վերին հարթ երեսին միայն մեկ տողով (ճկ. 119). ԱՅՍՈՒՄ, ՌԽԱ (1592)

| Մ ՆՈՒՍ ՌԻՆԱ



№ 340-ի և 342-ի գրչանկարները


340. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ցախաղբի մոտ, ուղղանկյունաձև, մեջտեղից կիսված է երկու մասի: Երեսին 17 կարճ տողերով փորագրված է (ճկ.120, 120ա, 120բ).

Ի ՌՃԷ (1658) ԹՎԻՆ ԽԿԵԱԼ ՊՂԱՅՍԱՆ-
ՂՈՒԻՐ Պ(Ե)ԿՄ Ի ԵՐԿԵՆ ԳՈՒԻ | ... |.....
ՄԱՆՈՒՉՂԱՐ ԽԱՆԻՆ, | ՈՐ ԷՐ ԱԶԳԱ-
ԿԱՆ ՆՈՐԻՆ, ԱՍՏ ՓՈՒԽԵՑԱԻ ԱՌ | Ա-
(ՍՏՈՒԱ)Տ ԸԻՆԻՊ(Է)Կ ՀՈԳԱՅ | ԶՀ-
(Ո)ԳԻՆ:

341. ՏԱՊԱՆԱԶԱՐ, հարթ ուղղանկյունաձև սալատապան է: Երեսից կես մասը քառատող արձանագրության հետ մեկտեղ փշրվել է.

ԱՅՍ Է ՏԱՊԱ(Ն)... | ԵՑԻ ՅԱՐՈՒԹ՝
ՊՈՒԻ | ՍՏՐ ԶԱՍԱՄ... | ԹՎ(ԻՆ)ՈՄ...:

342. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, հարթ սալանման: Վրան յոթ տողով փորագրված է: Գրտնըվում է Մաղիանի մեծ գերեզմանոցում (ճկ. 121).



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Ս(Ա)ՅԱԿԻ, Ի ԶԱՂԱԶԷՆ | ՍԵՐՏԻՆԵՑԻ, ԵԿԻ | ՍԱԴԻԱՆ Վ(Ա)Խ-
ՋԱՂԵՑԻ, ՌՃՁԵ (1736) | ԹՎ(ԻՆ) ՆՈՅԵ-
(Ս)ԲԻՐԻ | ՄԵԿԻ:

343. ՏԱՊԱՆԱԶԱՐ, Գախարդի մոտ, Գույ-
նաձև (ճկ. 122).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՅՈՒՍՄԻՄԻ, ՈՐ ԻՄ Դ-
ՈՒՄՍՐ Ս(Ա)ՅԱԿԻ, ՌՃՁԵ (1736) ԹՎ(ԻՆ):



344. ՏԱՊԱՆԱԶԱՐ, Գույնաձև (ճկ. 123).
Ա(ՍՏՈՒԱ)Ց ՈՂՈՐՄԻ | ՊԵՏՐՈՍԻ ԿՈՂԱ-
ԿԻՑ ՍԱՐՔԱՐԻԳԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄԻ (1771):




345. ՏԱՊԱՆԱԶԱՐ, Գույնաձև (ճկ. 124).
Ա(ՍՏՈՒԱ)Ց ՈՂՈՐՄԻ | ԱԹԱ ... ԵՒ ՈՐԴԻ |
ՊԵՏՐՈՍԻՆ, ԹՎ(ԻՆ) | ՌՄԻ (1771):



346. ՏԱՊԱՆԱԶԱՐ, Գույնաձև (ճկ. 125).
Ա(ՍՏՈՒԱ)Ց ՈՂՈՐՄԻ | ՊԵՏՐՈՍԻ ՈՐԴԻ
ԱՆԳՕՆԻՆ | ԹՎ(ԻՆ) ՌՄԻԲ (1773):



347. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև (նկ. 126).
 ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԱՂԲԱՐԻՏԻՆ, ԹՎ(ԻՆ)
 ՌՄԽԸ (1799): ՄԱՀՕՎՆ ՄԵՆԵՒՆ, Ա(ՍՏՈՒ-
 Ա)Ճ ՈՂՈՐՄԻ:



№ 348-ի և 349-ի գրչանկարները

348. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ, նույնաձև (նկ. 127).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ | ՅԱՐՈՒԹԻՒՆԻՆ, ԹՎ(ԻՆ)
 ՌՄԽԸ (1799):

349. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ, նույնաձև (նկ. 128).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՊԵՏՐՈՍԻՆ, ԹՎ(ԻՆ)|ՌՄ
 ԽԸ (1799), | ՈՐ Է ՈՐԴԻՔ| Տ(Է)Ր ՅՕՀԱՆԻ:

350. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև (նկ. 129).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՊՈՂՈՍԻՆ, ԹՎ(ԻՆ)
 ՌՄԽԸ (1799):



ՓԱՆՐԱԲՈՒՇ



№ 350-ի գրչանկարը

Մինչև 1918 թ. հայաբնակ փոքրիկ գյուղ, ներկայումս գյուղատեղի Սաղիանից 5-6 կմ հյուսիս: 1861 թ. Փախրաքուշն ուներ 10, իսկ 1890 թ. 16 տուն (70 մարդ):²³⁶ Գյուղատեղիում պահպանվում է փոքրածավալ գերեզմանոցը, ուր պահպանված արձանագիր տապանաքարերը (շուրջ 15 հատ) վերաբերում են XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին: Գյուղի հյուսիս-արևմտյան ծայրում, Աղսու գետի հովտին նայող թեք անտառածածկ սարալանջին պահպանվում են միջնադարյան մի ավերակ վանքի մնացորդները:

Հնավայրը, ուր հայտնաբերվեցին նաև արձանագրություններ, հայտնի է Մխլու վարդապետի վանք անվամբ (Միքայել վարդապետի վանք): Ավերակների մեջ պահպանվել են մի քանի խաչքարեր, արձանագիր քարեր, որոնց մի մասը, երևում է, ազուցված են եղել երբևէ գոյություն ունեցած եկեղեցու պատերի մեջ: Հուշարձանախմբի ուսումնասիրությամբ առաջինը զբաղվել է Մ. Սմբատյանը. «Մի քանի Սաղիանցի եւ Փախրաքիւշցի մարդկանց հետ զնայով Մխլու վարդապետի վանքը, աշխատեցինք արձանագրեր գտնել, եւ սեղանոյ օծեալ վիմի (վեմ քարի) շրջապատը փորելով եւ եղած քարերը շրջելով՝ գտանք 15-ի չափ խաչքարեր զանազան թուերով եւ զանազան մարդկանց անունով, որ են հետեւեալքն»:²³⁷ Հնավայրում XIX դարի վերջին եղել է նաև Զաջբերունին, որը տեսել է արձանագրված միայն երկու քեկոր:²³⁸ Մեր այցելության ժամանակ գտանք միայն 7 արձանագիր քարեր և խաչքարեր: Տարօրինակ էր, որ նախկինում հրատարակածներից ոչ մեկը չվերագրվեց: Այդպիսով, ստորև ներկայացվող հավաքածուն բաղկացած է 24 արձանագրությունից:

Դատելով պահպանված վիմագրերի բովանդակությունից XVI-XVII դարերում տեղում գոյություն է ունեցել բավական աշխույժ հոգևոր կենտրոն, որին զանազան անձինք կատարել են բազմաթիվ նվիրատվություններ: Ուշագրավ է նաև վիմագրերի բավական ինքնատիպ գրչությունը:

356. ԱՐՉԱՆԱԳԻՐ ՔԱՐ, ուղղանկյունաձև, սրբատաշ (նկ. 130).

ԽԱՉԱՅՅՏՈՒՐ ԵՂԵՎԱՐՆ ԻՄ | ՊԱՂՈՒՄՆ ԵԻՉԶԱՅՐՆ | ՄԵՐ ՆԻ ... | ... ԹՎ(ԻՆ) ՈՂ ... (1620-ական թթ.):

357. ԽԱՉՔԱՐ, փոքր ու պարզ (նկ. 131).
ՄԿՐԴԻՉ, ՄԱ(Ր)ԳԱՐԻՏ:

351. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ուղղանկյունաձև, հարավային երեսին փորագրված է.

Ա(ՍՏՈՒԱ)Ճ ՈՂՈՐՄԻ ԳԱՐԱԲ(Ա)ՂՈՒ Ի ԿՈՒՂԷՆ ԱՎՏՈՒՇՕՑԵՑԻ ՅՕՄԷՓԻ ԿՈՂԱԿԻՑ ՍԱՌԻՆ, | ԹՎ(ԻՆ) ՈՄՇԴ (1805):

352. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նույնաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ | ԳԱՐ(Ա)ՊԱՂՈՒ ԱՇԱՆԵՑԻ ԳԱՆԵԼԻ ՈՐԳԻ ՋԱՎԱՏԻՆ, | ԹՎ(ԻՆ) ՈՄՇԵ (1806):

353. ՏԱՊԱՆԱՔԱՐ,

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ | ԳԱՐԱՊԱՂՈՒ, Ի ԳՈՒՂԷՆ ԹԱՂԱՍԵՑԻ | ՊԱՂՏԱՍԱՐԻ ՈՐԴԻ | ԱԲԱՔԻՆ, | ԹՎ(ԻՆ) ՈՄԿԵ (1816):

354. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նույնաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ | ԳԱՐԱՊԱՂՈՒ Ի ԳԵՂԷՆ | ԹԱՂԱՍԵՑԻ, ՓԻՐԻ | ՈՐԴԻ ՊԱՍԱԼԻՆ, | ԹՎ(ԻՆ) ՈՄԿԵ (1816):

355. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նույնաձև, վրան քանդակված է երաժշտական գործիք.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԳԱՐԱՊԱՂՈՒ, ԳԻՒՂԷՆ |

236. Մ. Սմբատյանց, էջ 139:

237. Մ. Սմբատյանց, էջ 186-187:

238. ՀՀՊՊԿԱ ք. 57, գ. 1, գործ 439, քերթ 31:





358. ԱՐՉԱՆԱԳԻՐ ԶԱՐ, քառակուսի, սրբա-
տաշ (նկ. 132)
ԵՍ ՅԱԿՈԲ ՍՄԱՐԳԱԽԱՂԳՍ ԳԻՐԵՑԻ,
ԹՎ(ԻՆ) ՌՀԶ (1627):



359. ԽԱՉԶԱՐ, փոքր ու պարզ (նկ. 133).
Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)Չ:

360. ԽԱՉԶԱՐ, փոքր (նկ. 134).
Խ(Ա)ՉՍՄ Բ(Ա)ՐԷՄ(Ա)ԻՍՈՎ(Ա)ՆԷՄԻՆ,
Բ(ՈՒ)ՆԻՄԻԱԹԻՆ, ԹՎ(Ա)Կ(Ա)Ն | Ռ:Կ:Ը:
(1619):


№ 356 և 357-ի գրչանկարները



361. ԽԱՉԲԱՐ (նկ. 135)
 Խ(Ա)ՉՍ Բ(Ա)ՐԷԽ(ԱԻ)Ս| ԳՐԻԳ(Ո)ՐԻՆ:
 Ա(ՍՏՈՒԱ)Ծ|(ԱՏ)ՊՈՒՐՆ Ա(ԻՐՀՆՈՒԱ)Ծ
 Է...: ԺԲ: (12)| ԱԻՐ...:



362. ԽԱՉԲԱՐ
 Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)ՉՍ ԴԽԱՉԱՅՏԻՐ:



363. ՄԻՔԱՅԷԼ ԵՐԵՅ, ԹՎ. ՌԿԸ (1619):
 Հրատ. Մնրատեանց, 186:

364.
 ԽԱՉՍ ՏԷՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ:
 Հրատ Մնրատեանց, 186:

365.
 ԳՐԻԳՈՐԻՆ, ԹՎ. ՌԿԸ (1619):
 Հրատ. Մնրատեանց, 186:

366.
 ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵՆԱԲՍ ՃԱՆՈՒՊԵՐՆ:
 Հրատ. Մնրատեանց, 186:

367.
 ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵՆԱԲՍ ԹՈՍԱՄԻՆ:
 Հրատ. Մնրատեանց, 186:

368.
 ՉՈՒԹՈՒՐԻՆ:
 Հրատ. Մնրատեանց, 186:

369.
 ԴԻՆՈՒՇ ԱՂԱՅԻՆ Է:
 Հրատ. Մնրատեանց, 186:

370.
 ՇԱՀՈՒՄԻՆ, Թ. ՋԿԲ (1513):
 Հրատ. Մնրատեանց, 186:

371.
 ԹՎՆ ՌԿԸ (1619), ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱ-
 ԲԵՆԱԲՍ ԳՐԻԳՈՐԻ ՈՐԳԻ ԽՈՋԱԻՆ:
 Հրատ. Մնրատեանց, 186:

372.
 ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵՆԱԲՍ ԱԻԱՔԻՆ:
 Հրատ. Մնրատեանց, 186:

373.
 ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵՆԱԲՍ ԳՐԻԳՈՐ
 ՔԱՀԱՆԱՅ, ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԻՆ,
 ԹՎԻՆ ՌԿԸ (1619):
 Հրատ. Մնրատեանց, 186:

374.
 ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵՆԱԲՍ ԿԻՐԱԿՈՍԻՆ:
 Հրատ. Մնրատեանց, 186:

375.
 ԱԻԱՆԷՄԻՆ:
 Հրատ. Մնրատեանց, 186:

376.
 ԱԼԹՈՒՆԻՆ, ՍՈՒՐԱՏԵԱՆԻՆ:
 Հրատ. Մնրատեանց, 186:

377. ԽԱՉԲԱՐ, փոքրիկ գրությամբ.
 ՇԻՆԵՑԱԲ...:

Հրատ. Մնրատեանց, 186: →
 Ծանոթ. Այս խաչքարը Մ. Մնրատյանցը իր ժա-
 մանակին տեղափոխել է տվել Սաղիանի վանք (մենք
 այն չենք գտել):

378. ԽԱՉԲԱՐ.
 ԽԱՉՍ ԲԱՐԵՆՕՍ...:
 Գրակ. Զաջրեքունի, նշվ. փաստաթուղթը, թերթ 31:

379. ԽԱՉԲԱՐ.
 ... ԲԱՐԵՆՕՍ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԻՆ, Թ. ՌԿԲ
 (1613):
 Գրակ. Զաջրեքունի, նույն տեղում:

Քալախասը գտնվում է շրջկենտրոնից մոտ 10 կմ հարավ, գոգավոր սարահարթում: 1861 թ. գյուղն ուներ 44, իսկ 1890-ին 86 տուն (375 մարդ) հայ բնակչություն:²³⁹ 1914 թ. գյուղն ուներ 717 հայ բնակիչ:²⁴⁰ Հայտնի է, որ Քալախասի բնակիչները բնիկներ էին:²⁴¹ Երկրամասի հայոց շատ գյուղերի նման սա ևս մեծ կորուստներ է տվել ու ամայացել 1918-1920 թթ.: Խորհրդային կարգերի հաստատումից հետո Քալախասը նորից դարձել է բարեշեն գյուղ: 1980 թ. գյուղն ուներ 263 բնակիչ (բոլորն էլ հայեր):²⁴² Նրանք 1988-ին ենթարկվեցին բռնագաղթի:

Գյուղում և շրջակայքում պահպանվել են աղբյուրներ, եկեղեցի, գերեզմանոց: Առանձնապես արժեքավոր է գյուղամիջի Մր. Աստվածածին եկեղեցին: Այն ամբողջապես կանգուն է, կառուցված



սրբատաշ քարերով, փայտածածկ: Ունի երկու մուտք՝ հարավից և արևմուտքից: Ավագ խորանի երկու կողմերում կան շուղղանկյուն հատակազով մեկական ավանդատներ: Հյուսիսային որմուն, իր ավանդական տեղում պահպանվում է մկրտարանի ավագանը: Ծածկը պահում են երկու զույգ փայտե սյուները: Ըստ պահպանված արձանագրությունների այն՝ կառուցվել է 1833 թ. Քալախասեցի Մովսես Սկրտչյան Նիսիանցի միջոցներով:

Գյուղի հարավային կողմում գործում են մի քանի աղբյուրներ, կառուցված սրբատաշ քարերով:

Գյուղի հյուսիսային կողմի բարձրադիր սարավանդի թեքության վրա տարածվում է գերեզմանոցը: Այստեղ մեր գտած ամենահին տապանագրերը վերաբերում էին XIX դարի երկրորդ կեսին:

Քալախասի հարավային ու հարավարևմտյան կողմերում տարածվում է քավական ընդարձակ պարսկական գերեզմանոցը: Այդտեղ պահպանվել են մի քանի գմբեթաձև դամբարաններ «քյումբազներ»: Հնավայրը թվագրվում է XVII դարի 2-րդ կեսով: Դամբարանների որմերին ու տապանաքարերի վրա պահպանվել են արաբատառ արձանագրություններ:

239. Մ. Սմբատեանց, էջ 139:
240. "Кавказский Календарь на 1915г." Тифлис, 1914, էջ 139:
241. Մ. Բաբխուսյանց, 624, աշխ., էջ 166:
242. «ԱՄՀ», հ. 5, Բաքու, 1981, էջ 336 (աղբյուրներին):

380. ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, հյուսիսային պատին մկրտարանից քիչ բարձր ագուցված սրբատաշ քարին վեց տողով փորագրված է.
ՅԱՄԻ Տ(ԵԱՌ)Ն 1833, ԻՄԿ Ի ԹԻՒՆ ՀԱՅՈՑ 1282, ՅԻՇԱՏԱԿ Է Ս(ՈՒՐ)Բ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՍ ՄԵՓԱԿԱՆ ՍՈՒ(Յ)Ն ԳԻՒՂ ՔԱԼԱԽԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՄՈՎՄԵՍ ՄԿՐՏՉԵԱՆ ՆԻԱԶԵԱՆՑՆ Ե(Ի) ԵՂԲԱԿ(Ր) | ԻՒՐ ԱՇԽԱՏՕՂ ԵԿԵՂԵՑԻՍ ՍԱՐՏԻՐՈՍ ՆԻԱԶՈՒ:

Ծանոթ 1863 թ. քալախանցիները թեև կոնսիստորիայից ստացել էին իրենց եկեղեցու տանիքը նորոգելու բույրավորությունը, սակայն, տեսնելով որ եկեղեցու պատերը ևս խարխուլված են (երկրաշարժից), այդպես էլ ոչ մի նորոգում չկատարեցին: Համապետության պարոն Մուսայել Միրզայանցը 1872 թ. հոգևոր կառավարությանը առաջարկել է իր սեփական միջոցներով այն նորոգել հիմնովին՝ սրբատաշ քարերով, որն արդեն քավական ժամանակ դարձած էր անօգտագործելի: 1875 թ. եկեղեցու բոլոր նորոգչական աշխատանքները բարեհաջող ավարտին էին հասցված (Ֆ. 56, ց. 1, գ. 6214, ք. 1, 3): 1895թ. եկեղեցին դարձյալ գտնվում էր քայքայված վիճակում: Նորոգման նոր աշխատանքների կատարման համար գյուղացիները համախոսակամով դիմել էին հոգևոր կառավարությանը (Ֆ. 56, ց. 1, գ. 9120, ք. 2): Եկեղեցու հաճախակի քայքայման պատճառը երկրաշարժերն էին:

381. ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, ԽԱՉՔԱՐ. ագուցված ավագ խորանի դեպի սրահ նայող արևմտահայաց պատին.

Ի Ս(ՈՒՐ)Բ | ՄԵՂԱՆՆ | ՀԱՆԳՈՒՑԵԱԼ | ՔԱԼԱԽԱՆՑԻ ՄՈՎՄԵՍ ՄԿՐՏԻՉԵԱՆ | ՆԻԱԶԻԱՆՑԻՆ:

382. ԽԱՉՔԱՐ, ագուցված նախորդի օրինակով.

ԹՎ(Ի)Ն ՈՄՂԲ, (1833) | ՅԻՇԱՏԱԿ Է Ս(ՈՒՐ)Բ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾՆԱՅ | ԵԿԵՂԵՑՈՒՅ:

383. ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. հարավային մուտքից վեր 6 տողով արձանագրված է (նկ. 136).

ԱՅՍ Ս(ՈՒՐ)Բ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾՆԱՅ | ԵԿԵՂԵՑԻՆ ՆՈՐՈԳԵՑԻՆ | ՔԱԼԱԽԱՆՑԻ ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԿՆ / ԵՒ ՈՐԴԻ ՆՈՐԱ ՄՈՒՍԱՅԷԼՆ | ՄԻՐԶԱՅԵԱՆՑ Ի Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ | ԻՒՐԱՆՑ: 1873 ԱՄԻ, ՅՈՒԼԻՍԻ 15:

384. ԱՂԲՅՈՒՐ, քիսում է գյուղամիջում, եկեղեցու մոտ: Ծակատին ագուցված սրբատաշ քարին փորագրված է եղել.

ՅԻՇԱՏԱԿՍ ՔԵԱԼԱԽԱՆՈՒ ԲՆԱԿԻՉՔ ՀԱՅՐԱԿԱՆ ԱՂԲՈՒՐՍ ԸԻՆԵՑԻՆՔ ՄԿՐՏԻՉ, ՀԱՅՐԱՊԵՏ ԵՒ ՄԵՋԼՈՒՍ ԱՂԱՍԱԼՕՎՔՍ, 1871 ԱՄԻ, ՕԳՈՍՏՈՍԻ 26:
Գրակ. Քաջբերունի, նշվ., փաստաթուղթ, թերթ 9:

385. ԱՂԲՅՈՒՐ, գյուղում (նկ. 137).
ԻՆՉ ԱՋԱԿՑ(ՈՒ)ԹԻՒՆ ՑՈ(Ի)ՅՑ ՏԱԼՈՒ | ՀԱՍԱՐ ԽՈՐԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՍ

ԵՄ ՀԱՅՏՆՈՒՄ ԸԱՀՈՒՄԵԱՆ | ԵՒ ԶԵԼԱ-
ԽԱՆԻ Գ(ԻՒՂԵՐ)Ի ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ,
ԱԿՏԻՎԻՆ, ՆԱԽ(ԱԳԱՀ) Օ. ՊԱԴՎԱՆԻՆ,
ԲՐ(ԻԳԱԴԻՐ) Մ. ԻՇԽԻՄԻՆ Պ.Կ.Շ.Ն. ՍԵ-
ՐՈԺԱ, ՀԱՇՎԱՊ(ԱՀ) Մ. ՆԻԿՕԼԱՅ, ԶԱՐ-
ՀԱՏ Դ. ՖՐԻԴՈՆ, Մ. ԲԱԲԱ, ՎԱՐՊԵՏԸ՝
Գ. ՄԻՐԶԱԷԱՆ Մ.:

386. ԱՂԲՅՈՒՐ, հնգաթև աստղի քանդակի
աջ կողմում 13 տողով փորագրված է նորոգման
արձանագրությունը (նկ. 138).

ՀԻՇԱՍԱԿ Է ԱՂԲՅՈՒՐ | ՊԱՊՍ ԳԱԶԱ-
ՐԻՑ ԵՒ ՀԱՅՐԻԿՍ ՄԻՔԱՍԵԼԻՑ ՀԻՄԵԸ
ԴԻՎԱՏ Է 1850 Թ. | ԱՀԱ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՄ
1952 Թ. | ՎԱՍԵԼԵՑԵԶ ՋՈՒԻՐԸ ՈՂՈՐՄԻ ՏԻ-
ՎԷՔ ԻՆՉ ՉԵՐԻ ՀԱՐԱԶԱՏ ԳԻՒՂԱՑԻ ԳԱ-
ՆԱԶԵԱՆ՝ ՄԻՐԶԱԶԱՆ. ԶԵԼԱԽԱ(Ն):

387. ԱՂԲՅՈՒՐ, գտնվում է Զարախանից 2
կմ հյուսիս, գյուղից Մատրասա տանող ճանա-
պարհի աջ եզրին: Ամբողջապես քարաշեն է: Ունի
մի քանի գոթեր՝ իրականացված միակտոր մեծա-
չափ քարակտորներից (նկ. 139).

ԻՇԱԿ(Ա)ԿՍ ՄԵԼԸՈՒՄ | ԳԱՐԱՍԱՆԵԱՆ-
ՑԻ, 1861 ԱՄԻ, ՍԱԿՐ(Ա)Ս(Ա)Յ:

ԶԱՐԲԱՆՉ

Գավառի ծաղկուն ու մարդաշատ գյուղերից
մեկն էր: Գտնվում է շրջկենտրոնից (Շափախուց)
9-10 կմ հարավ-արևմուտք, զոգավոր բարձրադիր
սարահարթի վրա: 1861 թ. գյուղն ուներ 123, իսկ
1890-ին՝ 231 տուն (1312 բնակիչ):²⁴³ 1914 թ. Զար-
բանջ ուներ 1723 բնակիչ (բոլորն էլ հայեր):²⁴⁴ Ըստ
Մ. Բարխուտարյանցի. «Զարբանջի բնակիչք ամ-
բողջապես հայ են եւ բնիկ պեղացի»²⁴⁵, իսկ Մ.
Սմբատյանցը նշում է. «Զարբանջ գիւղի բնակիչքն
լեզուով. սովորութիւնով եւ ամեն բանով երեսում են,
որ Պարսկաստանի Խոյ քաղաքիցը, կամ գիւղե-
րիցն են գաղթել. մի քանի դար առաջ: Եւ իսկապէս
Թռռնաւան գաւառիցն են, որ այժմ Չոքսայ մըքալ՝
հանդէպ Նախիջեւանայ՝ յայնկոյս Երասխայ»:²⁴⁶
Այնհայտ է, որ հետազոտողների տեսակետները
իրարամերժ են: Սակայն հարցը լուծվում է գյու-
ղում պահպանված պատմական հուշարձանների
քննությամբ:²⁴⁷

243. Մ. Սմբատյանց, էջ 139:

244. "Кавказский Календарь на 1915г.", էջ 140:

245. Մ. Բարխուտարյանց, էջ 164:


246. Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 168:

247. Մինչև անգամ քարբանջեցիները գաղթած են համարվում
մահ Անիից, ըստ որում իբր տեղական ավանդությամբ. «...
Քարբանջը, ինչպես երեսում է եւ տեղական լեզուից, պիտի
գաղթած լինի Հայաստանից, տեղական ավանդությամբ՝ Ա-
նիից...» (Մ. Սարգիսբեկյան, «Մշակ», 1902, № 62 էջ 2):

Զարբանջի արևելյան կողմում տարածվում է
հին ու խիստ ընդարձակ գերեզմանոցը, որի մի
ծայրում քաղումները ցայտօր շարունակվում են:

Տեղում պահպանվել են հարյուրավոր անար-
ձանագիր անտաշ սալաձև և սրբատաշ ուղղանկ-
յունաձև տապանաքարեր: Վերջիններից մի քա-
նիսն ունեն կենցաղային քեմաներով քանդակներ
ու գաղղեր: Մրանք հար և նման են երկրամասի ու-
րիշ շատ հին գերեզմանոցներում պահպանված
տապանաքարերին, որոնց արձանագիր կամ թվա-
կիր օրինակները հանդիպում են առավելագույն XIV
դարից: Զարբանջի գերեզմանոցում կան նաև
XVII-XVIII դդ. բնորոշ բազմաթիվ տապանաքա-
րեր, որոնց թվում բարեբախտաբար կան նաև ար-
ձանագրվածները: Այսպիսով, եթե ակամա անտե-
սենք գյուղում պահպանված մնացած կարևոր հու-
շարձանները, միայն այս գերեզմանոցի ուսումնա-
սիրությունն ապացուցում է, որ Զարբանջում հայե-
րը բնակվել են առնվազն միջնադարից (ավելի
ճիշտ վաղնջական ժամանակներից): Հետևաբար
ուշ միջնադարում և առավել ևս XIX դարում այն
միայն համարվել է ի հաշիվ Պարսկաստանից ու
այլ վայրերից գաղթած հայ բնակչության:

Գերեզմանոցի հյուսիսային եզրին, բարձրա-
դիր տեղում պահպանվում է Սբ. Սահակ մատուռը:
Մրա որմերում կան ինչպես հին, այնպես էլ նոր
ժամանակների (XIX-XX դդ.) նորոգությունների
առթիվ փորագրված արձանագրություններ:



Ըստ ավանդության մատուռը կառուցվել է լու-
սավորչական դավանանքն ընդունած և այդ իսկ
պատճառով իր ցեղակիցներից նահատակված,
ազգությամբ պարսիկ, ոմն՝ Յուսուֆի (քրիստոնյա
օծվելուց հետո վերանվանվել է Սահակ) գերեզմա-
նի տեղում: Մրա նահատակումը տեղի է ունեցել
1417 թ. մի գետի ափին, որը հետագայում անվան-
վել է Սբ. Սահակ (թրքերեն՝ Փիր Սահաթ): Այս նա-
հատակի պատմությունը արտացոլվել է հայ մա-
տենագրության մեջ: Աղբյուրներից մեկում կար-
դում ենք. «Եւ յուսուֆի ելեալ անտի՝ սկսաւ միսան-
գամ շրջիլ ի քարոզութի ի հեռաւոր գաւառս զամս
ոչ սակաւ, եւ դարձոյց զբազումս յայլագգեաց ի
հաւատս: Չկնի ամի յետ բզմ ժնկաց զնաց յեր-
կիրն շրտանայ ի շամախի քաղաք եւ անդ կալեալ
եղև մատնեցաւ ի ձեռս դատաւորին. եւ հատաւ ի
վր նր վճիռ մահու: Յայնժամ ոսէ յուսուֆի ցղատա-
ւորն. խնդիր մի հայցեմ ի քէն. եթէ կատարես, ինձ
մեծ երախտաւոր լինիս. եւ այս է, զի այրեսցես զիս

հրով՝ ի նշանակ սիրոյն քսի, որ վառեալ կայ ի սրբ-
տի իմում: Չայս իբրև լուսս մի ոմն ի շրջակայից՝
գայրացաւ եւ եհար բրով զգլուխ նր. մինչև պատա-
ռիլ գագաթան եւ հոսիլ արեան յորդոքք եւ երեսս
երանելոյն: Առեալ տարան ապա զնա եւ քարկո-
ծեցին. եւ յետոյ այրեցին զմարմին սբյն. ի եւ զիշե-
րի ծագեաց լոյս ի վր նորա: Եւ եղև կատարումն
յուսիայ՝ իսահակ կոչեցելոյ՝ ի թուին հայոց. պկզ.
(1417) ի ժա. ատր անեկի ամսոյն»:²⁴⁸

Մատուռի հիմնապատերը հին են, շինարվես-
տով բնորոշ XV-XVI դարերին: Նկատվում է նաև,
որ այն շատ անգամ է ենթարկվել նորոգության:
Ներկայում փայտածածկ է, կառուցված սրբատաշ
ու կոպտատաշ քարերով, կրաշաղախով: Հատա-
կազմում ունի միանավ թաղածածկ բազիլիկի հո-
րինվածք: Միակ մուտքը բացված է արևմտյան
ճակատից: Նույն կողմից, արտաքուստ ազուցված
են սրբատաշ մի քանի արձանագիր քարեր, որոնք
պատմում են շենքի կառուցման, նորոգումների հետ
կապված պատմական կարևոր դեպքերի մասին:

Արձանագրություններ են ունեցել նաև Սր.
Սահակ մատուռին նվիրված եկեղեցական տար-
բեր իրեր:

Քարբանջի նոր եկեղեցին հնի տեղում կա-
ռուցվել է 1848-ին. «Հոյակապ եւ զմբեառոր ..., որ
կրում է Ս. Աստուածածին ²⁴⁹ անունը, ...»:²⁵⁰

Քարբանջ գյուղից վերև, այգիների մեջ մի
բլրակի վրա, Սարքու կոչված տեղում կա «Նահա-
տակ» անունով սրբատեղ:

388. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գերեզմանոցում, ուղ-
ղանկյունաձև, սալաձև, եզրերը զարդարված են
քանդակագարդ շրջագոտիով: Կենտրոնում 8
կարճ տողերով փորագրված է (նկ. 140).



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄՍԿԸԱԹԻ, ԿՈՂԱԿԻՑ՝
ՔԻՆԵԼԱԹԻՆ, ՈՐ ԷՒՓՈՒԽԵՎՅԱԿ | ԱՌ-
Ա(ՍՏՈՒՍ)Ը ԹՎ(ԻՆ) | ՌՃՁԵ (1736):

389. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև (նկ. 141).
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԶԱՐԶԱՆՃՅԻ | ՄԱՐՏԻՐՈ-
ՄԻՈՐԴԻ ԴԱԲԻԹԻ, Թ(Վ)ԻՆ ՌՄԿԹ (1820).
ՆՈՒՆՊՐԻ Գ(3):

390. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև,
ԱՅՍ Է Տ(Ա)Պ(Ա)Ն Կ(Ա)ՆՃԵՑԻ ԴՈՒՍՅՐ՝
ԳՐԻԶՈՐԻ ԵՒ (Շ)ԻՐՎ(Ա)ՆՅԻ Գ(Ա)ԶՄԱՐԻ
ԿՈՂԱԿԻՑ՝ Հ(ԱՆ)Կ(ՈՒ)ՑԷԱԼ Խ(Ա)Ն(ՈՒ)-
ՄԻ, Թ(Վ)ԻՆ 1830:

391. ՍԲ. ՄԱՀԱԿ ՄԱՏՈՒՌ, արևմտյան ճա-
կատում մուտքից աջ ազուցված սրբատաշ քարին
8 տողով փորագրված է (նկ. 142).

ԱՅՍ ՆԱՀԱՏԱԿՍ ՅԱՅԼԱԶԳԱՅ Է, Ի ԾՆԷ
ԲՈՒՆԵՍՏՈՅ ԵԿԵԱԼ Ի ՀԱՒԱՏՍ ԼՈՒ-
ՍԱՈՐՉՈՅՆ | ՉԵՆՆԱՏՐԵՑԱԻ Ս(ՈՒՐ)Բ -
ՎԱՐԴԱՊԵՏ Ս(Ա)ՀԱԿ ԱՆՈՒՆ, ՈՐՈՐՅ
ՎԱՄՆ ՀՈՒՐԲ ՓՈՒԽԵՑԱԻ ԱՅՐԵԱԼ ԻՍ-
ԿՈՅՆ | Ի ՄԵՐ ՆՈՐԱՅ ԿԱՌՈՒՑ ԵՒ ԶԱՅՍ
ՓՈԶՐԻԿ ՄՄՏՈՒՐ ՇԱՄԱԽԵՑԻ ԳԱԶԱ-
ՐԵԱՆ | ԱՅՐԸՆ ԽԱՉԱՏՈՒՐ, ՀԱՅՑԷ ԻՑԵ-
ՆՋ ՀԱՆԴԵՊՈՂԱՅ ՍՐՏԻ ՏԵՈՒՐ, | ՄԱԳ-
ԹԵԼ Ի Տ(ԵԱ)ՌՆԷ ՎԱՄՆ ԻՆԶԵԱՆ ԿԵՆ-
ԹԱՆԻ ՋՈՒՐ, 1817 ԹՎԻՆ, | ՄԱՅԻՄԻ 1:

Հրատ. Բարխուտարեանց, 165-166: Մմբատեանց,
163: Քաջբերունի, նշվ. փաստաթուղթը, թերթ 15 (ան-
տիպ):

392. ՍԲ. ՄԱՀԱԿ ՄԱՏՈՒՐ, արևմտյան ճա-
կատում մուտքից վեր ազուցված քարին 13 տողով
փորագրված է (նկ. 143).

ՅԱՄԻ Տ(ԵԱՌ)Ն 1891, ՀԱՅԿԱԿԱՆ 4382, |
ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՄԲ ԱՌ(Ա)ՋՆՈՐԴԻՆ |
ՀԱՅՈՅ ՇԱՄԱԽՈՒ ՎԻՃԱԿԻ | Տ. ՄԵՍ-
ՐՈՎԲ ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍԻ | ՄՄԲԱՏԵԱՆՑ
ՆԱԽՁԵԻԱՆՑԻՈՅ | Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒ-
ԹԵԱՆ ԱՍ(ԵՆԱՅՆ) ՀԱՅՈՅ | Տ.Տ. ՄԱԿԱ-
ՐԱՅ ԿԱԹՈՐԻԿՈՍԻ ՆՈՐՈԳԵՑԱԻ ՍՈՒ-
ՐԲ ՄԱՀԱԿԱՅ | ՆԱՀԱՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՄԱՏ(ՈՒ)ՌՍ | ՏՐՕԶ ԲԱՐԵՊԱՇՏ ԱԶԳԱՅ-
ՆՈՅ | ՄԵՐՈՅ, ՈՐ Ի ԲԱԶՈՒ ԶԱՂԱԶԻ, |
ՎԵՐԱԿԱՅՈՒԹ(ԵԱՄ)Բ ԿԱՐԱՊԵՏ ԶԱՀ(Ա)
ՆԱՅԻ | ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԶԱՐԶԱՆՋՈՒ:

Հրատ. Մմբատեանց, 168: Քաջբերունի, նշվ.
փաստաթուղթը, թերթեր 15-16 (անտիպ է):

393. ՍԲ. ՄԱՀԱԿ ՄԱՏՈՒՐ, ներսում՝ խորա-
ցի պատին հակիրճ փորագրված է.
ԵՍ ՄԵԼԶՈՒՄ:

248. Միքայել Չամչյանց, Հայոց Պատմություն, հ. 3, Երևան.
1984, էջ 440-441:

249. Սր. Սահակ մատուռին նվիրված մի արձանագիր մոմակա-
լից պարզված է, որ գյուղի հին եկեղեցին ևս կոչվել է Սր.
Աստվածածին:

250. Մ. Բարխուտարեանց, էջ 164:

394. ՄԲ. ՍԱՀԱԿ ՄԱՏՈՒՌ, նախորդի մոտ, նմանաճ.

S(Է)Ր ՕՀԱՆՍ:

Ծանոթ. Երկու կարճ հիշատակություններն էլ ունեն գիւնույն ռճն ու տատանները, բնորոշ XVII-XVIII դդ.:

395. ՄԲ. ՍԱՀԱԿ ՄԱՏՈՒՌ, արևմտյան ճակատում, արտաքուստ մուտքից ձախ (հյուսիս) ազդեցված ուղղանկյունաձև սրբատաշ քարին փոքարված է (նկ. 144).

ԱՅՍ ՈՒՆՏԱՏՈՒՆԸ | ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵՑ ԽԱՉԱՏՈՒՐՈՎ | ԳԱՐԵԳԻՆ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՎԵՐԱԴՌՈՒՐԱՍԱՆԻ 1971Թ.:

396. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գտնվել է Սր. Սահակ մատուռի ներսում (ներկայում տեղում չէ): Վրան կարդացված են եղել միայն հետևյալ երկու բառերը. ՏԷՐ ՎԱՐԴԱՊԵՏ ...:

Հրատ. Մմբատեանց, 164:

397. ՄԵՂԱՆԱՏՈՒՆ, այժմ պահպանված չէ: Սրա մուտքի ճակատին գրված է եղել.

ԵՍ ՏԷՐ ԱՄԳ ՇԱՍԱԽԵՅԻ, ՈՐ ԵՄ ՈՐԴԻ ԿԱՐԱՊԵՏԻ, ՄԵՂԱՆԱՏՈՒՆՍ ՇԻՆԵՅԻ, ՀԱՆԴԷՊ ՍՈՐԱ ՅՕՐԻՆԵՅԻ, ՏՆՏԵՍԱՏՈՒՆ ՊԱՏՐԱՍԵՅԻ, ՈՎ ՈՐ ՍՈՐԱ ՄԷՋՆ ԲԱՋՍԵՍՅԷ, ԹՈՂ ԲԱՐՈՎ ՎԱՅԵԼԵՍՅԷ, ՈՍԼԲ (1783) ԹՎԻ:

Հրատ. Մմբատեանց, 164:

398. ՄԵՂԱՆԱՏՈՒՆ, այս արձանագրությունը ևս ներկայում պահպանված չէ.

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1891 ԵՒ ՀԱՅՎԱԿԱՆ 4382, ՀՐԱՄԱՆԱԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԵՍՐՈՎԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇԻՆԵՅԱԻ ՄԵՂԱՆԱՏՈՒՆՍ ՈՒՆՏԱԻՐԱՅ ՏՐՕԸՔ ԲԱԳՈՒԵՅԻ ՀԱՅՈՑ, ՎԵՐԱԿԱՑՈՒԹԵԱՄԲ ԶԱՐԶԱՆՋԱՅ ԿԱՐԱՊԵՏ ԶԱՀԱՆԱՅԻ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ:

Հրատ. Մմբատեանց, 168:

399. ՋԱՆԳԱԿ, նվիրված է եղել Սր. Սահակ մատուռին: Ունեցել է հետևյալ արձանագրությունը.

ՅԻՇԱՏԱԿ Է ՏԷՐ ԳԵՆՐԳԻ ԴՈՒՍՏՐ ԵՂԻՍԱԲԵԹԻՆ, Ի ԴՈՒՌՆ ԶԱՐԶԱՆՋՈՒ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ. ԹՎ. ՌՃԿԷ (1718):

Հրատ. Մմբատեանց, 170:

400. ՄՈՍԱԿԱԼ, նվիրված է եղել Սր. Սահակ մատուռին.

ՅԻՇԱՏԱԿ ԱՄԱԶԻ ՈՐԴԻ ՄԿՐՏՉԻՆ, Ի ԴՈՒՌՆ ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ:

Հրատ. Մմբատեանց, 170:

401. ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅԻ, սրա մասին ամենաինքն հիշատակությունը 1734 թվականից է (թեև առնվազն միջնադարից գյուղում եկեղեցի գոյություն է ունեցել): Հայտնի է, որ 1848 թ. Զարբանջում կառուցվել է նոր եկեղեցի, ըստ որում

հին ու ավերակ եկեղեցու տեղում: Սրա հիմքերը փորելիս գտնվել են հին եկեղեցուն պատկանած մի շարք իրեր, որոնցից մի քանիսն՝ արձանագիր: Նոր եկեղեցին իր հյուսիսային մուտքի ճակատին ունեցել է շինարարական արձանագրություն (արձանագրությունը չի պահպանվել, իսկ եկեղեցին մեզ է հասել խիստ ձևափոխված տեսքով):

ԿԱՌՈՒՅԱԻ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՒՀՈՅ ԱՍՏՈՒԾԱԾՆԻ, ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ Ի ՄԷՐ ԱՉԳԻ ՇԱՍԱԽԵՅԻՆ ԱԿ ՅԱՐՈՒԹԻՆ ՂԱԶԱՐԵԱՆԻ ԵՒ ԿԱՏԱՐԵՅԱԻ Ի ՉԵՌՆ ԺԱՌԱՆԳԻ ՆՈՐԻՆ ՄԱՐԳԱՐԷԻ ԼԱԶԱՐՈՎԻ Ի ՆՈՅԵՄԵՐԻ 4 1848 ԱՄԻ:

Հրատ. Մմբատեանց, 169: Բարխատարեանց, 164 (վերջինիս մոտ արձանագրությունն առավել ամբողջական է հրատարակված, որից և առնում ենք):

Ծանոթ. 1865 թ. քարքանջցիները գրել էին, որ իրենց Սր. Աստվածածին եկեղեցին հնության պատճառով քայքայված էր և նորոգման անհրաժեշտություն էր զգացվել հատկապես տանիքի հատվածում (Ֆ. 56, գ. 1, գ. 4630, թ. 3): Նույն թվին թեմի առաջնորդը կարգադրություն էր արել եկեղեցին պարսպապատել (Ֆ. 56, գ. 1, գ. 4368, թ. 20): 1867 թ. հարկավոր նորոգումները կատարված էին (Ֆ. 56, գ. 1, գ. 3684, թ. 21): 1873 թ. օգոստոսի 16-ին քարքանջցիք նորից դիմել էին հոգևոր կառավարությանը եկեղեցու տանիքը դարձյալ կայրածեքով պատելու խնդրանքով (Ֆ. 56, գ. 1, գ. 6380, թ.1,2): Թույլտվությունը ստացել էին նույն թվին: 1875 թ. մի գեկուցումով կոնսիստորիան սինոդին հայտնում էր, որ Զարբանջի եկեղեցու նորոգման աշխատանքները ավարտված էին (Ֆ. 56, գ. 1, գ. 6214, . 3): 1880 թ. Մարտիս Հայրապետյանի սինոդին գրած խնդրագրում ասվում էր, որ եկեղեցու մի քաղը նորոգելու համար հարկավոր ծախսը կազմում էր 150 ռ. (Ֆ. 56, գ. 1, գ. 7372):

402. ԸՇՈՑ, գտնվել էր Սր. Աստվածածին եկեղեցին կառուցելու ժամանակ: Սրա երկու կողմերում գրված է եղել.

ՅԻՇԱՏԱԿ Է ՍԱՐՏԱՐԻՆ ԵՒ ԵԱՂՈՒՊԻՆ ԱՅՍ ԸՇՈՑԱ:

Հրատ. Բարխատարեանց, 165 (որից և առնում ենք): Մմբատեանց, 169 (ունի միայն «ՄԱՐԴԱՐԻՆ ԵՒ ԵԱՂՈՒՐԻՆ» բառերը):

403. ԽՆԿԱՏՈՒՓ, որի երեսին գրված է եղել. ՅԻՇԱՏԱԿ Է ԹՈՒՆԻԿԻՆ Ի ԴՈՒՌՆ ԶԱՐԶԱՆՋՈՒ ԵԿԵՂԵՅՈՒՆ:

Հրատ. Բարխատարեանց, 165 (ունի՝ ՅԻՇԱՏԱԿ Է ԹՈՒՆԻԿԻՆ, ԵՏՈՒ ՌԹ. ԶԱՐԶԱՆՋԻ ԵԿԵՂԵՅՈՒՆ): Մմբատեանց, 169 (որից և առնում ենք):

404. ՋՐԱՓԱՐՉ, (լվացվելու իբրուղ), երեսին գրված է եղել.

ԹՈՒՄԱՆԻ ՈՐԴԻ ՕՎԱՍՄՓԻՆ Ի ԴՈՒՌՆ ԶԱՐԶԱՆՋՈՒ ԵԿԵՂԵՅՈՒՆ:

Հրատ. Մմբատեանց, 169: Բարխատարեանց, 165 (ունի՝ ՅԻՇԱՏԱԿ Է ԹՈՒՄԱՆԻ ՈՐԴԻ ՕՎԱՍՄՓԻՆ, ԵՏՈՒՐ ԶԱՐԶԱՆՋՈՒ ԵԿԵՂԵՅՈՒՆ ձևով):

405. ՄՈՍԱԿԱԼ, որի - երեսին «լա գրով» գրված է եղել.

ԳԱԼՈՒՄՍԻ ՈՐԴԻ ՍԱՀԱԿԻՆ: Տ. չհայտնաբերված, 165: Սմբատեանց, 170:

406. ՄՈՍԱԿԱԼ, վրան «անձե գրով» գրված է եղել.

ԱՅՍ Է ՅԻՇԱՍԱԿՍ ԹԱՐԻՂՈՒԼՈՒ ԿՈՂԱ-ԿԻՑ ԿՈՒԼԻՆ, Ի ԴՈՒՌՆ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. ՈՆ. ՇԱՊԻՔ:

Չհայտնաբերված, 170: Տանոթ. №. 399 և 400 արձանագրությունները միևնույն մտակալի վրա են գտնված եղել:

407. ՄՈՍԱԿԱԼ, վրան եղել է. ՅԻՇԱՍԱԿ Է ՇԱՍԱԽԵՅԻ ԳԱԶԱՐ ԳՐԻ-ԳՈՐԵԱՆԻ ԿՈՂԱԿԻՑ ՀՈՒՓՄԻՍԱՅ

ՅԱԿՕԲՈՎՆԱՅԻՆ 1819 ¹¹/₆:

Չհայտնաբերված, 170:

408. ՋԱՆԳԱԿ, վրան եղել է. ՅԻՇԱՍԱԿ Է ՄԻՍԵՕՆԻ ՈՐԴԻ ՄԿՐԻՆ ԶԱՐԶԱՆՋԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ. ԹՎ. ՌՃԶԳ (1734):

Չհայտնաբերված, 170 (որից և առնում ենք): Բարխուտարեանց, 165 (ՄԻՍԵՕՆԻ փոխարեն ունի ՄԻՍԵՈՒՆ):

409. ՊԱՏՎԱՆԳԱՆ, վրան փորագրված է եղել «հին և տձև տառերով».

ԿՈՒԼԻՆ Ի ՅԻՇԱՍԱԿ ԵՏՈՒՐ ՍՈՐԱ Հ. ԻՆ: ԱՅՍ Է ՅԻՇԱՍԱԿՍ ԲԱՐԻՉՈՒԻ ԵՒ ՈՒՐ ԿՈՂԱԿԻՑ Ս.:

Չհայտնաբերված, 165:

Շ Ա Ք Ի Ի Շ Ր Ջ Ա Ն

Շաքիի շրջանը կազմավորվել է 1930 թ. օգոստոսի 8-ին: Իր ներկայիս զբաղեցրած տարածքով համապատասխանում է պատմական Բուն Աղվանքի Շաքե գավառին: Շրջանը սահմանակից է Ադրբեջանի հանրապետության Կախի, Եվլախի, Աղդաշի, Կուտկաշենի, Վարդաշենի և Դաղստանի Ռուտուլի և Ախտիի շրջաններին: Ջրաղեցնում է 2.4 հազ. քառ. կմ մակերես: Շրջանում կա մեկ քաղաք՝ Շաքի շրջկենտրոնը, մեկ քաղաքատիպ ավան և 64 գյուղ:

Մինչև 1918 թ. շրջանի ներկայիս տարածքում գոտ հայաբնակ էին 17 գյուղեր. Գետաշեն (Չալքյան), Գյոյբուլաղ կամ Գյոգբուլաղ, Դայաբաշի, Դոզլու, Մալիբեկ, Մեծիս, Ջյուջամիշ, Աղվիլաքյան, Ջաֆարավատ, Չարդաք, Գյոբեկլու, Ալյար, Մաղշեն, Ալդինբուլաղ, Դաշբուլաղ, Մաբաթլու, Օրաբան: Մեծ թվով հայեր բնակվում էին նաև Շաքի քաղաքում: 1918 թ. ամռանը օսմանցիների ու մուսավաթականների համատեղ կազմակերպած հայերի զանգվածային ջարդերից հետո վերը նշված բոլոր 17 գյուղերն էլ հայաթափ են եղել: Միայն մի քանի գյուղերից մազապուրծ փրկված հայերը (գլխավորապես Մաբաթլու գյուղից) անցնելով Ալազան գետը երկար ու կործանարար դեգերումներից հետո (անտուն, սով, հիվանդություններ) ի վերջո միայն 1922 թ. հիմնադրում են նոր գյուղ (այժմ՝ Վրաստանի հանրապետություն, Ծիթեյի-Շղարոյի շրջան, Կարմիր Մաբաթլու գյուղ):²⁵¹ Շրջանի տարածքում մինչև 1988-ը չնչին թվով հայեր բնակվում էին միայն Շաքի քաղաքում (մայրենի դպրոց չունեին), իսկ վերոհիշյալ բոլոր գյուղերը կամ անբնակ էին և կամ՝ թրքաբնակ:

Շաքիի շրջանի տարածքում մեծ թիվ են կազմում նաև XVIII դարի կեսերից կրոնափոխ եղած (մահմեդականացված) հայերով բնակեցված (այժմ իրենց համարում են ադրբեջանցիներ) գյուղերը: Դրանցից են՝ Քիշ, Չայգիտ, Պարտեգ, Զունգյուտ (Բաշ և Դշլաղ), Թուրք-Օրաբան և այլն: Շրջանի տարածքում հայ մշակույթի հուշարձանները սփռված են ամենուր, ինչպես 1918 թ-ից հայաթափ եղած գյուղերում ու դրանց շրջակայքում, այնպես էլ դավանափոխ բնակչություն ունեցող հին հայկական գյուղերում:

Առանձնապես արժեքավոր են՝ Քիշ գյուղի Մբ. Աստվածածին, Շաքիի Մբ. Հոփսիսին, Զունգյուտի Մբ. Աստվածածին եկեղեցիները, Պարտեգ գյուղի Մբ. Գևորգ և Մբ. Գեղարդ վանքերը, Շաքի քաղաքի բնակելի ու հասարակական շենքերը, երեք եկեղեցիները, բազմաթիվ հին գերեզմանոցները, խաչքարեր ու տապանաքարեր: Պահպանվել են նաև վիմագիր արձանագրություններ: Ի դեպ նախկինում շրջանի տարածքում դրանց հավաքման ու հրատարակման գործով զբաղվել է միայն երախտաշատ Մակար Եպիսկոպոս Բարխուտարյանը, որի փոքրիկ հավաքածուն՝ ընդամենը 13 արձանագրություն, գավառի պատմության ուսումնասիրության առումով մինչև օրս հանդիսացել է եզակի աղբյուր: Մեր կողմից շրջանի տարածքում կատարած համապատասխան աշխատանքների ընթացքում հավաքվեց ևս 24 արձանագրություն, որոնք բոլորը միասին՝ 37 միավոր արձանագրություն ներկայացնում ենք ստորև:

ԱԼՅԱՐ

Մինչև 1918 թ. հայաբնակ, ներկայումս ադրբեջանաբնակ գյուղ՝ շրջկենտրոնից 30 կմ հարավ: Միավորված է Ալդինբուլաղի տնտեսության հետ: Հայտնի է, որ այս գյուղի բնակչությունը գլխավոր

րապես գաղթել էր նույն գավառի (շրջանի) հինավուրց ու նշանավոր Պասնճաղ²⁵² գյուղից: 1888-ին

251. Տե՛ս մեր՝ Հայաստանի հայերի միակ գյուղը Կախեթում. Մաբաթլու, «ՀՀ», 1995, № 205, 17 օգոստոսի, էջ 2:

252. Մ. Կարապետյան, Պասնճաղ. գյուղատեղի, որի անունը արժե հիշել, «ՀՀ», 1995, № 200, 12 օգոստոսի, էջ 3:

Մ. Բարխուտարյանցի այցելության ժամանակ ուներ 50 տուն՝ 299 բնակիչ (154 արական և 145 իգական):²⁵³ 1914 թ. Այսպիսի ուներ 291 բնակիչ (բոլորն էլ հայեր):²⁵⁴ Գյուղի բնակչության մեծամասնությունը զոհ է գնացել 1918 թ.:

Գյուղի պատմական հուշարձաններից արժեքավոր էր Մր. Աստվածածին եկեղեցին՝ կառուցված 1885 թ.: Պահպանվում է հայկական գերեզմանոցը XIX-XX դդ-ին վերաբերող արձանագիր տապանաքարերով:

410. ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, վրան եղել է հակիրճ հիշատակություն՝ միայն թվականը: 1885 - ԻՆ:

Հրատ. Բարխուտարյանց, 261:

Ծանոթ. Ըստ վավերագրերի Այսր գյուղում եկեղեցի գոյություն է ունեցել դեռևս 1851 թ. (Ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 95): Այն հիշվում է նաև 1870 թ. (Ֆ. 56, ց. 1, գ. 5570, ք. 1): Հայտնի է, որ 1884 թ. այսրցիները ստացել էին իրենց քայքայված եկեղեցին նորոգելու քույրավորություն (Ֆ. 56, ց. 1, գ. 7849, ք. 1): Ստացվում է, որ 1885 թվականը, որը փորագրված է եղել եկեղեցու վրա, նորոգության ավարտի տարին է, որը սակայն Մ. Բարխուտարյանցը համարել է կառուցման տարի:

ԳՅՈՅԲՈՒԼԱՂ (ԳՅՈԳԲՈՒԼԱՂ)

Մինչև 1918 թ. հայաբնակ, ներկայումս աղբրեջանաբնակ գյուղ շրջկենտրոնից 27 կմ հարավ: Ըստ գյուղում ու շրջակայքում պահպանված պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրության սա ևս հնագույն ժամանակներից հայաբնակ է եղել, սակայն գավառի շատ գյուղերի նման XVIII դարի կեսերին խաների հայա-հալած քաղաքականությունից ստիպված լքվել է ու դարձել անբնակ: Բնակչությունը ցրվել է զանազան վայրեր: Նույն դարի վերջերին գյուղը վերըստին կենդանացել է ի հաշիվ արցախահայ վերաբրնակիչների: Հայտնի է, որ դրանց հիմնական մասը արտագաղթել էր Խաչեն և Ջրաբերդ գավառներից: Նորաբնակ հայերը Արցախից իրենց հետ բերել էին նաև սուրբ մասունքներ, ձեռագրեր: 1874 թ. գյուղն ուներ 1223 հայ բնակիչ:²⁵⁵ 1886թ. այն կազմում էր 1206 մարդ:²⁵⁶ Մ. Բարխուտարյանցն արձանագրել է 184 տուն (500 արական, 375 իգական) բնակիչ:²⁵⁷ XIX դարի վերջերից գյուղի բնակչությունը նկատելի ավելացել է և արդեն 1914 թ. կազմում էր 1489 մարդ (բոլորն էլ հայեր):²⁵⁸ 1918 թ. գյուղի հայ բնակչությունը զոհ է գնացել օսմանյան և մուսավաթական հրտակախմբերին:

Գյուղամիջի Մր. Աստվածածին եկեղեցին, որն հիշվում է դեռևս 1851 թ-ից²⁵⁹ ներկայումս գո-

յություն չունի: Պահպանվում է հայկական ընդարձակ գերեզմանոցը, ուր բազմաթիվ են XIX-XX դդ-ին վերաբերող տապանագրերը:

Գյուղի արևելյան կողմի ձորի արևելյան սարավանջի ստորոտում պահպանվում է մի ավերակ մատուռ, իսկ շուրջը գերեզմանոց: Վերջինս հարուստ է անտաշ սալանման տապանաքարերով: Մատուռը կառուցված է եղել սրբատաշ չեչ քարատեսակով: Հնավայրը հայտնի է «Եղիշ Առաքել» անվամբ:

411. ԵՂԻՇ-ԱՌԱՔԵԼ ՄԱՏՈՒՌ, խորանի ներսի կողմում, մի անտաշ որձաքարի վրա եղել է. ԽԱՉՍ ԱԼԹԱՐ ԿԱԶԻՆ Է. Ի:
Հրատ. Բարխուտարյանց, 236:

ԴԱՇԲՈՒԼԱՂ

Մինչև 1918թ. հայաբնակ, ներկայումս՝ քրքարե-նակ գյուղ շրջկենտրոնից 26 կմ հարավ-արևմուտք: Միավորված է Ղարաղալլի տնտեսության հետ: Հնում գավառի ամենահայտնի, մարդաշատ ու բարգավաճ գյուղերից մեկն էր: Ականատեսի նկարագրությամբ Դաշբուլաղի հայերը. «...գովանի քաջությամբ հոչակեալ կան ի մեջ շրջակայ գաւառաց, վասն որոյ լեռնականք չհամարձակին ամենկին մխիլ ի բնակութիւնս, ի հօտ եւ ի անդեայս սոցա, դիտելով թէ առաւել ունին վնասիլ քան թէ շահիլ... ինքեանք անձանձիր աշխատասէրք: Աստ բնակին ազնուական գերդաստանք Ասրի բեգեանց, զորութիւնն որոց դրրդեցոյց զբնակս Պարսից անհնարին հարուածովք ի 1826 ամի»:²⁶⁰ 1850-ական թթ գյուղն ուներ 150 տուն հայ բնակչություն:²⁶¹ 1874 թ. այն կազմում էր 1914 մարդ:²⁶² Գյուղում կար մեկ եկեղեցի և 3 ձիթհան: 1886 թ. Դաշբուլաղի բնակչությունը զգալի չափով աճել էր և հասել 3135 մարդու:²⁶³ Մ. Բարխուտարյանցը արձանագրել է միայն 1355 մարդ, 200 տուն (707 արական, 648 իգական): Նշված ժամանակաշրջանում գյուղում կար նաև ձիթհան (քանակը չի նշված և հողմադորի):²⁶⁴ 1914 թ. Դաշբուլաղն ուներ 2637 հայ բնակիչ:²⁶⁵ Գյուղի բնակչությունը գրեթե ամբողջապես ոչնչացվել է 1918-1919 թթ., համարյաբոլոր նշված տարիներին հայաթափ դարձած գավառի տասնյակ գյուղերի ցանկը:

Գյուղամիջի Մր. Գևորգ եկեղեցին ներկայումս գոյություն չունի: Ըստ շինարարական արձանագրության այն կառուցված է եղել 1828 թ.:

Գյուղի գերեզմանոցի հին մասում պահպանվում են բազմաթիվ տապանաքարեր, որոնք պատ

253. Մ. Բարխուտարյանց, էջ 261:

254. "Кавказский Календарь на 1915г.", էջ 87:

255. "Кавказский Календарь на 1885г.", էջ 215:

256. "Кавказский Календарь на 1894г.", էջ 156:

257. Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 236:

258. "Кавказский Календарь на 1915г.", էջ 102:

259. ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 95:

260. Ս. Ջալալեանց, նշվ. աշխ., էջ 375-376:

261. Նշվ. աշխ., էջ 375:

262. "Кавказский Календарь на 1885г.", էջ 216:

263. "Кавказский Календарь на 1894г.", էջ 157:

264. Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 237: Ընդ որում մեջ

բերված տների և մարդկանց թվերի հետ հաշված են եղել նաև Սոկոտրլու և Թերեքա գյուղերի բնակիչները:

265. "Кавказский Календарь на 1915г.", էջ 116:

կանում են Դաշրուլադի հին ու բնիկ հայերին: Առանձնապես ընդարձակ է գերեզմանոցի նոր՝ XIX-XX դարերին վերաբերող հատվածը: Այդ մասում բազմաթիվ են արձանագիր տապանաքարերը:

Դաշրուլադի շրջակայքում՝ Դարա-դարա, Բյուրյուլու, Սոկյուրլու (Ուոուտ), Մոլլա-դարա, Ինջիլու, Թերեքա և Օհան սար կոչված տեղերում պահպանվում են հին գյուղատեղերի, եկեղեցիների ու գերեզմանոցների ավերակները:

412. ՄԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ, շինարարական արձանագրությունը.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԳԵՆՐԳԱՅ ԵԿԵՂԵՑԻՌՅՍ Ի ՀԱՍԱՐԱԿ ԺՈՂՈՎՐԴՈՑ ԴԱՇՐՈՒԱՐՈՒ, ՌՄՀԷ (1828):

Հրատ. *Բարխուտարեանց*, 237:

413. ՏԱՊԱՆԱԲԱՐ, գերեզմանոցում. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՉԱՐԱԲԵՐԴՅԻ ՄԵԼԻՔ ԱՌՍՏԱՄԻՆ ...:

Հրատ. *Բարխուտարեանց*, 237:

Ծանոթ. Սա օրինական մեկիքներից չի եղել (Մ. *Բարխուտարեանց*, էջ 237):

ՂԱՅԱԲԱՇԻ

Մինչև 1918թ. հայաբնակ, ներկայումս թրքաբնակ գյուղ՝ Արջկան գետի ձախ կողմի բարձրության վրա, Գետաշեն գյուղից գետի հոսանքով 6-7 կմ ցած, շրջկենտրոնից 60 կմ հարավ-արևելք: Գյուղը հնուց ի վեր հայաբնակ է եղել, սակայն XVIII դարում զրկվել է հայ բնակչությունից և միայն XIX դարի սկզբներին վերստին բնակեցվել Պարսկա-Հայքի Խոյ գավառից ու համանուն քաղաքից գաղթած հայերով: 1886 թ. գյուղն ուներ 1438 հայ բնակիչ:²⁶⁶ Նույն թվաբանակն է արձանագրել նաև Մ. Բարխուտարյանը, այն է՝ 226 տուն (789 արական, 649 իգական):²⁶⁷ 1914 թ. Դաշարաշին ուներ 3138 բնակիչ (բոլորն էլ հայեր):²⁶⁸ Գյուղի հայ բնակչությունը ոչնչացվել է 1918 թ. օսմանցիների և մուսավաթականների կողմից:

Գյուղամիջի Սք. Ստեփանոս եկեղեցին ներկայումս չի պահպանվել: Հայտնի է, որ այն հիմնավորապես նորոգվել էր 1890 թ., ըստ որում՝ 1830թ. և նորոգման ենթարկված եկեղեցու տեղում: Գյուղում գործում էր արական միդասյա Սք. Ներսիսյան ուսումնարանը: Պահպանվում է գյուղի գերեզմանոցը բազմաթիվ տապանաքարերով:

Գյուղի հարավային կողմի դաշտակի բերանին պահպանվում են գյուղատեղի, ավերակ եկեղեցու և գերեզմանոցի մնացորդները: Հնավայրը հայտնի է «Շինատեղ» անվամբ:

414. ՄԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ, մի քարի վրա.

ՆՈՐՈԳԵՑԱՒ ԱՐԴԵԱՄԲԸ ԺՈՂՈՎՐԴՈՑ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՍ ՂԱՅԱԲԱՇԻ ԳԵՂՁ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1830, 10 ԱՊՐԻԼԻ:
Հրատ. *Բարխուտարեանց*, 224:

415. ՄԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ, այլ քարի վրա եղել է.

ԽՈՅԵՑԻՔ ՈՐ ԵԿԻՆ ՅԵՐԿԻՐՆ ՇԱԲԻ, ԷՐ ԹՎԻՆ ՀԱՅՈՑ ՈՍՇՁ, ԵՒ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1807, ԵՒ ԱՅՍ ՂԱՅԱԲԱՇԻ ԳԻՒՂՆ ԳԱԼՆ ԷՐ ԹՎԻՆ ՀԱՅՈՑ ՈՍՇԳ, ԵՒ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1824:

Հրատ. *Բարխուտարեանց*, 224:

Ծանոթ. Գ.Մ.Մ. ստորագրությամբ մի քրակցության մեջ կարդում ենք. «Նոյեցիք մեր կողմերը մտել են ճիշտ 1805 թուին: Դայարաշի տեղափոխուելը Ջաֆարատից եղել է 1827 թուին...» («Նոր-Դար», 1895, № 73, էջ 3): Ինչպես տեսնում ենք, քվականների մեջ տարբերություններ կան, որը ճշտելու համար լրացուցիչ աղբյուրների ուսումնասիրություն է հարկավոր:

416. ՄԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ, վերջին հիմնավոր նորոգությանը վերաբերող հակիրճ հիշատակությունը.

1890:

Հրատ. *Բարխուտարեանց*, 224:

ՇԱԲԻ

Շաքի քաղաքի, ինչպես նաև ուրիշ հին քաղաքների (Փայտակարան, Պարտավ, Կապադակ) հիմնադրումը արարական աղբյուրները (օրինակ՝ Բեկագորին) վերագրում են պարսից Կավադ (ծն. թ. անհտ. - 531) քաղափորին: Շաքին իրավամբ երկրամասի ամենահին քաղաքներից մեկն էր և իր բազմադարյան պատմության ընթացքում բազմիցս հիշատակվում է թե հայկական և թե օտար աղբյուրներում: Վաղ միջնադարում այն թեմական եպիսկոպոսանիստ էր, որի առաջնորդներից մի քանիսը անգամ ընտրվել են կաթողիկոսներ: VI դարում Շաքին հիշատակվում է Հովհաննես Գարեղենցի կաթողիկոսի (557-574) Աղվանից Արաս կաթողիկոսին (551-595) գրած նամակում՝ հավատարմորեն հաստատուն պահելու կապակցությամբ. «...Ամբակումայ՝ Շաքոյ եպիսկոպոսի ...»:²⁶⁹ VII դարի երկրորդ կեսում Աղվանից կաթողիկոս է հռչակվում նախկինում Շաքիի թեմի եպիսկոպոս տեր Եղիազարը. «... Եղիազար՝ այր քարի և ազնուական: Մա էր եպիսկոպոս ի Շաքոյ ...»:²⁷⁰

Կարգվելով կաթողիկոս սա գահակալում է 6 տարի՝ 683-689 թթ. «Տէր Եղիազար, ամս Զ, յեպիսկոպոսութենէն Շաքոյ»:²⁷¹ Միևնույն ժամանակաշրջանում Շաքն անվամբ հիշատակվում է նաև շրջակա ողջ գավառը:²⁷² 764 թ. Շաքին ինչպես նաև

266. "Кавказский Календарь на 1894г.", էջ 160:

267. Մ. Բարխուտարեանց, էջ 225:

268. "Кавказский Календарь на 1915г.", էջ 138:

269. Մ. Կաղանկատուացի, նշվ. աշխ., էջ 122:

270. Նշվ. աշխ., էջ 213:

271. Նշվ. աշխ., էջ 344:

272. Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ա. Գ. Արբախյան, Երևան, 1944, էջ 348:

շրջակաները ավերվում են խազարների արշավանքի հետևանքով. «Բազում զորք զումարելով՝ (Խաբանը) հանձնեց զորավարներից մեկին, որի անունն էր Ռափթարխան՝ Խաբարի խորհուրդը տոհմից, և առաքեց մեր աշխարհի վրա, որը Եզդիտի ձեռքում էր: Ասպատակ սփռելով Կուր կոչված հզոր գետի հյուսիսային կողմերում, առան բազում զավառներ՝ Հեջար, Քաղա, Ոստան Մարգալանյան, Հաբանդ, Գեղավու, Շաբե, Բեխ, Խենի, Կամբեխճան, Խողմազ: Այս զավառները Աղվանից աշխարհում են»:²⁷³ 775 թ. Տարոնի Աշոտ իշխանի (748 թ. կուրացվել է, իսկ 761-ին մահացել Դարույնք ավանում) եղբոր՝ Ատրնեսեսի երեք որդիները Տարոնից դիմում են Վրաստան և վրաց Արչիլ թագավորից (այն ժամանակ Արչիլը գտնվում էր Կախետում) կալվածքներ ստանում Շաբե (Շաբի) գավառում: Այդի գետակի ավազանից սկսած մինչև Ալազանի վերին հոսանքում գտնվող Գավազնի քաղաքը (ներկայիս Թելավի մոտ):²⁷⁴ Տարոնի հայ բազրատունի իշխանների՝ Շաբիում հաստատվելու 775 թ. դեպքերը իրենց արձագանքն են գտել վրաց մատենագրության մեջ. «Ատրնեսես կույրի եղբոր որդիք՝ երեք եղբայրները, որոնք այրեցին հորեղբոր աչքերը, Տարոնից էին եկել Շաբի ու հաստատվել այնտեղ Արչիլի հրամանով, քանի որ Կովկասի բոլոր ծայրերը Ռանի կողմից անբնակ էին դարձել ... և երեք եղբայրները հաստատվեցին մինչև Գուդգուղ (Գուդգուլ)»:²⁷⁵

IX դարի սկզբներին Շաբիին և շրջակա գավառներին տիրում էր վերոհիշյալ իշխանական տան ներկայացուցիչ Սմբատի որդի Մահլը. «... Մահլ իրն Մունբատը, քրիստոնյա մեկը հայկական բարոյակներից»:²⁷⁶ Սրան հաջորդում է որդին՝ Համամ-Հովհաննես (արաբները անվանում էին Մուավիա) թագավորը: Վերջինիս հաջորդում է որդին՝ Ատրնեսես թագավորը, որին էլ իր որդին՝ Իշխանիկ թագավորը:²⁷⁷ Այսպիսով Շաբիի հայ Բազրատունիների իշխանությունը, որը հիմնվել էր 775 թ. և հասել թագավորական աստիճանի, այդ իսկ կոչումով զոչառակ էլ մինչև 963 թ. այսինքն շուրջ 200 տարի:²⁷⁸

1124 թ. Շաբին ազատագրում և իր տիրույթներին է միացնում վրաց Գավիթ թագավորը. «Գավիթ թագավորը պարսիկների դեմ մղվող պատերազմներում մեծ քաջություն ու կորով էր հանդես բերում: Նա բազմիցս պարտության էր մատնել այլազգի զորքերին, կոտրել նրանց հզորությունը, զենքի ուժով նա պարսիկների ձեռքից բազմաթիվ և

նշանավոր զավառներ էր գրավել: Նա գրավեց Տիխիս և Դմանիս քաղաքները, Շիրվանը, Շաբին և Շամքորը, նվաճեց բազում այլ զավառներ»:²⁷⁹

1160-ական թթ. հիշվում է. «... Երիսթավն Շաբեյ ...»:²⁸⁰ 1182 թ. Շաբիում հիշվում է Կյուրիկե թագավորը. «Ի ՇԼԱ թուին Լիպարիտն տաճիկ եղև: Կիրիկե Շաբեյ թագաւորն գնաց ի սուլտանն եւ դարձաւ անդրէն պատուով»:²⁸¹ XIII դարի սկզբներին Շաբին ազատագրում են հայոց Չաքարյան իշխանները. «... Արառին տիրել սեփական ժառանգութեանն՝ նախնեաց մերո՛ւ, ետ ի ձեռս մեր յառաջ գանառիկ դղեակն Անբերդ, եւ զթագաւորանիստ քաղաքն Անի, ապա գամորն. Բջնի, զՄարանդ, Միչք եւ Գաւազանք, ի Թարլժ, ԳԿարնոյ քաղաք մինչև Խլաք: զՇաբի եւ զՇրուան, ...»:²⁸² Չաքարյանների կողմից Շաբիի ազատագրման մասին պահպանվել են նաև մատենագրական այլ տեղեկություններ:²⁸³ Ամբողջ XIII դարը ինչպես հայոց աշխարհի մնացած տեղերում, այնպես էլ օտարների լուծը թոթափած հայաշատ Շաբին ապրում էր ազատ, խաղաղ, բարգավաճ ու աշխույժ կյանքով: Այս ժամանակներում Շաբին նաև վաճառաշահ ծաղկուն քաղաք էր: Առանձնապես հայտնի էր իր բարձրորակ մետաքսով ու կաշեղենով. «Արմինիայում հայտնի նահանգ է (Շաբան-Մ. Կ.), որտեղի կաշեղենները հռչակավոր են»:²⁸⁴ 1497 թ. Շաբիում հիշվում է. «... Շահ-Հիսսէին անուն Շաբու պարոնն ...»:²⁸⁵ 1548 թ. Շաբին ավերում է պարսից թագավոր Շահ Թամազը:²⁸⁶ Նույն ժամանակներում Շաբիի տեր է հիշվում Հասան-բեկի որդի Դավրիշ-Մահմադը:²⁸⁷ 1598 թ. քաղաքը գրավում են օսմանցիները. «986 թ. (1598), երբ Ալեքսանդրե խանը հպատակություն ցույց տվեց, նրան հանձնարարվեց Շաբի բերդի գրավումը: ... Հետո հարմար առիթ գտնելով զեան անցան և պաշարեցին Շաբիի բերդը: Բարձրյալն Աստծո բարերարությամբ նրանք բերդը գրավեցին փաղիշահական պետության համար: Իր հոր այդ ծառայության փոխարեն Լեվենդի որդին Առաքել-Միրզան նշանակվեց այդ Էլայեթի իշխողը»:²⁸⁸ 1640 թ. դրությամբ Շաբին «Ունի 3000 տուն, 7 մեհրաբջաւի: ... Ունի նաև խան, բաղնիք և շուկա: Այգիներից և պարտեզներից անմման մետաքս է ստացվում»:²⁸⁹ 1716 թ. Շաբին ենթարկվել է ավեր

273. Վևոնդ, Պատմություն, քարզմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 108:
 274. Ն. Աղոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 81:
 275. Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Ա, Երևան, 1934, էջ 196:
 276. «Արաբացի մատենագիրները Հայաստանի մասին» հավաքեց և թարգմանեց Բազրատ Խալաթյանը, Վիեննա, 1919, էջ 92:
 277. Մանրամասները տես՝ Մ. Գ. Բարխուդարյան, Արցախի, Շաբիի և Փառխոսի իշխանությունները, «ՊԲՀ», 1971, № 1, էջ 58-72:
 278. Նույն տեղում:

279. Մատթեոս Ուտայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 238-239:
 280. Մեծին Վարդանայ Բարձրաբերդցոյ Պատմութիւն Տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 127:
 281. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի, Երևան, 1942, էջ 15:
 282. «Դիվան հայ վիճագրության», պրակ 6, կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հռ. Մ. Ջանիդաղյան, Երևան, 1977, էջ 22:
 283. Ստեփանոս Օրբելյան, Մյունխի պատմություն, Երևան, 1986, էջ 316:
 284. «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց ժ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 84:
 285. «ԺԵԳ», էջ 236:
 286. Լ. Մելիքսեթ-բեկ, Վրացական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Գ, Երևան, 1955, էջ 62:
 287. Նշվ. աշխ., էջ 16:
 288. «Թուրքական աղբյուրներ», հ. Ա, Երևան, 1961, էջ 38-39:
 289. Էվիյա Չեկեբի, Երևան, 1967, էջ 88:

ման. «... ճարեցիք ... ավերեցին Ղարաբաղը, Շաքին»:²⁹⁰

XVIII դարի կեսերին Շաքիի խան է հիշվում Հաջի Չալաբը (Չալապ), որը 1753 թ. գրավել էր Շաքին և Շամախին:²⁹¹ Այս խանի հայրը տեղի այն հայերից էր, որոնք չդիմանալով դեռևս XVIII դարի սկզբներից սաստկացած կրոնական հալածանքներին՝ դավանափոխ էին եղել. «... այս Հաջի-Չալաբի հայրը հայ երեց էր, և ինքը Հաջի-Չալաբը մահմեդականացել էր»:²⁹² Մարսափելի հալածանքներից ու բռնություններից ազատվելու հույսով Շաքիի և համանուն ողջ զավառի քրիստոնյա բնակչությունը (այդ թվում մասամբ վրացիներ) օգնության խնդրանքով դիմումներ էին հղել ռուսաց Պետրոս Մեծ թագավորին, դրանցում նշելով իրենց օրհասական կացությունը:²⁹³ 1769 թ. զավառի քրիստոնյա բնակչության դրությունը նկարագրված է հետևյալ կերպ. «Այս երկրում բնակվում են շատ քրիստոնյաներ [դավանությանը] հայեր՝ բացահայտ, և վրացիներ՝ գաղտնաբար, մահմեդականներից երկյուղ կրելու պատճառով ...»:²⁹⁴ 1767 թ. Շաքի քաղաքում առավել ազդեցիկ հայերից հիշվում է Մահտեսի Դուկասը:²⁹⁵ 1796 թ. Շաքին շրջակայքի հետ մեկտեղ առաջին անգամ անցավ ռուսական տիրապետության տակ. «Իսկ գրաֆ Ջուրովն՝ յաղթել նուաճեալ զամենայն տիրոջս Աղուանից, հնազանդեցոյց զխանսն Բաքուայ, Լանքեարանայ, Շամախու, Նուխուայ, ...»:²⁹⁶

1797 թ. ռուսների ահից Ճարու-Բելաբան էր փախել Շաքիի Մուլեյման խանը:²⁹⁷ 1806 թ. Յիցիանովը Շաքիի խան էր նշանակել Ջաֆար-Դուլի-Խանին:²⁹⁸ 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով վերջնականապես ամրապնդվում է Շաքիի միացումը Ռուսաստանին, սակայն, ի մեծ հիասթափություն հայերի, դրանից նրանց ծանր վիճակը բնավ չի փոխանում և անգամ այն հարկատեսակը, որ հայերը առաջներում վճարում էին խաներին իրենց քրիստոնյա լինելու պատճառով (հավատքի հարկ-դիմ-իսլազի)²⁹⁹ չի վերացվում, իսկ նոր խանը հովանավորվում է ռուսական կառավարության կողմից: Միաժամանակ հայերի կողմից հակախանական յուրաքանչյուր ընդվզում դիտվում է իբրև հակացարական ու ավարտվում հալածանքներով, արտորով:³⁰⁰ Արդեն 1826 թ. անընդհատ կրկնվող

պատերազմների հետևանքով Շաքիի հայերը գտնվում էին ծայրահեղ անմխիթար վիճակում. «... ի 1826 ամի ոչ սակաւ կրեցին զգալի վնաս ի գորաց Պարսից, եւ համարեա իջին ի վերջին չքառորոքին»:³⁰¹ 1851-52 թթ. քաղաքում հայերը կազմում էին 288 տուն: Նրանք ունեին 2 ուսումնարան, 3 եկեղեցի: Գերակշռում էին մահմեդականները 1945 տուն սյունի և 412 տուն շխա: Կար նաև 1 տուն ռուս բնակչություն:³⁰² Ընդամենը 17945 մարդ,³⁰³ որից 14452 մահմեդական, 2003 հայ (1017 արական, 986 իգական):³⁰⁴ 1886 թ. վիճակագրությամբ քաղաքն ուներ 25894 բնակիչ, որից թաթարներ (մահմեդականներ)՝ 20972 (11704 արական, 9268 իգական), հայեր՝ 4666 (2616 արական, 2050 իգական), վրացիներ՝ 50 (33 արական, 17 իգական), ռուսներ 26 (8 արական, 18 իգական), գերմանացի 3 (1 արական, 2 իգական):³⁰⁵

1916 թ. քաղաքն ուներ 52243 բնակիչ, որից միայն 8009-ը՝ հայեր (4412 արական, 3597 իգական):³⁰⁶ 1918-20 թթ. ընթացքում Շաքին գրեթե ամբողջապես զրկվել է հայ բնակչությունից: Մասամբ բնաջնջվել են նաև քրիստոնյա մյուս ժողովուրդների ներկայացուցիչները (ռուսներ, վրացիներ): 1921 թ. քաղաքն ուներ 21302 բնակիչ, իսկ 1923 թ. 19724 բնակիչ:³⁰⁷



Մեր օրերում քաղաքը բազմակողմանիորեն զարգացել է և հանդիսանում է Ադրբեջանի հանրապետության գլխավոր քաղաքներից: 1981 թ. քաղաքի բնակչության թիվը աճել ու գրեթե հասել էր նախախորհրդային մակարդակին: Այդ թվականի մարդահամարով քաղաքն ուներ 50700 բնակիչ:³⁰⁸ 1985 թ. քաղաքում բնակվում էին նաև շուրջ 80 տուն հայեր, որոնք արդեն մի քանի տասնամյակ է, ինչ գուրկ էին ազգային դպրոցից: Ի դեպ, Շաքիի հայ բնակչությունը այդ տեսակետից բավական առաջադեմ է եղել հնում: Օրինակ՝ 1883 թ. քաղաքի 21474 բնակչից ուսանողներ էին 1228-ը և դրանցից 400-ը հայեր (800-ը մահմեդական, 28 այլ ազգությ-

290. «Վրաց աղբյուրները ...», հ. Գ, էջ 69:

291. Նշվ. աշխ., էջ 225:

292. Նշվ. աշխ., էջ 154:

293. Գ. Ա. Զեօս, Նշվ. աշխ., էջ 427-428:

294. «Վրաց աղբյուրները ...» հ. Գ, էջ 154:

295. «Դիվան հայոց պատմութեան» Միմոն կաթողիկոսի յիշատակարանը, կազմեց Գյուտ Աղանյանց, գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ 611:

296. «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի անդրկովկասյան արշավանքների մասին» աշխատասիրությամբ Ռ. Տ. Տիտանյանի, Երևան, 1981, էջ 193:

297. Նշվ. աշխ., էջ 194:

298. «Վրաց աղբյուրները ...», հ. Գ, էջ 206:

299. Մատենադարան, Կաթողիկոսական Դիվան, քրթ. 27, վավ. 41:

300. Պ. Ա. Չոբանյան, Վրացական ուղեգրությունները ..., էջ 134:

301. Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 369:

302. «Кавказский Календарь на 1856г.», էջ 324:

303. «Кавказский Календарь на 1853г.», էջ 123:

304. «Кавказский Календарь на 1856г.», էջ 322-323:

305. «Кавказский Календарь на 1897г.», Тифлис, 1896, էջ 52-53:

306. «Кавказский Календарь на 1917г.», Тифлис, 1916, էջ 52-53:

307. «Большая Советская Энциклопедия», том 1, Москва, 1926, էջ 642:

308. «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ. 8, Երևան, 1982, էջ 474:

յուններ), այն դեպքում երբ հայ բնակչությունը տվյալ ժամանակ կազմում էր քաղաքի ամբողջ բնակչության 1/5 մասը:³⁰⁹



Մր. Աստվածածին և Մր. Մինաս եկեղեցիները



Շաքի քաղաքում պահպանվել են բազմաթիվ հայկական պատմական հուշարձաններ: Առանձնապես ուշագրավ են արևմտյան թաղի Մր. Աստվածածին գմբեթավոր եկեղեցին 1808-1833թթ. (ներկայումս օգտագործվում է որպես դեղատան պահեստ), կից՝ Մր. Մարիամյան օրիորդաց ուսումնարանի շենքը, արևելյան թաղի եռանավ բազիլիկ սրբատաշ քարերով կառուցված եկեղեցին, ընդարձակ հին գերեզմանոցը, միջնադարյան փոքրիկ եկեղեցին (XIII-XIV դդ.) գերեզմանոցի հարավային ծայրում, բազմաթիվ բնակելի և հասարակական բնույթի շենքեր XIX-XX դդ.:

Շաքի քաղաքում և տարածքում վիմագիր արձանագրությունների ուսումնասիրությամբ նախկինում զբաղվել է միայն Մ. Բարխուտարյանցը, որն էլ հավաքել ու հրատարակել է թվով 4 արձանագրություն: Դրանցում առկա են բազմաթիվ վրիպումներ: Մեր օրերում դրանց հետազոտմամբ զբաղվել է նաև գրող Մ. Խանգաղյանը, որի հրատարակած արձանագրություններում ցավոք նկատելի է խիստ արտահայտված ստեղծագործական մոտեցումը, իսկ արդյունքում՝ անճանաչելիորեն աղավաղված և հորինված նախադասություններ:

417. ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, կառուցման առթիվ փորագրված է եղել.

ՄԿՄԵԱԼ Ի 1808 ԹՈՒԲԷՆ ՄԻՆՉԵՒ Ի 1833 ԹԻՆ ԵՒ ԱՄԱՐՏԵԱԼ ՍՈՒՐԱ ԱՍՏՈՒՄՆԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՄ ԱՐԴԵԱՄԲ ՂԱՐԻՔԱԿԱՆԱՑ:

Հրատ. Բարխուտարյանց, 264:

Ծանոթ. Մր. Աստվածածին եկեղեցին 1843 թ. հունվարի 20-ի գիշերը ենթարկվել էր կողոպտման: Հանցագործները կտարելով եկեղեցու դուռը, ներսից գաղացել էին արծաթյա անոթներ (Ֆ. 56, գ. 1, ա. 1278, բ. 1): 1858 թ. ճեղքված էր եկեղեցու սալակապ տանիքը երկու կողմերից (Ֆ. 56, գ. 1, գ. 3890, բ. 2): 1913 թ. դրությամբ կառուցման ընթացքում էր եկեղեցուն արևմտյան կողմից կցված զանգակատան շենքը: Մրա կառուցումը հավանաբար մնացել է թերի (Ֆ. 56, գ. 6, գ. 1004, բ. 1): Կառուցվելիք զանգակատան նախագծի հեղինակն էր Շաքի քաղաքի գլխավոր ճարտարապետ Բեհբուդ Մելիք-Ալլահվերդյանցը, որը 1916 թ. հունիսի 30-ի դրությամբ գտնվում էր ռազմաճակատում՝ որպես զինվոր (Ֆ. 56, գ. 6, գ. 1010, բ. 23):

418. ՏԱՊԱՆԱԶԱՐ, Մր. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատի տակ: Հարթ ուղղանկյունաձև սալատապան է (նկ. 145).

Ի ՄՄԻՆ ՏԱՊ(Ա)ՆԻ ԱՆՓՈՓԵԱԼ ԴԵՆԻՍՈՐԴԻՆ ՍԱՀՏԵՄԻ՝ ԸՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՍԱՐՏԻՐՈՍ(ԵԱ)ՆՑՄ, ԵՄ ՍԵՐՈՒՆԴ ՄԵԾ ԱԶԳԻ, ԹԱԶԳԷՆ ՓԱՆԻԵԱՆՑ ԱԳՈՒԼԵԱՑ ՅԵՐԿՐԻ, 1842 ԹՎԻՆ, Յ(ՈՒ)ՆՎԱՐԻ 1-ԻՆ:

419. ՏԱՊԱՆԱԶԱՐ, Մր. Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմում, շուրջ 50 մետր հեռու, Գարիպականաց (օտարական պանդոխտների) գերեզմանոցում: Ուղղանկյունաձև: Հարավային և հյուսիսային երեսներին համապատասխանաբար 9-ը և 3 տողերով փորագրված է (նկ. 146, 146ա).

ՀԱՆԳՉԻՄ ԱՍՏԱՆՕՐ ԴԱԻԹՍ ԼԱԶԱՐԵԱՆՑ | ԾՆՈՒՆԴ ԱՐՑԱԽՈՒ ԵՐԿՐԻՆ ԶԱԶԱԶԱՆՑ, ՍԵՐՈՒՆԴ ԻՇԵԱՆԱՑ ԲՇ ՏԱՂ ԳԱՄԱՆԿԻ. ՍԵԼԻԶ ՀԱՅԿԱԶԻՆ ԵՒ ԲՀԱՏՈՒՐ ԲԵԿԻ, ՊԱՆԴՈՒԽՏՄ ՍԱՐԱՍԱՂԻ ՄՏԻ ՅԱՅՄ ԴԱՍԲԱՐ | ԿԱՐՕՏ ԴԵՈՒԱՂՄ ՈՐԴԻՈՅ ՄԻՐԱԿԱՆ, ՀԵՂԵԼՈՎ ԶԱՐՏՕՍՐՄ Ի ԾԱՆՐ ՍԱՀԾԻ, ԹԱՆՉՆԵՑԻ ԶՆՈՍԱ ԵՐԿՆԱՅԻՆ ՏԵՍՉԻ | ԵՐԵՍՈՒՆ ԱՍԵԱՅ ԿԵՆՕԶ ՎԱՆՃԱՆԵՑԱԻ, Ի ՍԵՊՏԵՄԵՐ 1823:

Մյուս երեսին.

ԿԱՌՈՒՑԱԻ ՏԱՊԱՆԱԶԱՐՄ ԱՐԴԵԱՄԲԸՂ ՈՐԴԻՈՅ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՅՆ ԳԵՆԵՐԱԼ ՍԱՅՈՐԻ ԻՒԱՆԷԻ ԴԱԻԹԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ:

Հրատ. Բարխուտարյանց, 264 (բաց է թողել հյուսիսային երեսին եղած երեք տողերը: Ունի նաև այլ մասեր վրիպումներ):

420. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդին գրեթե կից հյուսիսային կողմում, նույնաձև.

Ի ՏԱՊԱՆԻՄ ՅԱՅՄՄԻԿ ԱՍՓՈՓԵԱԼ | Ե ՍԱՐՄԻՆ ՇՈՒՇԱ ԶԱՂԱԶԱՑԻ | ԼՈՒՍԱՀՈ

309. "Кавказский Календарь на 1885г.", էջ 215:

ԳԻ ՅՕՀԱՆԻՍԻ ՅՕՄԷՓԵՍԸ ԽԱՆՈՒՆՅ
ՀԱՆԳՈՒՅՏԵԼՈՅ Ի ՏԵՐԻ Ի ԽՈՐԻՆ Ի ԲԱ-
ՐԻՈՔ ԾԵՐՈՒԹԵԱՆ, ՈՐՔ | ՀԱՆԳԻՊԻՔ

ԱՄԷ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ. | 18 . $\frac{10}{13}$. 27:

421. ՏԱՊԱՆԱԶԱՐ, սալանման ուղղանկյու-
նաձև, գտնվում է նախորդ երկու տապանաքարերի
և Սր. Աստվածածին եկեղեցու միջև (նկ. 148).

ՕՎ ԱՅՐ ՊԱՆԴՈՒԽՏ ԴՈՒ ՉՄԱՅԼԻՍ | Ի
ՓԱՌՍ ՕՏԱՐ ԱՅՍ ԱԾԽԱՐՀԻՍՄԵ ՅՕՀԱ-
ՆԻՍ, ԻՍԿ ԽՈՅԵՑԻ ԺԱՌԱՆԳՈՐԳ ՄԱ-
ՆՈՒԿՈՎԻ, ՈՐՔ ՀԱՆԳԻՊԻՔ ԱՍՏ ՏԱՊԱ-
ՆԻ ՈՂՈՐՄԻՍ ՏԱԶ ԱՆԱՐԺԱՆԻՍ, ՄԱՐ-
ՏԻ 8-ԻՆ, 1840:

422. ՏԱՊԱՆԱԶԱՐ, կից նախորդին, նույ-
նաձև (նկ. 149).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՈՒՍՏԻԱՆԻ, ԴՈՒՍՐ՝ ՊԱ-
ՊԻ ԲԱՐԵՊԱՇՏԻ | ԵՄ ԿՈՂԱԿԻՅ ՅՕՀԱ-
ՆԻՍ | ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ՄԱՆՈՒԿՈՎԻ, Ի
ՀԱՆԳԻՊԻՔ ԾԵՐ ԱՅԳ ՇԻՐՄԻ | ՈՂՈՐՄԻ
ՏՈՒՔ ՄԻ ՀԱՅՐՄԵՐԻ, | ՉԻ ԵԻ ԾԵՉ ՏԵՐ Ո-
ՂՈՐՄԻ Ի ՄԻՍ ԱՆԳԱՄԻՐ ԱՏԵՆԻ, 1841:

423. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդներից արև-
մուտք, տեղահան արած: Ընկած է կողքի վրա:
Ուղղանկյունաձև (մեր տեսած վերջին արձանա-
գիր տապանաքարն էր պանդուխտ հայերի գերեզ-
մանոցում).

ԱՍՏ ՆՆՁԷ ՄԱՐՏԻՐՈՍ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ
| ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅ, 1865:

424. ՄԲ. ՀՈՒՓՄԻՍԵ ԵԿԵՂԵՑԻ, հին գե-
րեզմանոցում: Արևելյան ճակատում ագուցված
սրբատաշ քարին փորագրված է (նկ. 151).

ՂԱՐԱԲԱՂՅԻՉԱՐՈՒՆՉԻ ՄՈՒՄԻՆ ՆՈ-
ՐՈԳ(Ե)Ց | Ի Ս(ՈՒՐ)Բ ՅՈՒՄԻՄԱՅ | ԿՈՒ-
ՄԻ ԵԿԵՂԵՑԻ ՄՈՒՄՈՒՆ ՈՒՐ ԾԻՆ(Ո)ՂԱՅ
ՀՈԳՈՒՆ | 1282 Ն(1833):

Հրատ. *Բարխուտարեանց, 266 (ունի բազմաթիվ
աղավաղումներ, իսկ քվականը կամայաքար հրատա-
րակել է ՌՄՉԲ): Ս. Խանգաղյան, Ինչ են պատմում
քարերը..., «Մովեսական Հայաստան», ամսագիր, 1986,
№ 6, էջ 30 (աղավաղված):*

425. ՄԲ. ՀՈՒՓՄԻՍԵ ԵԿԵՂԵՑԻ, արևմտյան
ճակատին ագուցված սրբատաշ քարին քանդակ-
ված է խաչ և փորագրված քառատող հակիրճ ար-
ձանագրություն (նկ. 152).

ԽԱՉ(Ս) ԲԱԵՆՕՍ ԷՄԱ Ա(ՍՏՈՒԱ)Ծ
ՎԱՄՏ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳՈՒ | ՉԱՐՈՆՉԻ
ՄՈՍՈՒ:

426. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գտնվում է Սր. Հռիփսիմե
մատուռի արմ. պատի տակ, մուտքի աջ կողմում.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՆԻԺ ԳԻՎԱՅԻ ՊԵՏՐՈՍ
ԱՆՈՒՆ ՆԱՀԱՏԱԿԻՆ, ՄԱ ԷՐ ՈՐԳԻ
ՔԱՀԱՆԱՅԻ, ՕՎ ՀԱՆԳԻՊՈՂՔ ՏՈՒՔ Ո-
ՂՈՐՄԻ 1826 ԱՄԻ 13 ՍԵՊՏԵՄԵՐԻ:

Հրատ. *Բարխուտարեանց, 266:*

427. ՏԱՊԱՆԱԶԱՐ, հարթ անկանոն եզրագր-
ծով սալատապան, Սր. Հռիփսիմե եկեղեցու մոտ
(նկ. 153).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆԸՆ ԹԻՓԼԻՉՑԻ ԳԱԲ-
ՐԻԷԼԻՈՐԳԻ ՉԱՐԿԱՐ ԿԱՐՄՎԱՆԸՆ,
ՈՐ ԱՂ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՓՈՒՆԵՅՄՎ, ԹՎԻՆ
ՈՄԺ (1761):



428. Տապանաքար, նույնաձև.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ: ՎԵՐ(ԻՆ) ԱԳ(ՈՒ)ԼԷՑԻ
ՉՂԷՅԱՆՅ ԴԱՎԻԹԻ ՈՐԴԻ ԴԱՎԻԹԻՆ,
ԹՎ | ՈՄՉ (1771):

429. ՏԱՊԱՆԱԶԱՐ, հարթ ուղղանկյունաձև
սալատապան: Գտնվում է Սր. Հռիփսիմե եկեղեցու
հյուսիս-արևելյան կողմում (նկ. 154).



ԱՅՍ Է Տ(Ա)ՊԱՆՆԻ ԳԱՇՏՑԻ ՉԻԼՉԻԼ ԱԻԵՆ
ՏԻՔԻ ՈՐԴԻՆԻ ՀԱՅՐՈՒՄԻՆ, ՌՄԼԱ (1782):

430. ՏԱՊԱՆԱՔԱՐ, հարթ ուղղանկյունաձև:
Գտնվում է Սր. Հոփսիսիմեն եկեղեցու հյուսիս-
արևելյան կողմում.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԳԱՇՏՑԻ ԴՈԼԻՋՆԱՅ
ՀԱ(Յ)Ր(Ա)ՊԵՏԻ ՈՐԴԻ ՕՀԱՆԵՄԻՆ, ՈՐ
ԱՌ Ա(ԱՍՏՈՒԱ)Ծ ՓՈԽԵՑԱԻ, ՌՄԻԲ (1773):

431. ՏԱՊԱՆԱՔԱՐ, հարթ սալաձև: Գտնվում
է Սր. Հոփսիսիմեն եկեղեցուց հյուսիս (շարքով իրար
կողք դրված քարեքից է).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԳԱՓԱՆՑԻ ՈՂՈՐՄԱԾ ՀՈ-
ԳԻ ՆԵՐՄԵՄԻ ՈՐԴԻՆԻ ԱԲՐԱՀԱՄՆ, ՌՄԻԵ
(1796) ՍԱՐԳԻ Ա(1):

432. ՏԱՊԱՆԱՔԱՐ, Սր. Հոփսիսիմեն եկեղեցու
հյուսիսային կողմում.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԳԱՐ(Ա)ՊԱՂՅԷ ԳՈՂՅԷ
ՔԱՐՀԱՆՆԻ ՕՀԱՆ(ԻՆ), ԹՎ(ԻՆ), ՌՄԿ (1811):
Ծանոթ. Դռղկե=Տողկե:

433. ՏԱՊԱՆԱՔԱՐ, Սր. Հոփսիսիմեն եկեղեցու
հյուսիսային-արևելյան կողմում.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՔԱՄԱԼԵՆՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՈՐԴԻ ԿԱՆՁՑԻ ՌՍՏԱՄԻՆ, ՈՄԿԲ (1813):

434. ՏԱՊԱՆԱՔԱՐ, Սր. Հոփսիսիմեն մատուռի
հյուսիս-արևելյան կողմում.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՅՕՀԱՆՆԵՄԻՆ ՈՐԴԻ ԼՈՒ-
ՍԱՀՈԳԻ ՏԻՐԱՅՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ, ՌՄՀԲ
(1823):

435. ՏԱՊԱՆԱՔԱՐ, Սր. Հոփսիսիմեն եկեղեցու
հյուսիսային կողմում.

ՏԱՊԱՆՍ ՈՒՆՕՂ Է ՆՈՒՆԵՑԻՆԻ ՊԱՐՈՆ
ՄԻՐՁԱՅ ԳԻԵԱՁԻՁՈՎԻՍԱ ԷՐ ՎԱՐՊԵՏ
ՈՐՄՆԱԳՐԻ, 1851|ՈՎ ՀԱՆԳԻՊՈՂՔ ՏՈՒՔ
ՈՂՈՐՄԻ:

436. ՏԱՊԱՆԱՔԱՐ, Սր. Հոփսիսիմեն եկեղեցու
արևմտյան կողմում.

Ի ՆԵՐՔՈՅ ՎԻՄԻՍ ԱՆՓՈՓԵԱԼ Է ՅՕՎ-
ՀԱՆՆԵՄՆ ԳԼԵՁԵԱՆՑ՝ ՆՈՒՆԻ ՔԱՂԱՎ-
ՔԱՅԻ, 75 ԱՄԱՅ ՎԱԽՃԱՆԵՑԱԻ 1862 Ա-
ՄԻՆ:

437. ՏԱՊԱՆԱՔԱՐ, Սր. Հոփսիսիմեն եկեղեցու
արևմտյան կողմում, թեք բլրալանջին.

ԳԱՐԵԳԻՆՆԻ ԳԱՍՊԱՐԻ ԵԱՆ ԱՃՈՒՆՑ, |
1886 ⁸/₂₅:

438. ՏԱՊԱՆԱՔԱՐ, Եկեղեցու արևմտյան
կողմում.

ՅԱՅՍՍ ՏԱՊԱՆԻ ԱՄՓՈՓԻ ՄԱՐՄԻՆՆԻ
ԿՕԼԼԵԺԻԱՍԻ ԱՍՏԵՍՈՐ ԳԱՍՊԱՐԱՅԻ
ՏԵՐ ՅՕՍԷՓԵԱՆ ԹԱՐԻՄԱՆԵԱՆՑ, ԽՆԳ-
ՐԻՆԻ ՀԱՆԳԻՊ(Ո)Գ(Ա)ՅՆ ՅԻՇԵԼ Ա(ՍՏՈՒ-

Ա)Ծ ՈՂՈՐՄԻՆ ՎԱԽՃԱՆ(Ե)Ց(Ա)Ի Ի 21
Փ(Ե)ՏՐ(ՎԱՐԻ) 1873 ԱՄԻ:

439. ՏԱՊԱՆԱՔԱՐ, եկեղեցու արևմտյան
կողմում.

Ի ՄՄԻՆ ՏԱՊԱՆԻ ԱՄՓՈՓԵԱԼԻՆԻ ՄԱՐ-
ՄԻՆ ՄԱՐԳԱՐՏԻՆԻ ՍՏԵՓԱՆԵԱՆ, ՈՐ Է
ԿԻՆ՝ ԲԱՂ ԽԻՇԻ Ս(Ա)ՀԱԿԵԱՆ Ի ՇԱՄԱՂ
ԽԵՑԻ, 1875 ԱՄԻ.

440. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախորդի մոտ.
ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ՎԱՂԱԹԱՌԱՍՂ
ԲԺԻՇԿ ԲԷՀՊՈՒՏԻ, ՈՐԴԻՈՅ ԱՆՄԻԻ-
ԹԱՐԻ ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ԹԱՐԻՄԱ-
ՆԵԱՆՑ, ԾՆԵԱԼԻ 1853 ԱՄԻ ԵՒ ՎԱԽՃԱ-
ՆԵԱԼ 1876 ԱՄԻ, Ի 16 ՄԱՐՏԻ:

441. ՏԱՊԱՆԱՔԱՐ, Սր. Հոփսիսիմեն եկեղեցու
արևմտյան պատի տակ, մուտքի առջև (նկ. 155).

Ի ՆԵՐՔՈՅ ՎԻՄԻՍ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆՆԻ
ՆՈՒՆԵՑԻ ԹՈՎՄԱՍԱՅ ՏԵՐ ԹՈՎՄԱՍՂ
ԵԱՆՑ, ՈՐ ՎԽՃՑ. 52 ԱՄԱՅ 3 ՅՆԻՐԻ 1884
Թ.:

*Հրատ. Ս. Խանզաղյան, նշվ. հոդվածը (անճանա-
չելորեն աղավաղված):*

442. ՏԱՊԱՆԱՔԱՐ, Սր. Հոփսիսիմեն եկեղեցու
արևմտյան կողմում.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏԵՐ ՅԱՐՈՒԹ(ԻՒՆԻ)Ն
ԱՆՄԻԻԹԱՐ ՔԱՀԱՆԱՅԻ Տ(Է)Ր ՅՕՍԷ-
ՓԵ(Ա)Ն ԹԱՐԻՄԱՆԵԱՆՑ, ԽՆԳԻԲ Ի ՀԱՆ-
ԳԻՊՕՂ (Ա)ՑԳԻ ՅԻՇԵԼ Ա(ԱՍՏՈՒԱ)Ծ Ո-
ՂՈՐՄԻ ԵՒ Վ(Ա)ԽՃ(Ա)Ն(Ե)ՑԱԻ Ի:

443. ՏԱՊԱՆԱՔԱՐ, գտնվում է քաղաքի հյու-
սիս-արևելյան կողմում, խանական ապարանքի
տարածքում, փոքրիկ գերեզմանոցում (նկ. 156).

Ի ՄՄԻՆ ՏԱՊԱՆԻ ԱՄՓՈՓԻ ՄԱՐՄԻՆՆԻ
ՕՏՍԱՎՆՈՅՂ ՆԱՏՎՈՐՆԻ ՍԱՎԵՏՆԻԿ
ԵՒ ԿԱՎԱԼԵՐ ՊԱՎԵԼՂՍՏԵՓԱՆՈՎԻՉ
ՍՈՒՐԱՇԿՈՅ ԲՈԼԻԲԱՇԵՎ, ԾՆԵԱԼԻ 6-ԻՆ
ՆՈՅՆԵՄԵՐԻ, Ի 1816 ԱՄԻ, ՋՐԱԻԵԱԼ Ի
ԿԵՆԱՅ 17-Ն ՅՈՒՆՎԱՐԻ, Ի 1875 ԱՄԻ:

444. ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ, գտնվում է Սր. Մինաս
եկեղեցու մոտ, տան կամարակապ դարպասի ճա-
կատին ազուցված քարին եռատող փորագված է
(նկ. 157).

Ի 1885, ՏՈՒՆՆԻ ԳԱՍՊԱՐԱՅԻ ԱՋՈՒՆՑԵՆՑԻ:
*Ծանոթ. Հայտնի է, որ Գասպար Աջունցեցյանը
1892-ին ընտրվել էր Կ. Բ. ընկերության վարչության ան-
դամ («Նոր-Դար», 1892, № 207, էջ 3), իսկ 1904 թ. կրում
էր երեցփոխի (դեպուտատ) պաշտոն և նրա գործու-
նեության շնորհիվ էր, որ Էջմիածնի սինոդը նույն թվի օ-
գոստոսի 25-ին քայլադրել էր, քաղաքի Սր. Մինաս եկե-
ղեցին նորոգել և կից զանգակատուն կառուցել ծախսե-
լով դրանց վրա եկեղեցու գումարներից 1000 ռ. (Ֆ. 56, ց.
1-2, գ. 223, թ. 1-2):*

445. ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ, գտնվում է նախորդից
քիչ վերև, նույն փողոցի վրա: Արձանագրությունը

փորագրված է տան առաջին հարկի պատին ազուցված սրբատաշ քարին (նկ. 158).

ՏՈՒՆ ԱՈՒԱԶ(Է)ԼԵՅՕՍԷՓԵԱՆՑԻ, 1911 ՅԱՄԻ:

ՔԻՇ

Քիշը Շաքե գավառի կամ ներկայիս Շաքիի շրջանի պատմական ու մարդաշատ գյուղերից է: Գտնվում է Շաքի քաղաքից 5 կմ հյուսիս, համանուն գետի աջ ափին: Գյուղի բնակիչների նախնիները հայեր են եղել: Նրանք տեղի տալով խանական բռնություններին XVIII դարի կեսերին ընդունել են մահմեդականությունը:³¹⁰



Քիշի բնակիչները. «...եղել են հայեր, որ մի մասը բարբարոս խաների ճնշումից, հալածանքից զաղթել է այս ու այն կողմ, իսկ միս մասն ընդունելով մահմեդականությունն մնացել է այդտեղ...»:³¹¹ Նրանց ազգանունների մեջ. «հայկական անուններ դեռ շատ կան մնացած, օր. Սարգիս օղլին, Կարապետ օղլին, Աանես օղլին և այլն...»:³¹² Գյուղամիջում ցայսօր կանգուն է Սբ. Եղիշե Առաքյալի անվամբ օծված գմբեթավոր եկեղեցին, կառուցված 1244 թ.:³¹³ Եկեղեցու շրջապարսպի մեջ 1973 թ. մի արձանագրություն էր նկատել Ս. Գարչինյանը: Մեզ տրամադրած նրա մի լուսանկարից էլ ստորև ներկայացնում ենք վերձանությունը.

310. А. Яновский, О древней Кавказской Албании, "ЖМ НП", 1846, h. 52, էջ 167-168:
311. «Նոր- դար», 1888, № 191, էջ 3:
312. «Նոր- դար», 1889, № 208, էջ 2:
313. "Кавказский Календарь на 1852г.", Т. 1851, էջ 271: Եկեղեցու պատմական և ճարտարապետական մանրամասների մասին տես մեր. "Памятники средневековой архитектуры в гаварах Шаки и Капалак Собственно Албании" ("Кавказ и Византия", № 6, Երևան 1988, էջ 225- 230):

446. ՊԱՐՄՊԱՊԱՍ. հնգատող արձանագրությունը փորագրված է գետաքարի հղկված մակերեսին (նկ. 159).

ԱՅՍ ՊԱՍԻ 17 ԳԱԶ ՏԵՂՆ ՇԻՆՈՒԱԾ Է ԾԱՆԻԻԷ ՆՈՒՆԵՑԻ ՄԿՐՏԻՉԻ ՄՍԻՐԻ (ԵԱ)ԱՆՑ, Ի Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ ԻԻՐ ԵԻ ԾՆՈՂ(Ա)Ց, Ի Յ(ՈՒ)Լ(Ի)ՄԻ 1865:

Ծանոթ. Եկեղեցու շրջապարսպն ու կից մի քանի սենյակները նորոգվել են վանահայր Արամյանցի օրոք: Հերթական նորոգումը կատարվել է 1874 -ին («Արարատ» ամսագիր, 1875, հունվար, էջ 31-32):

ՔՈՒՆԳՈՒՏ

Գյուղը գտնվում է շրջկենտրոնից 30 կմ հարավ-արևելք, Շաքի-Վարդաշեն մայրուղու ձախ կողմում 10 կմ հեռավորության վրա, աղբյուրաշատ ու անտառածածկ սարերով շրջապատված գեղատեսիլ վայրում, Պարսեզ գետակի ափին:

Գյուղի հայ բնակչությունը բռնի դավանափոխ է եղել XVIII դարի կեսերին: 1874 թ. Քունգուտն ուներ 1261 մահմեդական (ծագումով հայ) բնակչություն:³¹⁴

Իբրև մահմեդական բնակչություն ունեցող գյուղ Քունգուտը 1918 թ. գերծ է մնացել երկրամաս ներխուժած թուրքական բանակի կատարած ավերածությունից ու ջարդերից:

Գյուղը 1976 թ. ուներ 1152 բնակիչ (համարվում են աղբրեջանցներ),³¹⁵ որոնցում պահպանվել են բազմաթիվ հայկական անուններ, ազգանուններ (մեծ մասամբ աղավաղված ձևով): Չեն մոռացվել նաև հայկական շատ սովորություններ:

Գյուղի հարավ-արևմտյան ծայրում պահպանվել է կիսավեր մի եկեղեցի, որի վերաբերյալ հայտնի են պատմական աղբատիկ տեղեկություններ: Եկեղեցին կոչվել է Սբ. Աստվածածին: Այդ



մասին վկայող արձանագիր ծնծղա է տեսել Ս. Բարխուտարյանը: 1695 թ.-ին Քունգուտի Սբ. Աստվածածին եկեղեցուն ընծայված ծնծղան գտնվում էր Դաշրուլաղ գյուղի Սբ. Գևորգ եկեղեցուն (Շաքիի շրջանում) :

Քունգուտի Սբ. Աստվածածին եկեղեցին ունի միանավ բազիլիկի հորինվածք: Արտաքին չափերն են 8,4X5.3 մ: Այն կառուցված է համակ սրբատաշ

314. "Кавказский Календарь на 1885г.", էջ 216:
315. «ԱՄՀ», h. 2, Բաքու, 1978, էջ 47:

չէ քարերով, կրաշաղախով: Եկեղեցու արևելյան և արևմտյան ճակատներից բացվում են մեկական դեպի ներս լայնացող լուսամուտներ: Այն ունի երկու մուտք՝ բացված հարավային և հյուսիսային ճակատներից (վերջինս եկեղեցուն կից սենյակի մեջ): Եկեղեցու որմերին արձանագրությունները չեն պահպանվել (տեղում չեն մուտքերի ճակատակալ քարերը): Ընդհանրապես եկեղեցին, թե ներսից և թե դրսից խիստ հողմնահար է ու քայքայված: Շատ տեղերում պոկված են երեսապատի սրբատաշ քարերը: Թաղը, որն իրականացված է եղել կիսաշրջանաձև, ներկայումս գրեթե ամբողջությամբ փլված է: Եկեղեցու հատակագծային, հորինվածքային, ճարտարապետական ու կառուցողական առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս այն թվագրել IX-X դդ. :

Մր. Աստվածածին եկեղեցու շուրջ տարածվում է ընդարձակ գերեզմանոց, ուր գտնված արձանագիր տապանաքարերի մեծ մասը, Մ. Բարխուտարյանցի վկայությամբ, ոչնչացրել էին մահմեդականացված հայերը: Դրանցում երախտա-

շատ գիտնականը միայն մեկ տապանագիր էր նկատել ու ընդօրինակել:

447. ԾՆԾՂԱ, գտնվում էր մինչև 1918 թ. հայաբնակ Դաշքուլաղ գյուղի Մր. Գևորգ եկեղեցում. ՅԻՇԱՏԱԿ Է ԾՆԾՂԱՅՄ ԶՈՒՆԳԻՏԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ, ԹՎ. ՌՃԽԴ (1695):
Հրատ. *Բարխուտարյանց, 237:*

448. ՏԱՊԱՆԱԶԱՐ, երկաթ. տաշված սպիտակ քարի վրա եղել է .
ԱՅՄ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՐԶՐՈՒՄՅԻ ՄՈՎՄԷՄԻ ՈՐԴԻ ԻՓԱԿՉԻ ԽՕԾԱ ՍԱԶԱՐԻՆ, ՈՐ ՓՈԽԵՑԱՒ ՌՃԼԵ (1686):
Հրատ. *Բարխուտարյանց, 268*

Շանթ. *Տապանագիրը նույնությամբ հրատարակել է նաև պրն. «Ուղեորը» («Նոր-Դար», 1899, № 177, էջ 2) հայտնելով, որ. «Դա մի մաքուր տաշուած քար է, մէջ տեղը որդիկ փռս ընկած, կոչվում է «ղալաղ դաշի» (ղալաղի քար)...»: 1984 թ. ենթակայր կատարած մեր առաջին այցելության ժամանակ տապանաքարն արդեն անհայտացված էր:*

Վ Ա Ր Դ Ա Շ Ե Ն Ի Շ Ր Ջ Ա Ն

Վարդաշենի շրջանը կազմավորվել է 1930թ. օգոստոսի 8-ին: Այն զբաղեցնում է 1077 քառ. կմ մակերես: Մահմանակից է Շաքիի, Կուտաշենի և Դաղստանի՝ Ախտիի շրջաններին: Ունի մեկ քաղաք (շրջկենտրոն՝ Վարդաշենը) 36 գյուղ: Շրջանում գյուղական բնակչությունը կազմում է 82 տոկոս (1976, 1 հունվար):

1989-ին վերանվանվել է Օղուզ:

Մինչև 1918 թ. շրջանի ներկայիս տարածքում հայաբնակ էին 13 գյուղեր (3-ը՝ խառը ազգային կազմով). Վարդեշեն, Ճալեթ, Նորաշեն Ջովլան, Օթմանլը, Թոփեր, Յաղուբլու (Հակոբի գյուղ), Խոշկաշեն, Մեծ Սոկոթլու, Փոքր Սոկոթլու, Վարդանլի, Փատառ: Մնացած բնակավայրերի մեծ մասը XVIII դարի առաջին կեսին դավանափոխության գնով բնաջնջումից փրկված, մահմեդականացված հայերի գյուղերն են, որոնք հետագա տասնամյակներում կորցնելով մայրենի լեզուն, ազգային նկարագիրը՝ իսպառ թուրքացան (ներկայումս համարվում են աղբրեջանցիներ):

Մինչև 1988-ի բռնագաղթը հայ բնակչություն ունեին շրջկենտրոն Վարդաշենը, Ճալեթ և Մեծ Սոկոթլու գյուղերը: Հայկական դարոց գործում էր միայն Ճալեթ գյուղում (միջնակարգ):

Հայկական պապմական հուշարձաններով շրջանում հարուստ են ինչպես մինչև 1918թ. հայաբնակ, այնպես էլ այն աղբրեջանական գյուղերը, որոնց նախնիները մահմեդականացված հայեր էին:

Մի շարք հնավայրեր հարուստ են նաև հայերեն վիմագիր արձանագրություններով: Դրանց ընդօրինակման ու հրատարակման գարծով նախկինում զբաղվել են Հ. Շահխաբունյանցն ու Մ. Բարխուտարյանցը, (միասին՝ 23 արձանագրություն): Տեղերում կատարած աշխատանքների ընթացքում մեր կողմից վերագտնվեցին նախկինում հրատարակված արձանագրություններից միայն 4-ը: Վերստուգելով դրանք, ինչպես նաև հավելելով նորահայտ 45 արձանագրություններ (ընդամենը 68 միավոր)՝ ներկայացնում ենք ստորև:

ՉԱՌԱՓ

Մինչև 1918թ. հայաբնակ, ներկայումս թրքաբնակ գյուղ շրջկենտրոնից 12 կմ հարավ, Արջկան գետի ձախ կողմում: 1888 թվականին գյուղն ուներ 140 տուն՝ 759 հայ բնակիչ:³¹⁶ 1908թ. այն կազմել էր 586,³¹⁷ իսկ 1914թ. 610 մարդ:³¹⁸

Չառափի բնակչությունը գոհ է գնացել 1918թ. ամռանը: Միայն մի քանի տասնամյակ անց հայաթափ ու ամայի գյուղատեղում հաստատվել են թուրք վերաբնակիչներ:

Գյուղամիջի Մր. Գետրոգ եկեղեցին ներկայումս չի պահպանվել: Նկատվում են բազմաթիվ տնատեղերի ավերակներ: Գյուղի հարավային կողմում տարածվում է ընդարձակ գերեզմանոցը, ուր պահպանվել են ավելի քան 200 տապանաքարեր: Դրանց մի զգալի մասն արձանագիր է: Թվագրվածները վերաբերում են XIX-XX.:

316. Մ.Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 223:

317. "Кавказский Календарь на 1910г.", էջ 225:

318. "Кавказский Календарь на 1915г.", էջ 125:

ԽՈՇԿԱՇԵՆ

Գյուղի հարավ-արեւմտյան կողմում պահպանվում են հին գյուղատեղի, գերեզմանոցի եւ եկեղեցու (Մր. Հովհաննես) ավերակները:

449. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձեւ, գտնվում է գերեզմանոցում.

ԱՅՍ Է Տ(Ա)ՊԱՆ ՉԱՌԱՊԵՑԻ ԻԲԱԿԵՆ| ՅԱՐՈՒ (ԹԻԻՆ) ԻՆ, Ա(ՍՏՈՒԱ)Ծ ԻՇԵՍԱՆԻՆ |...Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ:

450. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձեւ, նույն տեղում (նկ. 160).

ՄՄԻՆ ՏԱՊԱՆ ԼՈՒՍԱՀՈԳԻՆ ԱՆՓՈՓԵՑԻՆ| ԱՍՏ ԱՆՆԱՅԻՆ, ԿԻՆ՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ Զ(ԱՀԱՆ)(Ա)ՅԻՆ| ԳՍՏԵՐ ՅՈՎԱԿԻՍԱ Տ(Է)Ր ԴԱԶԱՐԵԱՆՑԻՆ,| ՈՐ Է ՇՈՒՇՎԱ ԶԱՂԱԶԱՅԻ, ՈՂՈՐՄԻ Դ(ՈՒ)Զ| ԱՆՅԻՇԱՍԱԿ ՀԱՆԳՈՒՅԵԼՈՅՆ ..., 1866 ԱՄԻ:

451. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձեւ, նախորդի մոտ. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՉԱՐԱԲԵՑԻ ՎԱՃԱՂԱԿԱՆ ՄԱՐԳԻՍ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ| ՄՈՒՍԱԻԼՅԵԱՆՑԻՆ 60 ԱՄԱՅ, ՈՎ ՀԱՆ|ԴԻՊՈՂԶ ԱՍԷԶ Ա(ՍՏՈՒԱ) Ծ ՈՂՈՐՄԻ: 1873| ԱՄԻ:

452. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ (նկ. 161). ԱՄԻ Զ(ՐԻՍՏՈՍԻ) Ի 1891,|9 ՓԵՏՐՎ(Ա)ՐԻ, Թ(ՎԻՆ) Հ(ԱՅՈՅ) ՈՅԻ: | ՄԱՐԳԻՍ ՏԻՐԱՅՈՒՆ ԶՆԱԾԷ ՎԵՄԻՍ ՆԵՐՔՈՅ ՀՈՂՈՒՄԸ| ԲՆԱԿԻՉ ԷՐ ԼՈՒՍԱՀՈԳԻՆ ՉԱՌ(Ա)Փ ԳԵՂՈՒՄԸ| ՀԱՅՐՆ ԷՐ ԴՊԻՐ ԱՐԶԱԼ Տ(Է)Ր ՄԻՍՕՆԵԱՆԸ, |ԶԱՌԱՍՈՒՆ ԱՄԱՅ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԶԱԶ ՄԱՐԴԸ| ԹՈՂԵՑ ԱՍՏ ԻՐԻ ՏԱԳԱՐԿ ՄԱՐՄԻՆԸ| ԱՇԽԱՐՀԷՍ ՓՈՒԵՑԱՒ ԱՌ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ԻՆԸԸ | Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂ(Ր)ՄԻ ՅԻՇԵՆ ՏԱՊԱՆԻՍ ԿԱՐԴԵՑՈՂԸԸ:

453. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԴԱՐԱՊԱՂՈՒՆ ԵՒՆԳԻՑԻ ՉԱՐԳԱՐ ԳՐԻԳՈՐ ՄԵՅՐԱՆԵԱՆՅ, ԱՄԵԳ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂ(ՈՐՄԻ) 1894Թ.:

454. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՉԱՌԱՂ ՓԵՑԻ ՏԷՐ ԱԶԱՐԵԱՅԻ, | ՈՐ Է ՈՐԹԻ ՄԱՐԶԱՐԱՅ, | ՎԱԽԻՃԱՆԵԱԼ Է 1901 ԱՄԻ:

Ծանոթ. Տե՛ր Ազարիա Տե՛ր-Չարարյանը արխիվային վավերագրերից մեկում հիշվում է 1888թ. որպէս ծերունազարդ քահանա: Այդ թվին նա հովիւն էր նաև մտաւկա Վարդանի գյուղի հայ բնակչությանը (Ֆ.56, g.1, q. 8420, p.1):

455. ՏԱՊԱՆԱԶԱՐ, Չառափ գյուղի հարավ-արեւմտյան կողմի գյուղատեղիի գերեզմանոցում. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԻԹԱՓՈԳՈՒՂԻ ՈՐԴԻ ՄՈՎՍԷՄԻՆ, ԹՎՆ ՈՍԽԵ (1796): Հրատ. Բարխուտարեանց, 224:

Խոշկաշեն (այժմ՝ Ղարաբուլաղ) գյուղը գտնվում է շրջկենտրոնից 34 կմ հարավ, Դուրկան գետի աջափնյա բարձրադիր սարահարթում: Գյուղը հայ մատենագրության մեջ առաջին անգամ հիշատակվում է 1434 թ. Խուշկայշեն ձեռով:³¹⁹

1888-ին գյուղն ուներ 77 տուն հայ բնակչություն (490 մարդ):³²⁰ 1908 թ. գյուղն ուներ 612,³²¹ իսկ 1914 թ. 1028 հայ բնակիչ:³²² Գյուղի ողջ բնակչությունը ոչնչացվել է 1918 թ. ամռանը օսմանյան բոլորների եւ մուսավաթականների համատեղ կազմակերպած կոտորածների ժամանակ: Հայաթափ Խոշկաշենը վերստին բնակեցվել է միայն 1950-ական թթ.-ին լեզգիներով:

Գյուղի տարածքը չափազանց հարուստ է պատմական հուշարձաններով:

Բուն՝ գյուղամիջում պահանջվում է արեւելյան քաղի Մր. Աստվածածին եկեղեցին (արևմտյան



Մր. Աստվածածին եկեղեցու տեսքը

քաղի Մր. Եղիշե եկեղեցին քանդված է՝ կառուցված 1887թ.: Պահպանվում են նաեւ երկու ընդարձակ գերեզմանոցները, ուր գտանք 21 արձանագիր տապանաքար (բոլորն էլ թվագրված XIX-XX դդ.):



Մր. Եղիշե Առաքյալ վանքի գավթի մուտքը

319. «ԺԵ ղարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» մասն Ա, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 439:
320. Մ. Բարխուտարեանց, 6շվ., աշխ., էջ 218:
321. "Кавказский Календарь на 1910г.", էջ 400:
322. "Кавказский Календарь на 1914г.", էջ 199:

Խոշկաշենի արևելյան կողմում, գյուղից շուրջ 0,5 կմ հեռու Դուրկան գետի ձորը նայող անտառածածկ սարալանջին կիսավեր վիճակում է Սբ. Եղիշե Առաքյալի անունը կրող վանական համալիրը՝ բաղկացած մեկ եկեղեցուց, միաբանության սենյակներից եւ գերեզմանոցից: Եկեղեցին ամբողջապես կառուցված է սրբատաշ և կոպտատաշ քարերով: Վերջինս օգտագործված է միայն ներսում այն էլ կոնստրուկտիվ նվազ պատասխանատու հատվածներում: Հորինվածքով եռանավ բազիլիկ է, որի թաղը հենված է մեկ զույգ սյուների վրա: Եկեղեցուն արևմուտքից կից է գավիթը: Վերջինս պատկանում է երկու զույգ փոխհատվող կամարներով իրականացված կենտրոնակազմ գավիթների տիպին որոնց ընդարձակ թռիչքը, առանց միջանկյալ սյուների, պահել է ամբողջ ծածկը: Գավիթին հարավային կողմից կից միաբանության թվով յոթ սենյակները ամբողջապես կառուցված են անտաշ քարերով: Սրանք միաժամանակ ողջ համալիրի առավել վատ պահպանված կառույցներն են: Վանքի բակում (հիմնականում հարավային կողմում) տարածվում է փոքրիկ գերեզմանոցը:³²³

456. ՍԲԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ, գտնվում է Խոշկաշեն գյուղի արևելյան թաղամասում: Հարավային ճակատից բացվող մուտքի բարավորին քառատող փորագրված է շինարարական արձանագրությունը (նկ. 162).

ՇԻՆԷՅԱԻ ԽՈՇԿԱՇԵՆԻ ՎԱՆՔԻ ԳՈՒՐԻՎԻ Ս(ՈՒՐ)Բ ԵԿԵՂԵՑԻՍ | ՀԱՍԱ(ՐԱ) - ԿՈՒԹ(ԵԱ)Ն | ԱՐԴԵԱՍԲՆ, 1887 ԱՄԻ:

Ծանոթ. Թե գյուղի գերեզմանոցներում պահպանված տապանագրերում եւ թե գրականության մեջ Խոշկաշենի նման անվանածն չենք հանդիպել: Ըստ երևույթին արձանագրության մեջ «ԿԱ» վանկի կրկնությունը գրչի կողմից թույլ տրված սխալ է:


457. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև, գերեզմանոցում.
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՅՐԻ ԵՒ ՆՍՐԷ ՈՐԴԻ՝
Տ(Է)Ր ԳՐԻԳՈՐԻՆ | ԱՐԺԱՆԷՅԱԻ ԱՅՍ
ՏԱՊԱՆԻՆ, | 1867 ԱՄԻ:

458. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև (նկ. 163).
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԽՈՇԿԱՇԵՆԵՑԻ | ԲԺԻՇԿ
ՅԱՐՈՒԹ(ԻԻ)ՆԻՆ, ԷՐ ՈՐԴԻ ԲԱԿԱՐ
ՔՈՒԻՆԻՆ, ՕՎ ՀԱՆԴԻՊԻ Ա(ՍՏՈՒԱ)Ծ
ՈՂՈՐՄԻ ԱՄԻ, 1888 ԱՄԻ:

459. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև: Գտնվում է Եղիշե Առաքյալ վանքի բակում, փոքրիկ գերեզմանոցում.
ԱՅՍ ՏԱՊԱՆ ԽՈՇԿԱՇԵՆԵՑԻ | Տ(Է)Ր ՅԱՐՈՒԹՈՒՆԻ, ՈՎ ՀԱՆՏ(Ի)ՊԻ ՍՈՅՆ ՏԱՊԱՆԻ ԱՍԱՑԻ | Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ, 1866 ԱՄԻ:

323. Համալիրի ճարտարապետական նկարագիրը առավել համաճանաչից տես մեր՝ «Պատմական Խոշկաշենը և նրա հուշարձանները», հոդվածը, «ԼՀԳ», 1985, № 10, էջ 76-80:

460. ԵՂԻՇ ԱՌԱՔՅԱԼ ՎԱՆՔ, եկեղեցու հարավային մուտքի բարավորին երկառղ փորագրված է (նկ. 164).
Ի Զ(ՐԻՍՏՈՍ)Ս Յ(ԻՍՈՒ)Ս Յ(Ի)ՇԵ(Ա)Լ
ՍԱՂԹԵՄ ԶՎԼԱՍ | Վ(Ա)ՐԴ(Ա)Պ(Ե)ՏՍ,
ՌՆԼԱ (1682):



Հրատ. Բարխուտարեանց, 219 (թվականի մեջ բաց է թողել տասնավորը՝ Լ-ն):

461. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գտնվում էր եկեղեցուն կից գավթի մեջ: ներկայումս մնացել է գավթի փլատակների տակ.
ՀԱՆԳԻՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ
ՊԱՇՆՃԱՂՅԻ, ՌՃԾԵ (1706):
Հրատ. Բարխուտարեանց, 219:


ՃԱԼԵԹ

Երկրամասի ամենահայտնի ու հինավուրց գյուղերից մեկն է: Գտնվում է շրջկենտրոնից 4 կմ արևմուտք: Իբրև գրչօջախ գյուղը հայտնի է սկսած XV դարից: Գյուղի վերաբերյալ բազմաթիվ մատենագրական ու վիմագրական տեղեկություններ են պահպանվել:³²⁴ XIX դարի կեսերին ճալեթն ուներ 150 տուն հայ բնակչություն:³²⁵ 1874 թ. այն կազմել էր 800,³²⁶ 1886թ. 1170,³²⁷ 1888-ին 1325 (200 տուն),³²⁸ 1908թ. 1669,³²⁹ իսկ 1914 թ. 1691

324. Տես՝ Հ.Վ. Կարապետյանի «Ճաղագ, ճալա քառերը եւ նրանց տեղանվանական գործածությունը» հոդվածը, «ՊԲՀ», 1982, №2, էջ 157:
325. Ս.Ջալալեանց, նշվ. աշխ., էջ 376:
326. «Кавказский Календарь на 1885г.», էջ 216:
327. «Кавказский Календарь на 1894г.», էջ. 157:
328. Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 248-249:
329. «Кавказский Календарь на 1910г.», էջ 240:

մարդ³³⁰ (բոլորն էլ հայեր): Գյուղը մեծ կորուստներ է կրել 1918 թ.: 1978 թ. ճալեթն ուներ 959 բնակիչ:³³¹ 1988-ին բոլոր հայերը բռնագաղթվեցին(նրանց մի մասը վերաբնակվեց Նոյեմբերյանի շրջանում):

Ճալեթ գյուղը չափազանց հարուստ է պատմական հուշարձաններով: Գյուղամիջում պահպանվում են երկու միջնադարյան եկեղեցիների մնացորդները: Դրանցից մեկը գտնվում է գյուղի հյուսիսային զերեզմանոցի ծայրում: Այն միանավ



Կաթողիկոսանիստ ճալեթ գյուղի Սբ. Աստվածածին վանքի հին (1411թ.) և նոր եկեղեցիները

բազիլիկ շենք է: Մա իր հատակագծային լուծումով կրկնում է Քիչ գյուղի Սբ. Եղիշե առաքյալ եկեղեցուն (Շաքիի շրջան): Հիմնական առանձնահատկությունը կայանում է ավազ խորանի արտաքուստ կիսաշրջանաձև լուծման մեջ: Գյուղամիջի մյուս եկեղեցին ներկայում ամբողջապես ծածկված է հողով ու փլատակներով: Սակայն պարզորոշ ուրվագծվում են նրա խաչաձև հատակագիծն ու հորինվածքը: Ի դեպ, նմանատիպ եկեղեցիները երկրամասի տարածքում խիստ սակավաթիվ են (առայժմ հայտնի է միայն Չալգիտ գյուղի Սբ. Գեորգ եկեղեցին XIII-XIV դդ), եւ այդ իմաստով

ճալեթի խաչաձև եկեղեցու ուսումնասիրությունը էական նշանակություն ունի Բուն Աղվանքի հայ միջնադարյան ճարտարապետության ամբողջական ուսումնասիրության առումով: Այս եկեղեցու շուրջ եւս տարածվում է ոչ մեծ զերեզմանոց: Ճալեթի արեւելյան ծայրում, ներկայում անտառածածկ սարալանջին տարածվում է գյուղի հին ու մեծ զերեզմանոցներից մեկը եւս: Այստեղ պահպանված արձանագիր տապանաքարերը վերաբերում են XIX-XX դարերին:

Ճալեթի պատմաճարտարապետական հուշարձանների շարքում իրենց արժանի տեղն ունեն ման բնակելի ամրակուռ բազմաթիվ քարաշեն տները: Դրանց մի մասը կրում է կառուցման առթիվ

330. "Кавказский Календарь на 1914г.", էջ 118:

331. И.З. Исмаилов, Район пятнадцати национальностей, Баку, 1981, էջ 3:

փորագրված արձանագրություն (թվագրվածները XIX դարի վերջերից մինչև XX դարի սկզբները):

Ճալեթ գյուղի հյուսիսային ծայրում, անտառապատ սարերով շրջապատված գեղատեսիլ վայրում, պահպանվում է Սբ. Աստվածածին հռչակավոր ու պատմական փառավոր անցյալով նշանավորված վանական համալիր-հուշարձանախումբը՝ բաղկացած երկու եկեղեցիներից, միաբանության սենյակներից, պարսպապատերից ու գերեզմանոցից: Վանքը երկրամասի հայտնի մշակութային կենտրոններից էր, գրչօջախ, կաթողիկոսանիստ (XV-XVI դդ-ում): Վանքի հին եկեղեցին կառուցվել է 1411 թ.: Հետագա դարերում այն ենթարկվել է մասնակի նորոգումների: Շենքն ունի միանավ թաղածածկ բազիլիկի հորինվածք: Կառուցված է անտաշ ու կոպտատաշ քարերով, կրաշաղախով:

Սրբատաշ են միայն անկյունաքարերը: Վերանորոգումների ժամանակ օգտագործվել է նաև աղյուս:

Հուշարձանախմբի նոր կամ մեծ եկեղեցին կառուցվել է XIX դարում եւ նույնպես կոչվել է Սբ. Աստվածածին: Այն եռանավ բազիլիկ տիպի բավական շքեղ ու ընդարձակ կառույց է: Արտաքուստ ունի դարաշրջանին հատուկ ձևավորում: Առանձնապես շքեղ է լուծված արեւմտյան ճակատի հարդարանքը: Եկեղեցին ամբողջապես կառուցված է համակ սրբատաշ քարերով:

462. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գտնվում է գյուղամիջի խաչածն հիմնավեր եկեղեցու մոտ ավերված փոքրիկ գերեզմանոցում: Ուղղանկյունաձեւ է (նկ. 165).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՃԱԼԸԹԷՑԻ ՄԱՂԱՔԵԱՆՑ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԻ ՈՐԴԻ ԱՎԱԶԻՆ, լՈՎ ՀԱՆԴԻՊՈՂԸ ՍՈՅՆ ՏԱՊԱՆԻՆ ՍԷ ԲԵՐԱՆ ԴՈՒՔ ՈՂՈՐՄԻ, 1857 ԱՄԻՆ, ՄԱՐԴԻ 1-ԻՆ:

463. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ, նույնաձեւ (նկ. 166).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՃԱԼԸԹԸՅԻ ՂԱԶԱՐ ԲԱԼԼՈՒԵԱՆՅԻ, ՄՆԱՄ ՅԱՒՏԵՆԱԿԱՆՅԻ ՀՈՂ ՏԱՊԱՆԻ 1885 ԱՄԻ:

464. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գտնվում է գյուղի վերին թաղի հիմնավեր բազիլիկի եկեղեցու շուրջ տարածված գերեզմանոցում: Երկարավուն սալաքար է (նկ. 167).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՃԱԼԷԹԵՑԻ ՄԸԿԸՐՏԻՉՂ ՀՕԱՆԵՍԵԱՆ, 1828 ԱՄԻ:

Ծանոթ. տասնավորը հնարավոր է նաև՝ 5 կարդալ:

465. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ նույնաձեւ (նկ. 168)..

ԱՅՍ ՏԱՊԱՆ ՃԱԼԷԹԵՑԻ ՄԱՐԳԻՍ ՅԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ, 1860 ԱՄԻ:

466. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գտնվում է ճալեթ գյուղի արևելյան կողմի մեծ գերեզմանոցում: Ուղղանկյունաձեւ է (նկ. 169).

ԱՅՍ Է ԴԱՊԱՆ ՃԱԼԸԹԷՑԻ ԱՌԱՔԵԼ ՊԱՇԱՐԱԹԵԱՆԻ, ՕՎ ՈՔԿԱՐԴԱՍՅԷ, ԱՍԱՍՅԷ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ, ՎԱԽՃԱՆԷՑԱԻ, 1851 ԱՄԻ:

Ծանոթ. ճալեթում հաստատված Պաշարաթյանները սերում էին Արցախի Պաշարաթ (Բաշարաթ) գյուղից (այժմ՝ Ղարաթրիի շրջանում):

467. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդին գրեթե կից, նույնաձեւ (նկ. 170).

ԱՅՍ Է ԴԱՊԱՆ ՃԱԼԷԹԵՑԻ ԽԱՉԱՆ ԲԱՇԱՐԱԹԵ(Ա)ՆԻ, ՕՎ ՀԱՆՅԻՊՈՂԸ ԱՍԱՅԷՔ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ, ՎԱԽՃԱՆԷՑԱԻ 1854 ԱՄԻ:


468. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ, նույնաձեւ. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՃԱԼԷԹ ԳԻՒՂԱՑԻ ԲԱՇԱՐԱԹԵԱՆՑ ԲԱԲԻ ՈՐԴԻ ՅՕՀԱՆՆԻՍԻՆ, ՈՎ ՀԱՆԴԻՊՈՂԸ ՍՈՅՆ ՏԱՊԱՆԻՍ ՄԻԱԲԵՐԱՆ ՏՈՒՔՂ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ, ՏԵԱՌՆ 1855՝ ԵՒ ՓՐԿՉԱԿԱՆ Հ(Ա)Յ(Ո)Յ 1304, ՄԱՅԻՍ 8 ԻՆ:

469. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ, նույնաձեւ. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՃԱԼԸԹԷՑԻ ԱԵՏ ՊԱՇԱՐԱԹԵԱՆԻ ԻԻՐ ԵՂՊԱՐՔՆ ԿԴԱԿ ԷԻՆՂ ԱՐԷԼ, ԱՎԵՏԸՆ ԿԱՍԱՐԷՑ ԻԻՐ ՊԱՐՏԻՑ ՊՐԾԱԻ, ՕՎ ՈՔ ԿԱՐԹԱՍՅԷ ԱՍՍՅԷՔ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ, ԳՐՎԵՑԱԻ ԿԵԴԱՅ 1858|ԱՄԻ:

ՃԱԼԵԹԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆԸ

470. Հին ԵԿԵՂԵՑԻ, ավագ խորանից դեպի արևելք բացվող լուսամուտի ստորին մասում ներքուստ ազուցված քարին վեց տողով փորագրված է (նկ. 171, 171ա).


ՅԱՆՈՒՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ ԵՍ Տ(Է)Ր ԿԱՐՊԻՊԵՏ ԿԱԹՈՒԴԻԿՈՍ ՇԻՆԵՑԻ[Ի] ԶԵԿԵՂԵՑԻՍ Ի ԹՎ(Ի)Ս ՊԿ (1411), ՅԻՇԱՍԱԿ ՀՈԳՈ ԻՍՈ, ՊՐՔ ԴԱՐԴԱՅՔ ԳՅԱԿԱԹՍԻ ՅԻՇԵՑԷՔ:



Հրատ. Շահխաթունեանց, 379: Բարխաւտարեանց, 249: Բացի այլ մանր տարրերը ցումներից, երկուսի մոտ էլ բացակայում է «ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ» բառերը:

471. ՀԻՆ ԵԿԵՂԵՑԻ, կառույցի նորոգման մասին պատմող արձանագիր քարը ներկայումս իր սկզբնական տեղից պոկված է եւ ջարդված երեք մասի, որի բոլոր կտորներն էլ բարեբախտաբար պահպանվում են նոր կամ մեծ եկեղեցու ներսում: Ի սկզբանե քարը տեղադրված է եղել. «ներհակ դրուած է արտաքուստ տաճարի հարաւային որմնի վերայ՝ սալկախից ցած, որ կարդացում է մեծ դժուարութեամբ» (նկ. 172).

ԱՐԴ ԵՄ Տ(Է)Ր ԱՌԱՔԵԼ | Կ(Ա)Թ(Ո)Ղ(Ի) Կ(Ո)Ս ԿԱՆԿՆԵՑԻ Ս(ՈՒՐ)Բ | ԽԱՉՍ ԵՒ ՆՈՐՈԳԵՑԻ | ԵԿԵՂԵՑՈՅ ԳԼՈՒԽՆ | ԿԱՄՆ ՀՈԳՈՅ Տ(Է)Ր ԹՈՎՍՂԱՍԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ | ՈՎ ՈՔ ՆՍՏԻ ԱԹՈՌՍ: Ա(1) | ՄԻՐ ԺԱՄ Պ(Ա)Տ(Ա)Ր(Ա)Ք... Ջ(Ա) ՏԿ(Ի)Ն:



Հրատ. Բարխուտարեանց, 249 (հրատարակել է խիստ աղավաղված ու բազմաթիվ վրիպումներով):
 Ճանոթ. քվազրվում է XV դարի 2-րդ կեսով:
 Լուսանկարը մեզ է տրամադրել պատմաբան Հրանուշ Խառատյանը (Առաքելյան):

472. ՏԱՊԱՆԱՔԱՐ, սպիտակ գույնի: Գտնվելիս է եղել եկեղեցու մուտքի առջև: Ներկայումս չի նկատվում: Կարծում ենք, մնացել է շենքի փլատակների տակ եւ վերստին հնարավոր է հայտնաբերել միայն մաքրման աշքատանքներ կատարելուց հետո:

Ի ԹՎ ՋԻԴ (1475) ՀԱՆԳԻՍՏ ԹՈՎՍԱՅ ԿՈԹՈՒՂԻԿՈՍԻՆ:

Հրատ. Շահխաթունեանց, 379: Անփոփոխ վերահրատարակել է նաև Բարխուտարյանցը (էջ 250):

473. Ի ԹՎ ՋԿ (1511) ԵՄ ՏՐ ԱՌԱՔԵԱԼ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԳՆԵՑԻ ՎԵՐՍՏԻՆ ՊԱՐՈՆ ՀԱՄԱՆԲԵԿԷՆ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԴՐԱՆ ՃԱԼԵԹ ԳԻՒՂԱ: ԳՈ (3000) ԹԱՆԿԱՅ ԽԱՐԻՃ ԱՐԻ. ԵՒ ՏՎԻ ՎԱՄՆ ՄԵՐ ՀՈԳՈՅՍ ՍՈՒՐԲ Ա(ՍՏՈՒԱ)ՃԱՃՆԻՆՍ, ԵՒ ՈՎ ՀԱԿԱՌԱԿԻ ԱՅՍ ԳԻՒՂ ՃԱԼԵԹԻՍ, ԿԱՍ ԽԼԷ...:

Հրատ. Շահխաթունեանց, 379-380 (տեղը չի նշել):
 Վիճակագիրը հրատարակվել է իբրև նախարդի շարունակություն սակայն բովանդակությունից հետևում է, թե այն կարող էր նաև այլ քարի վրա փորագրված լինել: Վիճակագիրը անփոփոխ վերահրատարակել է նաև Բարխուտարյանցը, հավանաբար առնելով Շահխաթունյանցից (էջ 250):

474. ՏԱՊԱՆԱՔԱՐ, կից է եղել նախարդներին: Ներկայումս սա ևս մնացել է փլատակների տակ.


ԹԻՒ ԿԱՐԱՊԵՏ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ՊԿ (1411) ... ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԵՐԻՑՍ ՎԵՀԻՑ ՈՐՔ ՕԾԵՑԵԱԼՔ Ի ՏՈՒՆՆ ԱՂՈՒԱՆԻՑ, ԱՍՏ ԹԱՓԱՌԱՅԵԱԼՔ ՅԱՅՆՍ ՄԻՋՈՑԻՑ, ԿԱՆ ԱՄՓՈՓԵՎԼՔ Ի ՆԵՐ ՏԱՊԱՆԻՑ, ՅԱՐ ՍՊԱՍԵՆ ՀԱՐՍՏՉԻՆ ԲՆԱԻՑ, ԱԿՆԿԱԼԵՆ ՅՈՒՍՈՎ ՊՏՂԱԼԻՑ:

Հրատ. Շահխաթունեանց, 380: Բարխուտարեանց, 250:

Ճանոթ. Արձանագրության բովանդակությունից եւ ոճից կարելի է ենթադրել, թե այն փորագրվել է ավելի ուշ ժամանակներում:

475. ՀԻՆ ԵԿԵՂԵՑԻ, արեւմտյան ճակատին արտաքուստ, մուտքից վեր մի կիսակոփ քարին փորագրված է կիսատ արձանագրություն եւ կից մեկ փակագիր (նկ. 173)

ԻՆԲ...
 ԻՍ...



476. ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻ, շքամուտքի հյուսիսային կողմի քանդակազարդ անկյունաքարին մեկ տող (նկ. 174).

ՍԱՐԳ(ԻՍ) Վ(Ա)Ր(ԳԱՊԵՏ):

477. ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻ, ներքուստ հյուսիսային պատին երկտող փորագրված է անհասկանալի տառերի շարք.

Բ, Ծ, Ա, Յ, | Ա, Մ, Ա, Թ, Ն, Վ:

478. ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻ, արևմտյան ճակատում արտաքուստ ազուցված նախշաքանդակ քարերից մեկի վրա պատկերված է խաչելության տեսարանը, ուր խաչափայտի վրա փորագրված է (նկ. 175).

ՅՆԹՀ:

Ծանոթ. Սա՝ «Յիսուս Նազովրեցի Թագավոր Հրեից» բառերի հասպակված ձևն է:

479. ՏԱՊԱՆԱԶԱՐ, վանքի գերեզմանոցում: Հին եկեղեցու արևելյան կողմում: Ուղղանկյունաձև (նկ. 176).

ԱՅՍ ՏԱՊԱՆՍ Է ԱՅԾԵՐՈՒՆԻ | ԽԱԼԱԹ - ՆՈՒՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ, | ՎԱՐԺՈՂ ՄԱՆԿԱՆՅ ՀԱՅՈՑ ԱՉԳԻ | ԼՈՒՄԱՏՈՒ ԼԵԱԼ ՀՈԳԵԿԱՆԻ, | Ի ՀՈՂ ՏԱՊԱՆ ԱՅՍՕՐ ԳՐՆԻ, | ՕՎ ՀԱՆԴԻՊՕՂԸ ԴՈՒՔ ՈՂՈՐՄԻ, 1829:

480. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նոր եկեղեցու արևմտյան կողմում, ուղղանկյունաձև (նկ. 177).

ԱՅՍ Է ԻՄ ՏԱՊԱՆ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԻՍ | ՏԵՐ ՍԱՐԳԻՍՅԱՆԻՆ ՏԵՐ ԱՄԱԳՈՎԻՍ | ԱԶՆԻԻ ԱՉԳԱԿԱՆ ԶԱԶԻՄԱՅՆ ԴՐԵԼԻՍ | ՄԵՆԱՄ ՅԵԻՏԵԱՆ ՀՈՂ ԳԵՐԵԶՄԱՆԻՍ, | ՎԱՆՋԱՆՆ ԻՄ Է ՀԱՍ 1850 ԱՄԻՍ:

481. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նոր եկեղեցու արևմտյան պատի տակ, նույնաձև (նկ. 178).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԾԱԼԸԹԷՑԻՊԵՏՐՈՍ ՎԱՐԹԱՊԵՏՅՈՎՈՂՈՍԵԱՆ ՍԱՐՈՒՄԱՆԻՍԵԱՆՅ, 80 ԱՄԱՅ ՎԱՆՋԱՆՎԵՑԱԻ 10 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 1861 ԱՄԻ:

Ծանոթ. 1861թ. մարտին Պետրոս վարդապետ Մարտիրոսյանցը հիշվում է որպես ճարտարի վանքի միաբան (Ֆ. 56, գ. 1, գ. 4110, ք. 1):

482. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գտնվելիս է եղել վանքի բակում: Մեր այցելությունների ընթացքում այն չենք գտել, բայց 1891թ. «Նոր-Ղար» օրաթերթի թղթակից «Ուխտավորը» (N 155, էջ 3) ընթերցել է հետևյալը.

ՂԱՆԻԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԷԶՄԻԱՇՆԵՑԻ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԻՃԱԿԻՆ ԾԱԼԸԹԻ ԵՎ ՈՒՏԵԱՅ, ՎԱՆՃԱՆՅԱԻ ՌՄՁ (1757) ԹՈՒՆ ՀԱՅՈՑ:

Ծանոթ. Ուխտավորը նկատել է, որ «...Վանքի բազում ամփոփուած կան շատ եպիսկոպոսների, վարդապետների շիրիմներ, որոնց վրայի արձանագրութիւնները ժամանակը մաշել անհետացրել է, միայն մեկի արձանագրութիւնը կարդացիմք, ...», որը և ներկայացվեց:

ԾԱԼԸԹ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

483. (նկ. 179)

ՏՈՒՆՍ ԱԼԻԶՄԱՆ | ՄԵԼԻԶՍԷԹԵԱՆՅԻ Է 1911 ԹԻՆ:

484. (նկ. 180)

ՏՈՒՆՍ Է | ԽԱՉԻ | ԲՈԼԻԵԱՆՅԻ | 1909 Թ.:

ՄԵԾ ՍՈԿՈՒԹԼՈՒ (ՈՒՌԵԿԱՆ)

Երկրամասի հիմնավորը ու պատմական հարուստ անցյալով նշանավորված հայտնի ու բազմամարդ հայկական գյուղերից մեկն էր: Գտնվում է Դուրկան գետի աջ կողմում, գետափից շուրջ 5-6 կմ արևմուտք, շրջկենտրոնից 30 կմ հարավ: Այն հայ մատենագրության մեջ միևնույն անփոփոխ Սոկոթրու անվամբ հիշատակվում է սկսած 1434 թվականից: Ամբողջ XV դարում ու նաև հետագայում գյուղում ստեղծվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնց պահպանված մի չնչին մասը հասել է մեզ ու պահվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում:

XVIII դարում Սոկոթրուն համարվել է նաև Արցախից արտագաղթած հայերի հաշվին. «Եւ ոմն Բարսեղ անուն քահանայ որ էր բնիկ Ղարապաղու յերկրէն Խաչենու, եւ ի յազգէ Մելիքայ, էր անդ որ ընդ գնալոյ ժողովոդեանն սոքա եւս ազգաւ գնացեալ՝ էին եւ զՍոկոթրու գեղն նորոգ շինեալ եւ բնակեալ, որ եւ քան զայն՝ այլ առաւել չի գոյր ի մէջ զհալօրէիցն»:³³² Իրողությունը վկայվում է նաև այլ աղբյուրներով,³³³ ինչպես նաև գյուղի գերեզմանոցում պահպանված տապանագրերի միջոցով:

Մեծ Սոկոթրուն 1886 թ. ուներ 2184,³³⁴ 1888-ին 2107 (350 տուն)³³⁵ 1908թ. 2464,³³⁶ 1914թ. 2800³³⁷ հայ բնակչություն, որոնց մեծ մասը 1918 թ. հարևան տասնյակ հայկական բնակավայրերի օրինակով ենթարկվել է բնաջնջման: Կոտորածներից հրաշքով փրկված փոքրաթիվ հայ գյուղացիները Աղբրեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո վերստին համախմբվել են հայրենի ավերակված գյուղում ու շենացրել այն: Միաժամանակ, մինչ հայերի վերահաստատվելը, գյուղում հանգրվանել էին որոշ քանակությամբ մալականներ, որոնք ենթարկվելով նույն ճակատագրին՝ թողել էին հիմնական բնակության վայրերը (Գետաբակի Նոր Մարատովկա ու այլ գյուղերը):

1986-ին գյուղում բնակվում էին շուրջ 40 տուն հայեր: Կային նաև մալականներ (շուրջ 80 տուն), բրդեր (5 տուն), աղբրեջանցի թուրքեր (2 տուն):

332. Եսայի Հասան Զալալեանց, Պատմութիւն Համառօտ Արտանից երկրի, Յերուսաղէմ, 1868, էջ 27:

333. Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 219-220:

334. "Кавказский Календарь на 1894г.". Тифлис, 1893, էջ 155:

335. Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 221:

336. "Кавказский Календарь на 1910г.". էջ 204:

337. "Кавказский Календарь на 1915г.". էջ 99:

1976թ. գյուղի ընդհանուր բնակչությունը կազմել է 997 մարդ,³³⁸ 1978 թ. այն կազմել է 1002 մարդ:³³⁹ Հայերը բռնագաղթվեցին 1988-ին դեկտեմբերին:

Մեծ Սոկոթը, ինչպես եւ բնորոշ է հին ու մեծ գյուղերին հարուստ է պատմական հուշարձաններով: Ցավոք, գյուղի ամենաարժեքավոր կառույցներից Սբ. Աստվածածին եկեղեցին քանդել են մալականները 1920-ական թթ. սկզբներին, որի հետ մեկտեղ ոչնչացվել են նաեւ մի քանի քանկագին վիմագիր արձանագրությունները: Գյուղի շրջակայքում պահպանվել են հին գյուղատեղեր, զերեզմանոցներ: Առանձնապես ուշագրավ է Մեծ Սոկոթը գյուղի խիստ ընդարձակ հայկական գերեզմանոցը, ուր պահպանվել են ավելի քան 3000



տապանաքարեր: Դրանցից հները ակնհայտորեն վերաբերում են միջնադարին, սակայն անարձանագիր են: Մեր գտած ամենահին թվակիր տապանագրերը XVII դարից էին:

485. Սբ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, շինարարական արձանագրությունը: Մրա տեղը հրատարակիչը չի նշել: Ներկայումս պահպանված չէ. ԿԱՌՈՒՑԱԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՀԱՅԲԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՅԱԿՈՎԱՅ ԵՒ Ի ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՍԻՄԵՕՆԻ ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԼԱՍ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՇԱՍԱԽԵՑԻՈՅ, ԹՎ. ՌՃԻ (1671):

Հրատ. *Բարխուտարեանց*, 220:

Ծանոթ. Հետաքրքրական է, որ արձանագրության մեջ Հայոց Արեւից կողմանց կաթողիկոս է հիշատակված Սիմեոնը: Հայտնի է, որ 1671 թ. կաթողիկոս էր Պետրոս Խանձրեցին (1653-1675), իսկ Սիմեոնը ինքնակալ կաթողիկոս էր, որ Մոսկվայում կառուցելով Երից Մանկանց վանքը՝ հիմք էր դրել հակաթոք կաթողիկոսության:

486. Սբ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՁԱՆԳԱԿԱՏԱՆ վրա եղել է հետեւյալ արձանագրությունը.

ԱՅՍ ՅԻՇԱՏԱԿԸ ՄԻՄՕՆ ՅՈՎՍԷՓՅԱՆԻ ԴԱԻԻԹԵԱՆՅ, ԻՒՐ ԿԻՆ Է ՆԱԽՇՈՒՆ, ՈՐ ՈՐԴԻՔՆ Է ԱՎԱՆԷՍ, 1890:

Հրատ. *Բարխուտարեանց*, 220:

487. Սբ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, ավագ խորանում ագուցված խաչքարին փորագրված է եղել.

ԹՎ. ՁԼԱ (1482):

Հրատ. *Բարխուտարեանց*, 220,

488. Սբ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, արևմտյան ճակատին փորագրված է եղել

ԹՎ. ՁԼԱ (1482):

Հրատ. *Բարխուտարեանց*, 220:

489. Սբ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, խորանի աջ կողմում փորագրված է եղել նորոգման մասին պատմող արձանագրությունը.

ԵՍ ՏԷՐ ՅՈՎՍԵՓՍ, ՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԵՑԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՍ Է (7) ԹԻՋ ԱՂԲ ԿԱՐ, ՈՐ Է ԺԱՍԱՆԱԿ ՀԱՃԻ, ԹՎ. ՌՄ (1751):

Հրատ. *Բարխուտարեանց*, 220 (1751թ. Շաքիի խան էր Հաճի Չախալի կռվածը, որի հայրը երկրամասում մահմեդականություն ընդունած առաջին հայերից էր եւ որդին, որն արդեն մոլեռանդ մահմեդական էր, սարսափելի կրոնական հալածանքներ էր սկսել հայերի դեմ): Այս վիմագիրը «ԵՍ ՏԷՐ ՅՈՍԷՓՐԱ... Սբ. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵԿԵՂԵՑԻՍ Է... Թ. ՌՄ» ձեռով ընդօրինակել է նաեւ «Նոր-Դար»-ի (1891, N 41, էջ 3) քղթակիցը:

Ծանոթ. 1844թ. մարտի 15-ին եկեղեցին կողոպտվել է: Գողացված իրերից գտնվել են Վարդաշենցի հրեա Նյուֆթալի Էյրազ օղլու մոտ, որից և հետ է պահանջվել (Ֆ. 56, գ. 1, գ. 1689, թ. 3):

490. ԵՍ ՄԱՆԱՍԻ ԹՎ. ՈՆ (1156):

Հրատ. *Բարխուտարեանց*, 221:

491. ԽԱԶԶԱՐ. նույն տեղում.

ԻՋ:

Հրատ. *Բարխուտարեանց*, 221:

Ծանոթ. Այս երկու խաչքարերի արձանագրությունները, ինչպես հեղինակն է գրում, արտագրել է «գլխակալ խաչքարերի վերայ... հողի տակից... քանդակում խիստ հնադարեան ձեռով»:

492. Սբ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ավերակների մեջ ընկած մի փոքրիկ բարավորի քարին փորագրված է միայն թվականը.

1890 ԱՄԻ:

493. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գտնվում է եկեղեցատեղիի մոտ: Ուղղանկյունաձեռ է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Տ(Է)Ր ԻՍՐԱՅՅՅ ԷԼԻՆ, ՈՐ ԷՐ ՀԱՅՐ Տ(Է)Ր ՅՕՎՍԷՓԻՆ ԿԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԻՆ, ՌՄՀԳ (1825):

494. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ, նույնաձեռ. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍՕԿՈՒԹԼԵՑԻ ԵՒՐԴԻ Տ(Է)Ր ՊԱՂՏԱՍԱՐԻ Ե(Ի) ՏԻՐԱՅՈՒ ՅՕՀԱՆՆԷՍԻ, ՈՎ ՀԱՆԴԻՊՈՂԸ, ՌՄՀԶ (1827):

495. ՏԱՊԱՆԱԶԱՐ նախորդի մոտ, նույնաձեռ. ... ՏԱՊԱՆ ՍԵՕԳԻԹԼՈՒԵՑԻ ՏԷՐ ՅՈՎՍԷՓԻՆ, ՈՐ ԷԼ...ԵՒ ՀԱՅՐ ՏԷՐ ՆԵՐՍԷՍ

338. «Աղբյուրագրական Սովետական Հանրագիտարան» (աղբյուրներին), հ. 2, Բաքու, 1978, էջ 301:

339. И.З. Исмаилов, 62վ. աշխ., էջ 3:

Ե(Ի) ՏԵՐ ՍԱՐԳՄԻ |...1868 ԱՄԻ, ՕԳՈՍ-ՏՈՍ 9 ԻՆ:

496. ՏԱՊԱՆԱԶԱՐ նախորդի մոտ, նույնաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԴԱԻԻԹԻ, ՈՐ Է ՈՐԴԻ Տ(Է)Ր | ՄԿՐԴՉԻ, ԵՂԲԱՅՐ ԷՐ ՍԱՆԱՍ, ՅՈՎՍԷՓ ԵՒ ՄԽԱԿԻ ՈՐՏԻ ԱՓԿԱԶ ԱՌ ԹԵՐԻ ԳՈՐ ՏԵՐ 28 ԹՈՂԻ, ԿԱՐԴԱՅՈՂ ՏՈՒՐ ՈՂՈՐ-ՄԻ 1873 ԱՄԻ:

497. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գերեզմանոցի կենտրոնական մասում, ուղղանկյունաձև սալատապան է մեծ մասով խրված հողի մեջ.

ԱՅՍ Է ԴԱՊԱՆ | ՂԱԼԱԻ ՈՐԴԻ ՈՂԱՆ-ՃԱՆ(ԻՆ), | ԹՎ(ԻՆ) ՌՃԽԳ (1694):

498. ՏԱՊԱՆԱԶԱՐ, ուղղանկյունաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ... ԱՅԲԱՂՋԻ ՕՎԱՆԵՄԻ, ՈՐ Է | ԳՈ(Ի)ՂԸՆ ԽՆԱՇԱԽԶ, ՈՐԴԻՆ Է ՄԻՍՕՆԸՆ | ԿԱՄ ԳՐԻԳՈՐԸՆ, ՊԵՏՐՈՍԸՆ ԿԱՄ ԱՅՍՐԻՆ, | ԹՎ(ԻՆ) ՌՄԽԵ (1796):

499. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԱԿՆԱԶԱՐԻՆ, ԻԻՐ | ՈՐԴԻ Տ(Է)Ր ՊԱՂՏԱՍԱՐԻՆ, ԳՐԵՅԻՄ ԹՎ(ԻՆ) ՌՄԽԵ (1796):

500. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀՈԱՅԻՆ, ԻԻՐ ՈՐԴԻՆ Է ՀԱԹԱՄ ՔՈՒՄԱՆ, Գ|ԱՓՐԷԼՆ, ԱՆԱՆԵՄ, ՅԱՅՁ|ՐԵԱՆ ԳԵՈՐԶ, ՄԱՐՏԻՐՈՍ, | ԱՐՉԱՍԱՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄՇԸ (1809):

501. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույնաձև. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՅԱՐՈՒԹԻՆ, ՈՐ Է | ՈՐԴԻ ՀԱԹԱՄ ՔՈՒՄԱՆ, ԱՆԱԻՆ| ԵՂԲԱՐՆ ԻՄ ՅՈՍԷՓ ԿԱՄ ԱՂԱԶԱՆ, ԹՈՒՐ ԻՄ ՉԱԼԻՆ ԿԱՄ ԽԱՆՈՒՄ, | ԹՎ(ԻՆ) ՌՄՇԹ (1810):

502. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գտնվում էր Պապիկ (Բարիկ) կոչված գյուղատեղի գերեզմանոցում, Մեծ Մոկոթլու գյուղի տարածքում.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ՍԱՀԵԶԱՐԻՆ ԹՎ. ՌՃԾ (1701):

Հրատ. Բարխուտարեանց, 222:

503 ԽԱՉԱՐՉԱՆ, գտնվում է գյուղի արևելյան կողմում, սարի գագաթին, Չեռնավոր կոչված սրբատեղում.

ԵՍ ՍԱՐԳԻՍ ՇԻՆԵՅԻ ԽԱՉՍ ԱՅՍ ՏԱԿԻՍ ԹՎ. ՊՅԳ:

Հրատ. Բարխուտարեանց, 221:

ՅԱՂՈՒԲԼՈՒ (ՀԱԿՈՒԹԻ ՇԵՆ)

Մինչև 1918թ. զուտ հայաբնակ, ներկայում արքրեջանական թուրքերով բնակեցված գյուղ շրջկենտրոնից շուրջ 20 կմ հարավ, Վարդաշեն-Եվլախ մայրուղու ձախ կողմում: Գյուղի վերաբեր-

յալ մատենագրական տեղեկություններ չեն պահպանվել, սակայն պահպանված հուշարձանների ուսումնասիրությունից պարզվում է, որ այն առընթաց միջնադարից արդեն զավառի խոշոր ու ծաղկուն բնակավայրերից էր: Յաղուբլուն ծննդավայրն է ճալեթի վանքում նստած Աղվանից Արիստակես կաթողիկոսի: Գյուղի բնակչությունը, դիմագրավելով բոլոր ահեղ փորձություններին (մանավանդ XVIII դարի կեսերի կրոնական հալածանքներին), նույն դարի վերջերին համարվել է ի հաշիվ արցախահայ գաղթականության: 1886թ. գյուղն ուներ 1126,³⁴⁰ 1914թ. 1357 հայ բնակիչ:³⁴¹

Գյուղամիջի Մք. Մինաս և Մք. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները ներկայում գոյություն չունեն: Պահպանվում են երկու գերեզմանոցները, մեկը գյուղամիջում, երկրորդը՝ գյուղի հարավային կողմում, սարավանջին:

Գյուղում պահպանվում են հայ բնակիչներից մնացած քարաշեն ամրակոտ բնակելի շենքեր:

504. ՏԱՊԱՆԱԶԱՐ, զարդարված խաչաքանդակներով, գտնվում էր գյուղամիջի գերեզմանոցում, հեղեղատի՝ ճանապարհի քանդած մասում: ԹՎ...ՍՈՒՐԲ ԽՂԱՉՍ ԲԱՐԻԵԽԱԽՍ Է ԸՐՍ ԴՏԱԿԵՄ ԿԱԹՈՒԴԻԿՈՍՆ Է:

Հրատ. Բարխուտարեանց, 222-223:

Շանոթ. Աղբյուրներում Արիստակես կաթողիկոսի վերաբերյալ պահպանվել են 1511-1516թթ. հիշատակություններ:

505. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նույն գերեզմանոցում, ուղղանկյունաձև (նկ. 181).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Ս(ՈՒՐ)Բ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ ԵԿԵՂԵՅՈՒՅ | ՇԻՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՃԱՌ Է ԵՂԵԱԼ ՅԱՐՈՒԹԻՆ ԵԹ|...Ն ԵՄՂՈՒԲԼՈՒ ԳԵՂՉ, ՎԽՃ. 1898 ԱՄԻ, |...64 ԱՄԱՅ ՀԱՍԱԿՈՒՄ:

Շանոթ. Ինչպես վերևում արդեն նշել ենք Յաղուբլու գյուղի եկեղեցին կոչվում էր Մք. Մինաս: Այն գտնվում էր գյուղի վերին մասում և ներքին թաղի բնակիչների համար դժվար էր ամեն օր այնտեղ հասնելը: Հենց այս հանգամանքը հաշվի առնելով է, որ ձեռնարկվում է 2-րդ՝ Մք. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինությունը. «Հանգուցյալ Յարութին քեկը, որ միշտ իր գիւղացիների վերայ մեծ խնամք էր տանում (խոսքը Հարություն քեկ Միլիկյանի մասին է - Ս.Կ.) իր կենդանության ժամանակ (ինչպես վկայում է ժողովուրդը) խոստանում է գիւղի մէջ իր ծախքով եկեղեցի շինել տալու: Իսկույն եւեթ գիւղացիները քերում, պատրաստում են շինութեան հարկավոր քերքը, մնում է միայն շինութեան ձեռնարկելը, քայց վաղահաս մանր չէ թողնում իրագործելու այդ եւ այժմ սրբ. պարտականութիւնը մնում է նրա արդիների վերայ ...» («Նոր-Դար», 1887, N 151, էջ 2):

Ինչպես երևում է տապանաքարից, այնուամենայնիվ, գյուղի 2-րդ եկեղեցին կառուցվել է:

340. "Кавказский Календарь на 1894г", էջ 169:

341. "Кавказский Календарь на 1915г", էջ 214:

506. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ, նույնա-
ձև (նկ. 182).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՆԵՄԵՏ(Ա)Պ(Ա)ԿԻ ԱԹԱ-
ՆԵՍ| ԹՈՍԱՍԵ(Ա)Ն, ԱՊՐԵՅԱ 68 ՏԱՐԻ,
ՏԱՆՈՒՏԵՐ(ՈՒ)Թ(Ի)Ի Ն| ԱՐԻ ԼՐԻԻ 6 Տ-
(Ա)Ր(Ի): ՏԱՃԻԿՆԵՐԸ ՅՐԵԻ ՏԻՆՆ ՄԵՁ |
1905Թ. ԵԱՂՈՒԲԼ(ՈՒ)Մ ԵԹԱՐԱՆՅ ԿԱՍԱ-
ՊԵՏԻ ՏՆ(ՈՒ)Մ:

507. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գյուղի հարավային կող-
մի գերեզմանոցում.

ԱՅՍ Է ԴԱԲԱՆ ԱՎԷԴԱՐԱՆՈՑԵՑԻ ԽՈ-
ՃԱ ԶԱՍԲԱՐԻ| ԹՈՌՆԸ, ՍԱՐԶԻՆԻ ՈՐ-
ԹԻ, ՀԱՆԿՈՒՑԵԱԼ՝ ԴԱԼԼԱԶ ԱՎԵԴԻՍԻ
ԴԱՊԱՆ Է|, ՕՎ ՈՐ ԿԱՐԹԱ ՄԵԿ ԲԵՐԱՆ
ԱՍԷ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ՈՒՄԴԱ ԱՎԵ-
ԴԻՍԻ, |Ի ԹՎ(Ի)Ն ՈՍԾԵ(1806):

ՎԱՐՂԱՇԵՆ

Երկրամասի հայկական հիմնավորը ու նշա-
նավոր բնակավայրերից մեկն էր: Մատենագրա-
կան աղբյուրներում Վարդաշենը միեւնույն անվո-
ւնի անվամբ հիշատակվում է դեռևս 1310թ.:³⁴²
Տեղի քահանաներին ու իշխաններին հղած Դու-
կաս Կարնեցու թղթում Վարդաշենը հիշատակվում
է նաև 1782 թ.:³⁴³

XIX դարի կեսերին Վարդաշենն ուներ շուրջ
300 տուն բնակիչ, որոնցից «...հարիւրն թողեալ
գեայրենի կրօնս եղեն Վրացիք ի վերջին ժամա-
նակս ի հարստահարութեն ուրեմն ընչաքաղց ե-
պիսկոպոսի...»: ³⁴⁴ 1874թ. Վարդաշենն ուներ 1592
առաքելական եւ 680 ուղղափառ հայ բնակչու-
թյուն: ³⁴⁵ 1908թ. ուներ 3305³⁴⁶ բնակիչ, 1914թ.-ին՝
2941: ³⁴⁷ Գյուղաքաղաքը կազմված էր երեք մեծ
թաղամասերից, որոնք ունեին Վարդաշեն, Գշլաղ,
Ջուռայար անունները: Բնակավայրի վերին (հյու-
սիսային) կողմում Վարդաշեն թաղամասն էր:

Վարդաշեն անվան ստուգաբանությունը մաս-
նագետներին հանգեցրել է երկու կարծիքի: Առա-
ջինը, որ այն հիմնել է ոմն Վարդան անունով հայ
(Կուտկայի եղբայր), ³⁴⁸ իսկ մյուսները ստուգաբա-
նում են «վարդ» եւ «շեն» բառերի միացմամբ «ա»
շաղկապով: Կարծում ենք, վերջինս միանգամայն
պարզ համոզիչ ու ընդունելի բացատրություն է
(թերևս առաջին ստուգաբանությունը ճիշտ է Վար-
դաշենի շրջանի՝ Վարդանի գյուղի համար):

342. Պարույր Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագ-
րությունները, Երևան, 1977, էջ 11:

343. «Ինչպե՞ս հայոց պատմության», նոր շարք, գիրք առաջին,
հատոր Ա, Կուկաս Կարնեցի, աշխատասիրությունը՝ Վար-
դան Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 334:

344. Ս. Ջալալյան, նշվ. աշխ., էջ 379:

345. “Кавказский Календарь на 1885г.”, էջ 215:

346. “Кавказский Календарь на 1910г.”, էջ 212:

347. Ե. Լալայան, Նիժի եւ Վարդաշենի ուտիները ազգագրա-
կան տեսակետից, Երևան, 1926, էջ 157: Ըստ (“Кавказский
Календарь на 1915г.” էջ 104) 1914թ. հունվարի 1-ին Վարդա-
շենն ուներ 1129, իսկ Վարդաշեն-ղշլաղը 720 հայ բնակիչ:

348. Рашид бек Эфендиев, Несколько сведений о селении
Куткашин ..., “СМОМПК”, вып. IX, Тифлис, 1890, էջ 139:

Վարդաշենը, շնորհիվ իր աշխարհագրական
բարենպաստ դիրքի, հարեւան բնակավայրերի
համեմատ առավել արագ թափով է զարգացել ու
բարգավաճել: Դրանում առանձնապես նշանակա-
լի ու արդյունավետ են եղել մի շարք առաջադեմ
անձանց գործունեությունը XIX դարում: Ինչպես
նշում էր ժամանակակիցը. «...այժմեան Միլիկեան
եղբայրք, իրենց զինուորական կրթութամբ, իրենց
հեռատես ու հայրենասէր ձգտումներով եւ առեւտ-
րական-գործարանական ձեռնարկութամբ, մեծա-
պես նպաստել են վարդաշենցիների մտաւոր եւ
բարոյական ու տնտեսական յառաջադիմութեան:
Նմանապէս Առաքել Մուրատեան եւ Նիկողոսեան
եղբայրք (հայ եւ ռուս յայտնի հրապարակախօս-պ.
Գր. Նիկողոսեանի հարագատները) որպէս առա-
ջաւոր եւ նշանաւոր եւ Հայ գերդաստաններ խթան
են եղել Վարդաշենի յառաջադիմութեան գոր-
ծին»: ³⁴⁹

Վարդաշենը հարուստ է պատմական հուշար-
ձաններով: Բնակավայրի վերին թաղամասում
կանգուն են լուսավորչական եւ ուղղափառ հայերի
մեկական եկեղեցիները: Երկուսն էլ քարաշեն, բա-
վական ընդարձակ կառույցներ են:

Ուղղափառ հայերի եկեղեցին շինված է Հով-
սեփ քահանայի օրոք, 1822թ. ³⁵⁰ Շամախուց բեր-
ված քարերով: Սա հորինվածքով միանալ թաղա-
ծածկ, կեղծ գմբեթավոր շենք է: Ունի մեկ մուտք
(բացված արևմտյան ճակատից) և 5 լուսամուտ:

Հետաքրքրական է եկեղեցու ուղղանկյունաձև
խորանը, որի հատակի մակարդակը գրեթե հավա-
սար է սրահի հատակին: Արտաքինից շրջանաձև
կեղծ գմբեթը պահպանում են երկու գույզ որմնաս-
յունների վրա հենված թաղակիր կամարները: Ներ-
քուստ ունի սովորական կիսաշրջան թաղի տեսք:
Եկեղեցին 1981 թ. օգտագործվում էր, որպես գա-
վառագիտական քանգարան: Կառույցի որմերին
արձանագրություններ չկան:

Հայոց (առաքելական) Մր. Աստվածածին ե-
կեղեցին գտնվում է ուղղափառ եկեղեցուց շուրջ
300 մետր հյուսիս: Մրա կառուցումը հիմնվել է
1830 թ. եւ ավարտվել 1838թ.: Ունի եռանակ բազի-
լիկի հորինվածք: Հիմնական առանձնահատկու-
թյուններից է կենտրոնական նավի ողջ երկարու-
թյամբ, սյուների ու որմնասյուների վրա հենված
երեք կեղծ գմբեթների առկայությունը: Արտա-
քուստ ունի երկթեք տանիք: Եկեղեցին ունի երկու
մուտք՝ հարավից եւ արևմուտքից: Արևմտյան ճա-
կատում արտաքուստ ազուցված է շինարարու-
թյան մասին պատմող արձանագրությունը: Եկեղե-
ցին ներկայումս գտնվում է անմխիթար վիճակում:
Միայն տանիքին արդեն բուսել են տասնյակ ծա-
ռեր, որոնց արմատները շարունակ քանդում են
թաղը: Օգտագործվում է որպես մետաղե թափոն-
ների հավաքատեղ:

349. Գազար քահանա Յովսեփյանց, նշվ. աշխ., էջ 33-34:

350. М. Безанов, Краткие сведения о с. Варташен и его жителях,
“СМОМПК”, вып. XIV, Тифлис, 1892, էջ 218:

Վարդաշենի շրջակայքում պահպանվում են երկու եկեղեցիներ և: Դրանցից մեկը գտնվում է բնակավայրի արևելյան ծայրում, հին գերեզմանոցում, իսկ մյուսը 2 կմ հարավ, գետակի աջ ափին: Առաջինը միանավ բազիլիկ է, որը հետագայում բազմիցս ենթարկվել է նորոգության: Կառույցի ստորին, հին շարվածքը իրականացված է մեծ-մեծ սրբատաշ դեղնավուն չեչ (ծակոտկեն) քարերով: Վերջին նորոգության ժամանակ քարաշեն թաղը փոխարինվել է փայտածածկով: Ըստ հորինվածքային, հատակագծային, կառուցողական առանձնահատկությունների, այն կառուցվել է IX-XI դարերում:

Մյուս եկեղեցին, որ հայտնի է Եղիշ Առաքյալ անունով, հորինվածքային ու հատակագծային հիմնական լուծումներով կրկնում է Մախորդ եկեղեցուն:

Սրա մասին հիշատակություն է պահպանվել 1310թ.-ից:³⁵¹ «Աւանդաբար պատմում են, որ ս. Եղիշէ Առաքյալն ունեցել է երեք աշակերտներ, Վլաս, Քահայցիցիկ եւ Գօմ-Մուրատ: Որոնցից առաջինը նահատակուած եւ թաղուած է Նիժ գիւղաքաղաքի ս. Եղիշէի եկեղեցու սեղանի տակը, երկրորդը նահատակուել ու թաղուել է Վարդաշեն գիւղաքաղաքի ստորոտում, մի գեղեցիկ բլրակի վրայ, որ յետոյ Վարդաշենցի բարեպաշտ Առաքել Մուրատեանը իւր ծախքով շինում է մի փոքրիկ մատուռ 1811 թ...»:³⁵² Սակայն հարկ է նշել, որ Առաքել Մուրատեանը ոչ թե շինել, այլ նորոգել է Սր. Եղիշե Առաքյալի եկեղեցի-մատուռը:

508. ՍԲ., ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, արևմտյան ճակատում ագուցված սրբատաշ քարին 12 տողով փորագրված է շինարարական արձանագրությունը (նկ. 183).

1830 ԱՄԻ ՄԿՍԵԱԼ Ս(ՈՒՐ)Բ Ա(ՍՏՈՒԱ) - ԾԱԾՆԱՅ| ԵԿԵՂԵՑԻ ՄԻՆՉ Ի | ԱՎԱՐ- ԳԵԱԼ 1838 | ԱՄԻ, ԵՐԱՆԳԻԷ ՈՒՆ|ԵՐ Ե- ԹԱՐ ԵԱՐԴՈՒԼ|ԵԱՆԻՆ, ՈՐ ԿԻՆ ԿՈ|ՉՎԻ ԱՌԱԶԵԼ| ՄՈՒՐԱԳԵԱՆԻՆ, ՕՎ ՀԱՆԳԻ- ՊՈՂԸ| ԳՈՒԷ ՈՂՈՐՄԻ ԻԻՐ | ՈՐԳԻ ՄԿՐԳԻՉ ԳՐԻՐ ՏՈՒԱ:

Հրատ. Բարխուտարեանց, 246 (ունի մանր տա- րբերքումներ):

Ծանոթ. 1838թ. Սր. Աստվածածին եկեղեցին ենթարկվել է կողոպտման (Ֆ.56, ց.1, գ.562, ք.1,11): 1900թ. եկեղեցին գտնվում էր քայքայված վիճակում: Հարկա- վոր էր քիթեղապատել տանիքը, ներսի ճեղքերը լցնել շաղախով և սվաղելուց հետո ամբողջ եկեղեցին ներքստ սպիտակեցնել և այլն՝ ընդամենը 1600ռ. ծախս (Ֆ.56, ց. 1, գ. 9709, ք.3):

509. ՏԱՊԱՆԱԶԱՐ, Սր. Աստվածածին եկեղեցու բակում (ներկայում պահպանված չէ).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՎԱՐԴԱՇԵՆՑԻ ՊԱՐՈՆ ԱՌԱԶԵԼ ՄՈՒՐԱՏԵԱՆՑԻՆ, ՅԵՏ ՄԱՀՈՒ -

ԱՆ ԱՇԽԱՏԵԱՑ ԺԱՌԱՆԳՆ ԱՅՍՍ ՏԱ- ՊԱՆԻՆ, ՈՐ ԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԵԿ ՈՐԳԻ ՄՈՐԻՆ, ՅԻՇԵՑԵԸՈՎ ԸՆԹԵՐՑՈՂԸ ԱՅՍ ԼՈՒՍԱՀՈԳԻՆ, ԲԱՐԵՍԷՐ, ԲԱՐԵՁԱՆ, ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ԲԱՐԵՀՈԳԻՆ 1848 ԱՄԻՆ:

Հրատ. Բարխուտարեանց, 246:

Ծանոթ. Հայտնի է, որ 1840 թ. Առաքել Մուրա- յանցը 65 տարեկան էր (Ֆ.56, ց.1, գ. 562, ք. 47): Հե- տևաբար 1848թ., էրր մահացել էր, 73 տարեկան էր: Ա- ռաքել Մուրադյանցի միջոցներով են կառուցվել նաեւ Ծախք գյուղի Աստվածածին վանքը: նոր եկեղեցին եւ Վարդաշենի երկու եկեղեցիները (Սր. Աստվածածին եւ Սր. Եղիշե աստքյալ):

510. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գտնվում է Սր. Աստվա- ծածին եկեղեցու արևմտյան պատի տակ, արտա- քուստ, ուղղանկյունաձև սրբատաշ սալատապան է (նկ. 184).

ԷԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԱՐԱՊԵՏ ԱՆՈՒԱՆԻ, ՈՐԳԻ ՊԱՐԻՆ ԱՌԱԶԵԼԻ, ԱԶԿԱԻ ՄԻՐԱ- ԴՈՎԻ, ԿՐՏՍԵՐ ԵՂԲՈՐԻՅՍ ՅՕՀԱՆՆԷՍ ԲԵԿԻՆ Ե(Ի) ՄԿՐՏՉԻ, Ի 18 ՄԱՅ(Ի)ՄԻ 50| ԱՄ(ԵԱ)ԿՆ Ա(ՍՏՈՒՇՈ)Յ ԵՂԵԻ ՈՐ (Ե)Ի ՈՐ ԱՄՓՈՓԵԱԼ ԱՅՍՐ ՏԱՊԱՆԻ, | ՅԻՇԵՑԵԸ ԶԻՍ ՀԱ(Ն)ԳԻՊՈ(Ղ) Զ ՄԷ ԲԵՐԱՆ Ո- ԴՈՐՄԻ, ՅԻՇՈՂԱՅՆ ՈՂՈՐՄԻ Ա(ՍՏՈՒԱ)- Ծ, ՈՐ ԿԵԱՆՍ ՊԱՐԳԵԻԷ 1844 ԱՄԻ:

511. ՍԲ. ՄԱՀԱԿԵԱՆ ԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ- ՆԱՐԱՆ, շենքը գտնվում է եկեղեցուն մոտ (ներ- կայում հիվանդանոցի շենքն է): Մուտքի ճակատին ագուցված քարին փորագրված է եղել.

ԿՐԹԱՐԱՆՍ ԿԱՌՈՒՑԵԱԼ Է Ի ՅԻՇԱՏԱԿ ՀԱՅՐԵՆԵԱՅՆ Ի... ՅԱՐՈՒԹԻՆ ԲԵԿԷ ՄԻԼԻԿԵԱՆՑ ԵՒ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԱԼ ՅՈՐ- ԳԻՈՅ ՆՈՐԱ 1876:

Հրատ. Բարխուտարեանց, 246:

Ծանոթ. Դպրոցի բացման առաջին տարում՝ 1876թ. ուսուցիչն էր Հովհաննես Տեր-Խաչատրյանը, ա- շակերտների թիվն էր 45 (Ֆ. 56, ց.3, գ. 62, ք.42):

512. ՍԲ. ԵՂԻՇ ԱՌԱԶՅԱԼ ԵԿԵՂԵՑԻ, մուտքի ճակատին եղել է շինարարական արձա- նագրություն: Այն դեռևս XIX դարի վերջին արդեն գտնվում էր կեղծված վիճակում: Ներկայումս ջար- դուփշուր է արված: Նրանից միայն երկու բեկոր- ներ են պահպանվում (նկ. 185).

ՆՈՐՈԳՈՂՆ ՍՐԲՈՅՆ ԵՐԻՇԷԻ ԱՌԱԶԵ- ԼՈՅՍ Ի ԺԱՄԱՆԱԿԻ... ԵՂԵԻ ՎԱՐԴԱ- ՇԵՆՑԻ ԱՌԱԶԵԼ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ 1811:

Հրատ. Բարխուտարեանց, 248:

Ծանոթ. «Նոր-Դար»-ի «Ուխտավոր» թղթակիցը (1889, N216, էջ 2) այս վիճակից ընթերցել է հետևյալ կերպ. «Ընտեռ. գողն սրբոյն Եղիշէի առաքելոյն ի ժա- մանակ լեալն Այլքսան...Վարքաշէն. շէքոն սուրբ Ա.Հ. + Ա.Ռ.Վ. առաքեանքըն ԱՇ ողորմի 1811»:

513. ՄԵՆՅԱԿ, գտնվում է Սր. Եղիշե Առա- քյալ եկեղեցու հյուսիսային կողմում (ներկայում ա- վերակ): Ունեցել է հետևյալ արձանագրությունը. ՅԻՇԱՏԱԿ Է ՄԵՆՅԱԿՍ ՎԱՐԴԱՇԵՆՑԻ

351. Պ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 11:

352. Դագար քահանա, ..., նշվ. աշխ., էջ 42:

ՄԱԹՈՍԻ ԵՒ ԻՒՐ ԿՈՂԱԿԻՑ ԱՆՆԱՅԻ
ՎԱՐԹԱՆԵԱՆՑ 1890 ԱՄԻ:
Հրատ. Բարխուտարեանց, 248:

ՓՈՔՐ ՍՈԿՈՒԹԼՈՒ

Գյուղի հիմնադրման վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել: Մակայն կասկածից վեր է, որ այն առաջացել է Մեծ Մոկոտլու գյուղի խիստ ընդարձակման, բարգավաճման հետևանքով, որից բաժանված (հեռացած) բնակիչների մի մասը ընդամենը մեկ-երկու կիլոմետր հեռու հիմնել են նոր համանուն գյուղը: 1888-ին գյուղն ուներ 484 հայ բնակիչ (70 տուն),³⁵³ 1908թ. 596,³⁵⁴ իսկ 1914թ. 900 հայ բնակիչ³⁵⁵: 1918թ-ից գյուղն անբնակ է:



Գյուղատեղում դեռես կանգուն վիճակում է Մր.Լուսավորիչ եկեղեցին: Այն ունի եռանավ բազիլիկ եկեղեցու հորինվածք: Թաղը պահում են երեք գույգ սրբատաշ սյուները: Միակ մուտքը բացված է հարավային ճակատից: Եկեղեցու շուրջը փոքրիկ գերեզմանոց է, ուր պահպանվել են մի քանի տապանաքարեր: Գյուղատեղիի ընդարձակ տարածքում նկատվում են բազմաթիվ տմատեղեր, մեծ մասամբ՝ դարավանդների տեսքով:

514. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գերեզմանոցում, եկեղեցուց ոչ հեռու.
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ... ՏԻՊԻՐ ՕՀՍ... |ՈՐԹԻ ՄԱՆ...ՏԵՐ... |ԵԱՆՑ...ՈՔ ԿԱՐԳԹԱ, ՅԱՄԻ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ, 1885 ԱՄԻ:

ՕԹՄԱՆԼԸ

Մինչև 1918թ. հայաբնակ գյուղ, ներկայումս անբնակ գյուղատեղի, շրջկենտրոնից 8-9 կմ հարավ-արևմուտք, ճալեթից 6 կմ հարավ, անտառածածկ հարթ ու խոնավ տեղում: XIX դարի կեսերին գյուղն ուներ 30 տուն հայ բնակիչ:³⁵⁶

1890-ական թթ. գյուղն ուներ 25 տուն՝ 112 (56 արական, 56 իգական):³⁵⁷ 1908թ. ուներ 203,³⁵⁸ իսկ 1914թ. 126 հայ բնակիչ:³⁵⁹ 1918թ. կոտորածներից հրաշքով փրկված օթմանլուցիները հետագայում բնակվել են մոտակա ճալեթ գյուղում:

Գյուղատեղի հյուսիսային կողմում, հարթ տեղանքում պահպանվում են Մր. Աստվածածին եկեղեցու պատերը (ծածկը եղել է փայտից, որը չի



պահպանվել)՝ կառուցված անտաշ քարերից, գլաքարերից: Ըստ ոճական առանձնահատկությունների եկեղեցին կառուցվել է XIX դարում: Ունի երկու մուտք՝ հարավից եւ արևմուտքից: Արտաքին չափերն են 14.40x8.48 մ: Եկեղեցու բակի, արևմտյան կողմում տարածված է փոքրիկ գերեզմանոցը: Այստեղ ամփոփված են մի քանի հոգևորականների մարմինները: Հնավայրի բոլոր տապանաքարերը վերջին տարիներին տեղահան են արվել ու կոտրատվել:

515. ՏԱՊԱՆԱԶԱՐ, գերեզմանոցում.
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԳԵՆՐԳԻ ՏԵՐ Ա(ՍՏՈՒԱ)-ԾԵՏՈՒՐ)ԵԱՆՑ, ՈՐ ԾՆԵԱԼ Է 1812 ԱՄԻ ԵՒ ՎԱՆՃԱԼԻՎԵՑԱԻ 1870 ԱՄԻ, ԱՅՍ ՎԵՍԸ ԱՌԻ ՅԱՐՈՒԹԸ, ԻՒՐ ՀՈՐ ՀԱԼԱԼ ԵՒ ԱՐԺԱՆ ԵՂԻ ԵՐԿՈՒՄԻՆ, ՕՎ ՈՐ ԿԱՐԳԱ ԱՍԷ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂ(ՈՐՄ)Ի: ԱՅՍ ՎԵՍԸ ԴԻԻԼ ԴՈՒԱԻ ԵՒ ՅԸԻՅՂ ԳՐԻԳՈՐ ՏԵՐ ՄԳՐՏԻՉԵԱՆԸ:

516. ՏԱՊԱՆԱԶԱՐ, նախորդի մոտ, ուղղանկյունաձև (նկ. 186).
ԱՅՍՍ ՏԱՊԱՆ ԱՍՓՈՓԻ ՄԱՐՄԻՆ ՄԿՐԻՏԻՉ Զ(Ա)Հ(Ա)Ն(ԱՅ)Ի ՏԵՐ Ա(ՍՏՈՒԱ) - ԾԱՐԵԱՆ, ՉԵՆՆԱՏՐԻԵԱԼ 19 ԱՊՐԵԼԻ 1870 ԹՎ(Ի)Ս ՄԱՐԳԻՍ ԱՐՋԵՊ(ԻՄԿՈՊ)ՍԷ ԵՒ ՎԱՐՃԱՆԵԱԼ Է 1901 Թ. Փ(ԵՏՐՎԱ) ԲԻ 16-Ի, ՕՎ ՈՐ ԿԱՐԳԱ ԱՍԷ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂ(ՈՐՄ)Ի:

353. Մ.Բարխուտարեանց, 6շվ. աշխ., էջ 219:
354. "Кавказский Календарь на 1910г", էջ 197:
355. "Кавказский Календарь на ...г", էջ 95:

356. Մ. Ջալալեանց, 6շվ. աշխ., էջ 376:
357. Մ.Բարխուտարեանց, 6շվ. աշխ., էջ 252:
358. "Кавказский Календарь на 1910г", էջ 342:
359. "Кавказский Календарь на 1915г", էջ 170:

ՎԻՍԱԳՐԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ



1 (1)




5 (9)



1u (1)



6 (10)



1p (1)



7 (12)



2 (2)



8 (13)



3 (3)




9 (15)








4 (7)




10 (16)



11 (18)






23 (48)




27 (61)



24 (54)




28 (63)



25 (55)



29 (68)



30 (72)



26 (60)



32 (77)




31 (74)




35 (81)



31ա (74)




36 (89)



33 (78)



37 (90)




34 (80)



39 (97)






38 (92)




40 (101)



41 (102)






50 (137)



53 (148)



51 (144)



54 (149)



52 (147)



55 (150)



56 (151)



61 (167)



57 (152)



62 (168)



58 (153)



63 (169)



59 (164)




64 (170)




60 (166)



65 (171)




69 (180)



66 (172)



67 (177)



70 (182)





68 (178)



71 (186)



74 (190)





79 (218)



84 (224)




80 (219)



85 (225)



81 (221)



82 (222)



86 (227)




83 (223)



87 (228)



88 (232)



93 (277)



89 (239)




94 (284)



90 (259)



95 (285)



91 (263)



95u (285)



92 (270)




96 (286)




97 (290)



102 (308)



98 (291)




103 (309)



99 (300)




104 (310)




100 (302)




105 (311)




101 (303)



106 (312)



107 (313)




108 (314)




109 (315)



110 (317)



111 (321)



112 (322)



113 (323)



114 (324)




115 (325)



116 (327)



117 (328)



118 (338)



119 (339)




120 (340)



120u (340)




120p (340)



121 (342)



122 (343)





128 (349)



132 (358)



130 (356)



133 (359)




131 (357)



134 (360)



135 (361)




138 (386)




136 (383)



137 (385)



139 (387)




140 (388)




141 (389)



146 (419)



142 (391)



146a (419)



143 (392)



147 (420)



144 (395)





148 (421)




145 (418)



149 (422)






160 (450)




166 (463)



161 (452)




167 (464)



162 (456)



168 (465)



163 (458)



169 (466)



164 (460)



165 (462)




170 (467)



171 (470)



172 (471)



171u (470)



174 (476)



173 (475)



176 (479)




175 (478)



179 (483)



181 (505)



182 (506)



177 (480)



183 (508)



178 (481)



184 (510)



180 (484)



186 (516)

ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ*

- Աբգար, որդի՝ Ղեանդի եւ Փարու, բոս՝ Չելեպու, 51(278)
- Աբրահամ, որդի՝ Ներսես Ղափանցու, մահ. 1796թ., 83(431)
- Աբրահամ, հայր՝ Մահտեսի Օսեփի, 50 (270)
- Աբրահամ, ծնողները՝ Գարուստ եւ Սանդուխտ, եղբայրները՝ Ղարազ եւ Օհան, 45(240)
- Աբրահամ (բրուտ), որդի՝ Պետրոսի, մահ., 1825թ., 8(15)
- Ադամ, հայր՝ Յարութիւն տիրացուի, 19 (71)
- Ազրբէ քոյսա, որդի՝ Շայրուաղի, հայր՝ Կափելի եւ Եղիազար սարկաւազի, 7(7), 7(8)
- Ազիզ, մահ. 1505 թ., 37(186)
- Ազիզ, մայր՝ Պողոս, Պետրոս եւ Բարդուսար Գիրքեցիների, որոնք 1831 թ. եկեղեցի էին կառուցել, 21 (88)
- Աբանես Թովմասեան (տանուտեր), մահ. 1905թ., 94 (506)
- Աբապակ քոյսա, որդի՝ Ճանշի, մահ. 1795թ., 7(9)
- Աբաբիշ իշխան (հարյուրապետ) ՚ Սուրբան, Նուխեցի, որդի՝ Պատալի, 45 (245)
- Աբահալա, մահ. 1493 թ., 32 (156)
- Աբակերտի, հայր՝ Գրիգորի 8(11)
- Ալթար Կազի, հիշատակին խաչքար է կանգնեցվել, 77(411)
- Ալթուն, 71(376)
- Ալեքսան Մարտիրոսեան Մետունց, մահ. 1927թ., 52(290)
- Ալիքսան Մելիքսեբեանց ճալեքցի, հիշ. 1911թ., 91(483)
- Ալլահվերան, որդի՝ Հափարձումի, 43(235)
- Աղա Քալի Լազրովեանց, հիշ. 1752թ., 18(62)
- Աղակուն Նիժեցի, եղբայր՝ Գալիք Գանիեան Ջարգարեանցի, 43(230)
- Աղանան, մահ. 1374թ., 32(161)
- Աղանան Շամախեցի, 7(10)
- Աղաջան, որդի՝ Ավանիսի Բարեանցի, սպանվել է 1904թ., 19(74)
- Աղափի, կին՝ Հայրապետ Խանիշինցու, 52(288)
- Ամբին Փրխտիւն, մահ. 1171 թ., 23(95)
- Այնուս, մահ. 1592 թ., 66 (339)
- Այ Քամալ, 30 (144)
- Անա, հիշ. 1810 թ., 93 (501)
- Անա խանում, դուստր՝ Ասք Շամախեցու, մահ. 1808թ., 8 (12)
- Անանես, որդի՝ Հոսայի, 93 (500)
- Անդոն, որդի՝ Պետրոսի, մահ. 1773 թ., 67 (346)
- Անթառան, կին՝ Տեր Կարապետ Սուրբան-Նուխեցու, մահ. 1840թ., 45 (250)
- Անթառան, կին՝ Մտեփան քոյսի, մայր՝ Իսրաէլի, մահ. 1791թ., 10 (33)
- Անթառան, կին՝ Համբարձումի, մահ. 1816թ., 19 (69)
- Աննա, կին՝ Տեր Իսրայելի, մահ. 1795, 45 (242)
- Աննա, կին՝ Տեր Յոհան քահանա Փիրվերտեանցի, մահ. 1836 թ., 8 (17)
- Աննա, կին՝ Յովհաննես քահանայի, դուստր՝ Յովակիմ Տեր Ղազարեանց Շուշեցու, մահ. 1866թ., 86 (450)
- Աննա Շամախեցի, կին՝ պարոն Յոհաննես Քալանթարեանցի, հիշ. 1871թ., 50 (277), 51 (283)
- Աննա Ուշտալեցի, կին՝ Գալիք Ասկարեանցի, մահ. 1871թ., 19 (73)
- Աննա, կին՝ Մաթոս Վարդաշենցու, 96 (513)
- Անտոն վարդապետ, հիշ. 1680, 1718, 1719 թթ. 49 (267), 49 (269), 50 (275), 50 (276),
- Առաքել կաթողիկոս, նստում էր ճալեքի վանքում, հիշ. 1497, 1499, 1511 թթ., 90 (471), 90 (473)
- Առաքել Մուրատեան, հիշ. 1811 թ. մահ. 1848թ., 95 (508), 95 (509), 95 (510), 95 (512)
- Առաքել Պաշարաբեան ճալեքեցի, մահ. 1851թ., 89 (466)
- Առաքել Վեղիբեանց Նիժեցի 43 (226)
- Առաքել քահանա Տեր Մարտիրոսեանց, մահ. 1894 թ., 9 (22), 9 (23)
- Առաքել Յոսեփեանց, հիշ. 1911 թ., 84 (445)
- Առաքել Քալախանցի, պապ՝ Խոջա Ըստեփանի, 45 (246)
- Ասլան, մահ. 1451 թ., 38 (199)
- Ասլան բէկ, հայր՝ Յակովբէ Աբաբէկեանց Ջրաբերդցու, 46 (254)
- Ասլան մասնորք, որդի՝ Յագին Թիֆլիզեցու, մահ. 1737 թ., 65 (330)
- Աստուածատուր, որդի՝ Կարապետի եւ Գուլմարի, 50 (275)
- Աստուածատուր լուազ քահանա Շամախու, հայր՝ Տեր Փիլիպոսի, 64 (324)
- Աստուածատուր կաթողիկոս (1715-1725), հիշ. 1718թ., 50 (275)
- Աստուածատուր վարդապետ, հիշ. 1715թ., Մաղիանի վանքում շտեմարան է շինել տվել, 63 (315), 65 (337)
- Ասրի, որդի՝ Խուկազի, 11 (42)
- Ավագ, որդի՝ Միքա Շամախեցու, մահ. 1812թ., 8 (14)
- Ավանես, ծնողները՝ Սիմոն Յովսեփեան եւ Նախշուն, 92 (486)
- Ավանես Բարեանց, հայր՝ Աղաջանի, 19 (74)
- Ավաք (ղալաք), որդի՝ Օհան Դրախտիկցու, մահ. 1812 թ., 21 (84)
- Ավաք, որդի՝ Համբարձում Մաղաբեանց ճալեքցու, մահ. 1857 թ., 89 (462)
- Ավեդիս (ուստա, դալաք), որդի՝ Մարքինի, բոս՝ Խոճա Քարաբի, մահ. 1806թ., 94 (507)
- Աւանեսեան Աւանեսեանց, հիշ. 1912թ., 52 (289)
- Աւանես, 71 (375)
- Աբան Շահվարդի, 21 (79)
- Աբգամ, որդի՝ Գոզալի, 51 (280)
- Աբգալ Տեր Սիմոնեան (դպիր), հայր՝ Սարգիս տիրացուի, 86 (452)
- Աբգաման, անուսին՝ Տաստազուլի, հայր՝ Կոկնայի, Կարապետի, Մարգի, Մանիայի, 50 (275)
- Աբգաման, որդի՝ Հոսայի, 93 (500)
- Աբգիման, մահ. 1717թ., 10 (31)
- Աբրուն, հայր՝ Օվանեսին, 10 (39)
- Արիստակես կաթողիկոս, նստած էր ճալեքի վանքում, հիշ. 1511-1516թթ., 93 (504)
- Արաշիր, որդի՝ Ջուշերի, մահ. 1483թ., 38 (200)

* Փակագծից դուրս նշված թիվը՝ էջի ցուցիչն է, իսկ փակագծերի մեջ առնվածը՝ արձանագրության հերթական համարն է վերծանությունների մեջ:

- Արուփին, որդի՝ Գոռու, 51 (280)
 Արուփին, մահ. 1454թ., 26 (114)
 Աւետիս քահանա Տէր Իս-
 րայէլեանց, 44 (239)
 Աւետիք (չիչի), 83 (429)
 Աւաք, հիշատակին խաչքար է
 կանգնեցվել, 71 (372)
 Աւաք, հիշատակին խաչքար է
 կանգնեցվել, 65 (334)
 Աւաք, հայր՝ Մկրտչի, 75 (400)
 Աւաք, որդի՝ Պաղտասար Թաղա-
 րեցու, մահ. 1816թ., 69 (353)
 Աւաք Շամախեցի, հայր՝ Անա խա-
 նունի, 8 (12)
 Աւաք Շամախեցի Օսմանեանց,
 տես՝ Օսմանցի Աւաք
 Աւետ Պաշարաբեան Գալթքցի,
 մահ. 1858թ., 89 (469)
 Ափկազ, 92 (496)
 Աքար, հայր՝ Մինասի, 45 (243)
 Բարա, 73 (385)
 Բարա, որդի՝ Խուկազի, 11 (42)
 Բարի Բաշարաբեանց Գալթքցի,
 հայր՝ Յոհաննիսի, 89 (468)
 Բարասան, դուստր՝ Տէր Գանիէլ Տէր
 Աւագեանցի, մահ. 1899թ., 40
 (216)
 Բարասի Ղամարեանց Մաարասե-
 ցի, 47 (259)
 Բարասի Տէր Գարբիէլեան Տէր
 Գասպարեանց, մահ. 1892 թ.,
 25 (106)
 Բախիշ Բլեղցի, անուսին՝ Մարեան
 Գիլտարեանցի, 19 (70)
 Բախիշ Սահակեան Շամախեցի,
 անուսին՝ Մարգարիտ Ստեփա-
 նեանի, 83 (439)
 Բակլար քոխա, հայր՝ Յարութին
 բժիշկ Խոշկաշեանցու, 87 (458)
 Բակնազար, հայր՝ Տէր Պաղտա-
 սարի, մահ. 1796թ., 93 (499)
 Բակվերդի, որդի՝ Ղարակատի,
 մահ. 1786թ., 35 (172)
 Բաղդասար տիրացու, որդի՝ Տէր-
 յաննեց Պողոսի, մահ. 1809թ., 21
 (81)
 Բաղդասար Գրիգորեան Յովսե-
 փեանց Գիրբեցի, եղբայր՝
 Պետրոսի եւ Պողոսի, հիշ 1831
 թ., 21 (88)
 Բաղդասար Տէր Մարկոսեանց
 առաջ քահանա, մահ. 1883 թ.,
 21(86)
 Բաղտար, տես՝ Բաղտար տիրացու
 Բաղրամ Մագրդեցի, որդի՝ Յուսե-
 փի, հիշ. 1867 թ., 13 (48)
